Գ.Խ.ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ЛИТЕРАТУРЫ им. М. АБЕГЯНА

Г. Х. СТЕПАНЯН

АРПИАР АРПИАРЯН

ИЗДАТЕЛЬСТВО АН АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1955

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱԲԵՂՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.
891.99.092[Արփիարյան]
Ա-88
A II/31648

Գ. Խ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ

ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԱ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1955

Տպագրվում է Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի
խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշմամբ:

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆ

ՀՍՍՌ ԳԻՏ. ԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արփիար Արփիարյանը հայ գրականության և հրապարակախոսության ականավոր ներկայացուցիչներից մեկն է։ Անխզելիորեն նրա անվան հետ են կապված XIX դարի երկրորդ կեսի արևմտահայ հասարակական-կուլտուրական կյանքի շատ երևույթներ։

Շարունակելով Հ. Պարոնյանի սկսած պայքարը՝ հանուն ռեալիստական գրականության զարգացման, նա 80-ական թվականների քաղաքական նոր պայմաններում իր խմբագրած պարբերականներում վարկ է տվել ռեալիստական գրականությանը, աճեցնելով և ուղղություն տալով այնպիսի հայտնի գրողների, ինչպիսիք են Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Ե. Օտյանը և ուրիշները, որոնք իրենց արժանի տեղն են գրավում հայ կլասիկ գրականության պատմության մեջ և նշանակալից դեր են կատարել 80-ական թվականների գրական շարժման գործում։

Ա. Արփիարյանը 1884—86 թվականներին «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագրով հրատարակել է մի շարք նովելներ, որոնք իրենց վրա կրելով հանդերձ սկըսնակ հեղինակներին հատուկ որոշ պրիմիտիվության կնի-

քը, հանդիսանում են 1880-ական թվականների արևմտահայ ռեալիստական արձակի արժեքավոր նմուշները։

Ա. Արփիարյանը հայ գրականության պատմության մեջ իր ուրույն տեղն ունի նաև որպես հայ քննադատական մտքի ներկայացուցիչներից մեկը։ Նա իր բազմաթիվ հոդվածներում տվել է ռեալիստական գրականության տեսական հիմնավորումը։ Իր գրականագիտական հոդվածներում՝ պաշտպանելով գաղափարական, ժողովրդական գրականության անհրաժեշտությունը, նա, բացառությամբ Ալիշանի աշխարհաբար լեզվով գրված ոտանավորներից, հիմնականում ժխտել է Մխիթարյանների կողմից ստեղծված ռոմանտիկական գրականությունը և ցույց է տվել, որ հայ գրականության զարգացման ուղին ոչ թե Մխիթարյանների որդեգրած ուղին է, այլ գրական այն ուղին, որի փայլուն ներկայացուցիչներն են Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Հ. Պարոնյանը, Պ. Պռոշյանը, Րաֆֆին, Գ. Սունդուկյանը և այլ գրողներ։

Արփիարյանը տևական պայքար է մղել ֆրանսիական ռեակցիոն գրականության դեմ, որի ազդեցությունը կրում էին պոլսահայ որոշ գրողներ (Եմ. Եսայան, Ե. Տեմիրճիպաշյան և ուրիշներ)։ Բարձր գնահատելով հանդերձ արևմտաեվրոպական կլասիկ գրողներին (Ա. Դոդե, Վ. Հյուգո, Է. Զոլա և ուրիշներ), նա կոչ է արել հետևելու ռուսական ռեալիստական գրականության տրադիցիաներին։ Այս նպատակով է, որ հակառակ համիդյան բռնապետության ամենադաժան հետապնդումներին, իր խմբագրած պարբերականներում տևական աշխատանք է կատարել ռուսական գրականության լավագույն նմուշների հրատարակության ուղղությամբ։

Այդ պարբերականներում լույս են տեսել Ա. Ս. Պուշկինի, Մ. Յու. Լերմոնտովի, Ի. Ս. Տուրգենևի և այլ ռուս գրողների մի շարք ստեղծագործությունների թարգմանությունները։

Ա. Արփիարյանը երկար տարիներ եղել է «Մշակ» թերթի Կ. Պոլսի թղթակիցը և այդ պարբերականում Հայկակ ստորագրությամբ հրատարակել մի քանի հարյուր թղթակցություն, որոնք փաստական հարուստ նյութ կարող են տալ հայ ժողովրդի պատմության նոր շրջանն ուսումնասիրողներին։ Այդ թղթակցությունների զգալի մասի մեջ, արտահայտելով հայ ժողովրդի արևմտահայ հատվածի իղձերն ու ցանկությունները, նա սուր պայքար է մղել արևմտաեվրոպական գաղութարարների, մանավորապես Անգլիայի դեմ, ստոպխս համարել Անգլիայի ջանքերով հայ ժողովրդի համար ազատություն սպասելը և զարգացրել է այն տեսակետը, թե Թյուրքիայում ապրող հայ ժողովուրդն իր ազգային ազատագրությունը բացառապես սպասելու է Ռուսաստանից և որ նա իր հույսերը առաջին հերթին դնելու է ռուս մեծ ժողովրդի վրա։

Ա. Արփիարյանի գրական-հրապարակախոսական գործունեությունը մեծապես նպաստել է հայ ժողովրդի երկու հատվածների՝ արևմտահայերի և արևելահայերի գրական-կուլտուրական կյանքի մերձեցմանը, փոխադարձ կապի ուժեղացմանը։

Իր այս բազմազան ու բեղուն ստեղծագործական կյանքի ընթացքում Արփիարյանը ունեցել է գաղափարական տատանումներ ու դեգերումներ, որոնք մասամբ բացատրվում են նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական բարդ ու հակասական պայ-

մաններով։ Նա գրական ասպարեզ է ոտք դրել լիբերալ-սահմանադրական շարժման պաշտպանության գրքերից, սակայն աստիճանաբար հարել է դեմոկրատական հոսանքին։ Նա 90-ական թվականների վերջերից հարել է հնչակյաններին, բայց հետագայում հիասթափվելով՝ հեռացել է այդ պարտիայից, պայքար մղել նրա դեմ։ Նա իր կյանքի վերջին տարիներին ըմբռնել է դասակարգային պայքարի անհրաժեշտությունը, ողջունել 1905 թ. ռուսական առաջին ռևոլյուցիան և իր «Ոսկի ապրանջան» պատմվածքում ու մի քանի հրապարակախոսական հոդվածներում հանգել է այն եզրակացության, որ հայ ժողովրդի ազատագրությունը ոչ թե պետք է սպասել Կ. Պոլսի պատրիարքարանից կամ Բեռլինի կոնգրեսից, այլ այն պետք է կապել Ռուսաստանում սկիզբ առած սոցիալական ռևոլյուցիայի հետ։

* * *

Ձեռնարկելով այս աշխատության՝ մեր նպատակն է եղել քննության առնել Ա. Արփիարյանի ոչ թե ամբողջ գործունեությունը, այլ հիմնականում շարադրել նրա կենսագրությունը և ներկայացնել նրան որպես գրող, որպես քննադատական ռեալիզմի խոշոր ներկայացուցիչներից մեկը։

Մենք նրա հրապարակախոսական ժառանգությունից քննության ենք առել միայն այն հոդվածները, որոնք նպաստում են մեր առաջ դրված խնդիրների պարզաբանմանը, ինչպես՝ ռուսական գրականության գնահատման հարցի, որը սերտորեն կապված է ռեալիստական

գրականության համար Արփիարյանի մղած տևական պայքարի հետ:

Արփիարյանի կենսագրությունը ուսումնասիրված չլինելու պատճառով՝ նրա կյանքի ուղենշային տարեթվերը որոշել ենք իր հոդվածների, անտիպ նամակների, ժամանակակիցների գրավոր հիշողությունների հիման վրա: Բազմաթիվ հետաքրքիր փաստեր քաղել ենք Ե. Օտյանի, Երվանդ Սրմաքեշխանլյանի (Երուխանի) և ուրիշների հիշողություններից, որոնք հրատարակված են մամուլում կամ առանձին աշխատություններում:

Կենսագրական որոշ տեղեկություններ վերցրել ենք Արփիարյանի «Օրվան կյանքեն» ընդհանուր վերնագրի տակ լույս տեսած ակնարկներից ու հոդվածներից, ինչպես նաև նրա «Անցյալի հիշատակներեն», «Անձնական հիշատակներ», «Տասնամյակ մը», «Օրագրողի վերհիշումները» և այլ վերնագրերով լույս տեսած հիշողություններից, որոնք փաստական հարուստ նյութ են պարունակում:

Արփիարյանի կյանքի վերջին տարիներին վերաբերող մի շարք տեղեկություններ քաղել ենք նրա անտիպ նամակներից ու գրություններից, որոնք պահպանվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում՝ Համբարձում Առաքելյանի, Գրիգոր Արծրունու, Լեոյի և ուրիշների արխիվներում:

* * *

Հայ ժողովրդի մի մեծ հատվածը մոտ 500 տարի տառապել է թյուրքական ամենաբարբարոսական ռեժիմի ճիրաններում: Այդ հինգ հարյուր տարիների

ընթացքում ռազմա-ֆեոդալական թյուրքական իշխանությունը հրի ու սրի միջոցով ընդարձակելով իր տերիտորիան, դարձել էր Արևելքի հզոր պետություններից մեկը, իր ազդեցության տակ գցելով ասիական, եվրոպական, աֆրիկյան բազմաթիվ ժողովուրդների, այդ թվում այնպիսի ժողովուրդների, ինչպիսիք էին հայերը, հույները, բուլղարները և այլ ժողովուրդներ, որոնք շարունակ ազատագրական պայքար են մղել թյուրքական բռնապետության դեմ։

Թյուրքիան, ունենալով հանդերձ բնական, հատկապես հանքային բազմապիսի հարստություններ, ապրում էր տնտեսական զարգացման ամենացածր աստիճանում։ Աշխատավոր գյուղացիությունը գտնվում էր կիսաճորտական վիճակում։

Թյուրք գյուղացին ապրում էր տնտեսական պրիմիտիվ կյանքով, գետնափոր խրճիթներում, ագաների և բեգերի քմահաճույքին ենթակա։ Շատ ավելի ծանր վիճակումն էին գտնվում հպատակ քրիստոնյա ժողովուրդները։

Թյուրքական կառավարությունը ոչ-քրիստոնյա հպատակների և մուսուլմանական ժողովուրդների միջև ստեղծել էր տնտեսական, իրավական ու քաղաքական այնպիսի փոխհարաբերություն, երբ տիրապետող թյուրքական վերնախավը քրիստոնյաների վրա նայում էր որպես աստծու կողմից ստրկության դատապարտված մի զանգվածի, որի շահագործումը, կեղեքումը համարվում էր օրինական։

Թյուրքական իշխանությունները քրիստոնյա հպատակների համար սահմանել էին հատուկ օրենքներ, որոնք ամփոփված էին «Կանոնի Րայա» կոչվող օրենս-

գրքում։ Համաձայն այդ օրենքների՝ քրիստոնյա հպատակները վճարում էին մի քանի տեսակ ծանր տուրքեր, որոնցից ազատ էին թյուրքերը։

Պետության կողմից սահմանված այդ տուրքերը գանձվելիս կրկնապատկվում ու քառապատկվում էին և գանձվում ամենավայրագ, դաժան մեթոդներով՝ գանակոծմամբ, սպանությամբ, բռնաբարությամբ ու այլ կարգի վայրագություններով։

Թյուրքական կառավարությունը հայերի համար սահմանել էր իրավական մի շարք սահմանափակումներ։ Հայերը իրավունք չունեին ապրելու կենցաղային նույն պայմաններում, ինչ որ մուսուլմանները, հագնելու գույնզգույն և թանկարժեք շորեր։ Նրանք իրավունք չունեին մասնավորապես թամբած ձի նստելու, մորթյա քուրք, մուշտակ կրելու։

Հայերի ոչ գրավոր և ոչ էլ բանավոր վկայությունը դատարանում ընդունելի չէր։

Այս բոլորի մեջ ամենից ահավորը ամեն տարի կատարվող մանկաժողովներն էին։ Դա շատ յուրօրինակ և դաժան մի հարկ էր։ Ըստ այդ օրենքի՝ Թյուրքիայի հպատակ ժողովուրդները ենթակա էին ոչ միայն գույքային, նյութական հարկատվության, այլև մարդկային։ Թյուրքական կառավարությունը ամեն տարի տասը արու երեխաներից մեկը վերցնում էր որպես հարկ և տալով այդ երեխաներին կրոնական մոլեռանդ դաստիարակություն, նրանցից պատրաստում էր ենիչերիական զորամասեր, որոնք իրենց ռազմամոլությամբ հարյուրավոր տարիներ դարձան աշխատավոր ժողովրդի գլխին պատուհաս։ Սուլթան Մահմեդ չորրորդի դահակալության օրոք (1648—1692) մանկաժողով-

ներից հավաքված ենիչերիական զորամասը բաղկացած էր երկու հարյուր հազար մարդուց։ Ենիչերիությունը շարունակվեց մինչև XIX դարի առաջին քառորդը։

Անշուշտ, վերոհիշյալ սահմանափակումներն ու դժվարությունները վերաբերում էին առաջին հերթին աշխատավորներին։ Հայ ամիրաները սուլթանների կողմից տրված հատուկ ֆերմաններով օգտվում էին որոշ արտոնություններով և իրենց հերթին շահագործում էին աշխատավորությանը։

Այսպիսի պայմաններում էր գտնվում հայ ժողովուրդը մինչև XIX դարի առաջին քառորդը։ Նույն պայմաններում էին գտնվում հույները, բուլղարները և մյուս ժողովուրդները։

XIX դարի սկիզբը նշանավորվեց թյուրքական բռնապետության տակ գտնվող ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի ծավալումով։ 1821 թվականին ապստամբության դրոշ բարձրացրեց հույն ժողովուրդը։ Հունական շարժումը պսակվեց հաղթանակով, երկար ժամանակ թյուրքական դաժան լծի տակ գտնվող հույները 1824 թվականին ձեռք բերեցին իրենց ազատությունը, վերստեղծեցին իրենց պետականությունը։

Հույներին հետևեցին այլ ժողովուրդներ։ 40-ական թվականներից լայնորեն բորբոքվեց բուլղարական ազատագրական շարժումը։

Ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմները, որոնց շնորհիվ պարսկական բռնակալության լծից ազատագրվեց հայ ժողովրդի արևելահայ հատվածը, մեծ աշխուժություն առաջ բերեց արևմտահայերի մեջ։ Թյուրքիայի արևելյան նահանգներից տասնյակ հազարավոր հայ ընտանիքներ, ցանկանալով

ազատագրվել սուլթանների բարբարոսական լծից և ապրել ռուսական գերիշխանության տակ, բռնեցին մասսայական գաղթի ճանապարհը՝ դեպի Կովկաս։

1853—56 թթ. Ղրիմի պատերազմի ժամանակ՝ ինչպես հայ ժողովրդի արևելահայ հատվածը, այնպես էլ արևմտահայերը ակտիվ կերպով օժանդակեցին ռուսական բանակին՝ հույս ունենալով, որ Ռուսաստանի հաղթանակի դեպքում իրենք էլ կազատագրվեն թյուրքական բարբարոսական լծից։

60-ական թվականների սկզբներից թյուրքական իշխանության տակ գտնվող հայերի մեջ առավել մեծ չափով ծավալվում է ազատագրական պայքարը։

1860—1862 թթ. սուլթանական բռնապետության դեմ ապստամբության դրոշ է բարձրացնում Զեյթունը։ Զեյթունի հերոսական պայքարին մասնակցում էին ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք, անգամ երեխաները։ Ազատագրական այդ պայքարը լայն համակրանք առաջացրեց պրոգրեսիվ մարդկության մեջ։ Սուլթանական կառավարությունը, որին ակտիվ կերպով օժանդակում էին արևմտաեվրոպական գաղութարարները, հատկապես Ֆրանսիան ու Անգլիան, կարողացավ ճնշել զեյթունցիների պանծալի շարժումը, սակայն նրան չհաջողվեց կասեցնել հայ ազատագրական պայքարը, որը պարբերաբար բորբոքվում էր գավառներում։

Հայ ազգային-ազատագրական շարժումների վրա նկատելի ազդեցություն էր թողնում բալկանյան ժողովուրդների պայքարը թյուրքական բռնապետության դեմ։ Այդ բանում որոշ դեր է կատարում այն հանգամանքը, որ թյուրքական կառավարությունը բալկանյան երկրների ազատագրական շարժման ղեկավարներին

աքսորում էր գերազանցապես Թյուրքիայի խորքերը, այնպիսի քաղաքներ, որտեղ ապրում էին մեծ թվով հայեր, ինչպես Տիգրանակերտն իր շրջակայքով։ Ծրնչված ժողովուրդների մեծագույն դահիճներից մեկը՝ Միդհատ փաշան, որը մինչև 1870 թվականը նահանգապետ էր Բուլղարիայում, բազմաթիվ բուլղար ռևոլյուցիոն գործիչների աքսորել է Տիգրանակերտ։

* * *

Սուլթանական կառավարությունը, անհաջողված հպատակ ժողովուրդների մեջ ծայր առած ազատագրական պայքարից, դեռևս 30-ական թվականներից փորձում է կասեցնել մասսաների ռևոլյուցիոն ընդվզումը, խոստանալով նրանց տնտեսական ու քաղաքական որոշ ազատություն։

Այդ քաղաքականության արտահայտությունը պետք է համարել սուլթան Աբդուլ Մեջիդի կողմից 1839 թվականին հրատարակված ռեֆորմները։ Դրանք ըստ էության արդյունք էին լարված դասակարգային պայքարի, որին ակտիվորեն մասնակցում էր թյուրք և հայ գյուղացիությունը։

Սուլթան Մեջիդի ռեֆորմները, նպատակ ունենալով հանդերձ ամրապնդել ֆեոդալական կարգերը, Թյուրքիայի նման մի հետամնաց երկրում, անշուշտ դրական որոշ դեր կարող էին կատարել և կատարել են։ Դրանք հնարավորություն տվեցին բուրժուազիային՝ ծավալելու տնտեսական ու կուլտուրական որոշ աշխատանք, ընդարձակելու առևտուրը արտաքին աշխարհի հետ, ծավալելու կրթական, լուսավորական աշխատանք։

Այդ օրենքներից օգտվեց և հայ բուրժուազիան։ Կենտրոնական քաղաքներում՝ Պոլսում, Ադրիանապոլսում, Իզմիրում և այլն, առևտուրը հիմնականում գտնվում էր հայերի, հույների և հրեաների ձեռքին։

«Ովքեր են Թյուրքիայի առևտրականները,— գրում էր Էնգելսը,— համենայն դեպս ոչ թյուրքերը. երբ դեռ սրանք նախնական նոմադների կենցաղով էին ապրում, առևտուր անելու նրանց եղանակը քարավան կտրելն էր. հիմա այնտեղ, որտեղ փոքր-ինչ քաղաքակրթվել են, նրանց առևտրի եղանակը ամեն տեսակի կամայական ու ճնշիչ հարկահանությունն է։ Ծովային մեծ նավահանգիստներում տեղավորված հույները, հայերը, սլավոններն ու ֆրանկներն իրենց ձեռքն են վերցրել ամբողջ առևտուրը և ոչ մի հիմք չունեն շնորհակալ լինելու թյուրք բեգերից ու փաշաներից իրենց տրված այդ հնարավորության համար։ Թեկուզ հեռացնեն Եվրոպայից բոլոր թյուրքերին, առևտուրը չի տուժի դրանից»[1]։

Կ. Պոլսի հայ հասարակությունը 40—60-ական թվականներին ապրում է կուլտուրական-կրթական որոշ աշխուժացում։ Նկատելի չափով մեծանում է դպրոցների ցանցը, հիմնվում են կրթական, կուլտուրական միություններ, ստեղծվում է հայկական թատրոն և այլն։

Տնտեսական և կուլտուրական այս աշխուժացումը ակտիվացնում է աշխատավորական, արհեստավորական դասին։ Մինչ այդ ամիրաների և եկեղեցու նկատմամբ հլու-հնազանդության դատապարտված արհեստավորական դասը հանդես է գալիս իր տնտեսական և քաղաքական իրավունքների պաշտպանությամբ։

---

[1] К. Маркс и Ф. Энгельс, Соч., т. IX, стр. 391—392.

Հայ բուրժուազիան, որ նույնպես շահագրգռված էր ամիրաների լուծը թոթափելով,— որպեսզի ներքին՝ ազգային գործերում ինքը հեգեմոն դերը գրավի,— սկզբնական շրջանում հրահրում է աշխատավորության պայքարը, հանդես է գալիս ընդհանուր ազգության անունից, խոստումներ տալիս։

Հետզհետե բորբոքվող այս պայքարի մեջ շարժիչ ուժը հիմնականում դեմոկրատական խավերն էին՝ հանձին ֆիզիկական աշխատանքով ապրող աշխատավորության, որն ամենից շատ էր իր ուսերի վրա կրել շահագործողների լուծը և այժմ ցանկանում էր թոթափել այն։

Էսնաֆների (արհեստավորների) շարժումը, որն առաջին անգամ հաղթանակով պսակվեց 1848 թ. Սկյուտարի ճեմարանի շուրջը բորբոքված պայքարում, սոցիալական շատ ավելի խոր բովանդակություն է ունեցել, քան այդ մասին գրվել է։ Ըստ էության այդ արտահայտությունն է եղել ամիրայական դաժան շահագործման ու կեղեքման դեմ գոյություն ունեցող դժգոհության։ Սուլթանական կառավարությունը և հայ եկեղեցին ամիրաների համար ստեղծել էին այնպիսի արտոնյալ վիճակ, երբ ինչպես Պարոնյանն է ասում,— «ամիրայի մի թաշկինակին դեմ խոսելը երկնքի դեմ ապստամբվել էր»։ 40—50-ական թվականներին, սակայն, ամիրաների դիրքը այնքան է խախտվում, որ արհեստավորները հանդես են գալիս նրանց դեմ փողոցային ցույցերով։ Հրապարակվում են լեգալ և անլեգալ թռուցիկներ, պարսավագրեր՝ ամիրաների դեմ։ Ստեղծվում է արձակ և չափածո երգիծական մի կիսալեգալ գրականություն, որից նմուշներ են միայն հասել մեզ։ Այդ գրականության մեջ, հայ եկեղեցու կողմից

«ազգային բարերարներ», բարոյականության ու ազնվության մարմնացումներ համարվող ամիրաները ներկայացվում են որպես այլասերված, անբարոյական մարդիկ, որոնք խաբելով ժողովրդին, հարստացել էին նրա հաշվին։

Ամիրաների և աշխատավորության միջև մղվող պայքարն ավարտվեց էսնաֆների հաղթանակով, որոնց հաջողվեց միաժամանակ ազգային հիմնարկներից դուրս քշել հարուստներին։ Այս հաղթանակով աշխատավորական տարրերը ձեռք բերին պայքարի որոշ փորձ, որը նպաստեց հասարակական կյանքի աշխուժացմանը, մասամբ նաև ազգային-ազատագրական գաղափարների հրահրմանը։

Թյուրքական կառավարությունը, տեսնելով դեմոկրատական շերտերի որոշակի ակտիվությունն ու օրեցօր սպառնական ուժ դառնալը, իր հենարանը հանդիսացող ամիրայական դասի թուլացումը, ցանկանում է մասնակի զիջումներով սիրաշահել ու խաբել հայ բուրժուազիային և նրան դարձնել իր կամակատարը։ Այդ ծրագրի կենսագործումը հանդիսացավ Թյուրքիայում ապրող հայերի ներքին կյանքի ղեկավարմանը վերաբերող մի կանոնադրության հաստատումը, կանոնադրություն, որին հայ բուրժուազիան տվեց «Ազգային սահմանադրություն» մեծազդորդ ու սնամեջ անունը։

«Սահմանադրությունը» ազգային ներքին գործերը ղեկավարելու լիազորությունից այն կողմ չանցնող սովորական մի կանոնադրություն էր, և ոչ մի արմատական հարց չէր կարող լուծել։

1860—61 թթ. այդ «Սահմանադրության» հենց առաջին օրերից հայ բուրժուազիան սկսեց դիրքեր գրա-

վել ոչ թե ամիրայության դեմ,— որն արդեն հասարակական կյանքում կորցրել էր իր գերակշիռ տեղը,— այլ դեմոկրատական հոսանքի դեմ, որը հիասթափված հայ բուրժուազիայի համագործակցությունից, պայքարում էր «սահմանադրական» օրգանների դեմոկրատացման համար։ Սկսվում է եռուն պայքար հասարակական տարբեր հոսանքների միջև, որից առավելապես շահում է սուլթանական կառավարությունը և որոշում իր խանձարուրի մեջ խեղդել այդ «սահմանադրական» խաղը։

Հայ բուրժուազիան իր միսիան համարում է ավարտված։ Նրա կարծիքով հայ ժողովուրդը ստացել էր այն, ինչ կարելի էր ձեռք բերել և պետք էր գոհ լիներ «օգոստափառ սուլթանից», աղոթել նրա բարօրության համար։

Սուլթան Մեջիդի ռեֆորմները,— որոնց արտահայտություններից մեկն էր «Սահմանադրությունը»,— ոչ մի արմատական հարց չլուծեցին և չէին էլ կարող լուծել։ Հատկապես գյուղում կյանքը շարունակվեց այնպես, ինչպես առաջ։

Գավառում ապրում էր 3 միլիոն հայ աշխատավորություն, որը սահմանադրական խելացնոր պատրանքների մասին լսում էր ցասումով, որովհետև դրանք ըստ էության մնում էին սոցիալական և քաղաքական այն պայքարին, որը գնալով բորբոքվում էր աշխատավորության մեջ։

Այն օրերին, երբ Կ. Պոլսի հայ բուրժուազիան կրակոտ ճառերով փառաբանում էր «Սահմանադրությունը» և գովերգում սուլթանին, հայ գյուղացին զուրկ ամենատարրական իրավունքներից, կիսամերկ, ոտաբոբիկ,

ստրկական աշխատանք էր կատարում աղաների ու բեգերի համար:

Ժամանակի գրողները ցնցող պատկերներով են նկարագրել հայաստանցի հայերի տնտեսական ծանր վիճակը, նրանց պանդխտությունը դեպի Կոստանդնուպոլիս: Այդ նկարագրություններից երևում է, որ հայ ժողովրդի արևմտահայ հատվածը XIX դարի 50—60-ական թվականներին շարունակում էր ապրել կիսաճորտական վիճակում, թյուրք բեգերը, աղաները ոչ միայն սանձարձակ շահագործման էին ենթարկում նրանց, այլև հաճախ նրանց հետ վարվում էին ինչպես ճորտերի:

«Արծուի Վասպուրական» ամսագրում 1862—1863 թթ. Գ. Սրվանձտյանցը տպագրել է մի ընդարձակ հոդված «Շինական հայոց կյանք ի Հայաստան» վերնագրով, որը տալիս է հայ գյուղացու վիճակի ճշգրիտ նկարագրությունը: Հոդվածի առաջին մասում, Սրվանձտյանցը նկարագրում է մի կին, որը երեխան գրկին՝ դաշտերից ցախ է հավաքել, որպեսզի քաղաքում հացուստով փոխի, երեխաների մերկությունը ծածկի, բայց ուժասպառ ընկել է պատի տակ. կիսամեռ երեխան թույլ շարժումներով ծծում է մոր կուրծքը: Հոդվածի երկրորդ մասում հեղինակը նկարագրում է գյուղացու թշվառ կյանքի մի այլ ցնցող կողմը, տան տղամարդը պարտքի տակ հյուծված, վարկով փող է վերցրել, գրավ դրել իր ամբողջ ունեցվածքը, ընտանիքը և մեկնել է պանդխտության: Պարտատերը գրավել է ոչ միայն նրա ինչքը, այլև կինը «յուր ամուսինը, յուր երկու տարվան առած նորահարս ամուսինը»[1]:

---

1 «Արծուի Վասպուրական», 1862—63, № 3:

Սրվանձտյանցը շարունակում է.

«Դու տեսե՞ր ես նոցա մանուկները. կաթն և ցավ միասին կճաշակեն. պարզ ջուր և դառն քրտինք միասին կըմպեն. հացն ու հարված միասին կուտեն: Առանց վարտիքի և շապիկի, մերկ-մերկ՝ մոխիրներու մեջ, արևու և բուքերու առջև կթավալին. նոցա մատաղ աղջիկները ոտաբոբիկ, գլխիբաց, դաշտի մշակաց հետ, նոցա պես ու նոցա հավասար կաքնին. փշերը կոխելով, տավար շահելով, հաց հանելով, բանջար ժողվելով, մարդ և գազան տեսնելով, երկյուղ և չարիք կրելով. ձեռքով գարի կքաղեն, ցորեն կհնձեն, տան ծառայությունները կհոգան, հիվանդ եմ ասել ամոթ է. իրենց կերածն է կորեկ և գարի. ցորենը պարտուց փոխարեն կամ շահք տալու համար միայն կվաստակին. եղ կհանեն՝ իրենց բաժին չկա»[1]:

Հայ ժողովրդի համար կար մի այլ չարիք ևս: Եվրոպական գաղութարարները, իրենց քաղաքական և տնտեսական էքսպանսիան Մերձավոր Արևելքում տարածելու համար՝ քայքայիչ աշխատանք էին կատարում հայ իրականության մեջ: Մեծ վտանգ էին ներկայացնում անգլո-ամերիկյան գաղութարարներն իրենց միսիոներներով և ֆրանսիական գաղութարարները՝ Վատիկանի գործակալներով, որոնք ամեն ջանք գործադրում էին հայ ժողովրդին ասիմիլյացիայի ենթարկելու համար:

Այսպիսով, հայ ժողովուրդը հարկադրված էր օրհասական պայքար մղել մի կողմից ներքին հարստահարիչների, կալվածատերերի ու բեգերի դեմ, թյուր-

---

1 «Արծուի Վասպուրական», 1862—63, № 3:

քական կամայականությունների դեմ, մյուս կողմից՝ տարբերկրյա գաղութարարների դեմ:

Հայ հասարակական տարբեր հոսանքներ այդ պայքարում բռնում էին տարբեր դիրք:

Ազնվականական-կղերական հոսանքը պայքարում էր գոյություն ունեցող վիճակը պահելու համար, օրինականացնում էր թյուրքական բռնապետության կեղեքումները և քարոզելով Քրիստոսի «մի կալ հակառակ չարին» գաղափարը, կոչ էր անում համակերպվել ամեն մի շահագործման: Այդ հոսանքի կենտրոնը Կ. Պոլսի պատրիարքարանն էր, իր տպագիր օրգանով և պատրիարքարանի գաղափարները պաշտպանող «Երևակ» տխրահռչակ պարբերականով:

Դեմոկրատական հոսանքը, որի մտավորական կենտրոնն էր Հ. Սվաճյանի «Մեղու» պարբերականը, հանդես էր գալիս աշխատավոր ժողովրդին հուզող հիմնական հարցերի բարձրացումով և ռեական պայքար էր մղում մի կողմից հայ ժողովրդի աշխատանքի արդյունքով ապրող շահագործող դասակարգերի, մյուս կողմից բռնապետական կարգերի ու նրանց թիկունքում կանգնած եվրոպական գաղութարարների դեմ: «Մեղվի» էջերում տպագրվում էին միսիոներների դեմ ուղղված սուր հոդվածներ:

Ինչպես արդեն ասացինք, 1860-ական թվականների սկզբներից, հայ լիբերալ բուրժուազիան սկսել էր հաշտվողական դիրք բռնել սուլթանական բռնապետության նկատմամբ: Գավառի հայ աշխատավոր ժողովրդի տնտեսական ծանր վիճակի անտեսումը, դրա փոխարեն ժողովրդին սահմանադրական պատրանքներով

օրերը, վնասում էր շահագործող դասակարգերի դեմ մղվող պայքարին։

Մ. Նալբանդյանը, որ Կ. Պոլիս այցելելով մոտիկից իրազեկ էր դարձել հայ հասարակական կյանքում տեղի ունեցող խմորումներին, քաջալերական անկեղծ խոսքեր ասելով հանդերձ հայ բուրժուազիայի ձեռք բերած որոշ նվաճումների մասին, լիովին համոզված է, որ տվյալ պայմաններում լիբերալ սահմանադրականների ծրագրերը վնասում էին հայ ժողովրդի սոցիալական պայքարին։ Նա իր «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ սուր քննադատության է ենթարկում բուրժուազիայի տնտեսական ու քաղաքական ծրագրերը։

Ի տարբերություն հայ բուրժուազիայի, հատկապես Կ. Պոլսի «Բարեգործական» ընկերության անդամների ծրագրի, որոնք ցանկանում էին միայն լուսավորությամբ բարձրացնել ժողովրդին, Մ. Նալբանդյանը գրում էր. «Տնտեսական խնդիրը միակ խնդիր է մարդու կյանքը և գոյությունը ապահովելու համար»։ «Երկրագործության» մի այլ էջում, դարձյալ անդրադառնալով այդ խնդրին, կարծես ուղղակի պատասխանելով անընդհատ ազատությունից ճառող լիբերալներին, Նալբանդյանը գրում էր,— «Ազատությունը ըստ ինքյան լոկ խոսք է և իրողապես չէ կարող մարմնանալ, առանց տնտեսական խնդրի լուծվելուն»։

Առաջ քաշելով տնտեսական պրոբլեմի լուծման անհրաժեշտությունը, Նալբանդյանը այդ հարցին տալիս է շեշտված դասակարգային բովանդակություն։ Գտնելով, որ ազգ. ասելով պիտի հասկանալ հասարակ աշխատավոր ժողովրդին, և ոչ՝ «նորա միջից, նորա քըր-

տինքով և նրա արյունով հառաջացած մի քանի մեծատունք», նա առաջարկում էր մտածել այդ հասարակ ժողովրդի՝ գյուղական աշխատավորության մասին, մտածել նրան հողով ապահովելու մասին։

Մ. Նալբանդյանի այցելությունը Կ. Պոլիս և հասարակական-քաղաքական կյանքին ակտիվ մասնակցելը, նկատելի թափ է հաղորդում դեմոկրատական հոսանքի կողմից պահպանողական խավերի դեմ մղվող պայքարին, պահպանողականների, որոնց հետ, արմատական շատ հարցերում դաշնակցած էր հանդես գալիս հայ բուրժուազիան։

Ըստ էության պատասխանելով այն մարդկանց, որոնք քննադատում էին հայ բուրժուազիային, որ նա ժողովրդի հաշվին ղեկավար դիրքեր գրավելով դավաճանել է նրան և չի պաշտպանում նրա շահերը, լիբերալ Ն. Ռուսինյանը 1874 թ. արտասանած մի ճառում ասում էր. «Մեր բնական ազատության սահմանը մեր ներքին գործերն են, մեր ազգային հաստատությունքը, եկեղեցի, դպրոց, վանք, և կարոտելոց ձեռնտվություն։ Ասոնց մեջ պարփակյալ է մեր խոսելու ազատությունը, նաև ասոնց մեջ հաստատելու սոսկ ազգային օրենքնիս կայսերական ընդհանուր օրինաց պետք է որ չհակառակին։ Մինչև հոս է ահա մեր ձեռնհասության սահմանը։

Ուստի պարտ է մեզ խոհեմությամբ զգուշանալ, սահմաննիս ու չափերնիս ճանաչել և բարեխնամ տերության վստահությունը միշտ վայելելու համար մեր գլխեն վեր խնդիրներու հանդգնությամբ չնախաձեռնել, *մեկ խոսքով չշեղել սա համոզումեն, թե տերության*

շահերը ազգինն են և ազգինները՝ ունեությանը»[1] (ընդգծումը մերն է.— Գ. Ստ.)։

Ն. Ռուսինյանն իր վերոհիշյալ ճառում արտացոլում էր այն քաղաքական մտայնությունը, որը տիպական էր արդեն իր պրոգրեսիվ գծից հրաժարված, սուլթանական կառավարության նկատմամբ հաշտվողական դիրք գրավող հայ բուրժուազիայի համար։

Այսպիսի պայմաններում էր, որ վրա էր հասնում 1877—1878 թթ. ռուս-թյուրքական պատերազմը, որը մեծ հույսեր ներշնչեց սուլթանական բռնապետության ճիրաններում գալարվող արևմտահայ աշխատավորության։

* * *

Հակառակ մտավորական կուլտուրական կյանքի որոշ աշխուժացմանը, 50—60-ական թվականներին արևմտահայ իրականության մեջ թույլ զարգացավ գեղարվեստական գրականությունը։

Այդ տարիների արևմտահայ գրականության համար բնորոշ է ռոմանտիկական ուղղությունը, որը անշուշտ կղերա-ֆեոդալական գաղափարախոսության դեմ մղվող պայքարի շրջանում իր աշխարհիկ բովանդակությամբ և ազատասիրական ոգով հիմնականում պրոգրեսիվ էր։ Ազգային ռոմանտիկական այդ գրականության խոշոր ներկայացուցիչներից են Ղ. Ալիշանը, Մ. Պեշիկթաշլյանը և Ն. Ռուսինյանը՝ պոեզիայի ասպարեզում, Ս. Հեքիմյանը և մի քանի այլ հեղինակներ՝ դրամատուրգիայի ասպարեզում։

---

1 Ատենագրությունք Ազգային ժողովո, հատ. Գ, էջ 52։

Վերոհիշյալ չափածո և դրամատիկական գրականությունը, իր վրա կրելով հանդերձ որոշ սահմանափակության կնիքը, որին հատուկ են ազգային սնապարծությունը, անցյալի իդեալականացումը, դասակարգային պայքարի անտեսումը և այլն,— արտացոլելով հայ ժողովրդի ազգային-ազատագրական ձգտումները, նկատելի դեր է կատարել ժողովրդական մասսաներին ազատասիրական ոգով տոգորելու ուղղությամբ։ Եթե դրամատիկական ստեղծագործությունները՝ մասամբ իրենց գրաբար լեզվով և մասամբ գեղարվեստական թույլ կատարմամբ հայ գրականության մեջ որևէ հետք չթողեցին և այժմ միայն պատմական նշանակություն ունեն, ապա 50—60-ական թվականների արևմտահայ պոեզիան անհամեմատ ավելի կենսունակ դուրս եկավ։ Ալիշանի, Պեշիկթաշլյանի և Ռուսինյանի մի շարք բանաստեղծությունները արդեն մի դար է որ արտասանվում են, երգվում, տեղ գտնում դասագրքերում և այսօր գեղարվեստական հաճույք պատճառում սովետական ընթերցողին։

Անհամեմատ ավելի թույլ զարգացավ արևմտահայ արձակը։ Ի տարբերություն արևելահայ իրականության, որտեղ արձակ գրականությունը իր զարգացման առաջին օրերից ունեցավ այնպիսի խոշոր ներկայացուցիչներ, ինչպիսիք են Խ. Աբովյանը, Մ. Նալբանդյանը, Պ. Պռոշյանը և ուրիշները, որոնք դրեցին քննադատական ռեալիզմի սկիզբը, արևմտահայ իրականության մեջ արձակ գրականությունը սկսեց զարգանալ կտրված իրական կյանքից, հատկապես աշխատավորական, գյուղական կյանքից, գերազանցապես արևմտաեվրոպական ռոմանտիկ վիպագրության ազդեցությամբ։

Այդպիսի վեպեր են, օրինակ, Մ. Հիսարյանի «Խոսրով և Մաքրուհին» (1851), Ա. Հայկունու «Էլիզան» (1861): Այս վեպերի նյութը խորթ է հայ իրականությանը, եթե փորձենք դրանց հերոսների անունները փոխել և օտար անուններ դնել, ապա կունենանք օտար կյանքն արտացոլող, գեղարվեստական տեսակետից թույլ երկու վեպ: «Էլիզան» մասամբ միայն արձագանքում է հայ հասարակական կյանքը հուզող որոշ հարցերի, կապված ազգային-ազատագրական պայքարի հետ, որը սակայն վեպում գտնվում է երկրորդական պլանի վրա և պարուրված է սանտիմենտալ զեղումներով:

50-ական թվականների արևմտահայ արձակում բացառություն է կազմում «Ագապի» հայատառ թյուրքերեն վեպը, որը, ինչպես հայտնի է, գրավել էր Մ. Նալբանդյանի ուշադրությունը, որպես ազգային կյանքը արտացոլող ռեալիստական գործ: Այդ վեպը անշուշտ հայ հասարակական կյանքում կատարել է որոշ դեր, ինչպես վկայում էր դեմոկրատական «Մեղուն», սակայն, գրված լինելով թյուրքերեն լեզվով, չէր կարող ազդել հայ գրականության զարգացման վրա և նշել ուղի:

Այսպիսով, 50—60-ական թվականների վերև նըշված չափածո, դրամատիկական և արձակ գրականությունը՝ հիմնականում արտացոլելով հայ ժողովրդի որպես ազգ ձևավորվելու էտապի հասարակական-քաղաքական մտայնությունը, առավել մեծ չափով արձագանքում էր ազգային-ազատագրական պայքարին: Այդ գրականությանը հիմնականում խորթ էր սոցիալական պայքարը: Չկարողանալով արտացոլել իրական կյանքը իր հակամարտություններով, դասակարգային բախում-

ներով, խույս տալով սոցիալական պրոբլեմի արծարծումից, վերոհիշյալ գրականությունը չէր նպաստում այդ պայքարին։

1860-ական թվականների վերջերից գրական ասպարեզ են մտնում երկու նշանավոր դեմքեր, բանաստեղծ Պետրոս Դուրյանը և ականավոր երգիծաբան Հակոբ Պարոնյանը։ Դուրյանի առաջին շրջանի բանաստեղծությունների և դրամատիկական ստեղծագործությունների վրա նկատելի է լիբերալ-սահմանադրական գաղափարախոսության կնիքը։ Այդպիսիք են հատկապես Մկրտիչ Խրիմյանին, Ազգային սահմանադրությանը նվիրված բանաստեղծությունները և «Անկումն Արշակունի հարստության», «Ասպատակություն պարսկաց», «Արտաշես Ա» պիեսները։

Սակայն նույնիսկ վերոհիշյալ ստեղծագործությունների մեջ երևում է Դուրյանի դեմոկրատիզմը, որ հետագայում խորանալով դարձավ նրա ձևակերպված աշխարհայացքը։

Պ. Դուրյանի պոեզիան և դրամատիկական ստեղծագործությունը, մյուս կողմից, նշանավորում են անցումը ռոմանտիզմից դեպի ռեալիստական ուղղությունը։ Նրա չափածո ստեղծագործությունը, հատկապես սիրո և բնության երգերը, իրենց գեղարվեստական կատարմամբ վկայում են իրական կյանքի ռեալիստական ըմբռնման Դուրյանի խոշոր տաղանդը։

Բարձր խավերի ճաշակին հարմարեցվող ռոմանտիկ, սիրային, արկածային վեպերի, պատմական անցյալը պատկերող պիեսների փոխարեն, ժամանակակից սոցիալական հարաբերությունները լայն ընդգրկումով գեղարվեստական գրականության նյութ դարձնելու պա-

տիվը արևմտահայ գրականության մեջ պատկանում է Պարոնյանին:

Համոզված լինելով, որ 70-ական թվականների սկզբներից հայ բուրժուազիան արդեն դրական դեր չէր կատարում հասարակական կյանքում, Պարոնյանը ոչնչացնող երգիծանքով ծառացավ ինչպես կղերա-ֆեոդալական գաղափարախոսության, այնպես էլ լիբերալ գաղափարախոսության դեմ: Այդ երկու ուղղությամբ, ինչպես նաև սուլթանական բռնապետության և արևմըտաեվրոպական գաղութարարների դեմ մղվող պայքարում, նա կանգնած էր ժամանակի ամենաառաջավոր, դեմոկրատական դիրքերի վրա: Նա առաջինն էր արևմըտահայ իրականության մեջ, որ պատռեց հայ բուրժուազիայի սնամեջ երազների շղարշը և ցույց տվեց, որ հայ աշխատավոր ժողովուրդը, մանավորապես հայ գյուղացին ոչ մի օգուտ չի տեսել բուրժուազիայի ճառերից և որ նա իր ազատությունը պետք է ձեռք բերի սեփական ջանքերով:

Պարոնյանը, հայ բուրժուազիայի քաղաքական ծրագրերը քննադատության ենթարկելով, մասսաների ուշադրությունը բևեռեց ամենից առաջ ներքին շահագործողների վրա, ցույց տվեց, թե հայ աշխատավոր ժողովուրդը ինչպիսի դաժան շահագործման է ենթարկվում ամիրաների, էֆենդիների և հոգևորականության կողմից:

1870-ական թվականներին Կ. Պոլսում և Իզմիրում լույս են տեսնում մի քանի վեպեր, որոնք չնայած ուշագրավ են իրենց արծարծած գաղափարներով, սակայն գեղարվեստական արժեք չեն ներկայացնում և որևէ հետք չեն թողել հայ գրականության վրա: Այդ վեպերից

է Ս. Տեր-Սարգսենցի «Շահենն ի Սիպիլը» (1879 թ.), որտեղ քննադատության են ենթարկվում թե սուլթանական և թե ցարական բռնապետական կարգերը, և նկատելի չափով բարձրացվում են սոցիալական պայքարի հարցերը:

80-ական թվականների սկզբից սաստկացող քաղաքական հալածանքների պայմաններում գրեթե կանգ էր առել հայ գեղարվեստական գրականության զարգացումը Թյուրքիայում: Միայն Հ. Պարոնյանը, դիմագրելով ամեն մի դժվարության, շարունակում էր լույս ընծայել «Խիկարի» վոխա տետրակները՝ հարկադրված լինելով զգուշանալ քաղաքական հարցեր շոշափելուց:

Քաղաքական այսպիսի պայմաններում է, որ Ա. Արփիարյանը մտնում է հասարակական և գրական ասպարեզ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՄԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ, ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ

Արփիար Արփիարյանի ծնողները ակնցի են։ Ակնը Փոքր Ասիայի քաղաքներից է, որը մինչև առաջին համաշխարհային պատերազմի տարիները ամենից լավ էր պահպանել իր տեղական հատկանիշները՝ մայրենի լեզուն, սովորությունները, ժողովրդական բառ ու բանը։

Ակնը հայ գրականության ու բանասիրության տվել է մի քանի տասնյակ նշանավոր դեմքեր, ինչպես Արփիար Արփիարյանը, Գրիգոր Զոհրապը, Միսաք Մեծարենցը, Սիամանթոն, բանասերներ Սմբատ Դավթյանը, Հովսեփ Ճանիկյանը և ուրիշները։

Մյուս կողմից՝ Ակնը աչքի է ընկել ամիրայական բազմաթիվ գերդաստաններով, որոնք գրեթե 200 տարի մասնակցել են Թյուրքիայի տնտեսական կյանքին, քաղաքական-հասարակական գործերին։

Ահա այս ամիրայական տներից է Արփիարյանի տոհմը, որի գոյությունը հասնում է մինչև XVII դարի սկզբները[1] ու կորչում պատմության մշուշի մեջ[2]:

Արփիարյան ամիրաների Պոլսում ունեցած գործունեության մասին քիչ տեղեկություններ են հասել մեզ: Նրանք շատ ավելի գործել են իրենց ծննդավայրում՝ Ակնում, որտեղ նրանց կողմից շահագործման են ենթարկվել Կապան Մադենի արծաթի հանքերը:

---

[1] Աստրիկ Մ. Բեչյան, Ակն և ակնցիք, (1020—1915). Ա. հատոր, էջ 225:

[2] Հայ ամիրաների գործունեությունը Թյուրքիայում աշխուժացել է հատկապես XVII—XVIII դարերում: Ամիրա բառը արաբերեն էմիր—հրամայող բառից է առաջացել և մեր գրականության մեջ մուտք է գործել արաբական տիրապետության ժամանակաշրջանում:

Սկզբում ամիրաները խոշոր ֆեոդալներ էին, ունեին իրենց կալվածները, բազմաթիվ գյուղեր: Օսմանյան կառավարությունը իր աղետ, կաշառակեր պաշտոնյաներով հնարավորություն չունենալով կանոնավոր կերպով գանձել ժողովրդից ստացվող հարկերը՝ այդ իրավունքը կապալով տալիս էր որդոց որդի ազնվական իրավունքներ ժառանգող ամիրաներին: Ամիրան ձեռք էր բերում մի շրջանի կամ գավառի հարկը վերցնելու իրավունքը, գնահատված գումարը հանձնում պետությանը և ստանում այդ գումարը իր հավելումներով խեղճ աշխատավոր ժողովրդից գանձելու իրավունք:

Կ. Պոլսում հաստատված հայ ամիրաները՝ լավ տիրապետելով թյուրքերենին, ճանաչելով երկրի պահանջները և կուտակելով խոշոր կապիտալ, երբեմն երկրի համեմատաբար նեղ սահմաններին, նույնիսկ ազդել են քաղաքական կյանքի վրա, միջամտել պետական գործերին, ինչպես այդ կատարել է Պեզճյան Հարություն ամիրան XIX դարի առաջին քառորդում:

Երկրի պետական կյանքին անգամ միջամտող այդ հարուստ ամիրաները լայնորեն ազդում էին Կ. Պոլսի և առհասարակ Թյուրքիայի հայկական կյանքի վրա: Երկար տարիներ նրանց

Ա. Արփիարյանի մայրը

Արփիարյան ամիրաների տոհմը աստիճանաբար քայքայվում է XIX դարի սկզբներին, սակայն երկար ժամանակ մինչև 80—90-ական թվականները հիշվում է Ակնի շրջակայքում։ Գ. Սրվանձտյանցն իր «Թորոս աղբար» աշխատության մեջ՝ խոսելով Արփիարյան տոհմի մասին, գրում է. «Ոչ ոք կա այն երկրներու մեջ, որ չգիտնա Արփիարենց անունն. ունին տանք իրենց ետևեն թողած օրհնություն և բարության հիշատակներ, ունին սա-

---

ձեռքին է եղել պատրիարքական իշխանությունը, որը ենթարկվել է ամիրաների կամքին։ Ամիրաներն են ընտրել պատրիարքներին, նրանք էլ հրաժարեցրել են։

Պոլսի արհեստավորական (էսնաֆ) դասը XIX դարի կեսերին կարողացավ թուլացնել ամիրայության ազդեցությունը, որը 1860 թվականի այսպես կոչված «Ազգային սահմանադրության» նախօրյակին հարկադրված եղավ հետզհետե հեռանալ ոչ միայն պետական կյանքից, այլև ազգային կյանքից։

Տնտեսական նոր պայմաններում, եվրոպական կապիտալի Թյուրքիա ներթափանցումով ամիրայությունը կորցրեց իր դիրքը նաև որպես Թյուրքիայի ֆինանսների վրա իշխող ուժ։

Սուլթան Աբդուլ Մեջիդի ու Ազիզի օրերին 1840—60-ական թվականներին արդեն մենք չենք տեսնում ամիրայության ազդեցությունը ո՛չ պետական և ո՛չ էլ հայ ազգային գործերի վրա, այլ տեսնում ենք եվրոպական կրթությամբ Պոլիս վերադարձած նրանց բուրժուականացած ժառանգներին, որոնք վայելելով սուլթանների ուղղակի կամ անուղղակի հովանավորությունը, երբեմն աշխուժություն էին ցույց տալիս հայ իրականության հետ կապված գործերում։ Այս բանն ավելի շեշտվեց Աբդուլ Համիդի գահակալության երկրորդ տասնամյակում, երբ 1885—1895 թթ.— ամբողջ տասը տարի «Ազգային վարչության» ղեկը հանձնվեց պահպանողական «վարչապետների», որոնցից մեծ մասը ամիրաների ժառանգներ էին, ինչպես Մաքսուտ Սիմոն բեյը, Հարություն Տատյանը։

Այսպիսով, ամիրայության ժառանգները հետագայում կազմեցին հայ բուրժուազիայի ամենառեակցիոն և պահպանողական թևը։

կայն և զիրենք անիծողներն: Ինչ տունն յՃապուշեխ խիստ ընդարձակ և հոյակապ, այժմ բոլորովին տեղն անհայտ, հրկեզ եղած, այլ ցարդ իսկ մոխիրներու մեջեն կգտնվին գնով նյութերը: Ոսկին ու արծաթ, մարգարիտն ու ադամանդ, պերճանք ու զարդ, ծառայք և երիվարք. համրանքով չեն եղած» [1]:

Ուշագրավ է այստեղ Սրվանձտյանցի «ունին սակայն զիրենք անիծողներ» *արտահայտությունը, որը անշուշտ արդյունք է այն ուժեղ դասակարգային դժգոհության, որ ունեցել են Ակնա ու շրջակա գյուղերի բնակիչները Արփիարյան ամիրաների դեմ:*

Արփիարյան տոհմի քայքայումից հետո, նրանցից մեկը՝ Արփիարյանի հայրը՝ Փիլիպոսը իր կնոջ՝ Թենուշի հետ Ակնից ճանապարհ է ընկնում դեպի Կ. Պոլիս:

Ահա այս ճանապարհորդության ընթացքում, Սամսոն նավահանգստում, 1851 թ. դեկտեմբերի 21-ին ծնվում է Ա. Արփիարյանը [2]:

---

[1] Գ. Վ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, Հայաստանի ճամփորդ, մասն Բ, էջ 67:

[2] Արփիարյանի ծննդյան թիվը շատ տարակարծությունների է տեղի տվել: Տարբեր աղբյուրներ տարբեր թվեր են հիշել, ըստ որում նրա ծննդյան տարին տատանվել է 1850—1862 թվականների միջև: Երեսատամախաններում, դասագրքերում տրվել է 1852 թվականը, անշուշտ հենվելով այն բանի վրա, որ 1911 թվականին Կահիրեում կանգնեցված մահարձանի վրա գրված է այդպես: Մեզ հաջողվեց Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանում գտնել Արփիարյանի ձեռքով գրված մի համառոտ ինքնակենսագրություն, ուղղված Հ. Առաքելյանին, նրա «Հանրագիտական բառարանի» համար: Այդ ինքնակենսագրական նամակում Արփիարյանը գրում է, որ ինքը ծնվել է 1851 թ. դեկտեմբերի 21-ին: Այսպիսով վերջնականապես ճշտվում է Արփիարյանի ծննդյան թվականը, ամիսը և օրը:

Արփիարյանի ծնողներն ընդամենը մի ամիս են մնում Սամսոնում, այն էլ նորածնի նախնական խնամքի համար, որից հետո տեղափոխվում են Պոլիս, հաստատվում Օրթագյուղ թաղամասում, որտեղ էլ անցնում է Արփիարի մանկությունը։

Այդ տարիներին օսմանյան կայսրության մայրաքաղաքում ապրում էին ավելի քան 150.000 հայեր։ Օրթագյուղը ամենահայաշատ թաղամասերից մեկն էր, որտեղ մեծ թիվ էին կազմում գավառներից, մանավանդ Ակնից գաղթած հայերը։ Նրանք գավառից բերել էին բնաշխարհի սովորությունները, նիստ ու կացը, կենցաղը, և որ ամենից կարևորն է՝ հայ ժողովրդի հարազատ երգն ու ասացվածքը, բանահյուսությունը։

Օրթագյուղը մյուս թաղամասերի հետ համեմատած ուներ մի այլ առավելություն։ Եթե բազմաթիվ թաղերում տեղավորված հայերի զգալի մասը թյուրքախոս էր, հեռու՝ հայկական ավանդություններից ու սովորություններից, ապա Օրթագյուղը այն թաղամասերից էր, որոնց բնակիչները ճնշող մեծամասնությամբ հայախոս էին։

Արփիարի ծնողները հայրենիքից բերել էին ոչ միայն անգիր բանահյուսությունը, այլև տպագիր մատյաններ։ Գրագետ ընտանիքում ծնված լինելը Արփիարի համար մեծ բախտավորություն էր. մանուկ հասակից իր շրջապատում տեսնելով գիր ու գրականություն, նա հեշտությամբ կապվում է գրքի հետ, դպրոց գնալը դառնում նրա մանկական հետաքրքրության առարկան։

1858 թ. նա ուղարկվում է Օրթագյուղի Թարգմանչաց վարժարանը։

Այստեղ, ինչպես այդ տարիների մյուս դպրոցներում, դասավանդումն արվում էր սխոլաստիկ մեթոդներ-

րով։ Աշակերտները սովորում էին մայրենի լեզու, կրոն. թվաբանություն, ճարտասանություն։ Բոլոր առարկաների հիմքը կրոնն էր։

Արփիարյանն իր հիշողությունների մեջ թանձր գույներով է նկարագրել Կ. Պոլսի այն ժամանակվա դպրոցները։

Ըստ էության դրանք ոչնչով չեն տարբերվել Րաֆֆու նկարագրած Տեր-Թոդիկյան դպրոցներից։

«Աշնան առավոտ մըն էր,— գրում է հետագայում Արփիարյանը,— որ մեր թաղին տղաքները ձեռքես բռնելով զիս տարին Օրթագյուղի ս. Թարգմանչաց վարժարանը... Փայտե հին շենք մըն էր այդ վարժարանը... դպրոցին սեմեն ներս մտած միջոցիս առաջին մարդը, զոր տեսա, ծերուկ մըն էր։ Երկայն ճուպպե մըն էր հագած, ներքևեն էնթարի, գլուխն ալ ֆես մը կար, բոլորտիքը յազմա փաթթած։ Ձեռքը գիրք մը բռնած՝ նստած էր աթոռի մը վրա, առաջին այն դասն, որուն ներսեն եկած «բույրերուն» համար չենք կրնար ըսել թե բուրումնավետ էին։

Քանի մը ոտք սանդուխե վեր ելանք. սարսափահար մնացի, հազիվ կարող եղա արցունքներս բռնել և հիմա, այս րոպեիս իսկ, հիշելով այդ վայրկյանը, անախորժ տպավորություն մը կզգամ։ Մտած էինք «Ծաղկոցը», մութ սրահ մը, սև, երկայն գրասեղաններ, տղաքներով լեցված։ Սրահին մեջ կաղ մարդ մը կար, ճուպպեի պես բան մը հագած, ձեռքը գավազան մը, որով կզարներ տղու մը չորս կողմին։ Տղան փախչելով կատվի պես մտավ «բանքոյին» տակը. կաղը գնաց զնա հոն ալ գտավ։ Կիջեցներ ու կիջեցներ. ալ չդիմացա, վախես սկսա լալ։ Տղան կը պոռար կը կանչեր։ Կաղն ալ հոգնե-

ցավ, եկավ մեր քով. սրահին մեջտեղը կայնած էինք. դողդողալով ձեռքը պագի. առավ զիս նստեցուց մեծ ուսող տղուն քով. ճանչցա. մեր դրացիին տղան էր...

«Քիչ մը հետո ձեռքես բռնելին վեր տարին «ուսում-նարանը» կամ, ինչպես Մաղկոյին մեջ կըսեին, «լուսում-նարանը»... Սրահին մեկ կողմը ամպիոնի պես բարձր բան մը կար, որուն վրա ելանք քանի ոտք սանդուխով: Ամպիոնի գագաթը բազմած էր, ինչպես արծիվը բարձր քարին գլուխը, խոժոռադեմ մարդ մը, անժպիտ դեմքով, ահարկու աչքերով: Ձեռքն երկնցուց. պագի, բայց հազիվ թե ետ դարձա, արծիվը խոյացավ վրայես, ցատկեց վար իջավ և տղու մը օձիքեն բռնելով գետինը պառկեցուց, սկսավ ծեծել. ես դողդողալով նորեն վար իջա: Ուսում-նարանի կառավարիչը, կամ թե դահիճն ալ այդ մարդն էր...»[1]:

Թաղային այդ վարժարանում դպրոցական կարգա-պահությունը հիմնված էր գավազանի վրա: Ամիրաներն ու աղաները, որոնց իրավասության տակ էին վարժա-րանները, քաջալերում, խրախուսում էին այն ուսուցիչ-ներին, որոնք սարսափ էին ազդում երեխաներին:

Ուսուցիչների մեծ մասը սահմանափակ մտքի տեր տգետ մարդիկ էին, հեռու որևէ առաջավոր գաղափարից կամ գիտական պաշարից: Նյութական անապահովու-թյունը, թշվառ վիճակը նրանց կախման մեջ էին դրել հատկապես հարուստ աշակերտներից, որոնց նախաճաշի ու ճաշի ավելցուկներով էին սնվում: Նրանցից ոմանք հարուստ երեխաների նկատմամբ եղել են շողոքորթող, քծնող, վիչող: Միանգամայն այլ վերաբերմունք են ունե-

[1] «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, № 159:

ցել աղքատ, համարակ ընտանիքի երեխաների նկատմամբ, նույնիսկ եթե վերջիններս եղել են լավ սովորող, կարգապահ։

Հատկապես մի քանի ուսուցիչներ Թարգմանչաց վարժարանում աչքի են ընկել իրենց խստությամբ։ Այդպիսի դաժան ուսուցիչներից է եղել կրոնի դասատու Ավետիս Պերպերյանը, որի մասին տխուր հիշողություններ են պահել ոչ միայն Արփիարյանը, այլև շատ ուրիշներ։ «Որ ոչ լուիցի ունկամբ, լուիցի թիկամբ», այս է եղել նրա սիրած սկզբունքը։ Լսողությունից թույլ լինելով, նա «Կը կարծեր թե տղաները ալ իրենց ականջովը չեն լսեր ու միշտ կը խոսեր անոնց թիկունքներուն հետ»[1], գրում է Արփիարյանը։

Այդ ժամանակ՝ մեռած, անհասկանալի գրաբարն էր ամենուրեք ուսուցվում երեխաներին, որոնք դրանից ոչինչ չէին հասկանում և բավարարվում էին անգիր անելով։ Դա միանգամայն համապատասխանում էր դասավանդման սխոլաստիկ մեթոդներին։ Աշակերտների ուսման մակարդակը չափվում էր այն բանով, թե նրանք ինչքան շատ կարող են անգիր սովորել «Քրիստոնեականի» հարց ու պատասխանները, եկեղեցական աղոթքները։ Եթե սրա վրա ավելացնենք նաև այն, որ դասավանդված առարկաների կեսից ավելին կրում էր կրոնական բնույթ, ապա պարզ կլինի այն ողբալի արդյունքը, որ ստանում էին երեխաները ի հաշիվ այդքան տառապանքի։

Արփիարյանի հայրը Կ. Պոլսում ոչ մի հիմնական զբաղմունք չի ունեցել, ապրել է Ակնից բերած հարըս-

1 «Հայրենիք», 1892, № 106։

տությամբ: Համենայն դեպս նրա ընտանիքը համարվել է Օրթագյուղի բարեկեցիկ ընտանիքներից մեկը:

1859 թվականին մեռնում է Փիլիպոս Արփիարյանը: Թարգմանչաց վարժարանի հոգաբարձուները, որոնք եղել են ակնցիներ և Փիլիպոսի մտերիմները, որպես մխիթարություն, իրենց բարեկամական պարտքը կատարելու համար, Արփիարյանին «վեր» են հանում, փոխադրում բարձր դասարան, տալով նրա ձեռքը Չալըխյանի քերականությունը:

Այստեղ էլ շարունակվում են գրաբարի տառապանքները:

«Ու սկսա ուրիշ ընկերներու հետ դոց ընել՝ ուղղական բան, սեռական բանի, անմիջապես ետևեն եկող խոտորումներն ալ մեկտեղ: Ետևեն եկավ ուղղական քաղաք, սեռական քաղաքի, ան ալ իր խոտորումներուն կառաշարովը: Ալ հետո կարգավ. վերջ չունին, որ վերջը բերեմ: Գացինք ու գացինք...

Ան ինչ բաներ էին, երբ դասարանեն վերադարձին մեծ սրահին մեջ, ճաշեն առաջ, կառավարիչ պարոն Պողոսը կը բանար օրագրությունը՝ մեր դասավճիռները կարդալու համար: Ու հատիկ-հատիկ շեշտելով անգթորեն կը հնչեր անունները. կարծես դեռ ձայնը կը լսեմ.

Ռոմանոս Գևորգյա՛ն
Թովմաս Փափազյա՛ն
Արփիար Փիլիպոսյա՛ն ու կարգավ:—

— Երկու սահաթ ոտքի վրա, երկու սահաթ ծունկի վրա, սահաթ մը ետքն ալ գիշեր մը չոր հաց:

Ինչո՞ւ այս պատիժները. շատ անգամ անոր համար, որ «հայցական հոլովի սեռի խնդիրը» ու «բնության» չեմ գիտեր ինչ հոլով խնդիրը իրարու հետ շփոթած էինք: Թեև

կառավարիչն ալ այդ տարբերության վրա գաղափար մը ունենալե շատ հեռու էր...»։

...Ու հավատացեք, որ այս դրաբարյան տառապանքները կը կրեինք, երբ մեր մեջեն էն մեծը հազիվ թե 11—12 տարեկան կար։

Բարեբախտաբար տարին քանի մը անգամ ավետիս կլսվեր, աշակերտներեն մեկը պոռալով սրահեն ներս կը մտներ։

«Ու, տղաք, հայդե, դպրոցը ավրվեցավ, տղաները կռիվ ըրին։

Ալ հարցնել փնտրել չկար... Շարական-մարական գետինը կը նետեինք՝ երբ պատիժի էինք և շիտակ տուն։ Դպրոցին փակումը քանի մը ամիս կտևեր և այդ միջոցին խելքերնիս գլուխնիս կուգար, մարմիննիս ալ կը հանգստանար...»[1]։

Թարգմանչաց դպրոցում եղել են նաև հմուտ ուսուցիչներ, որոնք երեխաների վրա թողել են բարերար ազդեցություն։ Դրանցից է եղել թվաբանության ուսուցիչ Գաբրիել Ներշապուհը[2], որի մասին լավ տպավորություններ են պահել Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը և ուրիշներ։

Նա դասերից առաջ և դասերից հետո իր շուրջն է

---

[1] «Հայրենիք» օրաթերթ, 1894, № 938։

[2] Գաբրիել Ներշապուհը եղել է նաև բանաստեղծ, թարգմանիչ։ 1894 թվականին լույս է ընծայել իր «Գարնան շողեր, աշնան ցողեր» բանաստեղծությունների ժողովածուն։ Հիշատակության արժանի է ֆրանսիացի Ա. Դըբեի «Առողջապահություն և բնախոսություն ամուսնության» գրքի նրա թարգմանությունը, որն արժանացել է երեք տպագրության (Գ. տպագրությունը կատարվել է 1885 թվականին)։

հավաքել ուշիմ երեխաներին և իր ուժերի չափով նրանց սովորեցրել է պատմություն, տնտեսագիտություն: Երեխաների մեջ նա սեր է առաջացրել ոչ միայն դեպի հայ գրականությունը, այլև եվրոպական գրականությունը: Աշակերտներն առաջին անգամ նրանից են լսել Հյուգոյի, Դոդեի և ուրիշ ֆրանսիացի գրողների անունները, ծանոթացել նրանց երկերին, և հափշտակությամբ կարդացել են, ինչ որ կարողացել են ճարել:

Գրասեր պատանիները կարդում են Իզմիրի և Կ. Պոլսի տպարաններից դուրս եկած ֆրանսերեն վեպերի թարգմանությունները, երբեմն նաև բնագրերը: Աստիճանաբար նրանց մեջ արմատանում է գրականության ճաշակը: Ընթերցանությունը կատարվել է անկազմակերպ: Նրանք շատ ավելի ենթարկվել են ֆրանսիական արկածային, ռոմանտիկական վեպերի ազդեցությանը, քան սոցիալական հարաբերություններ շոշափող վեպերի: Ավելի ուշ շրջանումն է, որ Դյումային, Լամարտինին և այլ հեղինակների փոխարինել են Վ. Հյուգոն, Ա. Դոդեն, Է. Զոլան: Եթե գրական ազդեցությունը համեմատաբար թույլ է եղել աշակերտության վրա, ապա եղել է մի այլ ավելի ուժեղ ազդեցություն, որը վճռական դեր է կատարել Արփիարյանի կյանքում:

Արփիարյանը մորից է ստացել գավառին վերաբերող իր առաջին տպավորությունները, ծանոթացել Ակնա անգիր բանահյուսությանը, սովորություններին, այնքան գյութիչ զրույցներին ու հեքիաթներին:

Ինչպես նշեցինք ներածական գլխում՝ սուլթանական կառավարության կողմից գավառներում ստեղծվել էր ամենադաժան պայմաններ: Հայ ժողովուրդը ապրում էր կիսաճորտական վիճակում: Նրան ոչ միայն թալանում,

կեղեքում էին ամենավայրագ եղանակներով, այլև՝ որոշ նահանգներում հայ գյուղացին անգամ առուծախի առարկա էր։

Այս բոլորը հայ աշխատավոր գյուղացուն դրել էր իրավական ու տնտեսական անտանելի վիճակի մեջ։

Օրինական և ապօրինի տասնյակ հարկերը, այդ հարկերի գանձման բարբարոսական եղանակները, պարբերական թալանն ու կոտորածները հարկադրում էին հայ գյուղացիներին թողնել իրենց դարավոր հայրենիքը, տուն ու տեղը և տասնյակ հազարներով թափվել կենտրոնական քաղաքները, մանավանդ Կ. Պոլիս՝ մի կտոր հաց վաստակելու համար, գյուղում թողած իրենց ընտանիքին մի քանի գրոշ փող ուղարկելու համար։

Ոչ մի գրական երկ, ոչ մի վեպ կամ բանաստեղծություն այնքան չէր կարող մարդկանց մորմոքել, հուզել ու ազդել նրանց զգացմունքների վրա, որքան հայ գեղջկուհու պարզ, անպաճույճ, անկեղծ ու սրտի խորքից գրված նամակը Պոլսում՝ օտարների դռանը քարշ եկող իր ամուսնուն, որը ամուսնության հենց առաջին ամիսներից ուղևորվում էր դեպ անծանոթ քաղաքների լաբիրինթոսները։

Արփիարյանի ընտանիքում ու շրջապատում յուրաքանչյուր օր երկրից պանդուխտներին եկած նամակներ էին ընթերցվում, որոնք անձրևի կաթիլների նման վշտի ու տառապանքի շիթեր էին մաղում զգայուն պատանու հոգու վրա։

«Մանկութենե ի վեր կարդացած եմ այդ նամակները,— գրում է Արփիարյանը,— լսած եմ ակնցիներու պատմությունները, տեսած եմ անոնց արցունքներն ու

այդ ամենը վրաս խոր տպավորություն թողած են և սիրաս լեցուցած են այնպիսի զգացումներով, զորս պիտի կարենամ մասամբ բացատրել, եթե օր մը ինձ հնարավոր ըլլա գրել ակնցիններուն կյանքն այն վեպը, որուն կը տենչամ երկար ատենե ի վեր»[1]:

Սերը դեպի հայրենիքը, հայրենիքից եկած պանդուխտները, չափազանց վառ է եղել 12—14 տարեկան այդ պատանիների մեջ: Համոզված՝ որ ի վիճակի չեն մոտիկից օգնել իրենց թշվառ հայրենիքին, նրանք ցանկանում են իրենց ուժերի չափով օգնել պանդուխտներին: Գավառական դպրոցազուրկ քաղաքներից և գյուղերից եկած այդ մարդիկ, որոնք մայրաքաղաքում գերազանցապես զբաղվում էին բեռնակրությամբ կամ ֆիզիկական այլ աշխատանքներով, երկրից իրենց հետ բերել էին առողջություն, ֆիզիկական ուժ, կորով, աշխատասիրություն՝ հատկություններ, որոնք աստիճանաբար խամրում էին մայրաքաղաքի ապականված մթնոլորտում:

Բուրժուական քաղաքի ծանր պայմաններում ամեն մի ավիթով չխաբվելու, կույր չգնալու համար նրանք կարիք ունեին գոնե իրենց աշխատանքի գրանցումը ճշտելու չափ գրաճանաչ դառնալու, իրենց աշխատավարձը հաշվելու չափ թվաբանություն գիտենալու: Այս օգտակար աշխատանքին է, որ ցանկանում են լծվել Թարգմանչաց վարժարանի աշակերտները:

1864 թվականի մայիսի 24-ին Արփիարյանը և նրա մի քանի ընկերները, հավաքվում են իրենց ուսուցիչներից մեկի տանը և հիմնադրում «Թարգմանչաց վարժա-

[1] «Հայրենիք», 1891, № 18:

յանի Սանուց ընկերությունը», որի նպատակն էր ամեն կիրակի պանդուխտների համար կազմակերպել պարապմունքներ։ Աշակերտական այս նախաձեռնությամբ էլ սկսվում է Արփիարյանի հասարակական գործունեությունը։

Այս պարապմունքներին մասնակցած աշակերտները հետագայում գրել են, թե ինչպիսի կանոնավորությամբ ու հաճույքով էին իրենց ուսուցիչները հանգստի ու զբոսանքի ժամերը տրամադրում պանդուխտներին գրել-կարդալ սովորեցնելու գործին, և թե իրենք էլ ինչպիսի ջանասիրությամբ ու երախտագիտությամբ լսում էին իրենց փոքրիկ ուսուցիչներին, սովորում նրանց ավանդած դասը։ «Կիրակին չէր բավեր,— գրում է Արփիարյանը,— գիշերներն ալ կերթայինք»։

Հայրենասեր այդ աշակերտները և նրանց քաջալերող ուսուցիչները Հայաստանից եկած անգրագետ պանդուխտներին դաստիարակելով՝ ցանկանում էին նրանց միջոցով լուսավորության շիթերը նետել նաև խավարի մեջ խարխափող գավառը։ Գավառը լուսավորելու ձգտումը այնքան խորն էր աշակերտների մեջ, որ նրանցից մի քանիսը դեռևս կյանք չմտած, ցանկացել են մեկնել Վան կամ ուրիշ քաղաքներ՝ ուսուցչական աշխատանք կատարելու։ Արփիարյանը ևս ունեցել է գավառ մեկնելու տրամադրություն, սակայն չի ցանկացել այդ պատասխանատու քայլին դիմել՝ ուսման խղճուկ պաշարով։

Այդ տարիներին Պոլսում չի եղել հայկական միջնակարգ դպրոց։ Թաղային դպրոցներն ավարտող աշակերտները մեծ մասամբ հետևել են արհեստների։ Քչերը միայն, որոնք նյութական հնարավորություն են ունեցել, շարունակել են իրենց ուսումը անհատ դաստիարակների

մոտ, իսկ ավելի բարեկեցիկ պայմաններում գտնվող ընտանիքներն իրենց որդիներին ուղարկել են Եվրոպա՝ Փարիզում, Վենետիկում կամ այլ քաղաքներում կրթություն ստանալու։

Արփիարյանը ուսումը շարունակում է Մխիթարյանների Մուրադ-Ռաֆայելյան վարժարանում։

* * *

Վենետիկի Մուրադ-Ռաֆայելյան դպրոցը գործում էր եվրոպական համապատասխան աստիճանի վարժարանների կայուն ու մշակված ծրագրով, որին ավելացվում էին հայկական կրթության համար անհրաժեշտ առարկաները։ Վարժարանի ուսման շրջանն էր վեց տարի։ Առաջին չորս տարիների ընթացքում աշակերտը սովորում էր լեզուներ (հայերեն, ֆրանսերեն, իտալերեն), ինչպես նաև պատմություն, աշխարհագրություն։ Վերջին երկու տարիներին նա սովորում էր իրավագիտություն, բնագիտություն և մաթեմատիկա։

Ինչ խոսք, որ Կ. Պոլսի դպրոցների հետ համեմատած Մխիթարյանների այս դպրոցը ուներ առավելություններ։

Բայց կար մյուս կողմը։ Մխիթարյանների դպրոցներն իրենց բնույթով կրոնական էին, կոչում ունեին պրոպագանդելու կաթոլիկությունը, որը ծառայում էր եվրոպական գաղութարարների նվաճողական պլաններին։ Մխիթարյանների դպրոցում աշակերտներին տրվում էր ասկետական դաստիարակություն։ Օրինակ, Ս. Ղազար կղզու դպրոցում ընդունված 10—12 տարեկան տղան մոտ տասը տարի ապրում էր բոլորովին կտրված

արտաքին աշխարհից: Ընծայարանում իր մտքի հորիզոնն էր վանքի առջև տարածված միապաղաղ ծովը, փոքրիկ պարտեզը: Մի փոքրիկ ածու էր նրա զբոսավայրը: Միանգամայն կտրված լինելով արտաքին աշխարհից, աշակերտը մոռանում էր, որ իրենից բացի աշխարհում մարդիկ կան, կյանք կա: Երբեմն միայն մի նորեկ տղա հիշեցնում էր նրան այդ անծանոթ աշխարհի գոյությունը:

Աշակերտը չորս տարի այս պայմաններում Ընծայարանում սովորելուց հետո՝ անցնում էր հաջորդ դասարանը: Այստեղ էլ կյանքը նույնն էր, այն տարբերությամբ, որ կապը արտաքին աշխարհի հետ բոլորովին կտրված էր: Կաշկանդումը հասնում էր կիսաբանտարկության: Պատանին իր դասատուներից բացի ուրիշ մարդկանց, նույնիսկ ուրիշ վարդապետների հետ խոսելու իրավունք չուներ:

Նա տասը տարի սև սքեմ հագած, գլխիկոր դասարանից տաճար, տաճարից դասարան էր գնում՝ օրը մի քանի անգամ: Սովորում էր գրաբար, քրիստոնեության պատմություն, եկեղեցական պատմություն, լատիներեն և հունարեն: Նրա միտքը հարմարվում էր անգիր անելու և ոչ դատելու, տրամաբանելու, որոնելու, որը անհրաժեշտ չէր համարվում, որովհետև նա քննելու, բաղդատելու, վճռելու իրավունք չուներ: Ինչ որ «սուրբերը», «հայրապետները» ասել էին, օրենք էր: Աղոթք, խունկի բուրմունք, միապաղաղ կյանք, մոմի դեղին պլպլացում,— այս բոլորը ազդելով երեխայի վրա, աստիճանաբար կերպարանափոխում էին նրան, դարձնում թույլ ու մելամաղձոտ, թախծոտ մի պատանի, զուրկ ապագայի որևէ հեռանկարից:

Դատելու կարողության թուլացումով թուլանում էր նաև պատանու կամքը։ Երեխայի կամքը Աբբահոր կամքն էր։ Հնազանդիլ — այս էր գերագույն օրենքը։ Երեխայի ծնողներն էլ վերջ ի վերջո այդ սևազգեստ վարդապետներն էին, որոնք երբեք չունեին ծնողական այն գուրգուրանքը, որ նա տեսել էր մանկական հասակում իր հոր ու մոր, քրոջ կամ եղբոր մոտ։ Այժմ նա մխիթարվում էր միայն այդ քաղցր անունները հիշելով, անուններ, որոնք սակայն տարիների ընթացքում աղոտանալով, աստիճանաբար հեռանում էին իր հիշողությունից, իր սրտում թողնելով անորոշ երազային դիմագծեր։

Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի ուսումնական ծրագիրը աննշան չափով միայն տարբեր էր ս. Ղազար կղզու դպրոցի ծրագրից։ Նրա բնույթը աշխարհիկ էր, սակայն վերջ ի վերջո այդ երկու դպրոցների էությունը, ոգին նույնն էր, դաստիարակության հիմքում ընկած էր նույն կաթոլիկական կրոնն իր անվերջանալի աղոթքներով, մաղթանքներով, «սրբերով» ու հրաշքներով։

Արփիարյանը դառն հիշողություններ է պահել հոգեմաշ, միօրինակ ու տաղտկալի աղոթքներից, որոնք օրը մի քանի անգամ կրկնվում էին, առավոտ կանուխ, դասարան մտնելիս, ճաշի ժամանակ, երեկոյան։ Յուրաքանչյուր օրն իր ավուր պատշաճի աղոթքն ուներ — «Հավատով խոստովանիմ», «Լիթանիա», «Ողջույն քեզ» և այլն։

«Հավատալը» իր օժանդակ աղոթքներով համեմատաբար շուտ կը լմնար, — գրում է Արփիարյանը, — բայց «Լիթանիան» ու «Ողջույն քե՜զը» ա՜խ անվերջանալի էին։ Հայր, որդի, հոգի, ամենուն ալ առանձին-առանձին պաղատանքներ, «ողորմյաց մեզ»-ներով, ահագին շարք մըն

ալ աստվածածնի «տուն փղոսկրյա, ողորմյաց մեզ», «տաճար ոսկեղեն, ողորմյաց մեզ» շարե, որչափ կրնաս, ամենուն վերջը դնելով «ողորմյաց մեզը»[1]:

Օրթագյուղի Թարգմանչաց վարժարանում իշխում էր գավազանը. աշակերտը գերազանցապես ենթարկվում էր մարմնական տանջանքների, իսկ այստեղ կաթոլիկական դաստիարակությունն աշակերտի մարմնին չէր դիպչում, սակայն ճնշում, ճմլակի տակ էր պահում նրա հոգին, որպեսզի «ազնվացնի» այն: Երեխան այստեղ էլ, ինչպես վանքում, կտրվում էր արտաքին աշխարհից, գերազանցապես կապվում իր ուսուցիչների և գրքերի աշխարհի հետ: Նա զրկվում էր կյանքի հետ շփվելու, այն ճանաչելու հնարավորությունից: Երեխայի մեջ սերմանվում էր այն գիտակցությունը, թե կան բարձր ու ստորին ազգեր, որ եվրոպացիները՝ ֆրանսիացիները, անգլիացիները, իտալացիները ունեն հետամնաց ժողովուրդներին կրթելու միսիա. և որ հայ ժողովուրդը լավագույն դեպքում կարող է ընդօրինակել եվրոպական լուսավորությունը:

Եթե հետամնաց Թյուրքիայից հեռու, Եվրոպայի սրտում գտնվելը առավելություն էր Մուրադ-Ռաֆայելյան դպրոցի համար, ապա մեծ թերություն էր մայր հողից, աշխատավոր ժողովրդից հեռու լինելը:

Իր հիշողություններում Արփիարյանը ուշագրավ դիտողություններ է արել այդ վարժարանի ու Հայաստանում գործող Գևորգյան ճեմարանի մասին և փորձել է բացատրել, թե ինչու եվրոպական քաղաքներից մեկում հիմնված Մուրադ-Ռաֆայելյան վարժարանը հայ հասարակությանը ավելի քիչ թվով օգտակար անհատներ է

---

[1] «Հայրենիք», 1894, № 919:

տվել, քան հետամնաց մի աննշան գյուղ հանդիսացող Էջմիածնում հիմնված Գևորգյան ճեմարանը:

Արփիարյանը դա բացատրել է այն բանով, որ Գևորգյան ճեմարանի ուսանողը իր շրջապատում տեսնում է ոչ միայն Հայաստանի չքնաղ և կուսական բնությունը, նրա հնությունները, լսում ավանդությունները, այլ ապրելով բուն ժողովրդի մեջ, շփվում է նրա հետ, սովորում նրա պահանջները, դարավոր իմաստությունը, կենսափորձը, բնության դեմ մաքառելու նրա եղանակները, և դառնում է կյանքի մարդ, կոփվում դժվարություններ հաղթահարելու կամքով: «Ճեմարանի աշակերտները բուն ժողովրդի մեջեն եկած են և բուն ժողովրդի զավակ են, գիտեն անոր պետքերը»,— գրում է Արփիարյանը:

Այսպիսի պայմաններից հեռու գտնվող մի դպրոցում էր սովորում Արփիարյանը:

Բնականից անհանդարտ, մասամբ ըմբոստ պատանին բարեբախտաբար նվազագույն չափով է ազդվել վարժարանի խամրեցնող մթնոլորտից: Նրա մեջ միշտ վառ են մնացել հայրենիքի, կյանքի սերը, աշխարհիկ հակումները: Դպրոցի տխրազդեցիկ կյանքի մեջ նա եղել է մի կենսախինդ բացառություն, ուրախ, աշխույժ, կատակասեր: Նրա զվարճախոսությունները, համարձակ դատողությունները եթե ուսուցիչներից մի քանիսին թվացել են անհամատեղելի կրոնա-բարոյական բնույթ ունեցող մի դպրոցի պահանջների հետ, ապա այլ ուսուցիչների, մանավանդ դասընկերների համար, եղել են հաճելի:

Արփիարյանը հետագայում գրած իր հիշողություններում ամենամռայլ գույներով նկարագրելով իր հա-

մար խորթ մխիթարյան միջավայրը, մի փայլուն դեմք է տեսել այդ խավարում, դա Ղևոնդ Ալիշանն է, որը այդ տարիներին եղել է Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի տեսուչը և նկատելի ազդեցություն է թողել աշակերտների վրա, ձգտել է նրանց մեջ վառ պահել հայրենիքի սերը։ Ճիշտ է, Ալիշանի հայրենասիրությունը բուրժուական սահմանափակ հայրենասիրություն էր, սակայն օտարացնող, ռեակցիոն այն մթնոլորտում, որի մեջ գտնվում էին Մուրադ-Ռաֆայելյան վարժարանի աշակերտները, այն նկատելի դրական դեր կարող էր կատարել և կատարել է։

1870 թվականի ամռանը՝ երեք տարի սովորելուց և ուսման շրջանն ավարտելուց հետո, Արփիարյանը դրաբարի բավականաչափ գիտելիքներով վերադառնում է Պոլիս։

* * *

Արփիարյանը Պոլիս է վերադառնում մեծ երազներով, նրա վառ երևակայությունը մեկը մեկից ավելի գրավիչ ծրագրեր է պատրաստում։ Դրանց մեջ կարևոր տեղ է բռնում Կ. Պոլսում կամ գավառում ուսուցչություն անելը, բարեգործական կամ կրթասիրական ընկերություններ հիմնելը։ Նա բոլորովին չի մտածում այն բնագավառի մասին, որին հետագայում նվիրվեց մինչև իր կյանքի վերջը՝ մամուլի ու գրականության բնագավառի։

Արփիարյանի այդ բոլոր երազները, սակայն, կարճ ժամանակում փշրվում են։ Նրա ընտանիքը գտնվում էր տնտեսական ամենածանր պայմաններում։ Քայքայված

ամիրայական տոհմի վերջին շառավիղները ապրում էին իրենց փառքի տխուր վերջալույսը։

1870 թվականի աշնանը, նա պաշտոնի է անցնում պատրիարքարանում, որպես «Երեսփոխանական ժողովի» օգնական-քարտուղար։

Պատրիարքարանի այս աշխատանքն ուներ մի առավելություն։ Նոր կյանք մտնող պատանին այնտեղ շփվում է հայ հասարակության բոլոր խավերի հետ, մոտիկից ճանաչում կյանքը իր բազմազան կողմերով, տեսնում պատրիարքարանի ներքին բարոյական սնանկությունը։ Նա այդտեղ ճանաչում է թե՛ հարուստ դասի ներկայացուցիչներին, թե՛ էսնաֆներին, ուսումնասիրում է այդ երկուսի միջև մղվող պայքարը և հենց առաջին օրերից, չնայած իր ծագմանը, իրեն զգում է անվերապահ թշնամի հարուստ դասի։

Պատրիարքարանում Արփիարյանը ճանաչում է նաև պանդուխտ հայերին, որոնք հազարներով լցվել էին մայրաքաղաք և ամարդի կերպով կեղեքվում էին հայ և օտար շահագործողների կողմից, և որոնց բազմաթիվ արդարացի պահանջների նկատմամբ քար անտարբերություն էր պահում պատրիարքարանը։

Եթե պոլսահայ կյանքը ճանաչելու, ուսումնասիրելու համար Արփիարյանի պաշտոնը օգտակար էր և հետաքրքիր, ապա աննշան ռոճիկը բոլորովին չի օգնում նրան, ապահովելու ընտանիքի կարիքը։

Մինչև 1871 թվականի վերջերը այդ պաշտոնում մնալուց հետո նա հարկադրված է լինում որոնել ապրուստի նոր միջոցներ։

Օրթագյուղում և առհասարակ Պոլսի մյուս թաղամասերում ապրում էին հարուստ դիրքի տեր բազմաթիվ

ակնցիներ, մեծ մասամբ դրամափոխներ (սարաֆներ), որոնք մոտիկից ճանաչում էին Փիլիպոս Արփիարյանին։ Այս մարդկանց շարունակական հորդորով Արփիարյանը 1872 թվականի հունվարի 5-ին պատրիարքարանի պաշտոնը թողնում է իր կրտսեր եղբորը՝ Ալեքսանին և հունվարի 7-ին աշխատանքի անցնում վարկային գործարքներով զբաղվող Խաչիկ Թոփհանելյանի մոտ։

«Տխուր, անձրևոտ իրիկուն մըն էր, —գրում է Արփիարյանը,— 1872 թ. հունվարի 5-ին, երբ մութը կոխելէն հետո Խավյար խանի մէջ մտա սենյակ մը, ուր խառնաշփոթություն կտիրեր։ Տասնի չափ բեռնակիրներ, կաս-կարմիր կտրած, քրտինքնին կսրբեին. իրենց կռնակեն վար նետած էին կամ նետելու վրա էին պարկեր՝ մեճիտիեով լեցուն. չորս-հինգ հոգին, քանի մը հայ կխոսեին, կհաշվեին, կգրեին, սեղանի մը վրա ոսկի լեցված էր, ու կաղի հոտը՛ տարածված՝ մթնոլորտը բոլորովին հեղձուցիչ կըներ։

Կես ժամու չափ ուշադիր կեցա։ Սենեկին տերը, Թոփհանելյան Խաչիկ աղա, հետո խնդալով մը հարցուց.

— Ընտո՞ր կգտնես, խելքդ տեղ կընե՞, պիտի կըրնա՞ս ընել։

Կես բոպեի մը չափ վարանումե հետո պատասխանեցի.

— Ինչո՛ւ չէ։

— Դուն գիտես, ըսավ, վերջը մեզի պատասխանատու չըլլես, թե որ խելքդ տեղ չի ըներ, գործդ մի ձգեր պարապ տեղը։

— Պիտի կրնամ ընել ըսի և մեկնեցա։

Ըսածիս ես ալ քիչ մը դժվար կհավատայի. բայց միտքս դրած էի, թե ամեն դժվարությանց կրնամ հաղթել:

Ծնունդին երկրորդ օրեն գործի սկսա. առտուները կանուխ կուգայի մինչև գիշերվան 2—3 կաշխատեինք, ու հետո տետրակները միասին առած, գիշերը տունը կաշխատեի. 3 ամիս գիշերները միայն 4—5 ժամ կը քնանայի. կիրակի օրվան հանգիստն անծանոթ էր ինծի, բայց ամեն դժվարությանց հաղթած էի»[1]:

Արփիարյանը, որ այնքան խիստ հոդվածներ է գրել վաճառականների, առևտրականների և առհասարակ ամեն կարգի հարուստների դեմ, համակրանքով է խոսել Թոփհանելյանի մասին: Նրան ներկայացրել է ազնիվ, բարեհոգի մի մարդ:

Իդեալականացնելով Թոփհանելյանի նման մարդկանց, նա հետապնդել է մի նպատակ, գավառից եկած, դիրքի տեր դարձած հայ հարուստին հակադրել Կ. Պոլսի միջավայրի ծնունդ հարուստներին, սակայն միանգամայն սխալվել է: Հետագայում իր պատմվածքներից մեկում («Հարուստին կոչումը») նա հարկադրված եղավ ցույց տալ, որ ոչ մի տարբերություն չկա այս երկու կարգի հարուստների միջև և որ գավառից եկող հարուստը նույնքան դաժանությամբ է շահագործում հենց իր հայրենակից պանդուխտներին, որքան պոլսեցին:

Արփիարյանն ավելի ճշմարտացի է և անկեղծ, երբ նույն այդ հուշերում նկարագրում է Թոփհանելյանների մոտ որպես բեռնակիր աշխատող պանդուխտներին: Նրանք, չնայած կարոտ են օրվա հացին, պահում են

1 «Հայրենիք», 1892, № 477:

գավառից իրենց հետ բերած և ժողովրդի համար բնորոշ հատկանիշները — ազնվությունը, հավատարմությունը, մեծահոգությունն ու աշխատասիրությունը։ Նրանք պարկերով ոսկի ու արծաթ են կրում, լցնում սեղանների վրա, որպեսզի հաշվեն գրագիրները և իրենք այդ ամբողջ հարստության մեջ կանգնում են անտարբեր, վեհանձն, մի տեսակ արհամարհոտ ակնարկով նայելով այդ բոլորին, առանց մտածելու աշխատանքի վճարից բացի՝ որևէ գրոշ ստանալու մասին։

Արփիարյանը Պոլսում անհամեմատ ավելի լայն հնարավորության ուներ կապվելու գրավաճառների հետ և նոր գրքեր ձեռք բերելու։ Այդ տարիներին է, որ նա կլանվում է ֆրանսիական մի քանի նշանավոր գրողների ստեղծագործություններով։ Հյուգոն, Դոդեն դառնում են նրա սիրած հեղինակները։ Նա սիստեմատիկաբար կարդում է բուրժուական ուղղության «Revue des deux Mondes» հանդեսը։ Այնտեղ ծանոթանում է ֆրանսիական գրական աշխարհի հետ։ Նույն այդ պարբերականի էջերից նա ծանոթանում է նաև ռուսական գրականության հետ և խանդավառվում նրանով։

Արփիարյանը Թոփհանելյանների մոտ մնում է երկար տարիներ։

Առաջին մի քանի տարիները նա գերազանցապես զբաղված է եղել դրասենյակային գործերով, սակայն 1876 թվականից սկսում է հետզհետե մասնակցություն ունենալ հանրային կյանքին, լինել ընկերական շրջաններում, շփվել Պոլսի առաջավոր մտավորականության հետ։

* * *

Ա. Արփիարյանը հասարակական ասպարեզ էր մտնում այնպիսի մի ժամանակաշրջանում, երբ հայ իրականությունում տեղի էին ունենում նկատելի իրադարձություններ։

Այսպես կոչված Ազգային սահմանադրության պատրանքները, որոնցով մի ամբողջ տասնամյակ օրորվել էր հայ բուրժուազիան, տեղի էին տվել. ցրվել էր դրանց մշուշը և հեռատես, ժամանակի առաջավոր մտածողները հայ ժողովրդի վիճակը գտնում էին նույնքան անմխիթար, որքան տասը տարի առաջ։

Միակ տարբերությունն այն էր, որ այժմ հայ հասարակական կյանքի ղեկավարությունը պատրիարքարանի և ամիրաների միահեծան իշխանությունից անցել էր հայ բուրժուազիայի ձեռքը, որի դեմ բուռն պայքարի մեջ էր արհեստավոր դասը։

Ինչպես ասվեց, 60—70-ական թվականներին արևմտահայ հասարակական և մտավորական կյանքի վրա ուժեղ ազդեցություն էր թողել Մ. Նալբանդյանը, որի գաղափարները պաշտպանվում և տարածվում էին «Մեղվի» շուրջը համախմբված դեմոկրատական մտավորականության կողմից։ Նալբանդյանի գաղափարները յուրովի ըմբռնելով պաշտպանում էին նաև հայ բուրժուազիայի առաջավոր թևին պատկանող մարդիկ։

Նալբանդյանի «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ» աշխատության մեջ արծարծվող գաղափարները զգուշությամբ քննարկվում էին մամուլում և առանձին հրատարակություններում։

Արփիարյանը, ինչպես պրոգրեսիվ շատ այլ երիտասարդներ, ջերմ վերաբերմունք է ունեցել Մ. Նալ-

բանդյանի նկատմամբ։ Հետագայում, խոսելով բանաստեղծ Միհրան Հովհաննիսյանի «Թամկական մրմունջք» գրքի մասին, նա գովատել է այդ ժողովածուն և այն միտքը հայտնել, որ Հովհաննիսյանին ժողովրդի հետ կապողը եղել է Նալբանդյանը, թե փոքր հասակից Միհրանի հայրը որդու մոտ կարդացել է մի արժեքավոր գիրք, սովորեցրել է հետևել այդ գրքի խրատներին, հավատարիմ մնալ նրա գաղափարներին, չմոռանալ այն։ Արփիարյանը գրում է.

«Եվ մեզմե ո՞վ մոռցած է զայն։ Այդ գրքի անունն էր «Երկրագործությունը իբրև ուղիղ ճանապարհ» և հեղինակին անունն ալ Միքայել Նալբանդյան»[1]։

Միհրան Հովհաննիսյանը, որի մասին խոսում է այստեղ Արփիարյանը, չափավոր գաղափարների տեր մի լիբերալ մտածող է։ Նրա ստեղծագործության վրա անհնար է գտնել Նալբանդյանի ազդեցությունը. էականն այստեղ այդ չէ։ Այս հավաստիացումը կարևոր է հենց Արփիարյանի համար։

Վենետիկից վերադառնալուց հետո Արփիարյանին հուզող հիմնական հարցերից մեկը դառնում է այնպիսի մի ընկերության հիմնումը, որը գործեր բացառապես գյուղական աշխատավորության համար։ Նա տեսել էր, որ Թարգմանչաց վարժարանում հիմնված Սանուց ընկերությունը պահում է իր գոյությունը, սակայն այն այժմ ի վիճակի չէր հիմք հանդիսանալու մեծ ծրագրեր ունեցող նման մի ընկերության։

Արփիարյանը և օրթագյուղցի երկու այլ երիտասարդներ, որոնք իր Ռափայելյան վարժարանի ընկեր-

1 «Արևելք», 1888, № 1389։

ներն էին, որոշում են իրենց խմբի մեջ ընդունել միաձայն հավանությամբ չորրորդ, հինգերորդ և հաջորդ ընկերներին և ստեղծել մի նոր ընկերություն։

1876 թվականի ապրիլ ամսին այդ երիտասարդները հրավիրում են իրենց անդրանիկ ժողովը, որպեսզի որոշեն ընկերության անունը։

Նրանցից մեկը առաջարկում է ընկերության անունը դնել «Երկաթագործ եղբայր» կամ այս կարգի մի բան։ Արփիարյանը առաջարկում է ընկերության անունը դնել «Նալբանդյանց»։

«Կը փափագեի ընկերության անունը «Նալբանդյանց» դնել։ Կովկասցի հեղափոխական բանաստեղծը գրաված էր մեր պատանեկության սրտերը։ Սիբիր մեռած էր Նալբանդյանց իբր հեղափոխական ու «Ազատն աստվածը» իր սրտեն դուրս ժայթքած էր մեկ ցայտումով, այն բոպեին, երբ սև կառքը իր դռան առջև կանգնած էր՝ զինքը մինչև Սիբիր քշելու։ Հիմա ալ գիտենք թե ճշմարտությունը վիպական զրույցներով խառն էր, բայց «Ազատն աստվածը» միշտ մեր ազգային երգն էր ու ինչ որ հավատացած էինք, անջնջելի հիշատակ մը թողած էր սրտներուս վրա»[1]։

Վերոհիշյալ տողերից երևում է, որ Արփիարյանին և նրա նման շատ ու շատ երիտասարդների Նալբանդյանը ամենից առաջ ոգևորում էր որպես բռնապետության դեմ մաքառող ռևոլյուցիոն մարտիկ։ Նալբանդյանի սոցիալական ծրագրին անհաղորդ են եղել այդ երիտասարդները։

---

[1] «Նոր կյանք», 1889, № 15։

Ընկերության հիմնադիր ժողովում չի անցնում Արփիարյանի առաջարկը: Երկար վիճաբանությունից հետո որոշում են ընդունել ազգային ընդհանուր գաղափար տվող մի անուն և ընկերությունը կոչվում է «Արարատյան»:

Այսպիսով, «Արարատյան ընկերությունը» պաշտոնապես հիմնադրված է հայտարարվում 1876 թվականի ապրիլի 15-ին:

«Արարատյան ընկերությունը», որի ծրագիրը բուրժուական լուսավորական հարցերից հեռու չէր գնում, արևմտահայ կյանքում նկատելի դեր է կատարել: Նա է, որ առաջին դպրոցներն է բաց արել գավառներում, գիր ու գրականություն տարածել հեռավոր գյուղերում:

1876 թվականի աշնանը Վանի Ալյուր գյուղում բացվում է «Արարատյան ընկերության» առաջին գյուղական դպրոցը: Նախակրթարաններ են բացվում Կեմ, Կուռնինց, Խարակոնիս և այլ գյուղերում:

Ա. Արփիարյանը և նրա ընկերները մտածում են կատարել հաջորդ քայլը և Վան քաղաքում բաց անել մի երկրորդական վարժարան, որի նպատակը լիներ ուսուցիչներ պատրաստել գավառական դպրոցների համար: Այսպիսի մի վարժապետանոցի,— ինչպես կոչում էին այն ժամանակ,—անհրաժեշտությունը զգացվում էր:

Արփիարյանը հետագայում գրած իր մի նամակում այդ մասին ասում է.

«Վարժապետանոցը վերածնության կեդրոն մը պիտի ըլլար ամբողջ հայ աշխարհի համար: Հայաստանի և Կիլիկիո ամեն քաղքե պիտի ընդունվեին աշակերտներ, որոնք հավաքվելով և վանեցիներուն հետ կրթվե-

լով, Վանը պիտի ըլլար մտավորական կեդրոն մը, ուրկէ մեկնող աշակերտները սերտ կապեր պիտի ունենային իրարու հետ»[1]:

Պոլսում կազմվում են միություններ, որոնց նպատակն էր օգնել «Արարատյան ընկերությանը»: Այդպիսի նպատակ էր հետապնդում «Ասիական» ընկերությունը, որի նախագահն էր Գր. Զոհրապը: Այդ ընկերությունն իր վրա է վերցնում Վանի վարժապետանոցը դասագրքերով ապահովելու գործը, իսկ «Միություն մանկանցը» հայթայթում է գրենական պիտույքներ:

Արփիարյանը մեծ կարևորություն է տալիս գաղափարական մի սերունդ պատրաստելու հարցին, այդ նպատակով Վան ուղարկում է մեծ քանակությամբ առաջադիմական գրականություն: Ուշագրավն այն է, որ այդ գրականության մի մասը նույնիսկ Պոլսում հանդիպում էր պահպանողական տարրերի հալածանքին և համարվում վտանգավոր: Վարժապետանոցում այդ կարգի գրականությունը ստացվել և ընթերցվել է գաղտնի:

Այդպիսի գրքերից էր, օրինակ, ժամանակի ամենաառաջադեմ մտածողներից մեկի՝ Գալուստ Կոստանդյանի «Մեթոդի վրա» աշխատությունը, որը Պոլսում համարվում էր անկրոնություն քարոզող մի գիրք: Թե՛ Պոլսում և թե՛ մանավանդ Վանում պահպանողականները հալածանք են սկսում «Արարատյանի» դեմ: Վանում այդ տարրերը հովանավորություն գտնելով խավարամոլ մի քանի հոգևորականների կողմից, ձգտում են խանգարել վարժապետանոցի գործունեությանը: Նրանք ամեն մի

---

1 Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 102:

առիթ օգտագործում են, որպեսզի փակեն դպրոցը և այդ նրանց հաջողվում է. Վարժապետանոցը երեք տարվա գոյությունից հետո փակվում է 1881 թվականի վերջերին։

* * *

Սկսվում է ռուս-թյուրքական պատերազմը, որը մեծ հույսեր է ներշնչում արևմտահայերին, հատկապես Ռուսաստանի սահմանների մոտ գտնվող նահանգների հայ գյուղացիությանը։

Ռուսական բանակները առաջանում են մինչև հայաբնակ նահանգները, իսկ Բալկաններից հասնում Պոլսի դռները։ Սան-Ստեֆանո գյուղում տեղի են ունենում Ռուսաստանի և Թյուրքիայի բանակցությունները։ օսմանյան կայսրության մայրաքաղաքում շրջում են հարյուրավոր ռուս սպաներ, որոնք իրենց խրոխտ, հաղթական քայլերով թունդ են հանում հայերի սիրտը։ Թյուրքական կառավարությունը հարկադրված է լինում մասամբ թուլացնել քաղաքական ճնշումը։

Հայ իրականության մեջ սկսվում է մի հուզող շրջան։

Ազգային սահմանադրության առաջին տարիների խանդավառությունը վերակենդանանում է։ Ժողովներում, հավաքույթներում, ճառեր են արտասանվում ի նպաստ հայ ժողովրդի ազատագրության։ Պոլսահայ թատրոնի բեմը ծառայում է որպես ագիտացիայի լավագույն միջոց. ժամանակի հայտնի դերասաններից Պետրոս Ադամյանը յուրաքանչյուր ներկայացումից առաջ հանդես է գալիս ազատագրական բովանդակությամբ ոտանավորների արտասանումով։ Նա բեմից հնչեցնում է բանաստեղծ Ռաֆայել Պատկանյանի «Հիմի էլ լռենք»,

Միքայել Նալբանդյանի «Ազատն աստվածը», որը նաև որպես երգ երգվում էր երեկույթներում: Առաջավոր գաղափարներով տարված երիտասարդները խնջույքներ, ճաշկերույթներ են կազմակերպում ի պատիվ ռուսական բանակում գտնվող հայ սպաների, որոնք Կ. Պոլսի հայերի կողմից ընդունվում են մեծագույն ցույցերով և օվացիաներով: Բացեիբաց խոսվում է Հայաստանի ինքնավարության մասին, թյուրքական բռնապետությունից ազատվելու մասին:

Քաղաքական այսպիսի հուզող մի շրջանում է, որ 1878 թ. գարնանից Արփիարյանը երևում է «Մշակի» էջերում որպես նրա սեփական թղթակիցը[1]:

Լեոյին գրած իր մի նամակում նա այսպես է նկարագրել իր ու «Մշակի» կապի սկզբնավորությունը: Հիշատակելով այն փաստը, որ Թիֆլիս՝ Հայկակ ստորագրությամբ ուղարկած իր անձնական նամակներից մի քանիսը Արծրունին հրատարակել է առանց իր համաձայնությունը վերցնելու, նա շարունակում է.—

«...օր մըն ալ ծրար մը «Մշակ» ստացա, որոնց մեջ տեսա իմ այդ նամակներս: Ստորագրված էին Հ. տառով: Արծրունին կը խնդրեր, որ շարունակեի իրեն ալ գրել: Շատ վարանոտ էի, շատ վախկոտ էի՝ Կովկասի հայոց համար գրելու վերջնական որոշում մը տալու:

---

1 «Մշակում» տպված Հայկակի առաջին նամակը լույս է տեսել թերթի 1878 թվականի № 43-ում և թվագրված է փետրվարի 22: Այդ հոդվածը, ինչպես նաև դրան հաջորդող այն բոլոր հոդվածները, որոնք տպագրված են մինչև նոյեմբերի 30-ը, ստորագրված են Հ. (Հայկակ ծածկանվան առաջին տառը): Այնուհետև, մինչև 1890 թվականը ստորագրել է Հայկակ, իսկ դրանից հետո՝ ***:

Առաջին փորձերը ըրի և ահա թղթակցություններս Արծրունին ալ Հայկակ ստորագրությամբ կը հրատարակեր ու մասնավոր նամակներով շնորհակալություն հայտնելե զատ, «Մշակի» մեջ ևս կը հայտարարեր թե Կովկասի մեջ Հայկակի ազդեցությունը օրե օր կավելնա։ Արծրունիին եղած այս քաջալերանքը սրտապնդեց զիս, զգացի թե «Մշակի» միջոցով կարող պիտի ըլլայի Ռուսիո և Թուրքիո հայոց փոխադարձ ծառայություններ մատուցանել»[1]։

Ա. Արփիարյանը «Մշակում» տպագրած իր թղթակցությունների ճնշող մասի մեջ օրը օրին ցուցադրել է Կ. Պոլսի և առհասարակ արևմտահայ իրականության համար բնորոշ, հայ հասարակական կյանքը հուզող շատ հարցեր կապված հայ ժողովրդի ազատագրական պայքարի, պոլսահայ վերնախավի քննադատության, հոգևորականության մերկացման, հայ ժողովրդի երկու հատվածների կուլտուրաների մերձեցման, նրանց գրականության փոխադարձ կապի հետ։— Այդ հոդվածները հարուստ նյութ կարող են տալ հայ ժողովրդի մտավոր անցյալը ուսումնասիրողներին, չնայած դրանց մեջ Արփիարյանը հայ հասարակական կյանքը հուզող սուր հարցեր գնահատել է «Մշակի» լիբերալ դիրքերից։

* * *

Հայ ժողովրդի արևմտահայ հատվածի ճակատագրի համար խոշոր նշանակություն ունեցող քաղաքական այդպիսի մի ժամանակաշրջանում գտնվելով «Մշակի»

[1] *Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 94—95։*

թղթակից, հասկանալի է, որ Արփիարյանը ամենից առաջ արտացոլելու էր հայ ժողովրդի և նրա առաջավոր ներկայացուցիչների ամենաջերմ վերաբերմունքը դեպի Ռուսաստանը, հատկապես դեպի ռուս ժողովուրդը, որի հետ մեր ժողովուրդը միշտ ձգտել է իր բախտը կապել դարերի ընթացքում, և որից սպասում էր նա իր ազատությունը:

Ի դեպ, երբ խոսվում է ռուսական օրիենտացիայի մասին, պետք է նկատի ունենալ, որ արևմտաեվրոպական պետությունների ինտերվենցիային հակառակ հայ ժողովրդի բախտը Ռուսաստանի հետ կապելը ընդհանուր առմամբ առաջադեմ երևույթ համարելով հանդերձ, չի կարելի անտեսել այն փաստը, որ ռուսական օրիենտացիայի պաշտպան բոլոր մարդիկ չէ որ կանգնած են եղել առաջավոր դիրքերում: Անգամ իր գաղափարախոսությամբ և հասարակական գործունեությամբ հետադեմ Խորեն Նար Բեյը որոշ շրջանում կողմ է եղել ռուսական օրիենտացիային, մեկնել է Պետերբուրգ Հայաստանի ազատագրությունը Ռուսաստանի հետ կապելու համար:

Արփիարյանը այս հարցում ոչ միայն տարբեր էր Նար Բեյից և սրբիշներից, այլև Գրիգոր Արծրունուց: Եթե Արծրունին ջերմորեն գնահատելով հանդերձ ռուսական կուլտուրան և գրականությունը,— և այդ նրա առավելություններից մեկն էր,— քաղաքական հարցերում մնում էր միապետական կարգերի, ցարիզմի ջատագովը, ապա Արփիարյանը բազմաթիվ առիթներով սուր քննադատության է ենթարկել ցարիզմի ազգային գաղութային քաղաքականությունը, հետագայում ցարին համեմատել է Աբդուլ Համիդի հետ, բայց մնացել է ռուսական օրիենտացիայի կողմնակից, հայտարարելով, որ

շրեաք է ցարերին ու նրա չինովնիկներին շփոթել ռուս ժողովրդի հետ։ Նա 1886 թ. գրած իր մի առաջնորդողում ուղղակի գրել է, որ ցարիզմի ազգային գաղութային քաղաքականությանը,— որի արտահայտություններից մեկն էր հայկական դպրոցների փակումը,— հավան չէ ռուս ժողովուրդը։ «Ռուս ժողովուրդը,— գրում է նա այդ առիթով,— հավան չէ յուր չինովնիկներու հայատյաց քաղաքականությանը։ Թեպետև կատկովներ, մալշանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ իրենց հարվածները կանգան հայոց դեմ, բայց ողջամիտ, լուսավորյալ մասը բոլորովին տարբեր կմտածե։ Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մ'է»։

Բացառությամբ հայ բուրժուազիայի որոշ գաղափարախոսների, ամբողջ հայ աշխատավոր ժողովուրդը, ինչպես իր ժամանակին ճիշտ կերպով նշել էր Մ. Նալբանդյանը, «տրամադրված էր Ռուսաստանի օգտին»։

Ռուսաստանի նկատմամբ այդ համակրական վերաբերմունքը առավել պարզ դրսևորվեց ռուս-թյուրքական պատերազմի օրերին։ Արփիարյանը իրական այդ վիճակն էր արտացոլում, երբ իր հենց առաջին թղթակցությունների մեջ ոգևորությամբ խոսում էր արևմտահայերի մեծ հույսերի մասին։ Նա գրում էր.

«Ռուսները Այ-Ստեֆանոս գալեն հետո մեր ազգային թերթերը սկսած են շատ ազատ գրել, մինչև անգամ կը համարձակին Թյուրքական Հայաստանի ինքնավարություն պահանջել։ Այս գիշեր փառավոր հանդես պիտի լինի Օրթագյուղի թատրոնի մեջ։ «Աղքատ Փարիզու» ներկայացվելեն հետո Պ. Հ. Ադամյան առաջին կարգի դերասանը, շարժումներով պիտի կարդա Նալբանդյանցի երգը, ինչպես ուրիշ անգամ ալ կարդացած է.

Պատկանյանցի «Հիմի էլ լռենք»։ Մեծ ոգևորություն կա այժմ այստեղ» [1]։

Թե ինչ ցույցերով ու խանդավառությամբ են Պոլսի հայերը դիմավորել ռուսական բանակում գործող հայ սպաներին, երևում է Արփիարյանի հետևյալ տողերից.

«Սան-Ստեֆանո ռուսական բանակին մեջ մի քանի հայ պաշտոնատարներ ալ կան, որոնք այցելության եկան Կ. Պոլիս և իրենց զգացումներ ու սրտի կերպարանք լավ տպավորություն գործեցին հայոց վրա։ Մուրադով գնդապետը, որ արքունի Թիկնապահաց խումբին կը պատկանի, շատ սիրելի և ժողովրդական եղած է այստեղ հայոց մեջ։ Ի պատիվ իրեն խնճույքներ տրվեցան» [2]։

Ռուսական բանակները երկար չմնացին Թյուրքիայում։ Սան-Ստեֆանոյի դաշնագրից կարճ ժամանակ անց՝ քաշվեցին դեպի ետ։

Ազատագրական պայքարից հեշտությամբ հրաժարվում է պոլսահայ բուրժուազիայի աջ թևը, որը միացած պահպանողական հոգևորականների հետ, պաշտպանում է այն կարծիքը, թե հայ ժողովուրդը օսմանյան գահին հնազանդ պետք է մնա, գոհանա այն շնորհներով, որ սուլթանը տալիս է հայերին, նրանցից մի քանիսին մինչև փաշայության աստիճանի հասցնելով։ Այլ խոսքով՝ այս կարգի մարդիկ պահանջում էին պահպանել մինչ այդ գոյություն ունեցող վիճակը, հնազանդության, ստրկական համակերպության օրինականացված դրությունը։

---

1 «Մշակ», 1878, № 64։

2 Նույն տեղում։

Ինչպես 60-ական թվականներին, այժմ էլ լիբերալ որոշ գործիչներ գտնում են, որ հայ ժողովրդի ազատագրությունը Եվրոպայի, մանավորապես Անգլիայի հետ պետք է կապել: Դրանք մեծ մասամբ առևտրական գործարքներով Եվրոպայի հետ կապված մարդիկ էին, որոնք իրենց տնտեսական նկատառումները քողարկում էին այն բանով, որ իբր թե Անգլիան կգնահատի հայ ժողովրդի դարավոր կուլտուրան և կօգնի նրան:

Առանց հայ ժողովրդի կամքը հարցնելու՝ նրա անունից սակարկություններ կատարող հայ բուրժուազիայի դիվանագիտական այդ գործարքներին միանգամայն դեմ էր ժողովուրդը:

Աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպան հայ դեմոկրատական հոսանքը, որի խոշորագույն գաղափարախոսներից մեկն էր Հ. Պարոնյանը, սկզբունքային համառ պայքար էր մղում եվրոպական գաղութարարների ծրագրերը պաշտպանող հայ բուրժուազիայի դեմ:

Հ. Պարոնյանը ամենից առաջ արձանագրում էր այն փաստը, որ հայ ժողովրդի վրա ծանրացող «լուծը հպատակության ընկալե դադրած՝ գերության լուծ եղած է»: Արտահայտելով «բարբարոսության ու գազանության տակ հեծեծող» հայ ժողովրդի իղձերն ու ցանկությունները, նա ռուս-թյուրքական պատերազմի օրերին սուր քննադատության էր ենթարկում այն լիբերալ խմբագիրներին, որոնք իրենց հույսը դնելով եվրոպական միջամտության վրա, կեղծ ու շինծու լուրեր էին հրատարակում Ռուսաստանի դեմ՝ փորձելով հասարակական կարծիք ստեղծել ընդդեմ ռուս ժողովրդի:

Բացահայտելով հայ բուրժուազիայի եվրոպասիրական քաղաքականության էությունը, Պարոնյանը գրում

էր, որ եվրոպական պետություններից ոչ մեկին չի հետաքրքրում հայ ժողովրդի ոչ անցյալը, ոչ ներկան, որ նրանք այդ բոլորի մասին խոսում են առաջնորդվելով բացառապես իրենց տնտեսական շահերով։

«Կըսեին, ըսի կըսեմ, և պիտի ըսեմ,— գրում էր Պարոնյանը,— ամեն մարդ իր շահը կը նայի»։ Իսկ մի այլ տեղ նա գրում է. «Երբ ձեռքս գրպանս կը խոթեմ և ունայն դուրս կը քաշիմ, կըսեմ՝ քրիստոնեից վիճակը շատ գեշ է»[1]։

Ազգային ազատագրության հարցում Ա. Արփիարյանը նույնպես կանգնած էր պրոգրեսիվ դիրքերում։ Ինչպես Հ. Պարոնյանը և այլ առաջավոր մտածողներ, նա այն հաստատ համոզմունքն ուներ, որ այլևս անհնար է շարունակել հայ ժողովրդի կիսաճորտական ստրկական վիճակը Թյուրքիայում և որ եկել է ժամանակը, երբ ժողովուրդը ակտիվ պայքարով պետք է ձեռք բերի իր ազատությունը։

Արփիարյանը սուր քննադատության է ենթարկել այն մարդկանց, որոնք հակված էին պահպանելու Թյուրքիայում գոյություն ունեցող վիճակը և դեմ էին ամեն մի պահանջի։ Նա տնտեսական այն մասնակի հնարավորությունը, որ վայելում էր քաղաքային առևտրական դասը, այն մի քանի մեծ պաշտոնները, որ տրվում էին հայերին, չափանիշ չի համարել ժողովրդի բարօրության։ Պատասխանելով պահպանողականների այն փաստարկումներին, թե օսմանյան կառավարության «մեծահոգությունը» այնքան հեռու է գնում, որ

[1] Հ. Պարոնյան, Երկեր, հտ. X, էջ 163։

նա նույնիսկ հաճախ օգնություն է ցույց տալիս աղքատներին և հայերի ազգային հիվանդանոցին, Արփիարյանը գրում էր.

«Մեր հիվանդանոցը մենք հոգանք, մենք, որ տաճկաց բանակները և Կ. Պոլսո parasite էֆենդիներու փաղանքները Հայաստանի քրտինքով կը կերակրենք... ինչ շնորհքի խոսք է, որ կընեն, ով շնորհք կը խնդրե, հայերը հպատակ ազգաց հետ ամենածանր տուրքերը կվճարեն և մեծավ մասամբ ասոնց աշխատությանց շնորհիվ է, որ դեռ երկիրը կապրի»[1]:

Հետագայում Արփիարյանը շատ ավելի դիպուկ և որոշակի ձևով արտահայտվելով այս հարցի մասին, հայտնում էր, որ հայ ժողովուրդը չպետք է հանդուրժի և մտքից անցկացնի, թե «քանի մը հայերու փաշայության տիտղոսը հնարավոր է արժանավոր փոխարինություն մը նկատել Թյուրքիո մեջ հայ ազգին կրած տառապանքներուն»[2]:

Ռուս-թյուրքական պատերազմի տարիներին միջազգային ասպարեզում ակտիվ դեր էր կատարում Անգլիան, որն իր խարդախ ու նենգ դիվանագիտական խաղերով փորձում էր սիրաշահել ճնշված ժողովուրդներին և նրանց ազատագրական պայքարը շեղելով հունից, ծառայեցնել իր գաղութային նպատակներին։ Հենց սկզբից թշնամական դիրք գրավելով հայ ազգային-ազատագրական շարժման նկատմամբ, նա «ավազակային» համարեց զեյթունցիների ազատագրական պանծալի շարժումը։

---

[1] «Մշակ», 1881, № 243։

[2] «Մշակ», 1879, № 69։

Ա. Արփիարյանը միանգամայն հարազատորեն արտացոլելով հայ իրականությունում Անգլիայի նկատմամբ եղած բացասական վերաբերմունքը, գրում էր.

«Ապշություն, զայրույթ, զզվանք Անգլիո նկատմամբ, այս բառերը կը պարունակեն բոլոր մեր զգացումները։ ...Կ. Պոլսո մեջ մի հայ պիտի չկարենաք գտնել, որ համակիր զգացմանց նշույլ մը ցույց տա առ Անգլիան»[1]։

Բնութագրելով անգլիական քաղաքականությունը «Հայկական հարցի» նկատմամբ, Հայկակն իր կարծիքը ձևակերպում էր հետևյալ բառերով. «Անգլիո պաշտպանությամբ և Թյուրքաց ձեռք բարեկարգություն հուսալը մի utopi *է»*[2]։

Պայքար մղելով «նենգավոր Անգլիայի» կողմնակիցների դեմ, նա ջերմ տողեր էր գրում Ռուսաստանի օգտին։ Իր անդրանիկ հոդվածում Հայկակը գրում էր.

«Այժմ մեր տեսության գլխավոր առարկաներեն մին եղած է Ռուսիայի քաղաքականությունը. մենք շրջահայեցությամբ կուզենք օգուտ քաղել պարագաներեն... մենք ավելի հույս ունինք Ռուսիայի, քան թե այլ տերության պաշտպանության վրա...»[3]։

Արփիարյանը ելնում էր տնտեսական և քաղաքական նախադրյալներից ու պայմաններից և ոչ թե որևէ մեծ ժողովրդի, թեկուզ Ռուսաստանի քրիստոնյա լինելու կամ այլ նկատառումներից։

Ռուսաստանը, որը նույնպես գործում էր ելնելով իր տնտեսական շահերից, սահմանակից էր Հայաստա-

---

1 *«Մշակ», 1878, № 42։*

2 *Նույն տեղում, № 177։*

3 *Նույն տեղում, № 42։*

նին և անհրաժեշտության ու իրադրության հասունացման դեպքում անհամեմատ ավելի հեշտությամբ կարող էր օժանդակություն հասցնել հայ ժողովրդին։

Երկրորդ, հայ ժողովրդի մի մեծ հատվածը ապրում էր ռուսական գերիշխանության տակ, նա էլ կարող էր օգնել և պաշտպան կանգնել իր հայ եղբայրներին։ Թյուրքական բռնակալության տակ գտնվող հայերին լավ հայտնի էր, որ Արևելյան Հայաստանի միակցումը Ռուսաստանին՝ ճակատագրական և բախտորոշ նշանակություն էր ունեցել հայերի համար, որոնք խույս տալով ֆիզիկական բնաջնջման վտանգից, ապրում էին տնտեսական և կուլտուրական անհամեմատ նպաստավոր պայմաններում։

Հայ ժողովրդի ազգային ազատագրության հարցը Արփիարյանը կապում էր Թյուրքական բռնակալության տակ գտնվող մյուս ժողովուրդների ազատագրական պայքարի հետ։ Նա իր հոդվածներում հաճախ է խանդավառությամբ խոսել հայերի, արաբների, հույների, քրդերի համագործակցության մասին։

* *
*

Մենք տեսանք, որ Ա. Արփիարյանը ջերմ տողեր գրելով Ռուսաստանի մասին, պաշտպանելով ռուսական օրիենտացիան, արտահայտում էր աշխատավորական լայն զանգվածների ցանկությունը։ Այժմ մի քանի փաստով հիմնավորենք մեր այդ տեսակետը։

Ռուս-թյուրքական պատերազմի տարիներին և այդ պատերազմից հետո՝ հակառակ մոլեգնող տեռորին ու հալածանքներին, գավառի հայ աշխատավորությունը ձգտում էր դեպի Ռուսաստանը, ցանկանում էր վերա-

միավորվել իր արևելահայ եղբայրակիցների հետ։ Գ. Սրվանձտյանցը իր «Թորոս աղբար» գրքում նկարագրում է, թե ինչպես 1879 թ. հայ գյուղացիության նկատելի մասը, որ իր ազատագրական հույսերը կապել էր ռուսական բանակի առաջխաղացման հետ, հրաժարվում էր ցանք կատարելուց, այն մտադրությամբ, որ եթե Ռուսաստանը անգամ չգրավի Թյուրքիայի արևելյան նահանգները, ապա իրենք մասսայաբար գաղթելու են Ռուսաստան [1]։

Վանի շրջանի գյուղացիությունը և արհեստավորները մասսայական ստորագրություններով դիմում էին ռուսական կառավարությանը և խնդրում հյուպատոսություն ստեղծել Վանում, որպեսզի պաշտպանի իրենց տնտեսական և իրավական շահերը։

Էրզրումում 1882 թ. հիմնված գաղտնի կազմակերպությունը, որը նկատելի չափով լայն ցանց էր ստեղծել այդ նահանգում և անգամ իր տպագրական հնարավորությունները, ուներ, սերտ կապեր էր պահպանում ինչպես Թիֆլիսում ապրող քաղաքական գործիչների, այնպես էլ ռուս ռևոլյուցիոներների հետ։

Սուլթանական կառավարությունը Մուշում հայտնաբերել էր մի ընկերություն և այն ենթարկել ռեպրեսիաների այն պատճառով, որ ընկերության կնիքի վրա դրոշմված էր արծիվ, այսինքն ռուսական կայսրության զինանշանը։

Ռուսաստանի նկատմամբ համակրական ջերմ վերաբերմունք էին ցուցաբերում անգամ հեռավոր Զեյթունի և Տիգրանակերտի հայերը, որոնք իրենց ազգային-

[1] Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հատ. Բ, էջ ԺԹ։

ազատագրական պայքարի հասունացած օրերին հատուկ պատգամավորներ էին ուղարկում Թիֆլիս՝ արևելահայերի և նրանց միջոցով Ռուսաստանի հետ կապ հաստատելու համար։

Պոլսի անգլիական դեսպան Լայերդը հայտնում էր իր դժգոհությունը Տիգրանակերտի շրջանի առաջնորդ Խաչատուր եպիսկոպոսին այն բանի համար, որ նա անտարբեր էր գտնվել՝ երբ անգլիական դեսպանը այցելել էր Տիգրանակերտ, իսկ երբ ռուսական դեսպանն էր այցելել այնտեղ, տեղի հայերը աղ ու հացով էին դիմավորել նրան։ Տիգրանակերտը այն քաղաքն էր, որտեղ աքսորվում էին բուլղար ռևոլյուցիոներները։ Նրանց մի մասը արգելափակված պահվում էին Տիգրանակերտի բերդում,— ինչպես այդ մասին խոսվում է Իվան Վազովի «Լծի տակ» վեպում,— իսկ մի զգալի մասը ազատ քաղաքական աքսորականներ էին, որոնք շփվում էին հայ երիտասարդության հետ։ Բուլղար այդ ռևոլյուցիոներները նույնպես իրենց ամբողջ հույսը դրել էին ռուսական զենքի վրա և արդարև Ռուսաստանի օգնությամբ էլ ազատագրվեցին։

Տիգրանակերտում բավականաչափ ուժեղ օպոզիցիա է եղել ընդդեմ տիրապետող խավերի, ընդդեմ այն մարդկանց, որոնք թշնամաբար էին տրամադրված դեպի հայ ազգային-ազատագրական պայքարը։ Գ. Սրվանձտյանը «Թորոս աղբար»-ում այս մասին ևս ունի մի քանի ուշագրավ տող[1]։

Մենք կարող ենք այլ փաստեր էլ բերել գավառական հայ ժողովրդի ջերմ վերաբերմունքի մասին՝ դեպի Ռուսաստանը։ Նույնը պետք է ասել մայրաքաղաքի աշ-

1 Գ. Սրվանձտյանց, Թորոս աղբար, հատ. Բ, էջ 216։

խատավորության վերաբերյալ, որի մի զգալի մասը մոտ 30 հազար մարդ, գավառից եկած պանդուխտներն էին։ Մենք արդեն խոսեցինք այն ջերմ վերաբերմունքի մասին, որ Պոլսի հայերը ցույց տվեցին ռուսական զորքի Սան-Ստեֆանո գալու օրերին։ Ռուսական զորքի հեռացումից հետո էլ Պոլսի աշխատավորական խավերը և նրանց ցանկությունները արտահայտող առաջավոր մտավորականությունը շարունակեցին համակրական վերաբերմունքը Ռուսաստանի նկատմամբ, օգտագործելով ամեն մի նպաստավոր առիթ։

Այսպիսով, ամբողջ հայ աշխատավորությունը, ամենաջերմ ու համակրական վերաբերմունք ուներ դեպի Ռուսաստանը և ռուս մեծ ժողովուրդը։ Հայ ժողովուրդը պատրաստ էր գաղթելու Ռուսաստան, կամ ապրելու ռուսական կառավարության պաշտպանության տակ։

Ա. Արփիարյանի քաղաքական հակառակորդները մամուլում գրում էին, որ Արփիարյանը ակտիվ դեր է կատարում ռուսական օրիենտացիայի պրոպագանդայի ուղղությամբ և որ նա «Արարատյան ընկերությունը» ծառայեցնում է քաղաքական այդպիսի նպատակների։

Անկախ այն հանգամանքից, որ ռուս-թյուրքական պատերազմին հաջորդող քաղաքական դեպքերը հնարավոր չդարձրին հայ ժողովրդի արևմտահայ հատվածի վերամիավորումը իր արևելահայ եղբայրակիցների հետ, հայ ժողովուրդը հետագայում էլ միշտ իր հավատը վառ պահեց դեպի Ռուսաստանը և պետք է նշել, որ Արփիարյանը հարազատորեն արտահայտելով մեր ժողովրդի արևմտահայ հատվածի իղձերը, երկար տարիներ պայքարեց հանուն հայ ժողովրդի երկու հատվածների վերամիավորման ռուսական գերիշխանության տակ։

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ԽՄԲԱԳԻՐ։ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԿՈՎԿԱՍ

Ռուսական զորքերի ետ քաշվելուց հետո 1878 թ. սուլթանական ռեակցիան մոլեգնում է ամբողջ Թյուրքիայում։

Գավառներում, սուլթանի թելադրանքով զինված չերքեզներն ու քուրդ ցեղապետները սկսում են ջարդել խաղաղ հայ ժողովրդին, թալանել ու ավերել ամբողջ գյուղեր։ Հայաբնակ նահանգներում կատարվող ահավոր դեպքերի նկարագրությունները հասնում են մայրաքաղաք, բայց չեն տպագրվում մամուլում՝ գրաքննական արգելքների պատճառով։

Քաղաքական ռեակցիայի ալիքը տարածվում է նաև Թյուրքիայի գլխավոր քաղաքներում, մանավանդ մայրաքաղաքում։

Ամենից առաջ՝ կասկածի տակ են առնվում պրոգրեսիվ այն բոլոր մարդիկ կամ կազմակերպությունները, որոնք ռուսական զորքի առաջխաղացման ժամանակ դրսևորել էին իրենց ռուսասիրական վերաբերմուն-

բը, հրապարակով արտահայտվել էին հօգուտ ռուսական զենքի։

Արգելվում են ազգային ներկայացումները, պատմական այն ողբերգությունները, որոնց մեջ երևան էր հանվում հայ ժողովրդի անցյալի փառքը, նրա թագավորների, իշխանների սխրագործությունները։ Դպրոցական ծրագրերից և դասագրքերից հանվում են հայոց պատմության վերաբերյալ հատվածները։ Այդ բոլորի փոխարեն ծրագրերում մտցվում են կրոնական առարկաներ։

Արգելքը տարածվում է նույնիսկ մարզանքի դասի վրա, պատճառաբանելով, թե դրանով աշակերտության մեջ արթնացվում են ռազմական հակումներ։

Հայ թագավորների անունները պարունակող օրացույցները համարվում են ռևոլյուցիոն։ Գրավաճառ Գավաֆյանը բանտարկվում է այն պատճառով, որ վաճառել էր Լևոն 6-րդ թագավորի գերեզմանի նկարը։ Ձերբակալվում են այն երիտասարդները, որոնք՝ խանդավառված պատերազմի օրերի քաղաքական մթնոլորտով, թյուրքական ֆեսի փոխարեն սկսել էին օգտագործել Վասպուրականի և Տարոնի հայերի գդակները։ խոշտանգվում են Վարդան Մամիկոնյանի նկարը պարունակող ծխախոտի թղթեր կամ Հայաստանի ավերակները պատկերող նկարներ վաճառող երեխաները։

Հ. Պարոնյանը գրում էր.

«Ավերակք Հայաստանի» կառավարության կողմեն ամեն օր կփնտռվին. ինչպես նաև այն ամեն գիրքերն, որոնց մեջ Հայաստան բառը կգտնվի։

Ամեն օր կձերբակալվին և կբանտարկվին Հայկա և Վարդանա պատկերներն, երեկ մաքսատունեն արգելվե-

ցավ 1881-ի օրացույցներեն հիսուն օրինակ, որ Տրապիզոնի շոգենավը կտարվեր»[1]:

Արգելվում է Թիֆլիսում հրատարակվող հայերեն պարբերականների («Մշակ», «Մեղու Հայաստանի», «Փորձ») մուտքը Կ. Պոլիս: Արգելվում է Եվրոպայից ստացված քաղաքական հեռագրերի հանձնումը տեղական թերթերին: Դրան հաջորդում են ցենզուրական խստացված կաշկանդումները, որոնք այլևս կանգ չառնելով, 90-ական թվականներին հասնում են ծայրագույն աստիճանի:

Սուլթան Համիդը հաջորդ հարվածը ուղղում է պատրիարքարանի դեմ: Ռուս-թյուրքական պատերազմի օրերին Ներսես Վարժապետյանի հարաբերությունները այն աստիճան պաշտոնական բնույթ էին ընդունել օտար դեսպանների ու կառավարության հետ և ստեղծված քաղաքական պայմաններն էլ այնքան նպաստավոր էին, որ պատրիարքն այլևս Բ. Դռան ներկայացրած խնդրագրերի մեջ վերացրել էր հարյուրավոր տարիներից ի վեր ընդունված և օրինականացված մի շարք բառերի, արտահայտությունների գործածությունը: Այսպես, ընդունված «Ձեր գերին» արտահայտությունը փոխարինված էր «ես» բառով, «պաղատանքը»՝ «պահանջով» և այլն:

Թյուրքական «Հաքիքաթ» թերթը ծաղրանքով գրում էր, որ ըստ երևույթին հայերի պատրիարքը իրեն շփոթում է եվրոպական դեսպաններից մեկնումեկի հետ:

Մի քանի խնդրագրեր, որոնք մեծ մասամբ պատրիարքարանի կողմից ներկայացվում էին օսմանյան կառավարությանը հայերի այս կամ այն պահանջը ար-

1 «Փարոս Հայաստանի», 1880, № 4:

տահայտելու և կամ Հայաստանում տիրող դրության դեմ բողոքելու մասին, վերադարձվում են՝ իրենց «անհարմար և անքաղաքավարի» ոճի պատճառով։ Կառավարությունը իմացնում է պատրիարքարանին, որ այլես նա պետք է գերազանցապես զբաղվի կրոնական, զուտ հայ համայնքի եկեղեցական գործերով, հեռու մնա քաղաքական, մանավանդ դիվանագիտական հարցերից, և առհասարակ խուսափի Հայաստան բառը գործածելուց։

Աբդուլ Համիդը առաջավոր մտավորականների դեմ պայքարում է ամեն միջոցներով։ Բանտարկություններին, աքսորին հաջորդում են կառավարության կողմից կազմակերպված սպանությունները, ոճիրները։ 1882 թվականի հոկտեմբերի 21-ին Գադըգյուղի ծովափին գտնվում է Մ. Նալբանդյանի մտերիմ ընկեր, ամբողջ Պոլսում հռչակված բժիշկ Հ. Քյաթիպյանի դիակը։ Քըննությունները ապացուցում են, որ նա խոշտանգումներով սպանվել և գցվել է այդտեղ, և որ սպանությանը մասնակից են այնպիսի մարդիկ, որոնք կապված են սուլթանական կառավարության հետ։ Կառավարությունն արգելում է հետաքննությունը, այդպես էլ հարցը փակվում է։

Քյաթիպյանին հաջորդում են նոր սպանություններ։

«Երկաթե ձեռք մը կը ծանրանա Կ. Պոլսո մամուլին վրա», գրում էր Հայկակը «Մշակում» այդ օրերին[1]։

Ժողովները, հասարակական կազմակերպությունները հետապնդվում են, ամենուրեք վխտում են լրտեսները։

---

1 «Մշակ», 1881, № 15։

Հայ ժողովրդի բախտով հետաքրքրվող մարդիկ իրենց առաջ փակված են տեսնում հասարակական գործունեության որևէ ասպարեզ։ Պայքարի այն միջոցները, որ ընդամենը 5 տարի առաջ պիտանի էին, այժմ ոչ մի օգուտ չէին կարող տալ։

Այս պայմաններում է, որ մի խումբ երիտասարդներ՝ Ա. Արփիարյանի գլխավորությամբ, որոշում են հիմնել մի օրաթերթ և նրա էջերից արծարծել հայ ժողովրդին հուզող հարցերին, որքան այդ հնարավոր էր քաղաքական նոր պայմաններում։

Իրենց գաղափարական համոզմունքներով տարբեր դիրքերի վրա կանգնած վերոհիշյալ երիտասարդները 1884 թվականի սկզբից հրատարակում են «Արևելք» օրաթերթը։

Արևմտահայ մամուլը այդ թվերին քարշ էր տալիս իր խղճուկ գոյությունը։

Դեմոկրատական տրադիցիաների համար պայքարող «Մեղուն» վաղուց դադարել էր։ Մի քանի անգամ խափանվելուց հետո վերջնականապես դադարել էր Հ. Պարոնյանի «Թատրոնը»։ Լիբերալ թերթերին մի քանի թղթակցություններ տալուց հետո Պարոնյանը համոզվել էր, որ Կ. Պոլսում անհնար է խմբագրական աշխատանք կատարել, շարունակել պայքարը թյուրքական մոլեգնող ռեակցիայի և նրա կամակատար հայ էֆենդիների ու պատրիարքարանի դեմ։ Նա լռել էր միաժամանակ և երևացել Թիֆլիսի «Փորձում»՝ Հուհոս ծածկանունով, հրատարակելով իր անմահ «Ձեռատետրը»։

Պոլսում լույս էին տեսնում մի քանի լիբերալ թերթեր, ինչպես Ութուջյանի «Մասիսը», որը կառավարության նկատմամբ իր բռնած զգուշավոր դիրքի պատճա-

տով դարձել էր վաճառականական, կրոնական մի անգույն հրատարակություն:

Առավել արգահատելի էին Հ. Ալաճաճյանի «Փունջը», Մելիքյանի «Հայրենիքը»:

Այս պայմաններում նկատելի դեր կարող էր կատարել նոր օրաթերթը:

«Արևելքը» հանրությանը ներկայացնելու պարտականությունն ընկնում է Արփիարյանի վրա: Նա գրում է մի առաջնորդող, որտեղ մամուլի կոչումը համարում է հասարակական բարքերի վրա ազդելու, այդ բարքերը վերափոխելու ձգտումը:

Արփիարյանը, որ Մ. Նալբանդյանի աշխատություններին ծանոթանալուց հետո եկել էր այն համոզման, որ Մ. Նալբանդյանի և Ստ. Նազարյանցի խմբագրած «Հյուսիսափայլը» կարողացել էր ազդել մտքերի վրա, ուղիներ նշել, որոշում է թերթը նմանեցնել «Հյուսիսափայլին»:

«Ստեփաննոս Նազարյանցը,— գրում էր նա հետագայում,— գծեց ռուսահայոց մամուլի համար միանգամ ընդմիշտ մի այնպիսի ուղղություն, որուն սթափիչ ազդեցության ներքև հասարակաց գիտակցությունը զարգացնելով, պարբերական մամուլը դարձավ անհրաժեշտ պիտույք մը ռուսահայ ժողովրդի մտավորական պահանջներու համար» [1]:

«Արևելքը» ձևավորված էր հաջող, ուներ առանձին բաժիններ՝ հեռագրեր, ազգային տեսություններ, գրախոսականներ, բանասիրական հոդվածներ, գյուղատնտեսական, գիտական, գրական-գեղարվեստական բաժիններ, պարբերաբար տպագրվում էին վեպեր և պատ-

1 «Բանքեր գրականության և արվեստի», Ա. գիրք, էջ 103:

մըվածքներ, երգիծական նյութեր, հայտարարություններ և այլն։

«Արևելքի» գրական բաժինը, որը ղեկավարում էր Ա. Արփիարյանը, սկզբում հանդես եկավ թարգմանական մի քանի երկով, որոնք ներկայացվում էին «վարչական խորհրդի» մյուս անդամների կողմից։

Արփիարյանը առաջարկում է լույս ընծայել հայ հեղինակների գործերը, մասնավորապես Րաֆֆու երկերը։ Դրանով ընթերցողների մեջ և՛ գեղարվեստական ճաշակ կարող էր զարգանալ, և՛ սեր դեպի գրականությունը։ Րաֆֆու երկերը, միաժամանակ, կարող էին վառ պահել հայրենասիրական զգացումը ընթերցող երիտասարդների մեջ։

Րաֆֆու գրքերի արտատպությունը սակայն, կապված էր մեծ դժվարությունների հետ։ Այդ երկերի շեշտված հակաբռնապետական ոգին կարող էր խափանել սկսված գործը, փակել թերթը։ Չնայած դրան՝ Արփիարյանը համոզում է խմբագրության մյուս անդամներին և որոշում է հրատարակել նախ «Խաչագողի հիշատակարանը», որը տպագրվում է «Արևելք» թերթի 1884 թ. № 24—155-րդ համարներում։

Ընթերցողները վեպն ընդունում են ջերմորեն, իսկ կառավարությունը ուշադրություն չի դարձնում դրա վրա։

Քաջալերված այդ բանից, Արփիարյանը փորձում է տպագրել «Խամսայի մելիքությունները»։

Այնպիսի մի երկրում, որտեղ արգելված էր հայոց պատմության դասավանդումը, առհասարակ հայ ժողովրդի անցյալի պատմության վերհանումը, Րաֆֆու այդ գործը կարող էր դաստիարակչական մեծ նշանակություն ունենալ, երիտասարդությանը սովորեցնել, որ

դեռ ոչ շատ վաղ անցյալում հայ ժողովուրդն ունեցել է կիսանկախ վիճակ և որ ստրկությունը, օտարի լծի տակ գտնվելը նրա համար ի վերուստ տրված մի բան չէ։

Արփիարյանը ուշադրավ խոստովանություն ունի այդ առթիվ։

«Խամսայի մելիքությունները» թեթև իմն փոփոխությամբ եկան հանրային միտքը գրավել և հուզել։ Դեռ մեզ շատ մոտ ժամանակի մը մեջ գոյություն ունեցող այդ տեսակ մը հայկական անկախության պատմությունը իբր դասախոսություն կը հաղորդվեր այն ժողովրդին, որուն դպրոցներում ազգային հին անցյալի մը ուսուցումն իսկ գրեթե արգելված կը մնար»[1] (ընդգծումը մերն է — Գ. Ստ.)։

Եթե «Խաչագողի հիշատակարանը» լույս էր տեսել նույնությամբ, ապա այդ բանը անհնար է դառնում «Խամսայի մելիքությունները» հրատարակելիս։ Վերջինիս քաղաքական խոր բովանդակությունը, Ռուսաստանի հետ առնչումը, անհնար են դարձնում երկի ամբողջական տպագրությունը։ Նույնիսկ Կովկասում այդ աշխատությունը ենթարկվել էր ցենզուրական կրճատումների։

Պոլսում պետք էր ավելին կատարվեր։ Փաստորեն ոչ միայն կրճատումներով, այլ վերապատմելով միայն հնարավոր է դառնում տպագրել այն։ Արփիարյանն այդ մասին գրել է.

«Իրավ է, որ ձեռքերնիս առաջ չերթար, բայց պետք կը պահանջե անհրաժեշտ հարկը. սակայն յուր այս տարաբախտ վիճակին մեջ իսկ պարոն Րաֆֆիի գործը

[1] «Բանբեր գրականության և արվեստի», Ա. գիրք, էջ 194։

չի կորսնցներ իր հրապույրը, կը նմանի Միլոսի Փիդիասի մի արձանին, որու թևերն կամ գլուխն ջախջախված լինի և կորուսյալ, բայց և այնպես ամեն թանգարան կուզեն հափշտակել զայն իրարմե, և գեղարվեստից ամեն սիրողք սքանչացմամբ կը նային անոր վրա: Գեղեցկության մնացորդն է անայլայլ մնալ ամեն հարվածներու առաջ»[1]:

Արփիարյանը հենց իր ստորագրությամբ լույս տեսած այս հոդվածում փորձում է մեծ զգուշությամբ բացատրել «Խամսայի մելիքությունների» հրատարակման նպատակները: «Մեր պատանեկության մեջ հզոր ազդեցություն կունենային մեր երևակայության վրա շնորհիվ եվրոպական մատենագրության, բյուրգրավները, Հռենոսյան բերդերը և միջնադարյան Եվրոպայի դյուցազունք: Այժմ Րաֆֆի մեզ համար մոռացության կը մատնե այդ օտար ավանդությունները, որք պահ մը անհրաժեշտ կը թվեին մեզ, և կը պարզե մեր առաջ նոր հորիզոններ. երբ զմեզ ի ձեռն կը հանե Ղարաբաղի լեռներն ու բերդերը»[2]:

Չնայած խմբագրության բոլոր զգուշություններին, կառավարությունը գլխի է ընկնում, թափանցում Րաֆֆու գործի հրատարակման բուն նպատակների մեջ և այն արգելում է: Բարեբախտաբար «Խամսայի մելիքությունների» շարադրանքի մեծ մասը արդեն տպագրվել էր, գրավելով պոլսահայ առաջավոր մտավորականության ուշադրությունը:

Արփիարյանը ունի մի ուշագրավ վկայություն ևս:

---

[1] «Արևելք», 1884, № 292:

[2] Նույն տեղում:

Իր կովկասյան ճանապարհորդությունից վերադառնալուց հետո Րաֆֆու մասին գրած հոդվածը նա սկսում է այսպես.

«Երբ Պոլսո վերադարձա Թիֆլիսեն, ամեն բարեկամներս անվրեպ ինձ կուղղեին հետևյալ հարցումները.— Տեսա՞ր Րաֆֆին, խոսեցա՞ր հետը, ի՛նչպես մարդ է, ի՛նչ կընե։ Մինչև իսկ կային այնպիսիք, որք երանի կկարդային այն աչաց, որք արժանի եղած էին հայ վիպասանը տեսնելու։ Որպիսի՜ փոփոխություն ժամանակի։ Ատեն մը նոցա համար էին երանիները, որք ս. Գեղարդն յէջմիածին համբուրած ի տուն կդառնային։ Բայց բարեշրջման օրենքը ճշմարտություն է։ Գրքերը այժմ մրցում կընեն մասունքներու հետ»[1]։

Ջնայած այդ բացառիկ հետաքրքրությանը, Արփիարյանը հնարավորություն չի ունենում շարունակել Րաֆֆու վեպերի տպագրությունը։

Ավելի մեծ դժվարությունների հետ էր կապված Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի մասին գրելը, անգամ նրանց անունները հիշատակելը։

«Արևելքի» բաժիններից և ոչ մեկը այնպիսի մեծ աղմուկ չի հանում, ինչպես Արփիարյանի «Օրվան կյանքը» խրոնիկային ակնարկները, որոնք տպագրվում էին Հրազդան ստորագրությամբ։

Այս խրոնիկաները փաստորեն կիսագեղարվեստական ստեղծագործություններ էին, գրական մի տեսակ, որոնք հետապնդում էին նաև քաղաքական նպատակներ. «Քրոնիկի անմիջական երևույթովը կը պատմը-

---

[1] «Մասիս», 1884, № 3734։

վեին դեպքեր,— գրում էր Արփիարյանը,— որոնք կըրնային մտքերու զարկ տալ և զանոնք արթնցնել»[1]:

Դրանք արտացոլում էին Պոլսի ժամանակակից տնտեսական, քաղաքական ու ազգային կյանքը, մեշչանական ընտանիքների առօրյան: Ոճը միանգամայն յուրօրինակ էր: Հրազդանը կարողանում էր այդ բազմազան երևույթները ներկայացնելու համար ընտրել ճկուն, հաճելի ոճ, որը հեռու էր շատախոսությունից: Նա գրավում էր ընթերցողին՝ գրելու մեծ վարպետությամբ, խիզախ, համարձակ փաստարկումներով: Իզուր չէ, որ Պարոնյանի երգիծանքի սրությունը և ուժը ցույց տալու համար, Կ. Պոլսում նրան միշտ համեմատել են Արփիարյանի հետ և ասել, որ Պարոնյանից վախենում էր նույնիսկ Արփիարյանը: Նրա «Օրվան կյանքի» մեջ ընկնում էին Պոլսի պատրիարքը, ազգային վարչության ատենապետները, պալատական հայ փաշաներ, կառավարական պաշտոնյաներ և այլն:

Այս բոլորով հանդերձ, «Արևելք» թերթը մնում էր հայ բուրժուազիայի օրգանը, որի էջերում որոշ աշխուժացում ապրող դեմոկրատական թևը շուտով համոզվում է, որ անհնար է համատեղ աշխատելը: Հատկապես Արփիարյանի դեմոկրատական հակումները անհանգստացնում են «Արևելքի» վարչության լիբերալ անդամներին՝ Յուսուֆյանին, Շիշմանյանին, Քեչյանին և մյուսներին: Պատրիարքարանի թշնամական վերաբերմունքը դեպի «Արևելքը», կառավարության աչքում թերթի կասկածելի դառնալը հարկադրում են նրանց՝ մտածել Արփիարյանից ազատվելու մասին:

[1] «Բանբեր գրականության և արվեստի», Պետերբուրգ, Ա. գիրք, 1903, էջ 193:

Մի դեպք հնարավորություն է տալիս նրանց՝ գեթ մի քանի ամսով Արփիարյանին հեռացնել խմբագրությունից։

1882 թվականին վախճանվել էր Գևորգ Դ. կաթողիկոսը։ 1884 թվականի մայիս ամսին նշանակվում է նոր կաթողիկոսի ընտրությունը։ «Արևելքի» վարչությունը որոշում է Արփիարյանին ուղարկել Կովկաս որպես թերթի սեփական թղթակից՝ կաթողիկոսական ընտրությունների հետ կապված դեպքերը օրը օրին լուսաբանելու համար։

* * *

1884 թվականի ապրիլի 1-ին Արփիարյանը ճանապարհ է ընկնում դեպի Կովկաս, Տրապիզոն—Բաթում—Թիֆլիս գծով։

Նա իր այս հետաքրքրական ճանապարհորդության նկարագրությունները հրապարակել է «Արևելքում» «Ուղևորություն յԱրևելս», «Ուղևորություն ի Կովկասիս» և «Կովկասյան ճանապարհորդություն» վերնագրերի տակ[1]*։*

Ճամփորդական այդ նկարագրությունները, որոնք կարող են կազմել մի փոքրիկ գրքույկ, աչքի են ընկնում իրենց չոր ու ցամաք ոճով, էական հարցերի կողքով անցնելու միտումով։ Թռուցիկ տողերով են տրված Արփիարյանի հանդիպումները Արծրունու, Րաֆֆու և ուրիշ գրողների ու հասարակական գործիչների հետ, բոլորովին չի ասված, թե ինչ կարգի հարցերի մասին է

---

[1] «Արևելք», 1884, №№ 102, 126–127, 128, 136—137, 139—140, 142—143, 147, 149, 157—159, 161—162։

եղել նրանց խոսակցությունը, ինչպիսի մտքերի փոխանակություն են ունեցել և ինչ ծրագրեր են մշակել:

Արտաքուստ տարօրինակ թվացող այս ժլատության պատճառը եղել է Արփիարյանի զգուշությունը ցենզուրական նկատառումներով, և այն փաստը, որ «Արևելքի» նրա ընկերները մեծ կրճատումների են ենթարկել բոլոր թղթակցությունները, ինչպես հետագայում հաստատել է Արփիարյանը:

Եթե «Արևելք» թերթի վարչության մյուս անդամների համար այդ ուղևորությունը հետապնդում էր կաթողիկոսական ընտրությունների հետ կապված հարցերի մանրամասն լուսաբանումը և Արփիարյանին միառժամանակ մայրաքաղաքից հեռացնելը, ապա Արփիարյանի համար դա մի առիթ էր՝ մոտիկից ծանոթանալու արևելահայ մտավորականության հետ, շփվելու ռուս ժողովրդի առաջավոր կուլտուրային:

Արփիարյանը Տրապիզոն—Բաթում ճանապարհով 1884 թվականի մայիս ամսին հասնում է Թիֆլիս:

Նրա կովկասյան հանդիպումները ցույց են տալիս, որ նա կատարելով հանդերձ թղթակցի պարտականությունները, ամենևին չի հետապնդել կաթողիկոսական հարցի հետ կապված որևէ նպատակ: Նա Թիֆլիսում ավելի երկար է մնացել, քան Էջմիածնում: Թիֆլիսում այցելել է ժամանակի գրեթե բոլոր ականավոր գրողներին և հասարակական գործիչներին, հետաքրքրվել է արևելահայերի կրթական, կուլտուրական կյանքով, հաճախել է հայկական թատրոնը:

Րաֆֆու հետ Արփիարյանը նամակագրություն է ունեցել 1881 թվականից: Այդ կապը սակ բարեկամական չի եղել: Շատ հասարակական հուզող հարցեր են

շոշափվել նրանց նամակների մեջ: Արփիարյանը Րաֆֆու անձնական նամակների միջոցով տեղեկանալով Թիֆլիսում կատարված և հանրությանը հետաքրքրող լուրերին, դրանք հրատարակել է Կ. Պոլսում լույս տեսնող «Ծերիանի շարքին» թերթում, անստորագիր: Այսպես, այդ ձևով նա հասարակությանը հայտնել է «Մշակ» թերթի խմբագրատանը և Րաֆֆու բնակարանում կատարված խուզարկության լուրը:

Արփիարյանը ջերմ տողերով է նկարագրել Թիֆլիսում Րաֆֆու հետ ունեցած իր հանդիպումը: Նա այցելել է Րաֆֆուն, զրուցել գրականության ու այլ հարցերի մասին: Հետագայում, Կ. Պոլիս վերադառնալուց հետո, Րաֆֆուն նվիրած իր ընդարձակ հոդվածաշարքում մանրամասն նկարագրել է ոչ միայն Րաֆֆու հետ իր ունեցած հանդիպումը, այլև Րաֆֆու տունը, գրադարանը և այլն:

Րաֆֆուց բացի, նա անձամբ ծանոթանում է Գր. Արծրունու, Գաբրիել Սունդուկյանի, մանկավարժ Նիկոլա Տեր-Ղևոնդյանի և ուրիշների հետ: Սրանց մեջ ամենից շատ նրան գրավում է Սունդուկյանը, որի տանը լինում է մի քանի անգամ, երկար խոսում գրական հարցերի մասին: Սունդուկյանը նրան նվիրում է իր կատակերգություններից մեկ-մեկ օրինակ, որոնք հափշտակությամբ կարդում է և մանրամասն ուսումնասիրում, ինչպես խոստովանել է հետագայում «Ալուշը» վիպակի առաջաբանում:

Արփիարյանը Թիֆլիսում ներկա է լինում «Պեպոյի» բեմադրությանը, հիանում Գ. Ճմշկյանի խաղով:

«Ով որ Ճմշկյանը տեսած է թատերաբեմին վրա, կըմբռնե ժողովուրդի անհուն համակրանաց ոգին առ

մեծ դերասանը,— գրել է նա հետագայում,— հավատացեք, որ ոչ մի պերճախոս քարոզիչ կարող է ավելի ցընցել ժողովուրդն, որքան Չմշկյանը։ Գիշեր մը տեսա զինքը Թիֆլիզի քաղաքային թատրոնի բեմին վրա՝ Պեպոյի դերին մեջ։ Գնացած էի խնդալու. կարդացած էի «Պեպո», կոմեդիա երեք արարով» և ոչ ոք զիս կմեղադրե, երբ ըսեմ թե կոմեդիայի մը հանդիսատես եղողն անշուշտ խնդալու նախապատրաստություններն ունի։ Պեպոն բեմին վրա եկավ և ահա ամեն դեմքերու վրա միայն տխրություն կա։ Սունդուկյանցի դյուցազնը ձըկնորս մ'է, ժողովրդի զավակ մը, յուր հայրը պահանջ ունի հարուստ վաճառականե մը, մեռած է հայրն և այժմ որդին կուգա խնդրել հարուստ վաճառական Արութինեն այդ փոքրիկ գումարն, որով պիտի ամուսնացնե յուր քույրը։ Վաճառականը կուրանա և մինչև իսկ ի բանտ դրկել կուտա խեղճ ձկնորսն։ Թատերախաղը մեկ ծայրեն մյուս ծայրը խեղճ ժողովրդի մը մելամաղձությունը կպատկերացնե։ Պեպո այդ մելամաղձիկ ժողովրդի բուն ներկայացուցիչն է։ Չմշկյան կներկայացնե այդ պատակերը ճիշտ այնպես, ինչպես բանաստեղծը տենչացած է. ...ով պիտի կրնա նկարագրել դերասանին հոգեշարժ շեշտերը, տխուր ձայնը, սարսռազդեցիկ տրամությունը։ ...Պեպոն ինքն իրեն կմենախոսե, տխուր տեսարանե մը վերջ. «Գնա՛ Պեպո...»[1]։

Թիֆլիսում մտերմական մեծ շրջանակ ստեղծելուց հետո Արփիարյանը ճանապարհ է ընկնում դեպի Ակըստաֆա։

Ուշագրավ են նրա դիտողությունները Ակստաֆա—Երևան ճանապարհի մասին։

[1] «Մասիս», 1887, № 3875։

Ահա թե ինչպես է նկարագրել Արփիարյանը 70 տարի առաջվա այս շրջանի հայ գյուղերը։

«Ամեն կայարանի մեջ երկու սենյակներ կան, յուրաքանչյուրը չորս անկողին կրնա պարունակել։ Երբ անկողին կըսենք, ուրիշ բառ չը գտնելուս համար է, չորս-հինգ կարմիր ներկված փայտ, մի տախտակամած կը կազմեն գետնեն բավական բարձր թախտը։ Նույնպես նույն ձևեն և սևեն կարմիր ներկված փայտի մեծ ուղղահայաց գիրքով մի բարձ կա։ Վայ ճամբորդին, որ ինձ պես երեկույթի հագուստներով կը մոլորի կայարանի մեջ։ Փայտյա անկողին, փայտե բարձ. բայց առիթ ունեցա անոնց քաղցրությունը ուրիշ ատեն փորձել։ Անոթի մարդը քարը կուտե կըսեն. խոնջ և քնատ մարդը անկողնին որակին վրա մտածելու ժամանակ չունի, մի քիչ հանվելով թաշկինակը երեսնիս փաթթելով մտանք անկողին... Կըսեն թե արդարոց քունը հանդարտ և քաղցր է, բայց այդ գիշեր փորձեցի, որ մեղավորին ալ եթե 5 ժամ տրոյկայով ճամբորդե Երևանու ճամբուն վրա, սուրբեն ավելի հանգիստ խաղաղ, խոր քունով կը քնե»[1]։

«...Կանգնեինք Թերուշայի, Դիլիջանի, Սեմյոնովկայի,— գրում է նա,— Գեղամա ծովուն եզերքն ենք, բարձր լեռանց կատարը, կանգնեինք ձյուներուն մեջեն և կողքունենք Սևանա կղզին։ Կա՞ գրիչ մը, որ կարենա բացատրել հայու մը սրտին տրոփումը, երբ առաջին անգամ կը դնե ոտքը յուր աշխարհին հողին վրա... Հարություն կառնեն 50 դարեր և կուգան խոսակցիլ սրտիդ հետ, հոգվույդ հետ։ Կա զորություն մը, որ սիրտն ու

---

[1] *«Արևելք», 1884, № 138—139։*

հողը կը քաշէ իրարու, երբ քու արյունովդ է շաղախված այդ հողը և կը սլանա միտքդ մեկ րոպեի մեջ այդ 50 տար»[1]:

Արփիարյանը մեծ գովեստով է խոսել Սևանա ափերին ապրող ռուս մալականների մասին: Դրվատել է հատկապես նրանց աշխատասիրությունը, մաքրասիրությունը, նրանց ներկայացնելով այնպիսի հարևաններ, որոնցից կենցաղային օգտակար ազդեցություն կարող է կրել այդ շրջանի հայ գյուղացիությունը: «Տարաբախտ ժողովրդի համար, տարաբախտ դրացի» գրում է նա:

Ելենովկայից նրանց կառքը հասնում է Ախտա, Սուխոյ Ֆոնտան, Էյլար և կես-գիշերին մտնում Երևան: Երևանի գրասեր երիտասարդները ջերմորեն են դիմավորում Արփիարյանին, որի հոդվածները հաճույքով ընթերցում էին:

«Ամենքը ուրախացան,— գրում էր երևանցի երիտասարդներից մեկը «Մշակում»,— և անհամբեր շտապում էին՝ հարգելի Թղթակցին մի րոպե առաջ տեսնելու և իրենց հարգանքը նվիրելու նրան: Այս ուրախալի լուրից հետո կայծակի արագությամբ տարածվեցավ պարոն Հայկակի Երևան մտնելու լուրը: Ամենքը հետաքրքրվում էին մի տեսնել թե Հայկակն ինչպիսի երիտասարդ է: Բայց ցավ, Հայկակն անցել էր Էջմիածին, կաթողիկոսի ընտրությանը ներկա լինելու, իսկ մենք պարոն Հայկակի սիրահար երիտասարդներս, ակնապիշ սպասելով նրա ցանկալի վերադարձին, իսկույն կազմեցինք մի ծրագիր և պատրաստվեցինք մեր սիրելի հյուրին մի ճաշ տալու»[2]:

1 «Արևելք», 1884, № 139:
2 «Մշակ», 1884, № 54:

Երևանի երիտասարդները մի քանի օրից Հայկակին հանդիպում են Սարդարի այգում, նրա համար պատրաստված ճոխ սեղանի շուրջը։ Հայկակը վայելում է սեղանի շուրջը բոլորած 30 երիտասարդների բուռն համակրությունը։ «Ուրախությունն ընդհանուր էր, երիտասարդությունն ընտիր, հյուրը թանկագին, երգիչները բարձրաձայն, երգերը ավուր պատշաճի և սրտառուչ... բոլոր երիտասարդները այնպես ուրախության ցույցեր էին անում դեպի Հայկակը, որ կարծես գտել էին իրենց կորցրած հարազատ եղբայրը և չգիտեին, ինչպես իրենց կարոտն առնեն նրանից»[1]։

Ընկերական այս հանդիպման ժամանակ է, որ Արփիարյանը ծանոթանում է վիպասան Պերճ Պռոշյանի և ուրիշ մտավորականների հետ։

Արփիարյանը էջմիածնի ամբողջ նախընտրական կամպանիայի ընթացքում ճկուն օրագրողին հատուկ եռանդով օրը օրին, ժամը ժամին «Արևելքին» ուղարկում է նորություններ։

* * *

Այսպիսի տպավորություններով է, որ 1884 թվականի հունիս ամսին Արփիար Արփիարյանը վերադառնում է Կ. Պոլիս։

Մենք արդեն տեսանք, որ «Արևելքի» վարչական կազմը միատարր չէր. մի նոր թերթ հրատարակելու, այդ թերթով ժողովրդին լուսավորելու ընդհանուր ծրագրով միմյանց հետ կապված երիտասարդները ըստ էության

---

[1] «Մշակ», 1884, № 54։

ունեին տարբեր քաղաքական հայացքներ։ Նրանցից մի մասը, ինչպես «Արևելքի» արտոնատեր Տամատյանը, վարչության անդամներից Յուսուֆյանը և խմբագիրներից Քեչյանը, պատկանում էին պոլսահայ բուրժուազիայի աջ թևին։ Նրանք հեռու էին արմատական հարցեր շոշափելու, տիրող հասարակական կարգերի դեմ որևէ աննպաստ բան գրելու մտադրությունից, ուզում էին մերձեցման ուղի գտնել մի կողմից Բ. Դռան մոտ ծառայության մեջ գտնվող հայ էֆենդիների, մյուս կողմից՝ բարձր հոգևորականության ու ազգային իշխանության ղեկավարների հետ։ Նրանք կարծում էին, որ աստիճանաբար ամեն ինչ դեպի լավը կգնա և՝ մասնակի բարենորոգումներ, արտոնություններ ձեռք բերելով, հայ ժողովուրդը կստանա իր ազատությունը։

Այլ կերպ էին մտածում Արփիարյանը և նրա մի քանի ընկերները։ Ըստ նրանց՝ հասարակական կյանքում տեղի էին ունենում աղաղակող երևույթներ, որոնց զոհը միշտ աշխատավոր ժողովուրդն էր։ Դրանք չէին կարող վերացվել ինքնահոսի կարգով, անհրաժեշտ էր ունենալ պայքարի որոշակի ծրագիր։ Եվ եթե ցենզուրական պայմանները հնարավորություն չէին տալիս, որ թերթը պաշտպանի ժողովրդի շահերը, պայքարի ինքնակալության դեմ, ապա այն իր ֆունկցիան կատարելու է բոլոր հնարավոր միջոցներով։

Երկու տարբեր գաղափարախոսությունների բախումը «Արևելքի» վարչության ներսում, անհնար է դարձնում համագործակցությունը։ Տևական ընդհարումներն ու վեճերը հարկադրում են Արփիարյանին՝ մտածել առանձին պարբերական ունենալու մասին։ «Արևել-

րի» վարչության անդամները որոշում են Արփիարյանին հանձնել «Մասիսը», որը Կ. Ութուջյանը վաճառել էր «Արևելքի» վարչությանը՝ չդիմանալով մրցմանը։

Կ. Պոլիս վերադառնալուց հետո՝ 1884 թվականի աշնանը, ստանձնելով «Մասիսի» խմբագրությունը, Արփիարյանը ձեռնարկում է Կովկասում կազմած իր ծրագրերի կենսագործմանը։ Նրա աշխատանքը գնում է երկու ուղղությամբ, նախ քննադատական, տեսական-հրապարակախոսական հոդվածներով բացահայտում է ռեակցիոն ռոմանտիզմի վնասակար էությունը, հիմնավորում քննադատական ռեալիզմի անհրաժեշտությունը, ընթերցողներին ծանոթացնում ռուսական կլասիկ գրականության հետ, և մյուս կողմից՝ սեփական և այլ գրողների ջանքերով զարկ տալիս ռեալիստական արձակին։

Նա այդ աշխատանքն սկսում է Րաֆֆու ստեղծագործություններին նվիրված մի ընդարձակ հոդվածաշարքով, որը տպագրվում է «Մասիս» շաբաթաթերթի 1884 թվականի սեպտեմբեր ամսվա համարներում։ Այդ հոդվածը ուշադիր ուսումնասիրողը հեշտությամբ կարող է համոզվել, որ գրելով այն՝ Արփիարյանի նպատակը չի եղել միայն Րաֆֆու վեպերը իր ընթերցողներին ծանոթացնելը, այլև շարադրելու իր տեսակետները, հիմնավորելու ռեալիստական վիպագրության առավելությունները։

Արփիարյանը Րաֆֆու ստեղծագործությունների ծանոթացման առիթն օգտագործելով, անուղղակի կերպով խոսում է ռուսական գրականության առավելությունների, ռուս ժողովրդի արժանիքների մասին, սեր

և համակրանք առաջացնելով իր ընթերցողների մեջ դեպի ռուս մեծ ժողովուրդը և նրա առաջավոր գրականությունը։

Արփիարյանի նպատակն է եղել հետաքրքրություն առաջացնել դեպի ռուսական գրականությունը։ Եվ արդարև «Մասիսի» 1884 թ. № 3740-ում նա տալիս է առաջին ճաշակը ռուսական գրականությունից, հրատարակում է Պուշկինի «Ոսկե ձկնիկը» Գամառ Քաթիպայի թարգմանությամբ։ Տպագրում է մի հոդված Դոստոևսկու մասին, որտեղ գնահատվում է մասնավորապես այն, որ «Դոստոևսկին եղել է «տառապելոց և թշվառաց բանաստեղծը» [1]։

Արփիարյանը իր խմբագրած շաբաթաթերթում հրատարակում է ռուսական գրականությունից մի քանի թարգմանություն, հաճախ չհիշելով ոչ այդ երկերի հեղինակների և ոչ էլ թարգմանիչների անունները։

Այս ձևով մտքեր նախապատրաստելուց հետո, նա հաջորդ տարին կատարում է մի համարձակ քայլ, տպագրում է ազատասիրական բովանդակությամբ մի թարգմանական բանաստեղծություն «Իմ վիճակը» վերնագրով, Միխայլով ստորագրությամբ։

Մեզ չհաջողվեց Մ. Ի. Միխայլովի «Полное собрание стихотворений» (Մոսկվա, 1934) ժողովածուի մեջ գտնել այդ բանաստեղծության բնագիրը։ Հնարավոր է, որ դա մի այլ Միխայլովի ստեղծագործություն է, որ թարգմանել է մեզ անծանոթ մի արևելահայ, բայց հնարավոր է ենթադրել նաև, որ այն ինքնուրույն

1 «Մասիս», 1885, № 3751։

է և ոչ թարգմանական։ Ցենզուրական պայմաններում նման միջոցների հաճախ էին դիմում մարդիկ[1]։

Քաջալերված ընթերցողների ջերմ ընդունելությունից, Արփիարյանը շարունակում է իր սկսած գործը, տպագրում է թարգմանություններ ռուսական գրակա-

[1] Որպես ուշագրավ երևույթ, ավելորդ չենք համարում այդ բանաստեղծությունը ամբողջությամբ մեջ բերել այստեղ։

ԻՄ ՎԻՃԱԿԸ

Ես նրանցից չեմ, որք հարբված ճամբով
Շտապում են հասնել խաղաղ օթևան,
Դիտել այնտեղից անտարբեր կերպով
Զրկանք, հալածանք բռնակալության։

Անցուկ աշխարհում ես միշտ տքնում եմ
Մաքրել տատասկոտ, փշոտ ճանապարհ.
Երբեք փոթորկից ես չեմ վախենում
Ու մի կողմ քաշված, հանգիստ որոնում։

Տարերքի խաղը ինձ չի սարսափում,
Մոտ ծանոթ է ինձ նրա նախերգանք.
Զախորդությունն է երգվում նրանում
Ճնշող օրերի դառը հառաչանք։

Հաճախ ինձ թվում է այդ րոպեներում,
Թե մրրկից հետ խաղաղ կյանք կգա.
Որը սպանիչ խավար օրերում
Գրավիչ, սիրուն, փայլուն կերևա։

Նրանցից չեմ, որք ընկեր չեն սիրում,
Սեղմում են կրծքից սաստիկ թշնամուն,
Իրանց հանգիստը չեն փոխարինում
Մի սիրտ որոնում քնքուշ, զգայուն։

նությունից, հաճախ խուսափելով հեղինակների անուն-ները տալուց: Նա տպագրում է հատուկ հոդված «Սլավ-յան ցեղի լուսավորիչները» վերնագրով, որտեղ խոսվում է ռուս ժողովրդի մեծ զավակների մասին:

1885 թվականի վերջերին Արփիարյանի ջանքերով թարգմանվում և «Մասիսում» լույս են տեսնում Ի. Տուր-գենևի մի շարք արձակ բանաստեղծությունները («Այցե-լությունը», «Մաշա», «Պառավը», «Արևելյան պատմու-թյուն», «Բնությունը», «Աշխարհի վախճանը», «Ճնճղու-կը», «Կապուտակ թագավորությունը» և «Նավարկություն մը»[1]: 1886 թվականին «Մասիսը» շարունակում է տպա-գրել Տուրգենևի արձակ բանաստեղծությունները («Ողոր-

Հայտնի է ինձ բուռն սիրո զգացմունք
Ես շատ թշնամիք գտա նրանով.
Քանդեցի պատիր, կեղծ ընկերություն
Սրբեք իմ անձը չը խնայելով:

Մի է ինձ համար արդյոք կը զրկվեմ
Ամենահնարին միակ ընկերից.
Թե հալածվելով ես կը թափառեմ
Երկրե երկիր, տար հայրենիքից:

Երբեք իմ վարքը չեմ ձգի այնքան,
Իմ սիրած անձիս կուռքի տեղ պաշտեմ.
Վախկոտ, թուլամորթ ստրուկի նման
Նրա ոտքերը ընկնեմ ու լիզեմ:

Ես նրանցից չեմ, ում թեկն է հարկավոր,
Որ մանկությունից է օգնության սովոր.
Առանց օտարի կկորչի շուտով,
Նստում վեր կենում օտարի խոսքով:

1 «Մասիս», 1885, № 3795:

Ա. Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսած
«Մասիս» շաբաթաթերթից մի էջ

մուԹյուն», «Երկու քառատող ոտանավոր», «Մուրացիկը», «Երկու աղավնիներ», «Երկու եղբայրներ», «Անձնասերը», «Երկու մեծ հարուստներ», «Միջատը», «Ծունը»)[1]:

Արփիարյանի սկսած այս շատ օգտակար աշխատանքին գալիս է վնասելու քաղաքական մի դեպք: 1886 թ. ցարական կառավարությունը Կովկասում փակում է հայկական դպրոցները: Թյուրքական կառավարության նկատմամբ հաճոյականություն անող լիբերալ գործիչներից շատերը հրահրում են հակառուս կամպանիան:

Արփիարյանը, առանց նահանջելու սկսած գործից, շարունակում է հոդվածներ գրել ու տպագրել «Մասի-

---

Հազիվ լույս աշխարհ ընկա խավարից
Մերկանդամ, բոբիկ, նիհարած, անոթի,
Փշոտ աշխարհը վիշտ ներշնչեց ինձ,
Կապեց կաշկանդեց դառն աշխատանքի:

Ես աշխարհ եկա, կյանքի հետ կռվել
Խորտակել չարը իմ ազատ հոգով.
Մինչ առողջ կուրծքս վիշտը չի լափել
Ըստրուկ դարձրել, խոնարհել գլխով:

Արձակ, համարձակ, դարձյալ նույն շավղով
Սկսյալ այն օրից, ես ընթանում եմ.
Զրկանք, հալածանք, սուր մագիլներով
Ինձ չեն սարսափում և ես ազատ եմ:

Թարգմ. Զոհ

ՄԻԽԱՅԼՈՎ

Ժընև

Մասիս, 1885, № 3781

---

[1] «Մասիս», 1886, № 3803:

սում» և սուր կերպով քննադատելով ցարիզմի ազգային քաղաքականությունը, բացատրում է իր ընթերցողներին, որ ռուս ժողովուրդը համաձայն չէ ցարիզմի այդ որոշումներին, որ հայ ժողովրդի բարեկամները ցարն ու նրա չինովնիկները չեն, այլ աշխատավոր ժողովուրդը, առաջավոր ինտելիգենցիան։

Նա «Մասիսում» տպագրում է մի թղթակցություն Կովկասի դպրոցների փակման մասին, հաջորդ համարում առաջնորդող հոդվածում բողոքում ցարիզմի այդ քայլի դեմ։ «Մասիսի» մի քանի համարներում տպագրված «Արութին պեկը» ակնարկում քննադատում է ռուս հոգևորականների կրոնական մոլեռանդությունը, իսկ պարբերականի 3870-րդ համարում տպագրված «Հայք և ռուսք» առաջնորդողում բացատրում, որ այդ բոլորը կատարվում են հակառակ ռուս ժողովրդի կամքի։

«Ռուս ժողովուրդը,— գրում է նա այդ առաջնորդողում,— հավան չէ յուր չինովնիկներու հայատյաց քաղաքականության։ Ռեպնեու կատկովներ, մալշանովներ և ուրիշ խավարամիտներ մերթ ընդ մերթ իրենց հարվածները կուղղեն հայոց դեմ, բայց ողջամիտ, լուսավորյալ մասը բոլորովին տարբեր կմտածե։ Ռուս ժողովուրդը բարի ժողովուրդ մ՚է և Ռուսիո հայերն այդ ժողովրդի սերն ու հարգանքը գրավելու համար ամեն միջոց ի գործ դնելու պարտական են»[1]։

Արփիարյանի խմբագրությամբ լույս տեսած այդ տարիների «Մասիսում» մենք նկատում ենք որոշակի հակում դեպի աշխատավոր ժողովրդին հուզող տնտեսական ու քաղաքական հարցերը։ Նա լայն տեղ է տա-

---

1 «Մասիս», 1886, № 3870։

յիս գավառական կյանքին վերաբերող նյութերին, ժողովրդական ստեղծագործություններին: «Մասիսի» 1884—1886 թվականների համարներում տպագրվում են ժողովրդական ստեղծագործության մի շարք նմուշներ, գավառաբարբառով գրված բանաստեղծություններ: Տպագրվում են այնպիսի բանաստեղծություններ, որոնք առաջին անգամ արևմտահայ իրականության մեջ շոշափում էին սոցիալական հարցեր: Այսպես, «Մասիսում» տպագրվում է «Սև գյուղացի եղբայրս» վերնագրով մի բանաստեղծություն, Հողագործ ստորագրությամբ, որտեղ այն միտքն էր պարզացվում, որ հողի մշակն է «աշխարհի ազնվականը», «որ հաց կուտա» բոլորին: Լավատեսությամբ տոգորված այդ բանաստեղծության մեջ հեղինակը խորհուրդ է տալիս հողագործին չհուսահատվել ու չլքել հողը, չգաղթել:

«Մասիսը» սուր հոդվածներ, առաջնորդողներ է տպագրում ազգային իշխանությունների դեմ, լայն տեղ է տալիս լեզվի, դաստիարակության, կրոնի և այլ հարցերի:

Ա. Արփիարյանը իր շուրջը համախմբելով երիտասարդ մի քանի կարող ուժերի (Գր. Զոհրապ, Մելքոն Կյուրճյան, Լ. Բաշալյան, Տ. Կամսարական և ուրիշներ), վարկ է տալիս ռեալիստական արձակ գրականությանը, սկիզբը դնելով գրական մի ամբողջ շարժման, որը անխզելիորեն կապվում է նրա անվան հետ:

Վերոհիշյալ գրողների լավագույն ստեղծագործությունները լույս են տեսել Արփիարյանի խմբագրած պարբերականներում: Արփիարյանն է նրանց ուղղություն տվել, հաճախ անգամ որոշել արծարծվելիք հարցերի բնագավառը: Այսպես, Մ. Կյուրճյանը նրա կաղ-

մած ծրագրով է, որ ուսումնասիրում է Կ. Պոլսի սալահատակներում իրենց տաժանակիր կյանքը քարշ տվող պանդուխտների առօրյան և այն նկարագրում «Մասիսում» «Պանդուխտի կյանքեն» վերնագրով, Հրանդ ծածկանունով:

Պետք է նկատի ունենալ, որ «Մասիսը», լինելով հիմնականում գրական հանդես, հնարավորություն չուներ տպագրելու լրագրական թղթակցություններ, որոնք անշուշտ առավել հստակ կերպով կարող էին երևան հանել գավառի հայ ժողովրդի տնտեսական ծայր աստիճան ծանր վիճակը:

Անգամ լուսավորական հարցերում երևան է գալիս «Մասիսի» խմբագրի դեմոկրատիզմը: Վերցնենք դրանցից դաստիարակության հարցը:

Արփիարյանը ուշագրավ դիտողություններ ունի դաստիարակության վերաբերյալ: Ըստ նրա՝ դաստիարակությունը չի սահմանափակվում միայն դպրոցով, այն սկսում է ընտանիքից, շարունակվում դպրոցում, ավարտվում կյանքում:

Բուրժուական քաղքենիական ընտանիքում երեխան վատ ազդեցություն է կրում: Նրա մեջ զարգանում է ոչ թե աշխատասիրություն, ծնողասիրություն, ընկերասիրություն, համեստություն, այլ վնասակար մի շարք հակումներ՝ սեր դեպի թղթախաղը, բամբասանքը, նախանձ, ծուլություն, մեծամտություն: Իսկ այդպիսի հակումներով մեծացած երեխան կյանքում դառնում է հասարակության համար մակաբույծ, ընտանիքի համար ավելորդ բեռ:

Այդ տեսակետից նա շատ ավելի ապահով էր հա-

մարում աշխատավորական ընտանիքի ազդեցությունը երեխայի վրա։

Ընտանեկան դաստիարակությանը այսպիսի դեր հատկացնելով, Արփիարյանը վճռական տեղ էր տալիս դպրոցական դաստիարակությանը։ Այստեղ է, որ երեխան կազմակերպվում է որպես հասարակության անդամ, նրա մեջ զարգանում է ինքնուրույն աշխատանք կատարելու ունակություն և սեր, կյանքի հորձանքում առաջ գնալու կարողություն։ Նրա մեջ զարգանում է դատողությունը։ Լավ և մտածված դաստիարակության դեպքում երեխան դառնում է հասարակության համար օգտակար անհատ, իսկ վատ դաստիարակության դեպքում՝ խորացնում է իր բնավորության հոռի գծերը։

Նա գտնում էր, որ դպրոցական ծրագրերում քիչ տեղ պետք է հատկացնել կրոնին, դրա փոխարեն անհրաժեշտ է երեխաներին սովորեցնել դրական գիտություններ, որոնք օգտակար կարող են լինել կյանքում։

Նա դեռևս 1881 թվականին, «Մշակում» գրած մի հոդվածում՝ դատապարտելով իր ժամանակի դպրոցների սխալ ուսուցման մեթոդը, փաստեր էր բերում, թե ինչպես հարյուրավոր շրջանավարտ պատանիներ ուրախ, զվարթ դպրոցից դուրս գալուց հետո, կյանքում հիասթափվում էին, մատնվում ծայրահեղ թշվառ վիճակի, օրերով, ամիսներով, երբեմն տարիներով թափառում էին փողոցներում, անգործ ու անօգնական, խամրեցնելով իրենց առողջությունը, մոռանալով իրենց գիտելիքները։ Ինչո՞ւ։ Որովհետև փոխանակ կյանքի թելադրած գիտությունները սովորելու, սովորել էին երգել, նվագել, բանաստեղծություններ գրել, եվրոպական վեպեր կարդալ։

«Քանինե՞ր տեսանք,— գրում էր այդ հոդվածում Հայկակը,— որք՝ ունենալով իրենց ձեռքը «Վերթեր» մը, Ռաֆայել մը, կընկղմին անոնց մեջ և սակայն դժբախտ են, զի անոթի են։ Մեր գյուղացիներուն մեջ ոչ ոք կմտածե, թե երբ աղան գյուղացին ըլնե, ի՞նչ պիտի ընե»[1]։

Պոլսահայ բուրժուազիայի հիմնական ծրագիրն էր գավառում ունենալ տարրական դպրոցներ, այդ դպրոցներն ավարտողների համար հնարավորություն ստեղծել մայրաքաղաքում շարունակելու իրենց միջնակարգ ուսումը։ Այլ էր Արփիարյանի կարծիքը։ Գավառներում երիտասարդները պետք է ոչ միայն տարրական, այլև միջնակարգ կրթություն ստանային և միայն բարձրագույն ուսում ձեռք բերելու համար հարկադրված լինեին հեռանալ իրենց ծննդավայրից և սովորել Կ. Պոլսում և կամ արտասահմանում։

«Եթե կուզեք ունենալ նոր սերունդ մը գավառացիներու, որք ավելի առողջ ոգի և ավելի գործավալի միտք ունենան, պետք է Պոլսեն հեռու պահեք գավառացի տղաքները»[2],— գրում էր նա։

Ուսումնական ծրագրի մեջ լուրջ փոփոխություններ առաջարկելուց հետո նա պահանջում էր օտար լեզուներին զուգահեռ մեծ տեղ տալ մայրենի լեզվին, որի թերի ուսուցման պատճառը համարում էր գրաբարը։ Տարրական դպրոցներից սկսած երեխաների ուղեղը ծանրաբեռնում էին գրաբարի քերականական կանոններով, «այնպիսի բացատրություններով, որոնք իրենց ականջներուն բոլորովին խորթ կհնչեին, զորս սովելը

1 «Մշակ», 1881, № 177։
2 «Հայրենիք», 1882, № 192։

եվրոպական լեզու սորվելեն շատ ավելի դժվարին է, որուն երբեք պետք չունի, որմե երբեք օգուտ մը չպետք է տեսնեն»[1]: Այս գրաբարի մարզանքների փոխարեն անհրաժեշտ է մայրենի լեզվի սիստեմատիկ ուսուցում նախակրթարանից սկսած մինչև բարձրագույն դպրոցները:

* * *

Բացի մամուլից, Արփիարյանը այդ թվականներին ուներ պայքարի մի այլ ամբիոն:

Նա 1884 թվականի մայիս ամսին Բաղեշ քաղաքից ընտրվում է Ազգային ժողովի երեսփոխան:

Ազգային ժողովի պահպանողական ղեկավարները, վախենալով Արփիարյանի նման համարձակ և իր հակակառավարական տրամադրություններով Պոլսում հայտնի մի անձնավորության ամբիոն տալուց, գավառական ժողովի որոշումը բեկանում են և ետ ուղարկում, պատճառաբանելով, թե ընտրական կանոնագրության խախտում է կատարվել:

Պոլսի Ազգային ժողովի այդ քայլը հետապնդում էր մի նպատակ, անուղղակի կերպով զգուշացնել գավառացի իրենց ստորադաս պաշտոնյաներին, հրաժարվել Արփիարյանից, ուրիշ թեկնածություն առաջադրել: Կատարվում է հակառակը, նոր ընտրության ժամանակ գավառական ժողովը «քվեից բացարձակ հարաբերությամբ» նորից ընտրում է Արփիարյանին՝ Բաղեշի դեպուտատ:

Ազգային ժողովում Արփիարյանը շատ անելիքներ ուներ:

---

[1] «Մասիս», 1889, № 3944:

Ըստ էության պոլսահայ բուրժուազիայի ազգային պատրանքները վերջնականապես ցնդել էին Ներսես Վարժապետյանի մահով (1884 թ. հոկտ.)։

Վարժապետյանի թաղման հաջորդ օրերից սկսվել էր հակահայկական մի նոր կամպանիա։ Սուլթանը հավաքագրելով ծախված մի շարք պահպանողական տարրերի, Կ. Պոլսի պատրիարք է ընտրել տալիս իր հավատարմությունը վայելող Հարություն Վեհապետյանին։

Պահպանողական Ազգային Վարչությունը աստիճանաբար խլում է նախորդ տասնամյակների ընթացքում հայ ժողովրդի ձեռք բերած մասնակի իրավունքները։

Վեհապետյանը և Ազգային ժողովի ատենապետներ Նուրյանն ու Մաքսուդ Սիմոնը առաջադրում էին քաղաքական հետևյալ ծրագիրը։ Հայ ազգի նկատմամբ փոխել օսմանյան կառավարության վերաբերմունքը։ Կառավարության աչքում հայերին ներկայացնել հլու-հնազանդ, զենքի հետ բոլորովին գործ չունեցող, իր վիճակից գոհ, սուլթանին երախտապարտ մի ժողովուրդ։

Ազգային ժողովի ատենապետ, սուլթանի պատվանշաններով կուրծքը զարդարած Նուրյանը բացեիբաց հանդես էր գալիս «Սահմանադրության» դեմ։ Նա իր ծրագիրը ձևակերպում էր հետևյալ կերպ. այնպիսի մի միապետական երկրում, ինչպիսին էր սուլթանական Թյուրքիան, թե՛ իսլամների և թե քրիստոնյա ժողովուրդների համար հավասարապես գայթակղություն է մայրաքաղաքում, սուլթանի աչքի տակ նիստեր գումարող մի ընդհանուր ժողով։ Հետևություն— անհրաժեշտ է վերջ տալ «սահմանադրական» այդ կատակերգությանը և ամբողջ թյուրքահայության ղեկավարությունը հանձնել

սուլթանի անձնական համակրանքը վայելող պատրիարքներին, ստորճանաբար ցրել Ազգային ժողովը։

Նույյանը այդ ուղղությամբ էլ աշխատում է։ Նա մեռնող պատգամավորների տեղ թույլ չի տալիս, որ նորերը ընտրվեն։ Ազգային ժողովի նիստերը հրավիրում է ուշացումներով, օրակարգում դնում է ոչ թե կենսական նշանակություն ունեցող հարցեր, այլ այն թե, աշակերտները կոշիկո՞վ պետք է մտնեն եկեղեցի, թե կոշիկները հանած։

Դեմոկրատական տարրերը, որոնք հենց սկզբից հիասթափվել էին այսպես կոչված «Սահմանադրությունից», հասկանալի է, որ քաղաքական նոր և ավելի խստագույն պայմաններում չէին կարող նրանից սպասել որևէ հարցի արմատական լուծում, սակայն, ռեակցիայի մոլեգնած այդ շրջանում, երբ անհնար էր անգամ 2—3 հոգով մի տեղ հավաքվել և խորհրդակցել որևէ հարցի մասին, Ազգային ժողովը կարող էր կատարել օգտակար որոշ դեր։ Անհրաժեշտ էր Ազգային ժողովի ամբիոնը օգտագործել հայ ժողովրդին հուզող որոշ հարցերի բարձրացման համար, քանի որ այդ ժողովում, նույնիսկ իր ներկա խղճուկ վիճակում, համեմատաբար ավելի հնարավոր էր քննարկել որոշ հարցեր, քան գրաքննության տակ տնքող մամուլում։

Դեռևս շարունակվում էր Ազգային ժողովի մասնակի անձեռնմխելիությունը, այնտեղ մանավանդ Արփիարյանի նման համարձակ մարդիկ, արտասանում էին այնպիսի ճառեր, որոնք սարսափ էին պատճառում պահպանողականներին։

Ազգային ժողովի այդ տարիների արձանագրությունները հրատարակվելիս ենթարկվում էին ցենզուրա-

կան անխնա կրճատման: Ուստի այդ արձանագրությունների մեջ դժվար է գտնել Արփիարյանի պատգամավորական գործունեության լրիվ պատկերը: Մի շարք աղմըկոտ նյութեր, որոնք տեղի են մի քանի օր «Ազգային ժողովի արձանագրությունների մեջ» ընդամենը մի քանի «անվնաս» տողով են արձանագրվել, որոնցից երբեմն նույնիսկ հնարավոր չէ իմանալ թե ինչի մասին է խոսքը:

Արփիարյանի պատգամավորական գործունեության մասին հնարավոր է գաղափար կազմել միայն կովկասահայ թերթերում տպված թղթակցություններից և մի քանի ժամանակակիցների (Գ. Զոհրապ և ուրիշներ) հիշողություններից:

Ու երբ այս բոլորը ի մի ենք բերում, պարզվում է, որ Արփիարյանն իր փոքրաթիվ համախոհներով արտահայտել է առաջավոր գաղափարներ այն բոլոր հարցերի քննարկման ժամանակ, որոնք հատկապես Աբդուլ Համիդի առաջարկով մտցվել են օրակարգի մեջ ու ներկայացվել Ազգային ժողովի քննարկմանը[1]:

Անշուշտ այս բոլորը հաճույքով չէ, որ դիտվում էին պահպանողական տարրերի, սուլթանական կառա-

[1] Այդպիսի հարցերից էր, օրինակ, Պեշիկթաշի գերեզմանատան հարցը, որ երկար ժամանակ զբաղեցրել է Կ. Պոլսի հայերին: Սուլթանը ցանկացել է Պեշիկթաշ թաղամասի հայերի գերեզմանատունը քանդել և օգտագործել այլ նպատակների համար: Ազգային ժողովում տեղի են ունենում վեճեր, որոնց մասնակցում է Արփիարյանը: Ազգային ժողովի պահպանողական թևը Նուբյանի և Ստեփան Փափազյանի գլխավորությամբ, ամեն կերպ ճգնում է համոզել ժողովականներին հանձնել գերեզմանատունը և դրանով էլ սիրաշահել սուլթանին: Արփիարյանը Ազգային ժողովում դեմ է դուրս գալիս այդ առաջարկին:

վարության կողմից, սակայն նրանց անհանգստացնում էին ոչ այնքան Արփիարյանի արարքները, որքան նրա «ռուսասիրությունը», այն, որ պոլսական պայմաններում մի խմբագիր հրապարակով խոսում էր ռուս ժողովրդի արժանիքների, նրա առաջավոր գրականության մասին և խորհուրդ էր տալիս սիրել այդ ժողովրդին, սովորել նրա գրականությունից:

Հենց այն օրերին, երբ Արփիարյանի մասին լրտեսագրեր են ուղարկում պահնորդական բաժնին, նա ձեռնարկում է Մ. Լերմոնտովի «Դասալիքի» թարգմանության ու տպագրության գործին:

Նա «Դասալիքի» ֆրանսերեն թարգմանությունը տալիս է բանաստեղծ Ալ. Փանոսյանին, որպեսզի վերածի չափածո հայերենի: Արփիարյանը այն հրատարակում է «Մասիսում» մի ներածականով, որտեղ իր ընթերցողներին ծանոթացնելով Լերմոնտովի ստեղծագործությունների հետ, խոսում է այդ հեղինակի իր վրա թողած ազդեցության մասին: Պատմելով թարգմանության շարժառիթները, Արփիարյանը գրում է.

«Երեք օր վերջ թարգմանությունն ունեցա. ցնծացի. սքանչելի էր: Լերմոնտովի մասին բավական տեղեկություն կարդացած եմ և նորա սիրահարներեն եմ. երբ կարդացի Փանոսյանի թարգմանությունը, Լերմոնտովը գտա: ...Թարգմանված ամեն մեկ բառ, ամեն մեկ տող կմտրակե մեր արյունը»[1]:

«Դասալիքի» թարգմանությունը մեծ խանդավառությամբ է ընդունվում Պոլսի հայ երիտասարդության կողմից: Ընթերցողները պահանջում են ավելի ընդար-

1 «Մասիս», 1887, № 3875:

ձակ տեղեկություն Լերմոնտովի մասին, նոր թարգմանություններ նրանից։ Արփիարյանը հարկադրված է լինում հենց հաջորդ համարում մի առանձին հոդված գրելու Լերմոնտովի մասին, իր սեփական ստորագրությամբ։

«Հարուն ցնցեց շատ սրտեր,— գրում է նա այդ հոդվածում,— ամենուստ տեղեկություններ կուզեն Լերմոնտովի վրա։ Այդ հետաքրքրության կատարյալ գոհացում տալ մեզ դժվար է, սակայն կհաղորդենք, ինչ որ գտենք, օգտվելով օտարազգի մատենագիրներեն»[1]։

Ապա բավականաչափ մանրամասնորեն կանգ է առնում ռուս մեծ բանաստեղծի կյանքի հիմնական գծերի վրա։

Արփիարյանը օգտագործելով այդ առիթը՝ բարձրացնում է մի շարք հարցեր։ Նախ նորից ընդարձակորեն խոսում է ռուս ժողովրդի հարուստ կուլտուրայի, նրա առաջավոր գրականության մասին, ծանոթացնում Պուշկինի հետ, ցասումով է խոսում ու նշավակում Պուշկինին մենամարտում սպանող ֆրանսիացու մասին, որը «Ռուսիային» զրկեց «յուր մեծ բանաստեղծեն»։ Արփիարյանը գրում էր.

«Օր մը, հանկարծ, 1837-ի հունվարի մեջ, ամբողջ Ռուսիա սուգի կմտներ. չարաշշուկ լուր մը կտարածվեր բերնե բերան. Պուշկին վիրավորյալ է, Պուշկին կմեռնի։ Վշտաբեկ էր Ռուսիա յուր մեծ բանաստեղծին մահվան վրա։ Մենամարտության մը մեջ ընդունած էր Պուշկին մահախոց վերքը։

Այն պահուն, ուր ամբողջ ժողովուրդն արտասվելով

---

1 «Մասիս», 1887, № 3876։

ի շիրիմ կիջեցներ Պուշկինի մարմինը, երիտասարդ սպա մը Թարգման կհանդիսանա յուր հայրենյաց վշտին ու ցասման և զայրագին ու տխուր ձայնով մը կպահանջեր, որ պատժվի ապիրատ օտարականը.

Աղիքներեն, սրտին ամենեն խոր ծալքերեն Թռած վշտագին շեշտերով բանաստեղծը կպաղատեր կայսեր։ Մենամարտությունն օրինավոր չէր համարեր, մեկ կողմը ցուրտ, անտարբեր բախտախնդիր մը, որուն ձեռքը չէր դողդղար և անոր դեմ վսեմ ոգի մը, փոթորկալից կըրքերով լեցուն սիրտ մը։ Այդպիսի պայմանաց մեջ մենամարտություն մը մարդասպանություն մ՚էր արկածախնդիր Ֆրանսացվույն կողմանե։ Եկած էր նա ի Ռուսիա ստանալ փառք, պատիվ, շքանշան և հարստություն, ամեն ինչ շնորհված էր նմա և յուր երախտագիտությունն հայտնելու համար կսպաներ Ռուսիո սիրելի Բանաստեղծն...

Այսպես սուրբ զայրույթով սրտմտած կխոսեր հայրենյաց վշտի երիտասարդ Թարգմանը։ Նիկոլա կայսրը... հարցուց Թե ով էր այդ ոտանավորաց ստորագրողը։ Պատասխանեցին, Թե մի ոմն Միխայիլ Լերմոնտով, երիտասարդ սպա կայսերական Թիկնապահ գունդին մեջ, որ արդեն նշանավոր հանդիսացած էր յուր հանդուգն լեզվով և խրոխտ բնավորությամբ։ Կայսրը գրիչ մը առավ և ստորագրեց հրաման մը, որով Միխայիլ Լերմոնտովը կղրկեր ծառայել Կովկասու բանակին մեջ։ Աքսոր մ՚էր»[1]։

Արփիարյանը բավականաչափ մանրամասնորեն ծանոթացնում է իր ընթերցողներին Լերմոնտովի պոեմ-

---

1 «Մասիս», 1887, № 3876։

ներն ու բանաստեղծությունները, մասնավորապես «Մծիրին», «Հաջի Աբրեկը» և այլ գործեր։ Նա ուշագրավ դատողություններ է անում Կովկաս աքսորված ռուս զինվորականների մասին, համակրալից տողեր նվիրում նրանց, ցույց տալով, որ նրանցից շատերը, այդ թվում Լերմոնտովը, չնայած Կովկաս էին ուղարկվում որպես նվաճողներ, ուղարկվում էին որպեսզի ճնշեն, հնազանդեցնեն Կովկասի ժողովուրդներին, սակայն, այդ սպաները Կովկաս գալով սիրում էին տեղական ժողովուրդներին, հոգեկան կապերով կապվում ազատասեր ու անվեհեր լեռնականների հետ, թշնամի դառնալու փոխարեն դառնում էին նրանց բարեկամը, երգում էին նրանց խիզախությունն ու քաջությունը։

«Հանդուգն, խիզախ, կրակոտ սպաներ էին դոքա, ոմանք հոժարակամ դիմած ի Կովկաս, հմայալ նորա վեհութենեն, այլք շատ սեգ, շատ խրոխտ ի Պետերբուրգ, աքսորված էին անդ, որպեսզի խոնարհին ի խիստ կարգապահութիւն»[1]։

Մեծ հուզականությամբ է նկարագրել Արփիարյանը Լերմոնտովի մահը.

«Դեռ երեսուն տարեկան չկար Լերմոնտով, երբ մենամարտի մը մեջ վիրավորված կմեռնի։ ...Ռուսիա դեռ Պուշկինի սուգը չմոռցած նոր սուգի մը մեջ մտավ. բայց եթե ռուս մատենագրությունը միշտ կողբա այդ մեծ բանաստեղծին վրա, որու հանճարը եթե չիվին զարգանալու ժամանակ ունենար, պետի լիներ մեր դարուն ամենեն մեծ անուններեն մին, Կովկաս դուրգուրանոք կխանդաղատի յուր երգչին փառաց։ Ամեն աղ-

[1] «Մասիս», 1887, № 3876։

գություն, ամեն կրոնք հավասարապես կսիրեն Լերմոնտովը: Նորա արձանին վրա ամենեն փառավոր պսակներեն մին կդնեին հայք՝ ձեռամբ օրիորդ Ալիբեկովի: ...Իցիվ թե հայ բանաստեղծք Լերմոնտովի ամբողջ թարգմանությունը մեզ տային»[1]:

Եթե Արփիարյանի այս տողերը խանդավառում էին պոլսական մթնոլորտում խեղդամահ դարձող հայ երիտասարդներին, ապա կատաղությամբ էին դիմավորվում Արփիարյանի գաղափարական հակառակորդների կողմից:

Սկսվում են մատնությունները: Արփիարյանին վերաբերող գաղտնագրեր են ուղարկվում ներքին գործերի մինիստրություն:

Ծանր իրադրության այդ պայմաններում Արփիարյանը հնարավորություն չունենալով իր հակառակորդներին դիմակազերծ անել մամուլում, մի քանի հոդվածներով դատապարտում է Պոլսի հայերի մեջ ծայր առած այդ սուր բարքերը:

Բնութագրելով լրտեսությունն ու մատնությունը որպես ժողովրդին վնասող, նրա միասնությունը խախտող, նրան բարոյապես այլասերող, ամեն մի վատ արարքի ունակ դարձնող մի երևույթ, Արփիարյանը հարցնում էր թե ովքե՞ր են այդ մատնիչները, արդյոք շարքային մարդի՞կ են, թե այնպիսի մարդիկ, որոնց վստահվել է ազգի ճակատագիրը և գրում էր.

«Կարնո մեջ հայ մատնիչը ժողովուրդի քահանան է, Վանա մեջ հայ մատնիչը եպիսկոպոսն է, առաջնորդն է, Թաղական խորհուրդն է, երևելի վաճառական է և

[1] «Մասիս», 1887, № 3876:

կը հաղորդէ տեղական իշխանության, թե հայերը վտանգավոր են պետական շահուց»[1]:

Այդ նույն առաջնորդողում Ա. Արփիարյանը մեծ զգուշությամբ անդրադառնում է նաև այն տգեղ պայքարին, որ Թիֆլիսում «Մեղու Հայաստանի» թերթում Հայկունին (Գեղամյանը) ծավալեց վիպասան Րաֆֆու դեմ, նրան մեղադրելով ռուս ռևոլյուցիոն գաղափարախոսության հետ կապի մեջ:

Ակնարկելով Հայկունու այն սուտ մատնությանը, թե Րաֆֆին իր վեպերը գրելիս ազդվել է Չերնիշևսկուց, Արփիարյանը ցասումով գրում էր.

«Թիֆլիզի մեջ հայ մատնիչն հրապարակախոս է, խմբագիր է, քննադատ է, ապա քահանայացու է և մատնանիշ կընե հայ վիպասանն իր աշակերտ ռուս վիպասաններու, որք աքսորված են ի Սիբիր»:

«Պոլսո մեջ հայ մատնիչն «ազգային երեսփոխան է», կրոնասեր հրապարակախոս և կը ներկայացնե երիտասարդ հրապարակագիրներն, ազգին եկեղեցականներն տերության հայ պաշտոնյաներն իբր ամենավատթար գործիքներ օսմանյան կայսրության թշնամիներուն ափերուն մեջ»[2]:

Վերջին տողերը վերաբերում էին իրեն Արփիարյանին, որի մասին լրտեսագրեր էին ներկայացվում կառավարությանը:

Թշնամիները որոշում են ինչ գնով էլ լինի, փակել Արփիարյանի թերթը: Դժվար չէր առիթներ ստեղծելը: Նման մի առիթ է դառնում Արփիարյանի մի հոդվածը, որտեղ ծաղրվում էր ինչ-որ հոգևորական: Կրոնական

---

1 «Մասիս», 1887, № 3859:

2 Նույն տեղում:

ժողովը զբաղվում է այդ հարցով, առաջարկում Արփիարյանին հերքում տալ։ Ստանալով Արփիարյանի ժխտական պատասխանը, պատրիարքարանը սպառնում է փակել «Մասիսը»։

Արփիարյանը դրան պատասխանում է «Վարչություն և «Մասիս»» բացատրականով, որտեղ ասում է, թե Ազգային վարչությունը որոշումներ է կայացրել «Մասիսի» դեմ։ Նուրյանը և պատրիարքը սպառնացել են դիմել օրինական միջոցների։ «Հարություն պատրիարք և Նուրյան էֆենդի թող մեզ դեմ սպառնալիք չընեն, այլ թող ուղղակի իրենց սպառնալիքն ի գործ դնեն. վասնզի մենք հաստատ որոշած ենք որչափ ատեն որ գրենք, մազի չափ չը շեղիլ մեր արդի ընթացքեն — Ա. Ա.»[1]։

Արփիարյանի այս պատասխանը, որտեղ ներողություն խնդրելու փոխարեն պատրիարքին չէր արված նույնիսկ նրա համար սովորական «ամենապատիվ» կամ «սրբազան» տիտղոսը, սրբապղծություն է համարվում «Արևելքի» վարչական կազմի այն անդամների կողմից, որոնք երկյուղով էին հետևում նրա սկսած պայքարին և մտածում էին միջոցներ գտնել մեղմելու Արփիարյանի հարվածները։ Նրանք որոշում են Արփիարյանի գրած հոդվածները անցկացնել ներխմբագրական ցենզուրայից, ենթարկել կրճատումների, ուղղումների և ապա միայն տպել, մի հանգամանք որն հարկադրում է Արփիարյանին հեռանալ «Մասիսից» գրելով հետևյալ տողերը.

«... Իմ համոզումներս շատ բաղադրյալ չէին։ Համոզված եմ թե հայ թերթ մը պետք չէ որ լինի հաց

[1] «Մասիս», 1887, № 3873։

ազգին համար մի տեսակ լուտաս, ափրիկյան անուշահամ այն պտուղն, որո համար նախնիք կըսեին. «զոր թե ուտե ոք զհայրենիսն մոռանա»։ ...Պետք է խոստովանիմ, որ հորմե հետե կը գրեմ թե ի Ռուսաստան և թե աստ, միշտ անխտիր գոհունակության առիթներ ունեցած եմ։ Բնավ օր մը փոքրիկ դժգոհության պատճառ մը ունեցած չեմ։ Ասկե ավելի քաջալերության մը պետք չունիմ» [1]։

Այդ 1887 թվականի հունիս ամսին էր։ Դրանից հետո «Մասիսը» մոտ մեկ տարի, այսինքն մինչ 1888 թվականի մայիսի մեկը, հրատարակվում է բացառապես «Արևելքի» վարչական խորհրդի մյուս անդամների կողմից, որոնք ստորաքարշ քծնանքով լի մի առաջնորդող են հրատարակում «Մասիսի» այդ շրջանի համարներից մեկում և փառաբանում են «օգոստափառ» սուլթանին։ Նրանք գրում են. «Հայ ազգին կմնա միայն հարատևել այն շավղին մեջ, որուն կհետևի դարերե ի վեր։ Հայ ազգը յուր վեհապետին այսքան հայրախնամ շնորհաց առջև անհավատարմության որևէ խորհուրդ մտքեն չանցընելե զատ՝ ամեն ժամանակե ավելի տոգորված է առ օսմանյան գահը անհեղլի հավատարմության զգացումներով» [2]։

Այս հայտարարությունից պարզ երևում է, որ Արփիարյանը «Մասիսից» չէր հեռացվում միայն կրոնավորների կամ պատրիարքարանի դեմ գրելու համար։ «Արևելքի» վարչության անդամները սահմանազատվում էին Արփիարյանի քաղաքական գծից։

Արփիարյանի գրչակից բոլոր ընկերները բոյկոտի

[1] «Մասիս», 1887, № 3877։

[2] Նույն տեղում, № 3907։

են ենթարկում նոր «Մասիսը», որն ընկնում է ծանր դրության մեջ։ Գ. Զոհրապը, Լ. Բաշալյանը, Տ. Կամսարականը և մյուսները այդ ամբողջ մեկ տարվա ընթացքում և ոչ մի տող չեն գրում այնտեղ։

Ըստ էության ոչ մի նմանություն չկա նախորդ և այս նոր շրջանի 11 ամիսների «Մասիսների» միջև։ Ընթերցողներին քաղաքական պայքարից հեռու պահելու, հասարակական հուզող հարցերից շեղելու համար, ամեն միջոցի դիմում էին «Մասիսի» նոր խմբագիրները։ Այդ շրջանում տպագրված նյութերի միայն վերնագրերը շատ բան կարող են ասել պարբերականի նոր ուղղության մասին։ Ահա դրանցից մի քանիսը. «Կենդանական մագնիսականություն», «Ուշաբարձություն» (ուզում է ասել ուշագնացություն), «Քնաշրջություն», «Ուր երթան հոգիք», «Ծննդյան պատմություն», «Ալելու ծննդյան երգը», «Քունը և հոգնածության վրա իր ունեցած ազդեցությունը» և այլն։

Ընթերցողներին հասարակական կյանքից կտրելու միտումով նրան քնի, երազների, ոգիների աշխարհը փոխադրելու ձգտում ունեցող մի ամսագիր չէր կարող երկար կյանք ունենալ։ Ընդամենը մի քանի ամսում բաժանորդների կեսից ավելին հրաժարվում է «Մասիս» կարդալուց։

«Արևելքի» վարչությունը հարկադրված է լինում 1888 թվականի փետրվարի 20-ին դադարեցնել շաբաթաթերթը, որոշ ժամանակից հետո նորից հանձնել Արփիարյանին, արդեն նրա պատասխանատվությամբ։

Մի նոր դեպք պատճառ է դառնում «Մասիսի» նոր խափանմանը։

Նոր պարբերականի ընտրության առթիվ բորբոքվում է

պայքար Ազգային ժողովում։ Արփիարյանը պաշտպանում է սուլթանի կողմից մերժված մարդկանց թեկնածությունը։

Ժողովում բուռն վեճ է տեղի ունենում սուլթանի կամակատար Նուրյանի և Ա. Արփիարյանի միջև։

Արփիարյանը Նուրյանին ու նրա կողմնակիցներին մեղադրում է ժողովրդի դեմ դավաճանության մեջ ու այնպիսի համարձակ մտքեր արտահայտում, Բ. Դռան դեմ այնպիսի խոսնիկ ոճ գործածում, որ պահպանողականները սարսափի են մատնվում։ Պահպանողական Հ. Գուրգենը գոչում է.

— Ի սեր աստծո պ. Արփիար, ցած իջեք, ցած իջեք։

Եվ երբ Արփիարյանը շարունակում է իր մերկացումները նույն հանգստությամբ ու վճռականությամբ, Նուրյանը՝ իրեն կորցրած, անձնական վիրավորանքներ է հասցնում Արփիարյանին, նույնիսկ փորձում բռնի իջեցնել ամբիոնից։ Այստեղ է որ Արփիարյանը մի ուժգին ապտակ է իջեցնում Նուրյանի երեսին։ Արփիարյանի այս համարձակ քայլին ակնարկելով Գրիգոր Զոհրապը Նուրյանի մասին գրած իր դիմանկարում բնութագրելով նրան որպես ազգի դավաճանի, գրում է.

«Ազգը Արփիարյանի ձեռքով ապտակեր էր զինքը»[1]։

Կառավարությունը, որ ակընդետ հետևում էր Ազգային ժողովի պատերից ներս կատարված ամբողջ իրադարձություններին, որոշում է դադարեցնել Արփիարյանի խմբագրած «Մասիսը»։ Պատրվակ բռնելով նրա մի քանի սուր հոդվածները պատրիարքի դեմ, հետևյալ հրամանն է հանում թերթը փակելու մասին։

---

[1] Գ. Զոհրապ, Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 29։

«Տպագրական տեսչությունը, նկատելով, որ «Մասիս» լրագիրն իր 10 դեկտեմբերի 1888 թվականի և 3921 թիվ թերթին մեջ հայոց պատրիարքարանին դեմ թշնամական հոդված մը հրատարակած է, այս օրվնե սկսյալ անպայման կերպիվ դադարման կը դատապարտվի նույն լրագիրը»[1]։

Հաջորդ օրվանից «Մասիսը» դադարում է մինչև 1889 թվականի սեպտեմբեր ամիսը։

* * *

1889 թվականի սեպտեմբեր ամսին տպագրական տեսչությունը նորից արտոնում է «Մասիսի» հրատարակությունը, որը շարունակում է լույս տեսնել Արփիարյանի խմբագրությամբ և նրա գրչակից ընկերների ակտիվ աշխատակցությամբ։

Գրական-գեղարվեստական բաժնում լույս են տեսնում Արփիար Արփիարյանի կյանքի պատկերներից «Հարուստին կոչումը», Գրիգոր Զոհրապից «Փոթորիկը», «Պարահանդեսին վաղորդայնը», «Խարխափը», «Մեղավոր» նովելները և նրա հետաքրքրական հիշողությունները «Ուղևորություն մը հիշատակներուս մեջ» վերնագրով։

Տպագրվում են Լ. Բաշալյանի լավագույն նովելները՝ «Ղալաթիո բեռը», «Տերտերին ախտը», «Խաչախչին», «Այս է եղեր», «Դրացուհին», «Վերջին համբույրը», «Նոր զգեստը», Տիգրան Կամսարականից «Վարժուհին»։ Մ. Կյուրճյանը շարունակում է «Պանդուխտի կյանքեն» ակ-

---

[1] «Արևելք», 1888, № 1486։

նարկների շարքը՝ պատկերելով ղարիբների ծանր կյանքը։

Որքան մոլեգնում է ռեակցիան, որքան գազազում են Արփիարյանի գաղափարական հակառակորդները, այնքան ավելի մեծ համառությամբ Արփիարյանը շարունակում է իր սկսած գործը։

Նոր «Մասիսի» առաջին համարների մեջ Արփիարյանը տպագրում է իր ընդարձակ հոդվածաշարքը Լեոյի գրական ստեղծագործության մասին, որտեղ ջերմորեն խոսում է արևելահայ ռեալիստական գրականության, ռուս կլասիկ գրողների մասին։

Այս նոր շրջանում Արփիարյանը գրականության հարցերին անդրադառնում է բազմաթիվ առիթներով, բյուրեղացնելով իր գրականագիտական ըմբռնումները, իր ավարտին հասցնելով քննադատական ռեալիզմի համար մղվող պայքարը, որի ոչ միայն տեսաբանը, այլև պրակտիկ կենսագործողը հանդիսացավ ինքը արևմտահայ գրականության մեջ, Հակոբ Պարոնյանից հետո։

ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՊԱՅՔԱՐԸ ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Արփիար Արփիարյանը տարբեր՝ շրջանում գրել է գրականագիտական քննադատական բազմաթիվ հոդվածներ։ Այդ հոդվածների մեջ բնութագրել է հայ նոր գրականության գրեթե բոլոր ականավոր դեմքերին։ Նա կարծիքներ է հայտնել ոչ միայն արևմտահայ գրեթե բոլոր հայտնի գրողների մասին, այլև արևելահայ շատ հեղինակների մասին՝ Նալբանդյանի, Աբովյանի, Սունդուկյանի, Նազարյանցի, Աղայանի, Պռոշյանի, Շիրվանզադեի, Րաֆֆու և այլն։

Նա քննադատական ռեալիզմի տեսական հիմնավորմամբ հանդես է եկել 1884 թ. Րաֆֆու, 1885 թ. Գր. Օտյանի, 1889 թ. Լեոյի մասին գրած հոդվածներում, որոնց մեջ բարձրացվող հարցերին հետագայում անդրադարձել է ավելի ընդարձակ և հանգամանալից հոդվածներով։ Դրանցից են 1902 թվականին «Գեղունիում» տպագրված «Պատմություն ԺԹ դարու Թյուրքիո հայոց գրականության» հոդվածը, 1903—1904 թվականներին

Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի Ա. և Բ. գրքերում լույս տեսած «Արևմտյան հայոց արդի գրականությունը»,— որը մինչև մեր օրերում էլ միակ հուսալի աղբյուրն է արևմտահայ գրականությունն ուսումնասիրողների համար,— 1903 թվականին «Բազմավեպում» լույս տեսած «Թյուրքիո հայոց գրականությունը» թռուցիկ ակնարկը, 1905 թվականին «Գեղունիում» լույս տեսած «Գրական հուշերը»[1]։

Այդ աշխատությունները, սակայն, մի մասն են այն խոշոր գրականագիտական, քննադատական ժառանգության, որ թողել է Արփիարյանը պարբերական մամուլի էջերում։ Նա ընդարձակ հոդվածներ է գրել Րաֆֆու, Լեոյի, Ղ. Ալիշանի, Հ. Պարոնյանի, Գ. Չիլինկիրյանի, Հ. Սեթյանի, Գր. Օտյանի, Ն. Տեմիրճիպաշյանի, Շիրվանզադեի և ուրիշների մասին։

Վերոհիշյալ հարուստ ժառանգության հիման վրա փորձենք ծանոթանալ Արփ. Արփիարյանի գրականագիտական-էսթետիկական ըմբռնումներին, որոնք շատ հարցերում կանգնած են իր ժամանակի պրոգրեսիվ մտքի աստիճանի վրա։

Արփիարյանի գրականագիտական ըմբռնումների հիմքում ընկած է հանրօրեն օգտակար, կյանքը վերափոխելու կոչում ունեցող նպատակասլաց գրականության պաշտպանությունը։

1880-ական թվականների կեսերից, ինչպես տեսանք նախորդ գլուխներում, ավելի էր սաստկացել համիդյան ռեակցիան. գրաքննական կաշկանդումները հասել էին

---

1 Վերոհիշյալ հինգ հոդվածները ամփոփվել են նաև մի առանձին հատորի մեջ և հրատարակվել Կահիրեում, «Պատմություն ԺԹ դարու Թյուրքիո հայոց գրականության» վերնագրով։

չտեսնված խստության, արգելված էր Հայաստան, ազատություն բառերի գործածությունը մամուլում և գրքերում. Հետապնդվում էին ամեն կարգի հավաքույթներն ու ժողովները, համիդյան կառավարությունը լրտեսների ցանցով պատել էր ամբողջ երկիրը:

Սկսված քաղաքական այս նոր պայմաններում,— ինչպես ասվեց նախորդ գլխում,-- դիրքերի ճշտում է նկատվում հասարակական շերտերում. խոշոր բուրժուազիան հեշտությամբ կողմնորոշվում է դեպի սուլթանական կառավարությունը. նա այն կարծիքն է պաշտպանում, թե Թյուրքիան թույլ է եվրոպական պետությունների նկատմամբ, բայց ուժեղ է հայ ժողովրդի նկատմամբ, ուստի անիմաստ է մտածել հայ ժողովրդի դարավոր դրությունը փոխելու, ազատություն ձեռք բերելու մասին ու դրանով էլ վնասել հայ հարուստների առևտրական վիճակին, թյուրքերին գրգռել հայերի դեմ:

Մանրբուրժուական բազմաթիվ գրողներ, սանձված նոր պայմաններում ոչինչ չգտնելով մխիթարական, փորձում են իրենց ստեղծագործությունների մեջ խույս տալ իրականությունից, զբաղվել իրենց անձնական հույզերով:

Ուրիշներ՝ սկսում են մոլեգին պայքար առաջադեմ գաղափարների դեմ, դրանով սիրաշահելով սուլթանական կառավարությանը, որը քաջալերում էր այդ կարգի մարդկանց գործունեությունը, հովանավորում անկումային գրականությունը:

Երկչոտ, թույլ ներվերի տեր մտավորականությանը համակող ընդհանուր երկյուղը և կառավարության ակնհայտնի միջամտությունը հրապարակը ողո-

ղում են անկումային տրամադրություններ արտահայտող վնասակար գրականությամբ։ Մամուլի էջերը լցվում են ֆրանսերենից կատարված այնպիսի թարգմանություններով, որոնք մտքեր նախապատրաստելու, առաջադիմական գաղափարներ տարածելու փոխարեն, ընթերցողներին փորձում են հեռացնել այդ ծանր, մղձավանջային կյանքից, մոռացնել տալ տխուր ներկան, օրորել զանազան ասպետների, մարկիզների, թագավորների սիրային արկածներով ու ինտրիգներով։ Ավազակապետների, մարդասպանների արտառոց և երևակայություն գրգռող արարքները մի կողմ են թեքում երիտասարդության ուշադրությունը ժամանակի հուզող հարցերից։

Մի խումբ մտածողներ, գեղարվեստական գրականության կոչումը համարում են մարդկային տառապանքի սփոփումը, վշտի փարատումը, գրականությունը նկատում են իբրև մի տեսակ ժամանցի նյութ։

Միանգամայն վնասակար այս թեզը փորձում է տեսականորեն հիմնավորել 60-ական թվականներին նկատելի պրոգրեսիվ դեր կատարած Գրիգոր Օտյանը, որը ենթարկվելով սուլթան Համիդի հետապնդումներին, փախել էր Փարիզ ու այնտեղ ապրում էր հուսահատ ու անորոշ վիճակ։ Նա Փարիզից պարբերաբար մոդայական, սալոնային գրականության նորություններ է ուղարկում Պոլիս, որոնք տպագրվում են Կ. Ութուջյանի լիբերալ «Մասիսում» Վահրամ ծածկանունով։

Եթե 1840—50-ական թվականներին Փարիզում գտնվող հայ երիտասարդների՝ Պոլիս ուղարկած նամակներից վառոդ էր բուրում, նրանց նամակները մտքեր էին հուզում ու պատրաստում, ապա այժմ, Գրիգոր

Օտյանի նամակները, թղթակցությունները գրված լինելով հանդերձ գրական անուրանալի տաղանդով, խունկ ու մոմ էին բուրում, հուսահատություն ու վիշտ, աղոթք ու ինքնամոռացում, որոնց կարիքը չուներ Կ. Պոլսի երիտասարդությունը։ Օտյանը «ալ մեղմափայլ վերջալույսը սիրող միստիկն էր, ու երիտասարդությունը միջօրեի կիզիչ արեգակով է, որ կտաքնա, կվառի, կբեղմնավորի ու կբեղմնավորէ»[1] — գրում է Արփիարյանը։

Այլևս բոլորովին «անկումապաշտ գրագետ մը», «երանությունը մահվան մեջ փնտրող հուսահատ մը» դարձած Օտյանը Փարիզից «Մասիսին» ուղարկած հոդվածներում և իր մտերիմներին ու բարեկամներին ուղարկած անձնական նամակներում դեռևս 1883—84 թվականներին ձևակերպում է իր գրականագիտական, գեղագիտական ըմբռնումները, որոնք շատ նպաստավոր էին սուլթանական հայահալած կաշկանդիչ քաղաքականությանը։ 1885 թվականին, իր եղբորորդուն՝ Հրանտին ուղղած մի նամակում Գր. Օտյանը զարգացնելով այն միտքը, թե գիտությունը ի վիճակի չէ թափանցելու տիեզերքի գաղտնիքների մեջ, թե դա միայն աստծո գործն է, գրում էր.— «Այն աստծու գաղտնիքն է. հավատացյալը կը խոնարհի, անհնազանդը կխռովի, և հավատացյալը, որ աստծու և արքայության կը հավատա, կը հանդարտի ու կը մխիթարվի»։

Նույն 1885 թվականին Օտյանը հրապարակ է նետում գրականության իդեալիստական, եկեղեցական, ըստ էության ռեակցիոն ու շատ վնասակար ըմբռնումը

[1] «Բանբեր գրականության և արվեստի», Ա. գիրք, էջ 199։

ավելի բացահայտ կերպով։ Իր քրոջ՝ Եվփիմե Օտյանի թարգմանած «Աբբա Կոնստանդեն» վեպի համար գրած առաջաբանում փորձում է հիմնավորել այն թեզը, թե գեղարվեստական գրականության կոչումն է մոռացնել տալ կյանքում պատահող անախորժությունները, թշվառությունները, թե նա կոչված է ընթերցողին փոխադրել երևակայական մի աշխարհ, որը ավելի հաճելի է, քան իրականը, թե գրականությունը չպետք է զբաղվի հասարակական հարցերով։

Օտյանը, որ մի այլ առիթով հպարտությամբ գրում էր՝ «կյանքիս մեջ օր մը չէ եղած, որ չաղոթեմ», և դավանում էր այն սկզբունքը, թե «այս աշխարհը անցք մը է միայն մեզի համար, կամուրջ մը», կարևորը հանդերձյալ կյանքն է, հիշյալ առաջաբանում իր միտքը ձևակերպում էր հետևյալ տողերով.

«Վեպն ինչ՞ու է, որպեսզի մարդը մխիթարվի իրականութենեն։ Այսպես է քու թարգմանած վեպդ. անուշ գույնով, անուշ հոտով զատկի ծաղիկ, որ զատկի օրվան զգացումը կուտա մարդուն, կամ թե ըսեմ սերոն սիրտը, որ կը փչե առավոտուց, բոլոր բուրմունքներ բերելով հետը, և ճնճղուկներն ու խայտիկներն իրենց բույներեն դուրս կելլեն ու օդին մեջ կը տարածվին ճլվլալով»[1]*։*

Միանգամայն վտանգավոր այս քարոզը ձգտում էր մասսաներին հեռու պահել քաղաքական պայքարից, սովորեցնել նրանց՝ համբերությամբ տանել ամեն մի ճնշում ու շահագործում, պայքարը փոխարինել միստիցիզմով ու աղոթքով, բիրտ ուժին հակադրել համբերու-

---

[1] Լ. Հալևի, Աբբա Քոնսթանթեն, թարգմանեց Եվփիմե Պ. Օտյան, Կ. Պոլիս, 1885, էջ Գ.։

թյունը, ոստիկանական հետապնդմանը՝ եկեղեցին ու աղոթքը, բանականությանը՝ կրոնական սխոլաստիկան:

Օտյանի նման դեպի անկում գլորվող գրողներ շատ կային Կ. Պոլսում:

Եղիա Տեմիրճիպաշյանը, որ նույնպես նախորդ տասնամյակում մի քանի փայլուն էջեր էր ստորագրել Կ. Ութուջյանի «Մասիսում», այժմ՝ քաշված իր պատյանի մեջ, նետվում էր նիրվանայի գիրկը, իր նոր ստեղծագործությունների մեջ մերթ աղոթում, մերթ երկրպագում, մերթ ըմբոստանում, բայց միշտ հուսալքված, անհեռանկար, զառանցանքի մեջ: Անգամ լեզվաբանական, նեղ մասնագիտական հոդվածների մեջ նա շնչասպառ «երա՜զ, երա՜զ» էր աղաղակում, ինքնամոռացում քարոզում:

Նույնիսկ այն գրողները, որոնք այդ գահավեժ անկման ճանապարհին չէին, հեռու էին կանգնած քաղաքական հրատապ հարցերի հրահրումից:

Ս. Տյուսաբը շարունակում էր իր «քարոզ վեպերի» լույս ընծայումը: Ծերենցը իր առաջին վեպը «Թորոս Լևոնին» Կ. Պոլսում հրատարակելուց հետո հնարավորություն չէր ունեցել Պոլսում ստեղծագործել և անցել էր Թիֆլիս:

50—60-ական թվականների դեմոկրատական մամուլը («Մեղու», «Մյունատեն», «Արևմուտքը») վաղուց փակվել էր: «Արևելյան մամուլը», «Արշալույս Արարատյանը» և ուրիշ լիբերալ թերթեր, դարձել էին հիմնականում պահպանողական հրատարակություններ: Հակոբ Պարոնյանի նման մի խոշոր հեղինակություն անգամ, որ 60—70-ական թվականներին իշխում էր գրական ասպարեզի վրա և սուր, խարանող, քաղաքական երգիծանքով

պահպանողականության ահ ու սարսափն էր, այժմ ստիպված իր գրիչը գերազանցապես տրամադրել էր Կ. Պոլսի ընտանեկան, քաղքենիական կյանքի քննադատությանը և իր «Խիկարների» տետրակներով հնարավորություն չուներ գրականության վրա ուժգին ներգործություն ունենալու։

60-ական թվականներից սկսած հայ հասարակական մտքի վրա մեծ ազդեցություն ունեցող հայ թատրոնը գրեթե փակվել էր։ Աչքի ընկնող բոլոր դերասանները՝ Պետրոս Ադամյանը, Աստղիկ և Սիրանուշ քույրերը, Ազնիվ Հրաչյան, Գ. Թրյանը և ուրիշներ անցել էին Կովկաս և խաղում էին Թիֆլիսի բեմում։ Պոլսում տրվում էին գերազանցապես թյուրքերեն լեզվով ներկայացումներ, այն էլ մեծ մասամբ ֆրանսերենից թարգմանված զավեշտներ։

Այդպիսի գրական և հասարակական միջավայրում Գր. Օտյանի վնասակար գաղափարները կարող էին ներգործել մարդկանց վրա։

Ա. Արփիարյանը, Գ. Զոհրապը, Տ. Կամսարականը և ուրիշներ միանգամայն տարբեր պահանջներ էին ներկայացնում գրականությանը։ Նրանք, 80-ական թվականների մտավորական շարժման ղեկավար Արփիարյանի գլխավորությամբ՝ գտնում էին, որ գրականության կոչումն է ամենից առաջ կյանքի բազմակողմանի ճանաչումը և այդ կյանքի վերափոխմանը նպաստելը։ Ընդունելով հանդերձ, որ համիդյան ռեակցիայի պայմաններում դժվարացել է պայքարը ինքնակալության դեմ, ժողովուրդը գտնվում է վշտի ու տառապանքի մեջ, կոչ էին անում՝ ժողովրդին փոխանակ հուսալքվելու, դեպի կռիվը տանելու, ոգևորել նրան ապագայի հեռա-

նկարներով, չվախենալ իրականությունից, բաց աչքերով նայել նրան, ճանաչել այն և մտածել նրա դեմ պայքարելու մասին, գտնելով տակտիկական նոր ձևեր՝ շարունակել ընդվզումը բռնապետության դեմ։

Սուր կերպով քննադատելով Օտյանի էսթետիզմը և անվերապահ հիացմունքը ամեն կարգի անկումային գրականության նկատմամբ, Արփիարյանը այն կարծիքն էր հայտնում, որ Գր. Օտյանի քարոզած գաղափարախոսությունը ըստ էության նույն եկեղեցական միստիցիզմն է, իսկ եկեղեցական այդպիսի գաղափարախոսությամբ չպետք է սնել նոր երիտասարդությանը։ «Վերջացող թվականի մը մարդն էր Օտյան,— գրում էր նա,— իր գրականությունը արտաքին երևույթով թեև նոր սեռ մը հայոց համար, բայց հոգնած սերունդի մի հեծկլտանքն է»[1]։

Արփիարյանը «կտրուկ, զարնող» մի գրականություն էր պահանջում, նա այն կարծիքին էր, որ հասարակական կյանքի վերափոխումը հնարավոր չէ միայն նորը շինելով, այլ պետք է քանդել հինը, իսկ հինը տեղի կտա միայն խիզախ ծառացումների առաջ։ Գրողը պետք է ունենա ընթերցողի վրա ազդելու, նրան իր տրամադրության տակ պահելու, ուղղություն տալու կարողություն։ Գաղափարական գրողը «պետք է քիչ շատ ջլեբաց մը, «սան-քյուլոթ երևա», որովհետև գրականություն մը չիղեռու կարող է, կրովի պետք ունի, որ զորանա և զուբացնե ժողովրդին միտքն ու հոգին»[2]։

Արփիարյանը իր մի շարք գրախոսական հոդվածներում պարզաբանելով հանդերձ իր գրականագիտական

1 «Նոր կյանք», 1900, № 4։

2 «Արևելք», 1884, № 3։

էսթետիկական ըմբռնումները, դրանց հիմնական ձևակերպումը տվել է «Աբբա Կոնստանդին» վեպին կցված Գր. Օտյանի առաջաբանի դեմ գրած հոդվածում, որը դարձավ մի տեսակ ծրագիր ռեալիստական արձակի համար, դարձավ 80-ական թվականների արևմտահայ ռեալիզմի մանիֆեստը:

Ահա Գր. Օտյանին որպես պատասխան գրված այդ հոդվածի հիմնական մասը:

«Երբ Օտյան էֆենդի կը հայտարարե թե «վեպն ինչ՞ւ է, որպեսզի մարդը մխիթարվի իրականութենեն» այս վճիռը կրնա՞նք իբր անհերքելի ճշմարտություն ընդունիլ: Մխիթարությունը՝ վերջին ապավենն է անոնց, որոնք իրենց ցավերուն այլևս դարման չեն կրնար հուսալ, իսկ արդի վիպասանությունը չուզեր վշտերու սփոփանք հայթայթելով միայն շատանալ, այլ նաև՝ կետ նպատակին է աջակցել անոնց, որ ընկերական բշվառության դարմաններ որոնելու հետամուտ են: Վեպը իրական կյանքի պատկերը կը պարզե և մեզի կը մղե ընկերական վիճակին վրա խորհրդածելու: *Եթե արդի երիտասարդությունը օր մը իր վիպասանները ունենա, որոնք ուսումնասիրեն մեր ամեն խավերու ցավերն ու վշտերը, տխրերանգ վրձինով մեր աչքերուն առաջ պատկերացնեն տարաբախտության նկարները, մեզի վկա ընեն մինչև իսկ ժանտատեսիլ տեսարաններու և մեզի ըսեն.*

«— Ահա շարիքը, մենք քննեցինք հիվանդությունը, ըրինք հայ ընկերության սրտին ախտազննությունը, առաջ թող գան անոնք, որ հիվանդության դարմաններուն վրա պիտի խորհին.

«Պիտի կրնա՞նք անոնց ըսել.

«— Ե՞ր զմեզ լճեմ կը հանեք ցավոց և տառապանաց հանդիստավայրերը: Մեզի ծաղկանց բուրաստանները միայն առաջնորդեցեք, երթանք Ոսփորի պուրակները, թռչուններու դայլայլիկները լսենք, ծաղիկներու բուրումներովը զմայլինք: Մենք ինչ գործ ունինք այն մութ ու խոնավ հարկերը, ուր խշտիներու վրա ղարիբն է հոգևարք: Դարշահոտություն կա հոն և մեր բյուզանդական ռունգները շատ փափկասուն են:

«Դասական և վիպական գյուղերու սիրահարները միայն պիտի կրնան այսպես խոսիլ: Բայց եթե հրճվանք մըն է, անմեղ զբոսանք մըն է այդ գյուղերու պատկանիլ, սակայն սուրբ պարտականություն է աշակերտել իրականության: Պետք է, որ հայ երիտասարդությունը այդ պարտականությունը կատարե»[1] (Ընդգծումը մերն է:— Գ. Ստ.):

1885 թ. մարտ ամսին գրված այս տողերը մի հրավեր էին ուղղված գրական ասպարեզ մտնող մարդկանց, մի կոչ՝ դեպի հասարակական կյանքը, դեպի պանդուխտների ապրած խուցերը, նախահանգիստները գնալու, այդ կյանքը արտացոլելու:

Արփիարյանի պահանջն էր անհատի փոխարեն գրականության առանցքը դարձնել հասարակությունը, զբաղվել ժողովրդին հուզող հարցերով:

Նա առաջ էր քաշում գրականության խոր գաղափարականության հարցը: Սկսվել էր այնպիսի մի վիճակ, երբ «գրականությունը որոշ ձգտումի մը չէր ծառայեր», «ինքնամոլության հիվանդոտ գրականություն մը ծայր տալ սկսած էր»: Մինչդեռ անհրաժեշտ էր գրականությունը ծառայեցնել շատ որոշակի մի նպատակի, ծա-

[1] «Արևելք», 1885, մարտի 7:

ուսուցանել ժողովրդին, որոնել սոցիալական չարիքի բուժման դարմանները:

Հենց այդ էլ անհնար էր՝ առանց բազմակողմանիորեն ճանաչելու կյանքը. գրողը չպետք է լիներ նեղ սենյակի մարդ. որպես հասարակության ամենազգայուն անդամներից մեկը նա պետք է լիներ ամենահեռավոր և խուլ անկյուններում, բանվորական ավաններում, հանրակացարաններում: Ճշմարիտ կյանքը այդ վայրերում էր և ոչ Բերայի սալոններում: Հազարավոր պանդուխտ հայեր, բեռնակիրներ այդ խուլ անկյուններումն էին քարշ տալիս իրենց կյանքը: Վիպասանը պետք է ճանաչեր իր օբյեկտը, որովհետև «Ճշմարիտ վիպասան մը այնքան գրական գիտուն մըն է իր ճյուղին մեջ, որքան բժիշկ մը կամ երկրաչափ մը»:

Ահա թե ինչու Արփիարյանը չէր ներում նույնիսկ այն մարդկանց, որոնց հայ գրականության մատուցած ծառայությունները բարձր էր գնահատում բազմաթիվ առիթներով, չէր խնայում, որովհետև նրանք էլ խուսափում էին կյանքի այդ «տգեղ» կողմերից, ինչպես այդ արել էր Գր. Չիլինկիրյանը իր «Ուղևորություն ի Կ. Պոլիս» ճանապարհորդական նկարագրությունների մեջ, որտեղ երևույթները դիտել էր «Ոչ փիլիսոփայական մըտքով, ոչ քաղաքագետի աչքով, ոչ տնտեսագետի խոհեմով» կարծես գտնվեր «լուսնկայ պարտեզի մը մեջ»:

Չիլինկիրյանը տեսել էր Պոլիսը, բայց չէր տեսել բուն ժողովրդին: Տեսել էր միայն վերնախավին, մի քանի ականավոր մարդկանց: Այլ էր Արփիարյանի պատկերացրած ժողովուրդը:

«Եվ ո՞վ է այդ ժողովուրդը... ոսկերի՛չն է, նավավա՛րն է, ժամագո՛րծն է, գերձա՛կն է... պանդուխտները,

անոնց կյանքը։ Այդ տխրադեմ հայերուն և ոչ իսկ Ճանապարհին հանդիպած է պ. Ջիլինկիրյան»[1]։

Արփիարյանը գրողին չէր պատկերացնում որպես սոսկ դեպքերը արձանագրող, իրականության պասսիվ արտացոլող մի մտածող։ Գրողները օժտված պետք է լինեին ներկայի խոր ճանաչողությամբ, ապագան տեսնելու կարողությամբ։ Նա պահանջում էր, որ գրողները «հորիզոնեն անդին նային», լինեն «ապագայի գուշակողները»։ Նույնիսկ պատմական անցյալի պատկերումը պետք է նպաստի ապագայի պատրաստմանը «գաղափարական դրականությունը անցյալը կը ցոլացնե ու հեռավոր ապագան պատրաստելու կընկրտի»[2]։

Ապագայի այդ գուշակները, Արփիարյանի կարծիքով, օբյեկտիվ իրականությունը ճանաչելուց, նրա մեջ մարդկության համար չարիք տեսնելուց հետո պետք է հարց տան «ինչո՞ւ այս չարիքները» և չարիքների դարմանը որոնեն **սոցիալական ռևոլյուցիայի** մեջ։ Նա հենց այդ բառերով էլ ձևակերպում էր իր միտքը. «**Չարիքներուն դարմանը ընկերական հեղափոխության մեջ պետք է որոնել**»[3] (Ընդգծումը մերն է։— Գ. Ստ.)։

Արփիարյանը 80—90-ական թվականներին սոցիալական ռևոլյուցիայի գաղափարին չէր հանգել. նա, անշուշտ, այդ դիրքի վրա կանգնեց 1905 թվականից ռուսական առաջին ռևոլյուցիայի ազդեցությամբ։

Մերկացնելով բուրժուական կեղծ բարեպաշտությունն ու բարոյագիտությունը, որոնց հիմքում ընկած էր անառակությունը, այլասերումը, ղեխ ու շվայտ կյանքը,

---

1 «Արևելք», 1884, № 170։

2 «Նոր կյանք», 1900, թիվ 4։

3 Նույն տեղում։

Արփիարյանը կոչ էր անում գրողներին՝ առանց վախենալու իրենց մատը դնել բաց վերքի վրա։

Խոսքը մասնավորելով վիպասաններին, գրում էր «Թող հայ վիպասաններն իրենց դյութիչ գրիչներով ներկայացնեն մեզ մեր ընտանեկան վիճակը իր բոլոր խակության մեջ։ Թող հոշոտեն մեր սրտերը, բայց հեղափոխեն մեր բարքերը»[1]։

Նա «գաղափարի սով» էր տեսնում՝ այն մարդկանց մոտ, որոնք՝ թողած ժողովրդին զբաղեցնող հրատապ հարցերը, հրապարակում էին իրենց անձնական հույզերին նվիրված գործեր, ինչպես, օրինակ, այդ արել էր բանաստեղծ Տ. Սեթյանը, որի բանաստեղծությունները արտահայտում էին հոռետեսություն, հուսահատություն, փախուստ իրականությունից։

Երբ նա Սեթյանի նկատմամբ համեմատաբար մեղմ էր արտահայտվում, ապա շատ անզիջող էր ու խիստ այն մարդկանց նկատմամբ, որոնք դիտավորյալ կերպով, կատարելով սուլթանի կամակատարների սոցիալական պատվերը, հրապարակ էին հանում որևէ դավանական կամ այլ կարգի հարց, դրանով զբաղեցնում մամուլը։ 1888 թ. Հռոմի պապի պահանջով առաջ է քաշվում միանգամայն անիմաստ մի այնպիսի հարց, ինչպիսին է կրոնական, դավանաբանական «Դաշանց թղթի» հարցը։ Այդ խնդրի արծարծումը իսկույն հայատառ թյուրքերեն կաթոլիկական մամուլից թափանցում է հայերեն մամուլը ու զբաղեցնում հասարակական կարծիքը։ Առաջադեմ գրողները դժգոհությամբ հետևում են դատարկ վեճի ընթացքին, փորձում են ընդհատել այն և ուրիշ ավելի

[1] «Արևելք», 1884, թիվ 39։

կարևոր հարցեր առաջ քաշել, սակայն այն գնալով մոլեգնում է։

Արփիարյանը՝ հարկադրված, «Արևելքի» մեջ գրում է մի սուր հոդված այդ հարցի դեմ, որտեղ ասում է. «Ես իմ մասին շատ մտատանջության մեջ չեմ, թե հոգին սուրբը որդին՞ն կըխի, հորե՞ն կըխի, թե երկուքեն։ Խընդիր մը, որ իրենց գիտնալու գործն է»։ Ապա շատ ավելի որոշակի ձևակերպելով իր միտքը, գրում է.

«Մենք այդ «Դաշանց Թուղթը» չենք ընդունիր... «Դաշանց Թուղթին» համար կըսենք դա՝ շանց թուղթ է, եթե կուզեք, ընդունեցեք։ Ձեր գիտնալու բանն է»[1]։

Ժողովրդին արթնացնելու, միշտ օրվա հետ պահելու կոչ անող Արփիարյանը գտնում էր, որ գրական հրապարակը վնասակար գրքերից մաքրելու միակ նախապայմանը անողոք՝ քննադատությունն է։ Քննադատությունը կազդուրող, առողջացնող մի կարևոր գործոն է։

Անաչառ, սկզբունքային, առողջ քննադատությունը Արփիարյանը նմանեցնում էր վիրաբույժի դանակին, որը կարող է վերքը կարելիս ցավացնել մարմինը, սակայն նպատակն է բուժել այն։ «Խիստ քննադատություն մը երբեք անդամալույծ չըներ գրականությունը, արդեն ակար ծնած արարածներն անտարակույս շուտով հուսաբեկ կլինեն, սակայն կորովի մաքերու, զորավոր կամքերու բարգավաճման ազանշելի միջոց մ՚է անաչառ քննադատությունը»։

Արփիարյանը նվազ կարևորություն չի տվել գրականության և հրապարակախոսության սկզբունքայնությանը։ Նրա կարծիքով հասարակական ասպարեզ մտնող

---

[1] «Արևելք», 1888, թիվ 1389։

յուրաքանչյուր անհատի առաջին պարտականությունն է, ամենից առաջ ճշտել իր դիրքը, ունենալ որոշակի քաղաքական համոզմունքներ և հետևողականորեն, ինչպիսի քաղաքական պայմաններ էլ լինի, հավատարիմ մնալ իր գաղափարներին:

Նա մինչև վերջն էլ ոչնչացնող սատիրայով էր արտահայտվում այն խմբագիրների մասին, որոնք «հրապարակագրի կոչումը փաստաբանական գործի հետ շփոթելով», «մերթ այս դասին պաշտպան կը հանդիսանան, մերթ այն»: Այդպիսի խմբագիր է եղել «Արևելքի» վարչության անդամներից Բյուզանդ Քեչյանը, որը 70-ական թվականների սկզբներին, մանավանդ գրապայքարի եռուն օրերին, որոշ չափով հետևելով առաջադիմական ուղղությանը, ռեակցիայի սաստկացման տարիներին գնալով գլորվել էր պահպանողական ճահիճը: «Արևելքը» 90-ական թվականներից հետո նրա խմբագրությամբ դարձել էր անգույն մի վաճառականական հրատարակություն, «որու խմբագրապետը հանրային միտքը կը ջանար ստամոքսասեր դարձնել, և ուղեղին ու սրտին տեղ փորն ու որովայնը հուզել, հայ ժողովուրդը հեռու պահելու համար գաղափարական թռիչքներու փորձանքներեն»[1]:

Գրականության գաղափարականության հարցը այդքան շեշտակի կերպով առաջ քաշելով, Արփիարյանը գրականության զարգացման համար հիմնականում նշում էր երկու անհրաժեշտ նախապայման: Դրանցից մեկը գրողի հասարակական կյանքը բազմակողմանիորեն

1 «Գեղունի», 1905, № 1—10:

ճանաչելու և այն արտացոլելու կարողությունն էր, իսկ երկրորդը՝ գրական ազդեցությունը։

Նրա կարծիքով, եթե որևէ մեկը ունի գրական անուրանալի տաղանդ և փորձում է գրել, ապա նա ամենից առաջ պետք է բազմակողմանիորեն ճանաչի կյանքը, մոտիկ լինի բուն ժողովրդին։ Արփիարյանը չէր սահմանափակվում միայն Պոլսով, նրա աշխատավորական խավերի կացարաններով ու կենցաղով։ Պոլիսը Հայաստան չէր, կար մի ամբողջ ժողովուրդ, որը ապրում էր միանգամայն ուրույն կյանքով ու կենցաղով, ուներ իր պահանջները, հոգսը, վիշտը։ Սուլթանական բռնապետության դաժան ճնշումը, մասսայական ջարդերը, ներքին տեղական շահագործողների հարստահարությունը հայ ժողովրդին դարձրել էին արյունաքամ և հասցրել անդունդի եզրին։ Ո՞վ պետք է զբաղվեր այդ ժողովրդին հուզող հարցերով, ով պետք է ցուցադրեր գավառի սրտաճմլիկ ու տխուր պատկերը գրականության մեջ։ Եթե մի կողմից այդ անհրաժեշտ էր հասարակական շահի տեսակետից, ապա մյուս կողմից՝ գրողի հաջողությունն էլ պայմանավորված էր այդ ճշմարիտ կյանքի հմուտ արտացոլումով։

Այն գրողը կարող է ամուր հիմք թողնել գրականության մեջ, մնայուն արժեքներ ստեղծել, որը իր ներշնչման աղբյուրը կդարձնի ժողովուրդը, նրանից կվերցնի գրականության նյութը։

Արփիարյանը այս միտքը արտահայտել է Տյուսաքի մասին խոսելիս։ Նա Տյուսաբին համարել է այնպիսի մի հեղինակ, որի գործերը «կարդացողին հոգին բերանը կբերեն»։

Ո՞րն էր Տյուսաբի «գրական դժբախտության» պատճառը, այն, որ նա չէր ճանաչում հայ կնոջը, բայց ուզում էր ազատագրել նրան։ Հայ կինը այն չէր, ինչ որ նա տեսել էր Պոլսի սալոններում։ Գավառի կինը տարբեր էր, նա ուներ իր սեփական պահանջները, ամենից առաջ կարիք ուներ ազատագրվելու իր դարավոր ստրկությունից, ընտանեկան նահապետական կաշկանդումից։ Տյուսաբը փաստորեն պաշտպանում էր ֆրանսուհու դատը։ «Հայ կինը,— գրում էր Արփիարյանը,— հայ հողին վրա է. ով որ անոր դատը պաշտպանել կուզե, պետք է որ նախ անոր կյանքը ուսումնասիրե՝ հետը ապրելով։ ...Ոչ ոք կրնա հայ կնոջ դատին պաշտպանությունը լրջորեն ստանձնել, պարզապես տիկին Սթալ, տիկին Ժորժ Սան, Տյումա Որդի կարդալով»։ Այս էր պատճառը, որ Տյուսաբը ազդեցություն չունեցավ «հայ ընկերական կյանքին վրա»[1]։

Արփիարյանը ռեալիստական գրականության կենսական նախապայմաններից մեկն էլ համարում էր լեզվական ռեալիզմի զարգացումը, մի բան, որ իսպառ բացակայում էր Ս. Տյուսաբի, Ե. Տեմիրճիպաշյանի և այլ ռոմանտիկների մոտ։

Նա լեզվի զարգացման ու նրա կատարած ֆունկցիաներին մոտենում էր գիտականորեն, ելնելով պատմականության սկզբունքից։ Նա լեզուն համարում էր ամենից առաջ ոչ թե ի վերուստ մարդկանց տրված մի աստվածային շնորհ, այլ պատմականորեն առաջացած մի գործոն, որի նպատակն է ծառայել մարդկանց։ Լե-

[1] Ա. Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու Թյուրքիո հայոց գրականության, էջ 223։

վում ծառայում է որպես մի միջոց որևէ նպատակի հասնելու համար: «Լեզուն նպատակ մը չէ, այլ միջոց մը՝ նպատակի մը հասնելու համար»:

Հետևաբար՝ այն գրականությունը, որը գրվում էր ժողովրդական լայն մասսաներին անհասկանալի լեզվով, գրաբարով, չէր կարող կատարել ժողովրդին լուսավորելու, դաստիարակելու իր ֆունկցիան: Պատասխանելով գրաբարամոլներին, որոնք սրբապղծություն էին համարում գեղարվեստական գրականության, մանավորապես չափածոյի համար աշխարհաբար «անմշակ» լեզվի օգտագործումը և առաջարկում էին պահել գրաբարի դարավոր իրավունքները, Արփիարյանը զարգացնում էր այն միտքը, թե լեզուն հարաշարժ, տարիների ընթացքում շարունակ փոփոխվող, զարգացող, իր մասերից մի քանիսը կորցնող, նոր ձևեր ընդունող մի երևույթ է, որը տարիների հոլովման մեջ ձևափոխվում է, իր հնացած, անպետք մասերը պատմությանը հանձնում, տնտեսական ու մտավոր զարգացման նոր պահանջների թելադրանքով նոր ձևեր ընդունում, զարգանում, ճոխանում, իսկ այդ բոլորի դարբնոցը ինքը ժողովուրդն է, ժողովրդի բերանը:

«Այդ բերանը կը պահե լեզվին հիմերը, որոնք բառերն են, բայց միշտ կը փոխե ու կը բարեփոխե... միշտ կը շրջի, կարդունաբերի, բան մը կը պահե, բան մը կավելցնե, միշտ նույն խմորը, որ մշտական գոյափոխության մը ենթակա է»[1]:

Արփիարյանի կարծիքով այնքան ժամանակ, քանի դեռ գրաբարը օգնել է մարդկանց, նրանց կուլտուրական

[1] «Հայրենիք», 1894, № 938:

վերելքի, հաղորդակցության համար եղել է պիտանի, մարդիկ պահել են այն, իսկ այժմ, երբ ի վիճակի չէ բավարարել այդ պահանջները, հետ է մնացել կյանքից, այլ խոսքով նոր բովանդակությունը պահանջել է արտահայտման նոր ձև, պետք է հրաժարվել նրանից։ Կյանքը ինքը անհրաժեշտ է դարձնում այդ փոփոխությունը.

«— Ով որ չբարեփոխվեր, կը կորսվի, այսպես վճռած է գիտությունը»[1]։

Հանրության օգտի համար գրելու պահանջը մոռացնել պետք է տա ամեն մի հրապուրանք։ Մենք ո՞ւմ համար ենք գրում,— հարցնում էր Արփիարյանը, մե՞զ համար, մեր զավակների՞ համար, թե՞ մեր նախահայրերի համար։ Ուրեմն «Մեզ պետք է ոչ թե հնացած, անհասկանալի, մեզ համար անեղծված եղող լեզուն, այլ մեր ժամանակակից կենդանի ժողովրդային լեզուն»[2]։

Արփիարյանը ծաղրում էր այն մարդկանց տգիտությունը, որոնք հայերենը համարում էին Ադամի խոսած լեզուն, հետևաբար ամենահինը, որից առաջացել են մյուս լեզուները։ Նա բազմաթիվ առիթներով է քննադատել հակագիտական այդ անհեթեթությունը և ցույց տվել, որ մեր լեզվի զարգացման օրինաչափությունը պետք է որոնել ոչ թե աստվածաշնչի մեջ, այլ ժողովուրդների, մեզ շրջապատող կենդանի ու մեռած ժողովուրդների մեջ։ Այս առիթով նա սուր քննադատության է ենթարկել Ցուանեսքուին, որը, ինչպես հայտնի է, վիթխարի նյութական միջոցներ էր տրամադրել այն մարդկանց, որոնք կարողանային ապացուցել, թե ամբողջ աշխարհի լեզուները սերել են հայերենից։

1 «Մշակ», 1890, № 3943։

2 Նույն տեղում։

Որ գրաբարին փոխարինելու էր աշխարհաբարը, այդ կասկածից վեր էր ոչ միայն Արփիարյանի համար, այլև շատ-շատերի, սակայն ինչ ձևով էր զարգանալու գրական նոր լեզուն, գրաբարը ինչ դեր էր կատարելու այդ գործում. այստեղ էր հիմնական տարաձայնությունը։

Ինչպես հայտնի է այս հարցը իր ժամանակին սուր կերպով արծարծվել էր նաև արևելահայերի մոտ և Նալբանդյանը դրան տվել էր սպառիչ պատասխան։

«Ապրող ծառի ճյուղը,— գրում էր Նալբանդյանը,— կարելի է միայն ապրող ծառի վրա պատվաստել. չորացած ծառի ճյուղը, որ կտրես և բերես, ապրող ծառն էլ կտրելով նորա տեղը պատվաստես, կամ ապրող ծառը կտրես ու տանես չորացած ծառի արմատի վրա պատվաստես, երկու դիպվածումն էլ զուր տեղը կորեցիր քո ապրող ծառը, որովհետև ոչ չոր ծառի ճյուղը պիտի կենդանանա և զարթնի ապրող ծառի վրա պատվաստելով և ոչ թարմ ու զարթուն ծառը պիտի աճի մեքենայաբար դրվելով չորացած և անհյութ արմատի վրա»[1]։

Արփիարյանը նույնպիսի պատասխան էր տալիս իր հակառակորդներին գրաբարը համարելով «դիակ մը», որը ոչ մի սրսկումով, արյան ներարկումով չէր կարող վերակենդանանալ։

Նա առաջարկում էր լեզվաշինարարության գործում հիմք ընդունել ժողովրդի խոսակցական լեզուն։ Նոր գրական լեզվի գանձարանը նա համարում էր հենց այդ լեզուն։ Հայ ժողովուրդը իր դարավոր գոյության ընթացքում կերտել է հազարավոր բառեր, որոնց մի-

---

1 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատոր 3, էջ 323։

մասը մնում է Հայկազյան բառարանում անգործածելի, իսկ ավելի մեծ մասը, բոլորովին գրականության մեջ չի գործածվել: Ժողովուրդը ինքը իր տնտեսական կյանքի զարգացմանը զուգահեռ ստեղծել է բազմահազար նոր բառեր, իմաստավորել է դրանք նյութական բովանդակությամբ:

Միայն բառապաշարի հարցում չէ, որ նոր լեզուն պետք է դիմի ժողովրդին, այլև քերականության: Գրաբարի հոլովական ու խոնարհման մնացորդների դեմ պայքարելիս անհրաժեշտ է նկատի ունենալ բուն ժողովրդի լեզուն:

«Ով պետք է տեղի տա» հոդվածում նա սուր քննադատության էր ենթարկում ուսումնական խորհրդի կողմից հաստատված դասագրքերը, որոնք կազմված էին «հետադիմական աշխարհաբարյանների» կողմից և պարունակում էին գրաբարի շատ հետքեր, ստեղծելով «այլանդակ, անճոռնի, անբնական աշխարհաբար մը»:

Կոչ անելով, որ հնամոլները այլևս չհամառեն և տեղի տան, Արփիարյանը եզրակացնում էր.

«Ժողովուրդը չըսեր «իւրեանց», կըսե իրենց, մենք ալ այնպես կը գրենք: Ժողովուրդը չըսեր կողմանե, այլ կողմեն»[1]:

Ուշագրավ է մի փաստ. Արփիարյանը երբեք կողմնակից չի եղել գրաբարյան բոլոր ձևերը դեն գցելուն: Այն, ինչ որ ժողովուրդը պահել է գրաբարից, գործածվում է, պետք է ընդունել: Նա գրում էր.

«Ժողովուրդը չըսեր եղբայրի, մայրի, հայրի, են-

[1] «Հայրենիք», 1892, № 262:

ղությունի, *այլ կըսե* եղբոր, մոր, հոր, նեղության. *ու-րեմն մենք ալ հավատարիմ կը մնանք ժողովրդի բերնին։ Ով սորվեցուց հիմակվան գրողները մեծի մասին իրենց քերականությունը՝ ժողովրդի լեզուն»*[1]։

Որն էր համարում նա ժողովրդական լեզուն։ Կ. Պոլսում, հենց Արփիարյանի շրջապատում, քիչ մարդիկ չկային, որ գտնում էին, թե գրական լեզվի հիմքը պետք է կազմի Պոլսի ժողովրդական, խոսակցական լեզուն։ Արփիարյանը դեմ էր դրան։ Նա գտնում էր, որ գրական լեզվի զարգացմանը զարկ տվող մարդիկ պետք է գերազանցապես օգտագործեն գավառական բարբառների առողջը, դրանք բարձրացնեն գրականության, այն էլ՝ այնպիսի գավառաբարբառների, որոնք պահել են իրենց կենսունակությունը (Վան, Մուշ, Ակն և այլն)։

«Դարերու շրջանին մեջ մեր ժողովուրդը իր նյութական կյանքին, հոգեկան կյանքին ու իր սրտին համար դարբնած է անհագին քանակությամբ բառեր և բացատրություններ, ատոնցմե շատ փոքր մաս մը միայն անցած է հին գրքերու մեջ։ Բայց ժողովուրդին բերանը մագաղաթեն ավելի հարուստ է ու ավելի տևական, իր կյանքին պես։ Երբ օր մը դիմում կընենք այդ բերնին, կը գտնենք բացատրություններու, բառերու անհագին մթերանոց մը, որ ինքնին կը հարկադրե աշխատողը նոր գրականություն մը հիմնելու»[2]։

Ըստ Արփիարյանի, գրողը որքան ավելի մոտենա բնական, այսինքն խոսակցական լեզվին, այնքան ավելի հեշտությամբ կկարողանա իր գաղափարներով թա-

---

[1] *«Հայրենիք», 1892, № 261։*

[2] *«Հայրենիք», 1894, № 772։*

փանցել ժողովրդի մտքի մեջ, ազդել նրա վրա, առաջնորդել նրան։ Արևելահայ գրականության գտած ընդունելության հիմնական պատճառներից մեկը նա համարում էր այդ։

Արփիարյանը արևելահայ գրականության խոշոր արժանիքներից մեկն էր համարում նրա ժողովրդայնությունը, ժողովրդի բառ ու բանի հարուստ օգտագործումը։

Ժողովրդի կյանքին մոտիկությունը թելադրում էր գրողին՝ գրականության նյութը՝ այդ ժողովրդի սոցիալական կյանքի պատկերումը։

«Կարեկցութիւն թշվառներու տառապանքի, դարման անոնց ցավերու, այս է ոգին Արարատյան արդի մեր գրականության։ Պատկանյան, Սունդուկյանց, Պերճ Պռոշյանց ի վաղուց անտի և արդ՝ Մուրացան, Շիրվանզադե, Լեո և ուրիշներ, ընկերական ամեն խավերու ախտազննությունը կընեն և կը պատրաստեն հանդիսարան մը Արարատյան ու Կովկասյան հայոց զանազան դասերու վարքի, բարքի, զգացումի, գաղափարի, ցավերու և խնդության»[1]։

Ինչ պրոբլեմներ էին առաջ քաշում Արփիարյանի թվարկած գրողները։ Թե ինչու գյուղացիությունը աշխատում է և արդյունքը լցնում վաշխառուի գրպանը, ինչու կրոնական հնացած, անպետք օրենքները կաշկանդում են մարդկանց, պահում նրանց տգիտության մեջ, ինչու աշխատավորը թշվառ է, պատանին անգործ թափառում է փողոցներում և այլն։

Արփիարյանը այն միտքն էր զարգացնում, թե օբյեկ-

1 «Մասիս», 1889, № 3924։

տիվ իրականությունը հարազատորեն արտացոլող հեղինակը շատ ավելի կարող է նպաստել կյանքի ճանաչողությանը, քան որևէ այլ մասնագիտության մարդ:

«Արևելյան հայերուն մեջ,— շարունակում է Արփիարյանը,— արդեն շարժում մը կա գյուղական կյանքն ուսումնասիրելու գրքերու մեջ»:

Նրա կարծիքով «Մեր գավառացի գրողները և ուսուցիչները, փոխանակ Պոլսո գրողներեն ստանալու իրենց ներշնչումները» լավ կանեն եթե գիտեն, ուսումնասիրեն իրենց շրջապատը և «վեպերու մեջ ամփոփեն իրենց ուսումնասիրությունները»[1]:

Այս տողերը գրելուց հետո է, որ Արփիարյանը իր թերթում լայն տեղ է տալիս գյուղական ուսուցիչների նամակներին, նրանց միջից քաջալերելով, աճեցնելով այնպիսի մի ինքնատիպ, տաղանդավոր գյուղագրի, ինչպիսին է Թլկատինցին, որի «Գյուղական նամականի» առաջին հոդվածները տպագրվում են «Հայրենիքում»: Անդրադառնալով այդ նամակներին, Արփիարյանը գրում է. «Երկու ամիս է, որ Թլկատինցիին գյուղական նամակները կանոնավորապես կհրատարակենք: Երբ օր մը անոնք առանձին հատորի մեջ ամփոփվին, պիտի կազմեն մին այն սակավաթիվ գրքերեն, որք, մեր ժամանակակից գրականության պիտի տան այն ուղղությունը, որով մատենագրությունը կծառայե զարգացման նպատակի մը, ժողովրդի մը կենսական պետքերուն ուսումնասիրությամբ…

Գավառական մատենագրությունը, որ մինչև հիմա ամլած կմնար, սկսավ քաջալերվիլ, երևան ելլել ու իր

---

1 «Հայրենիք», 1893, № 457:

թաքուն բանաստեղծությանը հետ մեր աչքին առջև կպարզե իր լեզվական ճոխությունը։ Դարերու շրջանին մեջ մեր ժողովուրդը իր նյութական կյանքին, հոգեկան կյանքին ու սրտի կյանքին համար դարբնած է անհագին քանակությամբ բառեր և բացատրություններ։ Անոնցմե շատ փոքր մաս մը միայն անցած է հին գրքերու մեջ...։

Նոր են մեզի համար այդ գրվածներու նյութերը, մեր գրականության համար կենսատու թարմություն մը կցայտեցնեն։ Աչքերնուս առջև կպարզեն կյանքը իր բազմակողմանի տեսարաններով, ու անոնցմե ըխած արտաշնչությունը անցնելով մեր սրտերեն, կհասնի մինչև մտքերնիս և խորհիլ կուտա։ Մեր մարդասիրական իրապաշտ գրականության առաջին հիմնաքարերն անոնք են և իրենց նմանները, որոնց վրա կամաց-կամաց պիտի բարձրանա իմաստասիրական մատենագրությունը»[1]։

Քաջալերելով գավառացի գրողներին, Արփիարյանը խորհուրդ է տալիս պահել իրենց ինքնուրույնությունը, չընկնել պոլսեցի երկրորդական գրողների ազդեցության տակ, պահել գավառի կյանքի թելադրած ինքնատիպությունը։

«Թող բոլորովին անկախ ըլլան, թող մտքերնին դնեն թե իրենք ալ գրական անհատականություն ունին և փոխանակ նմանող մը ըլլալու, թող ջանան, որ իրենց նորությամբ ուրիշներն ալ իրենց ետևեն ձգեն։ Թող աղեկ ուսումնասիրեն ժողովուրդը, ինչ որ պիտի գրեն, անոր կյանքեն թող գրեն»[2]։

Ժողովրդական ստեղծագործության վերհանման

---

1 «Հայրենիք», 1894, № 772։

2 Նույն տեղում։

մշակման պահանջով էր, որ Արփիարյանը իրոնիայով էր խոսում «բարձր» կոչվող արվեստների մասին։ Նրա կարծիքով հայ շինականի անտաշ ու անմշակ երգը իր անմիջականությամբ նույնքան հուզում է ժողովրդին, որքան հռչակավոր մի կոմպոզիտորի ստեղծագործությունը։

«Ո՞վ մեզմե վրդովւած չզգար սրտին մեջ, երբ իրիկնապահին անցնելով տնակի մը առջևեն, լսե մօրկան մը օրորը։ Միթե այդ օրորն ալ գեղարվեստ չէ, այլ ո՞ր երաժշտական օրենքի համեմատ հօրինված է, ո՞ր կոնսերվատուարի մեջ այդ մայրը մշակած է իր ձայնը, ո՞վ կարող է տարրալուծել մայրական օրորի գեղեցկությունը»[1]։

Նա հիացմունքով խոսում էր «Սողոմոն սարկավագի» (Կոմիտասի) օգտակար ծառայությունների մասին հայ ժողովրդական երգերի հավաքման և ձայնագրման ուղղությամբ։

Արփիարյանի այս վերաբերմունքը որոշ վերապահությամբ էին ընդունում նրա մերձավոր ընկերները, իսկ քմծիծաղով՝ նրա գաղափարական հակառակորդները. այսպես, Արշակ Չոպանյանը մեղադրում էր Արփիարյանին, որ նա հեռու է գեղարվեստական ճաշակից, «գրականության մեջ օգտակար միայն կը փնտռե»[2], թե թերագնահատում է համաշխարհային արվեստի կոթողները։ Այդ ճիշտ չէր։

Արփիարյանը երբեք չի ժխտել համաշխարհային գրականության ու արվեստի մեծ կոթողները, նա շատ բարձր է գնահատել Շեքսպիրի, Բայրոնի, Հյուգոյի,

---

1 «Մասիս», 1889, № 3924։

2 «Անահիտ», 1901, № 2։

Դոդեի, ռուսական գրականությունից՝ Պուշկինի, Լերմոնտովի, Տուրգենևի, Տոլստոյի ստեղծագործությունները, հիացմունքով է խոսել անվանի նկարիչների, երաժշտագետների մասին, բայց միշտ ունեցել է մի վերապահում, այն որ կլասիկ արվեստի երկրպագումը չպետք է պատճառ դառնա ներկայի մոռացմանը: Հունա-հռոմեական քանդակագործությամբ հրապուրվողի, սքանչացողի պարտականությունն է նաև հետաքրքրվել ժամանակակից հույնի և իտալացու կյանքով:

Այն արվեստն էր բարձր դասում նա, որը խոսում է տվյալ ժողովրդի սրտի հետ, այն կտավն էր նրան հուզում, խանդավառում, որը արտացոլում է հայ կյանքը, տառապած ու չարքաշ մարդու վիճակը: Ըստ նրան ինչքան էլ բարձր արվեստով կատարված լիներ Ռաֆայելի «Հիսուսի այլակերպությունը», այնուամենայնիվ ինքը շատ ավելի հաճույքով կդիտեր մի պանդուխտ հայի դիմանկարը: Նա մեծագույն հուզականությամբ ու գովեստով է խոսել նկարիչ Գևորգ Սրապյանի «Մանուկ աղբար» նկարի մասին[1]:

«Ո՞ր ճարտար նկարիչը,— հարցնում էր նա,— կարող էր այդքան կենդանի ներկայացնել մի դեմք, որը բուռն զորությամբ կը ցոլացնե գարիպին բոլոր վշտերը: Հայրենի տան օջախին կարոտովը խանձվող պանդուխտին բոլոր ցավերը կը կարդայինք այդ դեմքին վրա»[2]:

Արփիարյանը քիչ գրելով հանդերձ արվեստի հարցերի մասին, տվել է իր որոշակի պահանջը: Նախ՝ արվեստագետը, ինչպես և գրողը, պետք է իր թեման վերց-

---

[1] Այդ նկարը այժմ գտնվում է Հայկական ՍՍՌ Պետական Պատկերասրահում:

[2] «Արևելք», 1884, № 45:

նի բուն ժողովրդից և երկրորդ՝ չպետք է հանդես գա լուսանկարչի դերում, պետք է ընտրի այն էականը, որի մեջ արտացոլված է ամբողջը։

Հենց դրա մեջ էր արվեստագետ նկարչի (որին նա պատկերահան էր կոչում), և լուսանկարչի տարբերությունը, «լուսանկարիչը ճիշտ ու ճիշտ կը նկարե, պատկերահանը թերևս քիչ մը ճշտութենե կը հեռանա, բայց նկարներուն մեջ իր սրտեն կը դնե բան մը, որ կը լրացնե նույնիսկ բնության մոռացածը, ցույց կուտա բնության վեր չը հանածը»։

Միայն հանրորեն օգտակար թեմայի զուգակցումը գեղարվեստական վարպետ կատարման, կտա արվեստի բարձր նմուշներ։ Այս էր պատճառը, որ Արփիարյանը անտարբեր անցնում էր եվրոպական մայրաքաղաքների և Կ. Պոլսի սալոնները զարդարող անծանոթ մարդկանց, թագավորների, իշխանների պորտրետների առջևով, բայց կանգնում, սքանչանում էր այնպիսի նկարի առաջ, ինչպիսին էր մեր նշած «Մանուկ աղբար» նկարը, որի մասին իր ունեցած հիացմունքը արտահայտում էր հետևյալ բնորոշ տողերով.

«Արվեստը կատարելագործված է գրչությունը։ Տաղանդավոր պատկերահանը շարժելով վշտամաշ ծերունի սրտի ամենափափուկ լարերը, նորա աչքերուն մեջ ըմբռնած է հոգեբանական վայրկյանները, որոնց մեջ կհուզին նորա սրտի 70 տարվան քաշած ամեն մրրիկները»[1]։

* * *

Արփիարյանի գրականագիտական այս ըմբռնումները շատ ավելի որոշակի երևում են այն դնահատում-

1 «Արևելք», 1884, № 45։

ների մեջ, որ նա ավել է արևելահայ և արևմտահայ մի շարք գրողների։

Բացառությամբ Ալիշանի Նահապետ ստորագրությամբ լույս ընծայած մի քանի տասնյակ տաղավորների, նա հիմնականում ժխտել է մխիթարյանների ջերմոցային գրաբար, հետադիմական գրականությունը և դրա ազդեցության տակ Կ. Պոլսում սկսված գրական շարժումը, կոչ է արել գնալ դեպի ժողովուրդը, նրանից վերցնել նոր գրականության սնունդը, այլ խոսքով՝ հետևել ո՛չ թե բագրատունիների, հյուրմյուզների գծած ուղուն, այլ Խ. Աբովյանի, Մ. Նալբանդյանի, Պ. Պռոշյանի, Հ. Պարոնյանի, Սունդուկյանի գրական ուղուն։

Ամենից առաջ նա Աբովյանին ներկայացրել է որպես մեծ հայրենասեր, ամբողջովին իր ժողովրդին նվիրված, իր ողջ կարողությունն ու ուժը նրան տրամադրած մի գրող, որը ապրել է, շնչել, բացառապես ժողովրդի համար, մտածել նրա բարօրության մասին։

«Աբովյանը ազգի սրտի հետ խոսեցավ իր «Վերքովն», գրում է նա, ընդգծելով Աբովյանի ժողովրդայնությունը։ Նա հիմնականում ճիշտ է ըմբռնել «Վերք Հայաստանի» էությունը։ Արփիարյանի կարծիքով այդ վեպը ոչ եվրոպական, և ոչ էլ ասիական տիպի վեպերի հետ չպետք է համեմատել։ Այն հայ ժողովրդի ամբողջ տառապանքն ու վիշտը, բռնադատիչների դեմ նրա պայքարելու անհողդողդ կամքը արտահայտող մի դյուցազներգություն է, էպոպեա։ Աղասին մի լեգենդար հերոս է, որի մեջ հայ ժողովուրդը դրել է իր լավագույն հատկանիշները՝ հայրենասիրություն, նվիրվածություն, ֆիզիկական ուժ ու կարողություն։ Այդ է պատճառը, որ ոչ մի վեպ չի կարողացել կատարել այն, ինչ որ կատարել է «Վերք Հա-

յաստանի» գիրքը։ «Ամբողջ ժողովուրդ մը ցնցած է, սրտերը գալարած է և արդի գրականության նոր ուղի մը բացած է»[1]։

«Վերք Հայաստանի» վեպի գաղափարական բովանդակությունը նկատի ուներ Արփիարյանը, երբ՝ խոսելով Վիրգիլիոսի գործերի գրաբար թարգմանության մասին, իր հակառակորդներին ասում էր.

«Այս տեսակ գրքեր աշակերտներուն կուտաք, դպրոցներու մեջ օտարներու բանաստեղծությամբն ու պատմությամբը կսնուցանեք, կը չարչարեք խեղճերը հասկանալու համար այն անհասկանալի տխմարաբանություններու գեղեցկությունը և կը ծաղրեք Աբովյանը, **որուն մեկ տողին իսկ արժանի չեն ձեր** *պաշտած «մշակականք» և նմանքը»*[2] *(Ընդգծումը մերն է.— Գ. Ստ.)։*

Արփիարյանը նույնպիսի ջերմ վերաբերմունք է ունեցել ռևոլյուցիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանի ստեղծագործությունների նկատմամբ։

Նույնիսկ 80-ական թվականների կեսերից, երբ ցենզուրական ցուցակներում արգելված անունների թվումն էին Խաչատուր Աբովյանի, Միքայել Նալբանդյանի, Րաֆֆու անունները, Արփիարյանը եզոպոսյան լեզվով արժեքավորում է նրանց ստեղծագործությունները, կոչ արել հետևել նրանց։ 1893 թվականին արևմտահայ բանաստեղծներից մեկը՝ Աբրահամ Այվազյանը հրատարակում է «Շար հայ կենսագրության» վերնագրով երեք հատորանոց մի աշխատություն, որտեղ հատուկ գլուխներ է հատկացնում Աբովյանին և Նալբանդյանին, նրանց դարձնելով Քանաքեռցի Խաչատուր և Միքայել

---

1 «Մասիս», 1890, № 3240։
2 Նույն տեղում, № 3940։

Պայտարյանց: Հակառակ պահպանողական մամուլի խորհրդավոր լռությանը, Արփիարյանը «Հայրենիք» օրաթերթում հատուկ հոդված է նվիրում այդ հատորներին, խոսում նրանց բովանդակության մասին և ցենզորների ուշադրությունը տարբեր կողմ հրավիրելով՝ հանգում այն եզրակացության, որ «այն մանրավեպերու, նկարագրություններու, հոգեկան վիճակներու խառնուրդին մեջ երկու պզտիկ կետեր մեր ուշադրությունը կը գրավեն, որովհետև մեծ ու վեհ սկզբունքներու վրա հիմնված են: *Առաջինը կը վերաբերի Քանաքեռցի Խաչատուրին: Այդ շահեկան մեծ դեմքը մասնավոր շողով մը կը փայլի այն մութին մեջ, ուր կորսված է իր վրա բերնե բերան լսված պատմությունները, արի ու վեհ հոգիի մը տեղը կուտան իրեն մեր մեջ: Ամենեն առաջ ինքն է,* որ հասկցած է ժողովրդական լեզվին ինչ հարուստ գանձարան մը ըլլալը *ու այդ լեզվով երգած է ընտանեկան անոր սրտախոսությունները ու վշտերը»*[1]:

Այդ նույն հոդվածում Արփիարյանը Միքայել Նալբանդյանի մասին գրում է հետևյալ բնորոշ տողերը. «Մյուս ուշադրության կետն այդ հատորիկներուն մեջ Մ. Ղազարյան-Պայտարյանցին կը վերաբերի: Ինքն ալ այն մեծ դեմքերեն է, որք ժողովրդի մը զարգացման պատմության մեջ առաջին տեղը կը բռնեն»:

Ապա, ընդհանրացնելով ու եզրափակելով հոդվածը, Արփիարյանը գրում է. «Ահա երկու մարդիկ, որք իրենց ժամանակին բախտատամամբ մթերած են գիտության ու դպրության մեծ պաշար մը, որք գիտեին թե դասարանին վրա, ամբիոնեն կամ մամուլի միջոցով կրնային

---

1 *«Հայրենիք», 1893, № 164:*

ազդել իրենց հասարակության վրա, բարեփոխելով բարքերը, ջնջելով նախապաշարումները և փտած սովորությունները և առաջադիմության ուղին ցույց տալով լայն և անսահման»[1]:

Մեր բերած փաստերը վկայում են, թե ինչպիսի անսահման սեր է ունեցել Արփիարյանը Խ. Աբովյանի և Մ. Նալբանդյանի նկատմամբ։

Ինչպես է գնահատել Արփիարյանը Հակոբ Պարոնյանի ստեղծագործությունները։

Նա ըմբռնել է Պարոնյանի երգիծանքի էությունը, նրա ուժը, այն կարծիքին չի եղել, թե Պարոնյանը «կը խնդա խնդալու համար»։ Պարոնյանի ծիծաղի տակ նա տեսել է մեծ երգիծաբանի դառն արտասուքը հայ ժողովրդի թշվառ վիճակի համար։ «Պարոնյանը սրտերու տիրեց զվարթությամբ, բայց այդ զվարթությունը գրանց էր, սկեպտյան ծիծաղկոտ պատյանին ներքև հեգնությունը կծածկե սրտի գերագույն վշտերը, ինչպես սպիտակ կնքոց մը կպատե դառնահամ սուլֆաթոնը» (խինին)[2]*։*

Արփիարյանը մեծ դժբախտություն է համարել, որ Պարոնյանը «Ճշգրիտ գրիչով մը» տալով էսնաֆ դասի կյանքը, «ավելի իրապաշտական վրձինով մը» նկարագրելով բարձրագույն միջավայրի մեջ ապրողները, «մեծիկները», հնարավորություն չի ունեցել Օրթագյուղի «բարձր դասի» ամիրայական տների կյանքն ու կենցաղը ուսումնասիրելու և մի վեպ գրելու, որի մասին միշտ երազել է։

Այնուամենայնիվ, Արփիարյանը, որ շատ օբյեկտիվ

---

1 *«Հայրենիք», 1893, № 464։*

2 *«Հայրենիք», 1892, № 428։*

գնահատական է ավել գրեթե բոլոր հայ գրողներին, նույնիսկ իր անձնական, բայց ոչ գաղափարական թըշնամիների արժանիքները բարձր է գնահատել, Պարոնյանի նկատմամբ եղել է որոշ չափով անարդարացի։ Անհնար է ընդունել, օրինակ, նրա այն պնդումը, թե «Պարոնյան նշանակ ունեցող գրագետ մը չէր, ոչ ծրագիր ուներ, ոչ մեթոդ», թե «ժամանակին տպավորության ներքև, օրվան ներշնչումին ազդեցությամբ կը գրեր ու կը վերջացներ... ձգտում ունեցող գրագետ չէր»[1]։

Գ. Ալիշանին, Րաֆֆուն, Պատկանյանին, Ծերենցին, Պեշիկթաշլյանին և այլ գրողների Արփիարյանը բարձր է գնահատել որպես հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարի խոշոր գաղափարախոսներ, որոնք հսկայական ազդեցություն են ունեցել ժողովրդական մասսաների վրա։

Մենք արդեն տեսանք, թե՛ նա ինչպիսի հիացական վերաբերմունք ուներ դեպի Րաֆֆին ու նրա վեպերը։

Նույն դիրքերից է մոտեցել Արփիարյանը Ալիշանին։ Նրան հրապուրել է այն, որ Ալիշանը իր ստեղծագործություններով կարողացել է 50—60-ական թվականներին մեծ ազդեցություն թողնել ընթերցողների վրա։ Ալիշանն ըստ Արփիարյանի հայրենասեր է ոչ միայն իր գեղարվեստական ստեղծագործությունների մեջ, այլև հնախոսությունների մեջ։ Նա աշխարհագրական, տեղագրական գործերի մեջ ոչ թե բրիչով հողը պեղող, անցյալը երևան հանող մի անձնավորություն է, այլ գրիչով սրտեր պեղող մի զգայուն բանաստեղծ։

Կյանքի վերջին տարիներին Արփիարյանը վերա-

1 «Հայրենիք», 1892, № 248։

նայում է իր մի շարք գնահատումները որոշ գրողների նկատմամբ։ Ամենևին չփոխելով իր վերաբերմունքը Աբովյանի, Նալբանդյանի, Սունդուկյանի և այլ գրողների վերաբերյալ, մասամբ սրբագրում է իր բնութագրումները Պեշիկթաշլյանի և ուրիշ գրողների մասին։ Երբ 1905 թվականին լույս է տեսնում Պեշիկթաշլյանի բանաստեղծությունների նոր հրատարակությունը, նա «Շիրակում» գրած իր գրախոսության մեջ դժգոհություն է հայտնում, որ նույնությամբ արտատպել են Պեշիկթաշլյանի մի շարք գործերը, որոնք արդեն կորցրել էին իրենց այժմեականությունը և անհրաժեշտ չէր նրանց վերահրատարակությունը։

«Ընդհանրապես զգույշ պետք է կենանք,— գրում էր նա,— մեր գրողներուն բոլոր գրությունները լիակատար հավաքածոներով հրատարակելու մոլորդմեն։ Ժամանակի որոշ շրջանի մը համար հեղինակները, երբ իրենց գործը կը տեսնեն, կը լմնցնեն, ալ թող հանգչին պատմության օթևանը»[1]։

Ավելի որոշակի ձևակերպելով իր մտքերը, նա գրում էր. «Մատենագրությունը եկեղեցի չէ, որպեսզի անփոփոխական գրաբարով աղոթքներն ու շարականները որդվոց որդի լսվին և հազար տարի առաջվան գաղափարները ազգե ազգ ժառանգությամբ փոխանցվին»[2]։

Այս այն օրերին էր, երբ հեռավոր Պետերբուրգից ցավում էր ռուսական առաջին ռևոլյուցիայի որոտը և Արփիարյանը վերանայում էր իր հին գաղափարները, փորձում կողմնորոշվել դեպի նորը ու պահելով գրական ուսուցչի ֆունկցիան, չէր քաջալերում սկսնակ այն գրող-

1 «Շիրակ», 1905, № 8։

2 Նույն տեղում։

ներին, որոնք հրապարակ էին իջնում անկումային գաղափարներով, նացիոնալիստական ոտանավորներով: Ահա թե ինչու նույն այդ օրերին երբ Դ. Վարուժանը ջղաձգորեն բախում է հայ գրականության դռները, իր «Սարսուռները» ցանում պարբերական մամուլի էջերում, Ա. Արփիարյանը «Շիրակում» ողջունում է նրան, բայց ակնարկելով Վարուժանին շրջապատող ազգայնական միջավայրը, գրում է «Բրգնիկ գեղը մեզի լավ բանաստեղծ մը տված է, եթե մթնոլորտեն խեղդամահ չմեռնի»[1]:

Եթե Ալիշանի, Րաֆֆու, Պատկանյանի երկերի ազգային-ազատագրական գաղափարն էր խանդավառում նրան հիմնականում, ապա բարձր էր գնահատում Աղայանի և Պռոշյանի. երկերի խորը սոցիալական բովանդակությունը, նրանց ժողովրդայնությունը, ժողովրդի բառ ու բանին, կենցաղին ու սովորություններին այնքան մոտ լինելը, դրանց հմուտ օգտագործումը, այն, որ նրանք իրենց գրական լեզուն սովորել են ոչ թե գրքերից, գրաբարից, այլև բուն ակունքից «ուղղակի կյանքեն»:

Արփիարյանը բեմում դիտելով Սունդուկյանի պիեսները, հատկապես Պեպոյին՝ իր հակառակորդ Զիմզիմովի հետ, Պեպոյի մեջ տեսնում էր ընդվզում աշխատավորներին շահագործող վաշխառուների դեմ:

Շիրվանզադեի բնապաշտական ռեալիզմը հենց առաջին օրերից գրավել է Արփիարյանի ուշադրությունը: Նա տաղանդավոր վիպասանի մոտ տեսել է ոչ միայն կյանքը հարազատորեն, մեծ տաղանդով նկարագրելու կարողություն, այլ՝ այն, որ Շիրվանզադեն տեն-

1 «Հուսաբեր», 1905, № 151:

պենցով գրող վիպասան է, ձգտում է իր վեպերի միջոցով որոշակի վերաբերմունք ստեղծել իր նկարագրած կյանքի մասին։

Արսեն Դիմաքսյանի մասին Արփիարյանի գրած առաջնորդողում հենց այդպես էլ բնութագրվում է Շիրվանզադեի վեպը, «Զգտում ունեցող գիրք մըն է, որ կրնա ազդեցիկ ըլլալ հանրային բարքերու վրա»[1]։

* * *

Ինչպես էր ըմբռնում Արփիարյանը գրականության զարգացման համար անհրաժեշտ երկրորդ գործոնի՝ գրական ազդեցության հարցը։ Նա երբեք չի ժխտել գրական ազդեցության անհրաժեշտությունը, գիտակցել է, որ տարբեր ժողովուրդներ, ստեղծելով իրենց արվեստն ու գրականությունը, օգտվում են մեկ-մեկից «իրարմե փոխ կառնեն, իրարու փոխ կուտան, յուրաքանչյուր գրականություն իր առանձին հատկություններ պահելով հանդերձ, ոգևորված է ընդհանուր մարդկային շունչով մը», սակայն, գտնում էր, որ գրական ազդեցությունները միշտ չէ, որ դրական արդյունք են տալիս։ Հաճախ անկումային, վնասակար գրքերը շատ ավելի հեշտ են երիտասարդության վրա ազդում, քան օգտակար գրքերը։

Նրա կարծիքով՝ որոշ գրողների դժբախտությունը եղել է այն, որ նրանք ընկել են արևմտաեվրոպական ռոմանտիկական գրականության ազդեցության տակ։

Արևմտահայ իրականության մեջ ավելի խոր արմատներ գցում ոչ այնքան ֆրանսիական գրականության աչքի ընկնող դեմքերը, որոնք իրենց գեղարվեստական-

1 «Հայրենիք», 1893, № 559։

ստեղծագործություններով կարող էին բարերար ազդեցություն ունենալ մտքերի վրա, շոշափում էին սոցիալական հուզող հարցեր (Դոդե, Բալզակ և ուրիշներ), որքան երկրորդական մի շարք գրողներ, որոնք վեպերը տպագրում էին փող վաստակելու նպատակով և որոնք ծառայում էին միայն երիտասարդության երևակայությունը գրգռելու, նրանց արտասովոր արկածների ամեն-տպավորության տակ պահելու համար:

Ֆրանսիական այդ ռեակցիոն գրականությունը ազդում էր ոչ միայն անկազմակերպ երիտասարդության վրա, այլև եվրոպականացման հովերով տարված մտավորականության որոշ շերտի վրա, այնպիսի մարդկանց, որոնք ֆրանսիականի մտքի կապկային ընդօրինակումը, ֆրանսիացի ծանոթ-անծանոթ հեղինակներից մեջբերումներ կատարելն ու նրանց անունների հիշատակումը համարում էին մտավորական զարգացման լավագույն չափանիշը:

Եվրոպական գրողների նկատմամբ ստորաքարշությունը այնտեղ էր հասնում, որ որոշ գրողներ, անտեսելով սեփական, ազգային պարծանքները, մեծությունները, դրանք փոխարինում էին այնպիսի եվրոպացիների անուններով, որոնցից շատերը խորթ էին հայ իրականությանը: Օրինակ, Ն. Տեմիրճիպաշյանն իր Ֆրանսերեն-Հայերեն բառարանի առաջաբանում գրում էր.

«Մեր մտավորական լեզուն միշտ ֆրանսերենը մնաց հակառակ դուշակության: Մեր պատմաբանը Միշլեն է, մեր գիտունը Գլոտ Բեռնար, մեր իմաստասերը Լիտրեն կամ Տենը, մեր գրագետը Լեմեր կամ Բրյունետիեռ, մեր մանկավարժն անմահ Ռուսոն, մեր պատգամն հավետ՝ Ֆեռնեյի նահապետը, մեր երգիչը՝ Բերանժեն, մեր

նկարիչը Դըլակրուան, մեր վհուկը Ռընան, մեր վեպը Մադամ Բովարի, մեր գուսանը Լամալիբրան, և... մեր մեռելն է հեգ Բոլ Վեռլենն»[1]։

Արևմուտքի առաջ ծնկաչոք աղոթող այս բանաստեղծին իր ժամանակին բազմաթիվ առիթներով ծաղրել է Հ. Պարոնյանը։ Արփիարյանը, նույն գրքերից քննադատելով Տեմիրճիպաշյանին, ցույց էր տալիս նրա քարոզած այդ գաղափարների ողջ կեղծիքը։

«Առնենք Լամալիբրանը,— գրում էր Արփիարյանը,— «Մեր գուսանը Լամալիբրանը»։ Ի՞նչ է գուսանը։ Երգեցող մը։ Արդ, որպեսզի երգեցող մը «մերը» կարենա ըսվել, պետք է որ զինքը լսելու դյուրություն ունենանք։ Հեղինակ մը կրնաս կարդալ, բայց երգի՞չ մը։ Լամալիբրանն ապրել էր Ֆրանսիայում, մեռել 70 տարի առաջ, երբ հազիվ մի քանի հայ թափանցել էին Փարիզ։

Արփիարյանը Տեմիրճիպաշյանի գրական արտադրանքի մեծագույն մասը համարել է գրական խոտան, միանգամայն անպետք և գտել է, որ չնայած Տեմիրճիպաշյանի գրածները 10—20 ստվար հատորներ կարող են լինել, բայց այդ «արհեստական և խաբեպատիր գրականությամբ», Տեմիրճիպաշյանը առհասարակ տեղ չպետք է ունենա հայ գրականության պատմության մեջ։

Ո՞րն էր Ե. Տեմիրճիպաշյանի ձախորդության պատճառը, այն, որ նա «ստացած էր այն կրթությունը, որուն հիմքը ֆրանսերենի ընտելացումն է, մեկտեղ քիչ մըն ալ մատենագրական ծանոթություն»։ Տեմիրճիպաշյանը հեռու մնալով բուն գավառից, առհասարակ աշխատավոր ժողովրդից, սնվելով միայն ֆրանսիական

[1] Ե. Տեմիրճիպաշյան, Ֆրանսերեն-հայերեն բառարան, էջ Բ։

ծաղկամաններից, «ոչ մեր նոր գրականության ընթացքին վրա ազդեց, ոչ ալ հանրային մտքին վրա տպավորություն մը թողուց, վասն զի հիվանդոտ գրագետը եղավ» [1]:

Տեմիրճիպաշյանը եզակի չէր։ Ֆրանսերեն լեզուն սովորելուց հետո ֆրանսիական հեղինակներից մի քանի տող պոկելով մամուլում, գրականության մեջ մարզանքներ անողների թիվը մեծ էր։ Այդ շրջանի արևմտահայ գրականության, հրապարակախոսության, զեկուցումների ու ճառերի գրեթե յուրաքանչյուր հատվածում կարելի է հանդիպել մի քանի եվրոպացու անվան։ Այդպես է Մինաս Չերազի ամբողջ ստեղծագործությունը։

Հետևաբար Արփիարյանի պայքարը անհատ Տեմիրճիպաշյանների, Գրիգոր Օտյանների դեմ չէր, այլ գրական մի հոսանքի, որի պաշտամունքն էր, արևմուտքի ռեակցիոն կուլտուրան։

Այսպիսի ժխտողական դիրք բռնելով ֆրանսիական ռեակցիոն գրականության վնասակար ազդեցության նկատմամբ, Արփիարյանը առաջ էր քաշում արևմտաեվրոպական առաջավոր գրականության (Հյուգո, Բալզակ, Դոդե) և ռուսական առաջավոր կուլտուրային ու գրականությանը հետևելու անհրաժեշտությունը։

Հատուկ մի քանի հոդվածներում խոսելով այդ մասին, նա միանում էր ֆրանսիական Ակադեմիայի անդամ Վոգյուեի այն պնդմանը, թե «Այլևս ուսումնատենչ երիտասարդությունը չի գտներ իր հոգեկան սնունդը ֆրանսական մատենագրության մեջ։ Տեղական գույն, անօրինակ դեպքերու ախորժ երևակայություն, ահավա-

[1] *Ա. Արփիարյան, Պատմություն ԺԹ դարու Թյուրքիո հայոց գրականության, էջ 216։*

սիկ ֆրանսական գրականության հատկանիշներն. Իսկ ռուսական գրականության մեջ կը փչե կյանքի շունչը, որ այնքան հրապուրիչ կընծայե ռուսական մատենագրությունը ընկերական ամեն աստիճանի ուսումնասեր երիտասարդության: Սովի, անեմիի օրերը վերադարձած են ֆրանսական մատենագրության համար: Ռուսները ճիշտ ժամանակին կը հասնին և եթե ֆրանսացիք տակավին ընդունակ են մարսելու, իրենց արյունը պիտի վերանորոգեն ու կազդուրեն ռուսական արյունով»[1]:

Արփիարյանի այս կարծիքը պաշտպանողների թիվը մեծ չէր Կ. Պոլսի թեկուզ առաջադեմ գրողների շարքերում: Ինչպես մի շարք հարցերում, այս հարցում էլ Գրիգոր Զոհրապը, Տիգրան Կամսարականը և մյուսները մնացին ֆրանսիական, անշուշտ պրոգրեսիվ, գրականության պաշտպանները, գրականություն, որը Արփիարյանն էլ երբեք չէր ժխտում:

Ո՞րն էր ռուսական գրականության հիմնական արժանիքը: Ամենից առաջ նրա խոր գաղափարականությունը: Ռուսական գրականությունը արծարծում էր գլխավորապես սոցիալական հարցեր, քննության էր առնում ռուս ժողովրդի տնտեսական ու քաղաքական կացությունը, ներկայացնում էր ցարական ինքնակալության ռեակցիոն էությունը:

Ռուսական գրականության, մանավանդ ռուսական արձակի մեջ երևում էր ամբողջ Ռուսաստանը: Տուրգենևի, Գոգոլի, Գոնչարովի երկերում ճորտատիրական Ռուսաստանը նկարագրված էր ամենավարպետ վրձինով, Տոլստոյի մոտ ավելի մեծ հանճարով նկարված էր

1 «Մասիս», 1889, № 3924:

1861 թվականից հետո ռուս ժողովրդի ապրած կիսաճորտական վիճակը:

Ռուս գրողները դիտում էին լայնարձակ Ռուսաստանը իր բազմազանության ու ամբողջության մեջ, արտացոլում այդ երկրի ներքին հակասությունները: Ռուսաստանում գրականությունը ժամանցի նյութ չէր, այլ մտքերի, սրտի վրա ազդող հզոր ուժ. «ինչ որ մեզ համար համադամ մըն է, հոգվույն հանապազօրյա հացն է, անոնց համար»:

Ռուսական գրականության մյուս հատկանշական կողմը՝ կյանքը վերափոխելու նրա կոչումն էր: Ռուս հանճարեղ գրողները ռեալիստորեն արտացոլելով իրականությունը, նպաստում էին նրա վերափոխմանը: Ռուս գրողներն իրենց տաղանդի ուժով կարողանում էին ազդել մասսաների վրա:

Արփիարյանի ու նրա ընկերների սիրած հեղինակներից մեկն էր Լ. Տոլստոյը:

Որպես հանճարեղ գրող, Լ. Տոլստոյը համաշխարհային մտքի վրա ազդել է և՛ իր դրական կողմերով, և իր բացասական: Որոշ պահպանողական գրողներ և մտածողներ, օգտագործել են Տոլստոյի ռեակցիոն փիլիսոփայությունը, «տոլստոյականությունը», չարին չհակառակելու նրա փիլիսոփայությունը:

Լենինը արտասահմանյան այդ տոլստոյականներին կոչում էր ողորմելիներ, որոնք փորձում էին օգտագործել Տոլստոյի «ձեռնպահությունը և հրաժարումը քաղաքականությունից», նրա «դարշելի տերտերականությունը»:

Տոլստոյը մեծ էր ու թե իր պահպանողական հայացքներով, այլ մեծ էր որպես արտահայտիչ այն դա-

գաղափարների և այն տրամադրությունների, «որոնք կազմըվել են միլիոնավոր ռուս գյուղացիության մեջ Ռուսաստանում բուրժուական ռևոլյուցիան սկսելու ժամանակ» [1]։

Այս Տոլստոյի երկերի այս առավելությունն էլ հանդիսացել է համաշխարհային առաջավոր բազմաթիվ մտածողների համար պայքարի դրոշ։ Նրանք ի տարբերություն «արտասահմանյան տոլստոյականների», Տոլստոյի մոտ տեսել են ուժեղ, անմիջական ու անկեղծ բողոք ընդդեմ ստի, կեղծիքի, շահագործման վրա հիմնական հասարակական կարգերի, նրա մոտ տեսել են կապիտալիստական շահագործման անողոք մերկացումը և քննադատությունը։

Արևմտահայ իրականության մեջ Տոլստոյը ունեցել է իր և՛ թույլ կողմերի, և՛ ուժեղ կողմերի երկրպագուները։ Կրոնական դոգմաներին գերի պահպանողական մարդիկ, որոնք ցանկացել են սորկամտություն քարոզել հայ ժողովրդին, վերցրել են Տոլստոյի պահպանողական հայացքները։

Այդ մարդիկ, որոնց թիվը մեծացել է մանավանդ ռեակցիայի տարիներին, կառչել են Տոլստոյի «մի կալ չարին» թույլ և անզոր պատգամին։

Իր պահպանողական հայացքներով հայտնի Միքայել Շամտանչյանը Տոլստոյին գնահատում էր հենց այդ կողմից։ Նա իր «Մասան» հանդեսում հրապարակում էր Տոլստոյի ավետարանական մտքերը, նրա նշանավոր «Խոստովանությունից» հատվածներ, «Աստված ճշմարտությունը տեսնում է, բայց սպասում է» պատմվածքը։

Շամտանչյանի համար Տոլստոյը մեծ էր նրանով,

---

[1] Լ ե ն ի ն, Երկեր, հատ. 15, էջ 247։

որ նա «միշտ հիացած էր Ավետարանի կարգ մը մասերու վրա»[1]։

Շամտանչյանը ճանաչում էր ահա այս Տոլստոյին Արփիարյանը նրանից երեսուն տարի առաջ և քաղաքական շատ ավելի ծանր պայմաններում Տոլստոյին դիտում էր ոչ որպես ավետարանի երկրպագու, այլ որպես Ռուսաստանի սոցիալ-տնտեսական հարաբերությունները ռեալիստական մեծ վրձինով պատկերող մի գրողի, գնահատում էր մեծ վիպասանի մեջ այն, որ նա կարողացել է իր վեպերով «բարոյապես տիրապետել այդ վիթխարի երկրին»։

Արփիարյանին շատ է հուզել Տոլստոյի վեպերի թարգմանությունը, սակայն այդ տասնամյակում անհնարին էր թարգմանել նրա գործերը։ Նա հարկադրված է եղել միայն այս կամ այն առիթով վեր հանել Տոլստոյի արժանիքները։

Տարբեր տեսակետից է գնահատել Արփիարյանը Լերմոնտովին։

Եթե ցարական կարգերի տաղանդավոր նկարագրությամբ Գոգոլը, Տուրգենևը, Տոլստոյը մտքեր են նախապատրաստել ի նպաստ այդ կարգերի վերացման և նրանց մտքերը կարող էին նույնքան հարազատ ընդունվել համիդյան դաժան բռնապետության տակ տառապող հայերի համար, ապա Լերմոնտովի մեջ հայ առաջավոր գրողները տեսնում էին իրենց ազգային-ազատագրական պայքարին մոտիկից արձագանքող մի մեծ ու տաղանդավոր հեղինակի։

Արփիարյանը ռուսական գրականությունը և ռուս

---

1 «Ոստան», 1911, № 1, էջ 13։

հեղինակներին չէր ծանոթացնում տարերայնորեն, ըստ պատահած նյութի կամ հեղինակի, այլ կատարում էր ծրագրված աշխատանք, ընտրում էր հատկապես այն գործերը, որոնք ծառայում էին ժողովրդի պայքարին: Օրինակ, Լերմոնտովի այն ստեղծագործությունները էին հետաքրքրում Արփիար Արփիարյանին, որոնք պատկերում էին Կովկասի ազատատենչ լեռնականների կյանքը:

Պատահական չէր անշուշտ, որ «Մասիսի» էջերում թարգմանվում էր ոչ թե Լերմոնտովի լիրիկական բանաստեղծություններից մեկն ու մյուսը, այլ նրա պոեմներից «Փախստականը», հետագայում «Մծիրին»:

Արփիարյանը խանդավառվում էր դրանց գաղափարական կողմով և գտնում, որ դրանք կարող են օգտակար լինել ազատագրական պայքարին: «Դատալիքի» մեջ կար ազատ լեռնցու քաջությունն ու խիզախությունը, կար համարձակություն, այնպիսի ջերմ հայրենասիրություն, որի առաջ նսեմանում էր ծնողական զգացումը:

Արփիարյանը շատ բարձր է գնահատել ռուս այն գրողներին, որոնք պատկերել են գյուղական կյանքը:

«Ռուսական նոր գրականության մէջ, ամբողջ սերունդ մը կուսումնասիրէ ժողովուրդն և նորավէպներու ու վէպերու մէջ կնկարէ անոր թշվառությունները ու տառապանքները: Պետք է հիշել մասնավորապես Գլեբ Ուսպենսկիի գործերն և մանավանդ իրեն գլխավոր գործը՝ «Հողին զորությունը», որ գյուղացիներու ներքին կյանքին գերագույն արտահայտությունն է»[1]:

[1] «Հայրենիք», 1894, № 731:

* *
*

Հանուն գաղափարական գրականության այսպիսի համառ ու տևական պայքար մղող մի անձնավորություն էր ահա, որ 80-ական թվականների կեսերից մի ամբողջ գրական սերնդի գլուխն անցած, ուղղություն էր տալիս թե՛ հրապարակախոսությանը և թե՛ գեղարվեստական գրականությանը։

Արևմտահայ իրականության մեջ գրականությունը դույցե ոչ մի ժամանակ մասսաներին պայքարի կոչելու, նրանց դեպի ապագան առաջնորդելու այնպիսի մեծ միսիա չի ունեցել, որքան 80-ական թվականների ռեակցիայի տարիներին, երբ արևմտահայ հասարակական միտքը անղեկ ու անառագաստ նավի նման տատանվում էր քաղաքական ալեկոծ օվկիանոսում, մի խութից զարնվում մյուսին։

Նոր գրականությունը ամենից առաջ պետք է նշեր մտավորական զարգացման որոշակի ուղի, հետապնդեր շեշտակի նպատակ։

Արփիարյանը հետագայում կատարել է ուշագրավ խոստովանություն, որից իմանում ենք, որ 80-ական թվականների ռեալիստական արձակը ամենևին էլ պատահականորեն ու տարերայնորեն չի զարգացել, առեղծվել է որոշակի ծրագրով, որին արձագանքել են «Արևելք», «Մասիս» պարբերականների շուրջը համախմբված գրողները ըստ իրենց գրական ունակությունների և հակումների։

Եթե ի մի բերենք Արփիարյանի տարբեր առիթներով կատարած այդ կցկտուր խոստովանությունները,

ապա կարող ենք դուրս բերել մոտավորապես հետևյալ ծրագիրը։

ա) Գրականությունը ծառայեցնել որոշակի մի նպատակի և նախապատրաստություններ տեսնել ապագայի համար։

բ) Սահմանազատվել գրական հին ուղղություններից (ռոմանտիզմ, կլասիցիզմ), պայքար մղել նրանց դեմ, զարկ տալ կյանքը հարազատորեն արտացոլելով այն վերափոխելու կոչում ունեցող ռեալիստական արձակ գրականության։

գ) Քաջալերել, առաջ քաշել գրական այնպիսի ուժերի, որոնք հեռու են եղել արևմտաեվրոպական վնասակար գրական ազդեցություններից, որոնք իրենց գավառական ծագումով, գավառի հետ ունեցած անձնական ու թղթակցական կապերով հաղորդակից էին բուն հայ ժողովրդի հոգևոր ու մտավոր ուժերին։

դ) Գրական ազդեցության հարցում ֆրանսիական պարավերջի անկումային գրականության ազդեցության փոխարեն նախապատվությունը տալ արևմտաեվրոպական և հատկապես ռուսական առաջավոր գրականությանը։

Արփիարյանի կարծիքով անցել էր ռոմանտիկ երազների շրջանը, երազներ, որոնք այնքան խանդավառել էին հայ բուրժուազիային ռուս-թյուրքական պատերազմի նախօրյակին։ Այժմ այդ երազների պատրանքների վարագույրը պատռվել էր ու երևում էր կյանքը իր դաժան մերկությամբ, երևում էր ամենից առաջ պոլսահայ մեշչանական խավերի անկումը, օրեցօր դեպի այլասերումն ու ապականությունը գլորվելը։ Ըստ այնմ էլ հիմ-

նականում հետևյալ խնդիրներն էին նյութ դառնալու ռեալիստական նոր գրականության.

1. Հարազատորեն պատկերելով բուրժուական ընտանիքներում տիրող այլանդակությունները, անբարոյականությունը, այլասերումը, խաբեբայությունը, ծուլությունը, սուտն ու կեղծիքը, ցույց տալ, որ արտաքուստ դեպի «եվրոպականացում» գնացող այդ կյանքը ըստ էության գնում է դեպի կործանում, նեխում և, որ բուրժուական միջավայրում առեղծված հասարակական կարծիքը, որի հենման կետն էր կրոնը, միայն օրինականացնում է, արդարացնում այդ չարիքը:

80-ական թվականների գրական այս սերնդից առաջ մեշչանական ընտանիքների այդ այլանդակությունները հանճարեղ վրձինով պատկերել էր անմահ երգիծաբան Հ. Պարոնյանը իր կոմեդիաներում և երգիծական այլ երկերում, այժմ այդ նույնը պետք էր կատարել վիպային երկերում, նովելներում:

Այս ցավոտ հարցերն էին արծարծում Արփիարյանի «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագիրը ունեցող մի շարք նովելները («Դատապարտյալը», «Երազի մը գինը», «Կատակ մը», «Ապուշը» և այլն), Տ. Կամսարականի «Վարժապետին աղջիկը» վեպը, Լ. Բաշալյանի «Հմայաթափը», «Այս է եղել» նովելները և այլն:

2. Անհրաժեշտ էր երևան հանել նույն այդ հարուստ դասակարգի շահագործող, կեղեքող էությունը, ցույց տալ, որ հայ հարուստը նույնպիսի դաժանությամբ է ճնշում ու շահագործում հայ աշխատավորին, ինչպես այդ անում է որևէ օտարազգի վաշխառու կամ կապիտալիստ: Այս հարցը տրված է Արփիարյանի «Հարուստին կոչումը» նովելում, որտեղ Բալունցի պանդուխտները

ըմբռնելով. որ «մեր հայուն մեզի ըրածները ալ տաճկին ըրածները մոռցնել կուտան», պայրագին գոչում են «մինչև ե՞րբ, մինչև ե՞րբ»։

3. 80-ական թվականների ռեալիստ գրողների ծրագրի մեջ էր նաև հայ հարուստների, այսպես կոչված «ազգային բարերարների» հակաժողովրդական գործունեության մերկացումը, ազգային հաստատություններում (պատրիարքարան, Ազգային ժողով, Ազգային Հիվանդանոց) նրանց սանձարձակ գործունեության ցուցադրումը։ Այս հարցերն էին արծարծվում Արփիարյանի «Դատապարտյալը», «Դերասանուհին», և Գր. Զոհրապի «Ներսեսը» նովելներում և այլն։

4. Անհրաժեշտ էր ռեալիստական վառ վրձինով ցուցադրել գավառից Կ. Պոլիս թափվող հազարավոր պանդուխտ հայերի թշվառ վիճակը, պանդուխտներ, որոնք անտեսապես հետամնաց, արդյունաբերությունից գրեթե զուրկ Թյուրքիայի մայրաքաղաքում հնարավորություն չունենալով գեթ գործարաններում աշխատելու, բացառապես կատարում էին բեռնակրություն, պահակություն, սևագործ բանվորություն և Պոլսի սալահատակների վրա քարշ տալով իրենց կյանքը, քայքայվում էին թե՛ ֆիզիկապես, թե՛ բարոյապես։ Այս խնդիրը Արփիարյանի անմիջական ծրագրով ու առաջարկով կատարեց Մելքոն Կյուրճյանը, որը ուսումնասիրելով պանդուխտների կյանքը, ամբողջ մեկ տարի (1888 թ.) «Պանդուխտի կյանքեն» ընդհանուր վերնագրով «Մասիսի» էջերում ցուցադրեց պանդուխտների ողբալի վիճակը։

5. 80-ական թվականների այս գրողների ծրագրում առանձնահատուկ տեղ է բռնում հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարը, որի պրոպագանդան

շատ դժվար էր ու վտանգավոր՝ քաղաքական այդ խստագույն պայմաններում: Չնայած դրան, Արփիարյանը և նրա ընկերները որոշակի գործ են կատարել նաև այս ուղղությամբ: Համիդյան բռնապետության տակ ապրող երիտասարդության խիզախություն, համարձակություն զենք սիրել և գործածել սովորեցնելու նպատակով է, որ Արփիարյանը գրում է իր «Կովկասյան հիշատակները», որոնց մեջ խոսվում էր Կովկասի ազատատենչ լեռնականների կյանքի, կենցաղի ու պայքարի մասին: Նույն նպատակով էր, որ Լ. Բաշալյանը գրում է «Տերտերին ուխտը», «Խաչախեճին», Գր. Զոհրապը՝ «Զաբուղոնը», «Այինկան»:

Իր գրչակից ընկերների մոտ ինչն էր արժեքավորում Արփիարյանը: Նա բարձր էր գնահատում Զոհրապի ստեղծագործությունների թե՛ գեղարվեստական և թե՛ գաղափարական կողմը: Որպես գեղարվեստագետ Զոհրապը ուներ «առաջնակարգ հատկություններ»՝ երևույթներ տեսնելու, տիպականը վեր հանելու զարմանալի կարողություն, երգիծական անուրանալի շնորհք, որը ավելի էր շեշտում նրա նովելների ուժը. «Իր ներկայացրած տիպարներուն ծիծաղելի կողմերը շատ որոշապես դուրս կցատկեցնե, անոնց բերանը դրած խոսքերովը, անոնց դեմքերուն, զգեստներուն, բնակարաններուն նկարագրությամբը»[1]:

Զոհրապի ստեղծագործության գաղափարական կողմին անդրադառնալով, Արփիարյանը նշում էր, որ նրա յուրաքանչյուր նովելը հետապնդում էր որևէ նպատակ, արծարծում հուզող որևէ հարցի: Զոհրապը

1 «Բանբեր գրականության և արվեստի», Բ. գիրք, էջ 171:

«կրթանք հատկապես հարուստ դասակարգին վրա՝ գրավելով այդ դասակարգին հավակնության, ամբարտավանության, կեղծավորության ու այլանդակորեն եվրոպականացման» քննադատությամբը։ Եվ եթե Արփիարյանը որևէ վերապահություն ուներ Զոհրապի նկատմամբ, այն էր, որ Զոհրապի նկարագրած մարդկանց «ատելու փորձությունը չես ունենար»։ «Հեղինակը ավելի կարեկցող մըն է, քան թե ատող մը»[1]։

Արփիարյանը հայ գրականության թերություններից մեկն էլ համարում էր այդ «ատելության տկարությունն ու գթության ուժգնությունը»։

Զոհրապից հետո 80-ական թվականների գրական սերնդի մեջ երկրորդ խոշոր դեմքը կարելի է համարել Տիգրան Կամսարականին, որը նույնպես Արփիարյանի սաներից է։ Նրա «Վարժապետին աղջիկը» վեպի հրատարակությունը «Արևելքում» Րաֆֆու «Խաչագողի հիշատակարանից» հետո, արդյունք էր Արփիարյանի հրահրմանն ու խրախուսանքին։

Արփիարյանը Կամսարականի մեջ տեսնում էր «դիտողի ակներև հատկությունից» բացի նաև խոշոր «հոգեբան մը», «խորհելու, իմաստասիրելու ընդունակություն», «վառ երևակայություն և կուռ ոճ»։

Եթե «Արևելքում», «Մասիսում» Արփիար Արփիարյանը աճեցրեց այնպիսի տաղանդավոր գրողների, ինչպիսիք էին Գր. Զոհրապը, Տ. Կամսարականը, Լ. Բաշալյանը և Մ. Կյուրճյանը, ապա 1891 թվականից հրատարակած «Հայրենիքում» նա աճեցրեց Ե. Օտյանին և Թլկատինցուն։ Ե. Օտյանը բազմաթիվ առիթներով է խոս-

1 «Բանքեր գրականության և արվեստի», Բ. գիրք, էջ 171։

տովանել, որ իր ուսուցիչը եղել է Արփիար Արփիարյանը, հետևել է նրա գրական ուղղությանը: Արփիարյանն է, որ իր հրատարակած «Հայրենիքում» լույս ընծայելով Օտյանի առաջին երգիծական «քրոնիկները», նրա մեջ պատվաստում է հակում դեպի իրական կյանքի երգիծական պատկերումը: Օտյանի գործերի զգալի մասի նյութի որոշման մեջ Արփիարյանն ունեցել է իր մասնակցությունը:

Տարիների համատեղ կյանքի ընթացքում Արփիարյանը Ե. Օտյանին ներշնչել է սեր դեպի ռուսական կլասիկ գրականությունը, ռեալիստական արձակը: Օտյանի բուռն ձգտումն է եղել գոնե 900-ական թվականներին թարգմանել ռուսական գրականության մի շարք աչքի ընկնող գործերը, սակայն «12 տարի Պոլսեն դուրս» թափառական վիճակում գտնվելու հանգամանքը խափանել է նրա այդ ծրագիրը և 1908 թ. այսպես կոչված օսմանյան սահմանադրությունից անմիջապես հետո, երբ հրատարակությունների համար ստեղծվում են համեմատաբար ազատ պայմաններ, նա առաջինը հայ իրականության մեջ թարգմանում է Տոլստոյի «Պատերազմ և խաղաղությունը», հետագայում՝ նաև «Հարություն» վեպը անշուշտ ֆրանսերենից:

ԴԼՈՒԽ ՉՈՐՐՈՐԴ

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՌԵԱԼԻՍՏԱԿԱՆ ԱՐՁԱԿԸ

«ԿՅԱՆՔԻ ՊԱՏԿԵՐՆԵՐ»

Մենք արդեն ծանոթացանք հասարակական-քաղաքական այն մթնոլորտին, որի մեջ ապրում և ստեղծագործում էր Արփիարյանը։

Գյուղի քայքայումով քաղաքներն էին թափվել տասնյակ հազարավոր պանդուխտներ։ Դասակարգային շերտավորումը գնալով ավելի զգալի էր դարձնում հակասությունը շահագործողների և շահագործվողների միջև։

Օսմանյան կայսրության կենտրոնական քաղաքներում առևտրական բուրժուազիան վայելում էր որոշ արտոնություն։ Համիդյան բռնապետությունը, մանավանդ առաջին տասնամյակում, հնարավորություն էր տալիս հայ հարուստներին՝ ծավալելու առևտրական մեծ գործարքներ։

Առևտրական այդ գործարքներով Եվրոպայի հետ կապված հայ բուրժուազիան փորձում էր ընդօրինակել նաև եվրոպական, մասնավորապես ֆրանսիական կենցաղն ու սովորությունը։

Փողի վրա հիմնված բուրժուական ընտանիքում տիրում էր այլասերված կենցաղ։ Սիրո վաճառքը ընդհանուր էր այդ ընտանիքներում։ Համիդյան քաղաքական ծանր պայմանները է՛լ ավելի էին ազդում հասարակական բարքերի վրա, ապականում դրանք։ Քաղաքական կյանքի մի շարք արատավոր կողմեր նույնությամբ փոխանցվում էին կենցաղում։ Եթե Աբդուլ Համիդի լրտեսներից մեկնումեկը մի պատահական լրտեսագրով կարողանում էր կործանել ում որ ցանկանար, ապա կենցաղային բամբասողը, զրպարտիչը հեշտությամբ թափանցելով մի տնից մյուսը, խաղաղ, անդորր կյանք վարող ընտանիքներին պատճառում էր անասելի դժբախտություններ, երբեմն քայքայում այդ ընտանիքները։ Զոհը անշուշտ միշտ աղքատ դասակարգն էր, աշխատավոր ժողովուրդը։ Հարուստը, ինչպես Նալբանդյանն էր ասում, անխոցելի էր իր արծաթե թումբերի տակ, փողի ուժով նա դուրս էր գալիս ամեն մի անակնկալի տակից, ամենագարշելի արարքներից հետո էլ հռչակվում էր պատվավոր և կարգապահ մարդ։ Հայկական եկեղեցին պաշտպանում էր ոչ թե տուժողին, խեղճին կամ զոհին, այլ նրան, ով ուներ նյութական միջոցներ։ Ազգային բարերար, ընտանիքի բարոյականության պաշտպան էր հռչակում ամենաայլանդակ կենցաղի տեր մարդկանց։

Բուրժուական գրականությունը մինչ այդ խուսափել էր հասարակական կյանքում գոյություն ունեցող այս ցավոտ հարցերը երևան հանելուց, դրանց հրապարակումը համարելով անբարոյականություն։

Նախորդ տասնամյակում Հ. Պարոնյանը և Գ. Դուրյանը հասարակական այդ հարաբերությունները դարձրել էին գրականության նյութ։ Պարոնյանը իր կոմեդիա-

ներում և «Մեծապատիվ մուրացկաններում» ուշադրության էր ենթարկել բուրժուական կյանքի արատավոր կողմերը, երևան հանել հայ եկեղեցու դերը մասսաների շահագործման ու կեղեքման գործում։

Կինը Պոլսում, ինչպես առհասարակ հայ իրականության մեջ, զրկված էր իր ինքնուրույնությունից։ Նա աղջիկ ժամանակ հլու-հնազանդ էր ծնողներին, ամուսնությունից հետո՝ ամուսնուն։ Անհամապատասխան ապրիքով կատարված ամուսնությունից առաջացած դժբախտությունները սովորական երևույթ էին։ Բուրժուական փչացած, այլասերված երիտասարդների կողմից խաբվող աղջիկների ողբերգությունները հաճախ վերջանում էին ինքնասպանությամբ։ Հասարակական կարծիքը ուրվականի նման հալածում էր այն մարդկանց, որոնք ցանկանում էին կյանքում ունենալ իրենց նախասիրած կենցաղը, փորձում էին ամուսնանալ իրենց սիրած տղամարդկանց հետ, կարդալ իրենց ցանկացած թերթերը, մասնակցել հասարակական որևէ կազմակերպության աշխատանքներին։

Արփիարյանը բուրժուական ընտանիքի այս այլասերված, ապականված կենցաղի ռեալիստական պատկերումով է, որ սկսում է իր գրական գործունեությունը 1884 թվականից «Մասիս» պարբերականի էջերում։

«Կյանքի պատկերներ» շարքի առաջին երեք պատմվածքների («Դատապարտյալը», «Երազի մը գինը», «Կատակ մը») առանցքը բուրժուական ընտանիքում առաջացած սիրային կոնֆլիկտն է, ժամանակի կենցաղային բարոյական հուզող հարցերից մեկը։ Պատմվածքներից երկուսի մեջ զոհը կինն է, մեկի մեջ՝ տղամարդը։

«Դատապարտյալի» հերոսուհին՝ Սաթենիկը, զոհ է.

գնում հոր՝ Հայրապետ էֆենդու առևտրական հաշիվները. իր կամքին հակառակ՝ ամուսնանում է տարիքով մեծ, հարուստ Քերոբե էֆենդու հետ: Մի քանի ամիս նրա մոտ մնալուց հետո՝ փախչում է մոր տունը, հանդիպելով ծնողների արհամարհանքին: Այդ շրջանում է, որ նա հանդիպում է Արամին, սիրում նրան, նրա հետ միասին փախչում գյուղ: Արամը աստիճանաբար սառչում է Սաթենիկից, լքում նրան, ամուսնանում մի ուրիշի հետ: Ծնողների, հարևանների կողմից արհամարհված Սաթենիկն ապրում է մի հույն կնոջ խնամքի տակ, հյուծվում, հիվանդանում ու մեռնում՝ առանց իր սիրելի մորը տեսնելու:

Երկրորդ պատմվածքի բովանդակությունը շատ տարբեր չէ սրանից: Նոր ուսումն ավարտած Հրանտը սիրում է մի հարուստ աղջկա, որի ընկերուհին խորհուրդ չի տալիս ամուսնանալ հասարակ գրագրի հետ: Աղջիկը ամուսնանում է հարուստի հետ, Հրանտը վշտից կորցնում է իրեն, ընկնում գինետները, անձրևի տակ մնալով մրսում, հիվանդանում, մեռնում:

«Կատակ մը» պատմվածքում ձկնորս Նիկողոսը տնտեսական վատ պայմաններից դրդված իր երիտասարդ աղջկան՝ Մաքրիկին ուղարկում է մի հարուստի մոտ կար անելու: Հարուստի որդին՝ այլասերված բարքերի տեր Վահրամը, կեղծ խոստումներով խաբում է անփորձ աղջկան, խլում նրա կուսությունը և մի քանի օրից հայտնում նրան, թե ուրիշի հետ է ամուսնանալու: Հուսահատ աղջիկը չցանկանալով ապրել անպատիվ, խեղդամահ է լինում ծովում:

Ինչպես տեսնում ենք, երեք պատմվածքների բո-

վանդակությունն էլ այդ իրականության համար սովորական դեպքեր էին:

Արփիարյանը գրականության համար նյութ ընտրելով ոչ թե արտակարգ, բացառիկ որևէ երևույթ, այլ սովորական այս դեպքերը, նպատակ ուներ պատկերել գոյություն ունեցող վիճակը, տալ «իրական կյանքի պատկերներ»: Ինքնին այդ սովորական կյանքը լի էր դրամատիզմով, բախումներով, հանգույցներով, դրանք հասարակ էին ոչ թե ըստ էության, այլ որովհետև սովորական էին Կ. Պոլսի միջավայրում:

Բնորոշ էր օրինակ այն, որ փողը տիրապետում էր հասարակական և ընտանեկան հարաբերությունների վրա, ամեն ինչ ենթարկվում էր փողի կախարդող ուժին: Փողը մի կողմից փչացնում, պատվազրկում էր դեռևս նահապետական սովորություններով Պոլիս ընկած, բայց արդեն այնտեղ փոխված Հայրապետ էֆենդիներին («Դատապարտյալը»), մյուս կողմից այդ նույն փողը ավերիչ ազդեցություն էր գործում բուրժուական ընտանիքներում մեծացած կիսաեվրոպական, ֆրանսիական, հայ իրականությանը խորթ դաստիարակություն ստացած երիտասարդության վրա: Այդպիսի հերոսներ են Վահրամը («Կատակ մը»), Իրանուհին («Երազի մը գինը»):

Բուրժուական այդ ընտանիքում աստիճանաբար չքանում էին գավառից բերված ազնիվ հատկանիշները: Աշխատասիրությունը, պատվասիրությունը, հյուրասիրությունը, մարդասիրությունը տեղի էին տալիս դաժանության, ժլատության, թշվառների նկատմամբ արհամարհանքի և անբարոյականության:

Արփիարյանի հերոսներից մեկը՝ Սաթենիկի հայ-

րը («Դատապարտյալը») հենց այդ կարգի մարդկանցից է։ Գավառից Պոլիս գալով՝ ժամանակի ընթացքում նա հարստացել է և «Ծո Հայրապետից» դարձել է «Հայրապետ էֆենդի»։ Այդ փոփոխությունը հիմնովին հեղաշրջել է նրա հոգեբանությունը։ Անուս, ագետ, նախապաշարված այդ մարդը կարծեք արդարացնելու համար իր «էֆենդի» լինելը, դարձել է ընտանիքում մի ահավոր բռնապետ, որի համար բացի իր վաճառականական հաշիվներից, նյութական ակնկալություններից, ոչ մի բարոյական, ծնողական նորմա գոյություն չունի։ Նա իր աղջկա ամուսնության վրա նայում է որպես սնանկացումից դուրս գալու միակ միջոցի, դրանով ուզում է հավասարակշռել իր խարխլված հաշիվները։ Ըստ էության նա Սունդուկյանի Զամբախովի երկվորյակն է։ Հայրապետ էֆենդին հին ավանդական սովորություններից օգտագործում է այն նորմաները, որոնք պիտանի են իրեն, օգտագործում է երեխաների վրա անսահման իշխանություն ունենալու իր իրավունքները։ Նա չի ընդունում, որ աղջիկը կարող է իր նախասիրությունները, հակումները, ցանկությունները և պահանջները ունենալ, չհավանել այս կամ այն փեսացուին։

«Չէ, ասում է նա, էֆենդիմ, չէ, իրեն հարցնող չկա, թե ով կուզես, ով չես ուզեր։ Մենք իրեն չափ խելք ունինք, մենք գիտենք, թե որուն պիտի տանք, որու չը պիտի տանք»[1]։

Սաթենիկի ապրած ողբերգությունը խորացնում է նրա ստացած դաստիարակության և ապրած կյանքի դաժան հակադրությունը։ Սաթենիկը սնվել է ռոմանտիկ

---

[1] Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, Երևան, 1951, էջ 21։

վեպերով, որոնցից ստացած երազները փշրվում են իրենց տան դաժան պայմաններին բախվելով: Նա տանը չի գտնում ծնողական, ընտանեկան հարազատ միջավայր: Ծնողական գուրգուրանքի, խանդաղատանքի փոխարեն հանդիպում է խստաբարո մարդկանց դաժան դեմքերին: «Այդ տունը զորանոց մ՚էր, ուր կը տիրեր խիստ կարգապահություն, դեմքերը անժպիտ էին»[1], իսկ մտավոր սնունդը ավելի խղճուկ էր, աղքատ: Աղջկա հոգուն և սրտին ոչինչ չասող ընտանեկան բամբասանքներ, առևտուրներ, երբեմն հին հիշողություններ, պատմություններ, ուրիշ ոչինչ: Եթե սրանց վրա տանը խոսվեր նաև պատրիարքարանի աշխատանքների մասին, «արդեն սավառնած կհամարեին մտքի ամենաբարձր բնագավառները»:

Բուրժուական ընտանիքի տիպիկ ծնունդներ են Արամը («Դատապարտյալը») և Վահրամը («Կատակ մը»): Վահրամը փչացած, անսանձ մի երիտասարդ է, որի ամբողջ կյանքի նպատակը հոր միջոցները վատնելով զվարճանալն է: Ինչպես Սաթենիկի ամուսինը՝ Քերոբը համոզված է, որ չնայած իր առաջացած տարիքին «Պոլսո բոլոր աղջիկները առանց բացառության իր տրամադրության ներքո են», որովհետև հարուստ է, այնպես էլ նա ունի իր համոզմունքը, թե հարուստի համար միանգամայն բնական է իր փողով աղքատի պատիվը գնելը:

Վահրամի այս վարքագիծը հեղինակը տվել է խաբված Մարգարիտի և Վահրամի հետևյալ խոսակցությամբ.

[1] Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, Երևան, 1951, էջ 17:

— Բան մը լսեցի, իրա՞վ է,— հարցնում է Մարգարիտը:

— Ինչ լսեցիր:

— Կը նշանվիս եղեր:

— Ատանկ խոսք մը կա: Ինչո՞ւ կը հարցնես:

— Ապա ե՛ս ինչ ընեմ:

— Դուն ի՛նչ պիտի ընես, եթե կուզես՝ քեզ ալ կը սիրեմ:

— Բայց պարտեզը անցուցած գիշերներնիս, ինձ տված խոստումնիդ մոռցա՞ք:

— *Է՜հ, անոնք կատակ էին,* մենք անանկ կատակներ շատ կընենք, Մարիկս[1]:

Արամը («Դատապարտյալը») նույնպես բուրժուական հասարակության հարազատ ներկայացուցիչն է, նույն միջավայրի ծնունդը, բայց տարբեր է Վահրամից: Նա ավելի նման է Շիրվանզադեի Սմբատին: Ստացել է որոշ դաստիարակություն, իրեն համար ստեղծել է հեղինակություն և դիրք, որոնք բարձրացնելու համար գիտե վարպետորեն օգտագործել բուրժուական հումանիզմի որոշ ֆրազները: Նա ցույց է տալիս հոգատարության, վեհանձնության, խղճահարության զգացումներ: Նա Սաթենիկին սկզբում մոտենում է ոչ թե նրան խաբելու նպատակով, այլ՝ կարծես ցանկանում է ամուսնանալ նրա հետ, սիրում է նրան, սակայն չի գիտակցում, որ Սաթենիկի նման մի կնոջ մուտքը իր միջավայրում, վատ հետևանքներ կարող է ունենալ: Հարկադրված՝ լքում է իր սիրածին, տեղի տալով մի կողմից հասարակական կարծիքին,— անհարմար համարելով նրա հետ

[1] Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 82:

ներկայանալ իր պաշտոնակից ընկերներին,— մյուս կողմից՝ եկեղեցական օրենքներին, որը օրինական չի ճանաչում Սաթենիկի ապահարզանը:

Արամի այս խաղն էլ վերջ ի վերջո Արփիարյանի կողմից դատապարտվում է, համարվում ոճրագործություն: Սակայն ռեալիստորեն գծված Արամի կերպարը ընթերցողին ներկայանում է մի քիչ տարբեր, քան կցանկանար հեղինակը: Այն օբյեկտիվ հանգամանքները, որոնց մեջ գործում է Արամը, մասամբ արդարացնում են Արամի արարքը ու կարծես հենց նրա միջոցով էլ քննադատվում է միջավայրն ու հասարակությունը:

Նույնիսկ զոհը՝ Սաթենիկը արդարացնում է Արամին: «Չէր կրնար ապրիլ ինծի հետ,— ասում է նա,— շարունակ զրկված մնալով ընկերութենե, զվարճութենե, բարեկամներե, ծնողքե, չէր կրնա խորտակել իր ասպարեզը»[1]:

Այլասերված, անբարոյական մի կին է Երանուհին («Երազի մը գինը»): Նա ըստ էության Վահրամի իգական տարբերակն է, ունի իր ուրույն փիլիսոփայությունը: Ըստ այդ փիլիսոփայության՝ կինը տղամարդուն հավասար իրավունք ունի վայելելու կյանքի բարիքը: Աղջիկը իր ամբողջ երիտասարդության շրջանում պետք է սիրեկաններ ունենա, կատարի ամեն սանձարձակություն, լինի խրախճանքների մեջ, ոչ մի բանում չզրկի իրեն: Նրա կարծիքով տգետ, հիմար, հետամնաց է այն աղջիկը, որը ամուսնանում է մեկի հետ և վերջացած համարում սիրարկածների շրջանը: Ամուսնությունը նրա դավանած փիլիսոփայության մեջ վերջին գլուխն է: Կի-

---

[1] Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 40:

նը կարող է ամուսնանալ, երբ արդեն ծերացել է և չի կարող վայելել կյանքի հաճույքը, օգտագործել իր մարմնական բարեմասնությունները։

Երանուհին հենց այսպիսի մի դասընթաց է կարդում նամակներով իր ընկերուհուն՝ Սոֆիկին, որը նրան իմացրել է, թե սիրահարվել է Հրանտ անունով մի սիրուն, բայց գրագիր երիտասարդի հետ և ուզում է ամուսնանալ։ Երանուհին զարմանում է ընկերուհու միամտության վրա, ապշում է, որ նա նամակում այնքան խանդավառությամբ է խոսում գրագիր երիտասարդի մասին, նա այնպես է խոսում, կարծես մի «ծեր աղջիկ եղած ըլլար»։

Երանուհին, բացատրելով իր հայացքները կյանքի, ամուսնության, սիրաբանության մասին, լավագույն դեպքում խորհուրդ է տալիս նրան նյութական կողմը ապահովելու համար ունենալ մի ձևական ամուսին, որը լինի թեկուզ ծեր, բայց հարուստ և այդ հարուստ ամուսնու փողով ազատ-համարձակ վայելի կյանքը ինչպես որ այդ հաճելի է իր կարգի մի աղջկա։ Այսինքն՝ այն, ինչ որ կատարում է Ալ. Տյումա որդու հերոսուհին՝ Մարգարիտ Կոթիեն, որը դրսից փող է ստանում, Արման Դյուվալի նման երիտասարդներից՝ հոգեկան ու մարմնական հաճույք։

Երանուհին չի պատկերացնում երջանիկ կյանք, առանց փարթամ ապրելակերպի, առանց զեխ ու շվայտ կյանքի, կերուխումի, շքեղ հագուստների, ուստի ըստ նրա՝ այն ամուսինն է լավ, որը կարող է այս բոլորը ապահովել։

«Իմ կարծիքս գիտես,— գրում է նա իր նամակում,— հավատքս գիտես, այն ամուսինն է լավագույ-

նը, որ ամենեն ավելի ճոխ շրջազգեստ մը կարող է տալ: «Քեզ շրջազգեստի մը մեջ երջանիկ կին չկա»: Այս է և այս պետք է լինի մեր մտատիպարը»[1]:

Երանուհու կերպարը ամբողջ արևմտահայ գրականության մեջ կարելի է ասել եզակի է, նա մարմնացնում է բուրժուական այլասերված երիտասարդության գաղափարախոսությունը, քարոզում և այդ գաղափարախոսության կենսագործումը:

Արփիարյանին զբաղեցնող մյուս պրոբլեմը, այս երեք պատմվածքներում եղել է եկեղեցու, հատկապես կրոնական իշխանությունների քննադատությունը: Հետագայում նա իր մի շարք երկերում շատ ավելի սուր կերպով վեր հանեց հոգևորականության հակաժողովրդական էությունը: Այս նովելներում հոգևորական իշխանությունները ներկայացվում են որպես կեղծիքի, ապօրինության, զեխ ու անառակ կյանքի պաշտպաններ: Բարոյականության փոխարեն եկեղեցին քաջալերում է անառակությունը, երբ այդ անառակությունը, սանձարձակությունը կատարողը հարուստ է:

Արփիարյանը ցույց է տալիս, որ Սաթենիկի դժբախտության գլխավոր պատճառներից մեկը հենց եկեղեցին է, որի օրենքները պաշտպանում են Քերոբ էֆենդու, Արամի նման մարդկանց շահերը, ոտնակոխ են անում զոհերին: Երբ Սաթենիկին թաղելու թույլտվություն ստանալու համար տաներեցը գնում է պատրիարքարան, եպիսկոպոսներից մեկը լսելով նրա պաշտպանողական խոսքերը մեռյալի մասին, զարմանքով ասում է.

1 Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 56:

«Տեր հայր, մորուքդ քեզի բե՞ռ եղած է»[1]։

Այս սպառնալիքը բնորոշ է. հանցանք է համարվում մի անմեղ աղջկա դիակի պաշտպանությունը, դեռ կրոնական ծիսակատարությամբ թաղելու առաջարկը, բայց հանցանք չի համարվում այդ աղջկա նկատմամբ կատարված ոճրագործությունը։

Եկեղեցին ոչ միայն չի դատապարտում Արամին, այլ նրան հրապարակով փառաբանում է։ Սաթենիկին հուսահատ վիճակում լքած, նրա մահվան պատճառ դարձած Արամի ամուսնության առթիվ եպիսկոպոսներից մեկը «մատնանիշ ըրավ Արամը արդի երիտասարդության համար իբր օրինակելի տիպար մը՝ յուր ջերմեռանդության և կրոնասիրության համար։ Դեռ երկու օր առաջ խոստովանած էր, ինչպես կը վկայեր խոստովանահայրը, երկյուղած հավատով»։

Նման մի հարց իր վեպի նյութ է դարձրել Արփիարյանի գրչակից ընկերներից Տ. Կամսարականը «Վարժապետին աղջիկը» վեպում և նույնպիսի խիստ քննադատության ենթարկել հոգևորականներին։ Այնտեղ էլ պատրիարքարանի պաշտոնյաները, հոգևորականները պոռնիկ են հռչակում խեղճ և միանգամայն անմեղ զոհին՝ Աստղիկին, իսկ գովում, փառաբանում են այլասերված Արամ էֆենդի Նահապետյանին, երկյուղածությամբ խոսում նրա հետ, քծնանքով ոսկեզօծ սիգարեթներ հրամցնում նրան՝ դատարանում։

Արփիարյանը այս երեք պատմվածքների մեջ, հատկապես «Կատակ մը» պատմվածքում, միմյանց հակա-

---

[1] Ընտիր երկեր, էջ 50։

գրել է Կոստանդնուպոլսի երկու տարբեր միջավայրերի պատկերը։ Գեղարվեստական տեսակետից բավականաչափ հաջող պատկերված այդ հակադրության մեջ. մի կողմից երևում է բուրժուական ընտանիքը իր արտաքին պաճուճանքով, ճոխությամբ, հարստությամբ, խնճույքներով, կեղծ ու շինծու մարդկային փոխհարաբերությամբ ու քաղաքավարական ձևերով, որն իր ներքին էության մեջ նեխած է, փտած ու ապականված, մյուս կողմից հեղինակը կարողացել է վարպետ գրչով գծագրել աշխատավոր մարդու խաղաղ կյանքը։

Այդպիսի համեստ, բայց հանգիստ կյանք է ապրում Նիկողոսը՝ Մաքրիկի հայրը («Կատակ մը»)։ Նա ձկնորս է, ապրում է բնության ծոցում, անխարդախ, ջրի ու ձկների բարեկամ մի մարդ է, շփման մեջ չէ բուրժուական միջավայրում ապականված մարդու հետ, աշխատում է օրնիբուն և իր վաստակած գրոշներով պահում է ընտանիքը։ Տանը ոչ մի անախորժություն, ոչ մի անհաճո դեպք։ Հանգիստ ու անդորր է ամեն ինչ։ Նա իր աղքատության մեջ երջանիկ է մինչև այն ժամանակ, քանի դեռ իր բազուկներում ուժ ունի և հեռու է հարուստ ու այլասերված մարդկանցից։ Նրա դժբախտությունն սկսում է հենց այն պահից, երբ կապ է հաստատում հարուստների հետ, իր անփորձ ու անմեղ աղջկան ուղարկում է հարուստի տունը կար սովորելու, որպեսզի իրեն օգնի։ Նա այդ միջավայրում դեռ չի տեսնում վահրամների թակարդը։

Արփիարյանի համակրանքը անվերապահորեն աշխատավորական այդ խավերի կողմն է, նա այդ միջավայրում է միայն տեսնում հոգեկան հարստություն, հայ ժողովրդի ազնիվ գծերը։

Մաքրիկի կերպարը գծագրված է հաջող, ձկնորսի ընտանիքում մեծացած, կյանքի անակնկալներին անծանոթ, միամիտ աղջիկը ընթերցողին ներկայանում է շատ բնական ու հարազատ թե՛ իր միջավայրում, և թե արարքների մեջ։

Արփիարյանի այս երեք նովելները քննության առնելիս պետք է նկատի ունենալ, որ դրանք հեղինակի առաջին գրական գործերն են և նովելային արձակի առաջին փորձերը արևմտահայ իրականության մեջ։ Դրանք, որպես այդպիսին՝ իրենց վրա կրում են սկսնակ հեղինակի անփորձության կնիքը։ Մյուս կողմից՝ որպես արևմտահայ ռեալիստական նովելի առաջին փորձեր, դեռևս ամբողջովին զերծ չեն սանտիմենտալ, ռոմանտիկական վիպագրության ազդեցությունից, կյանքի ցավոտ կողմերը, սոցիալական անհավասարությունը երևան հանելու որոշ զգուշությունից։ Նրա քննադատական ռեալիզմը հաճախ տուրք է տալիս ռոմանտիկ զեղումների, անհամոզիչ ու բռնազբոսիկ հոգեբանական անցումների, հանգույցների չպատճառաբանված լուծումների։

Այսպես, նրա բոլոր հերոսները մեռնում են ողբերգական մահով, զոհ են գնում անակնկալ, բայց նախապատրաստված մահվան, երկուսը վշտից մեռնում են, մեկը խեղդամահ է լինում ջրում, ինչպես այդ պատահում է Մուրացանի 1884 թվականին լույս ընծայած «Հարուստները զվարճանում են» պատմվածքում, որտեղ գոհը՝ Ելենան անձնասպան է լինում, նետվելով Քուռ գետը։

Միաժամանակ այս նովելների վրա երևում է հրապարակախոս հեղինակի ազդեցությունը, տեղ-տեղ գե-

ղարվեստական ընդհանրացումները տեղի են տալիս մերկ հրապարակախոսական դատողություններին, հեղինակային միջամտություններին։

Արփիարյանի ռեալիզմին վնասում է գեղարվեստական երկը ճշմարտապատում դարձնելու համար՝ պատմական իրական անձնավորություններ հանդես բերելը։ Այսպես, «Դատապարտյալի» մեջ հիշատակվում է հեղինակի Թիֆլիս գնալը, Արծրունուն հանդիպելը։ Այդ նովելում հանդես են գալիս ժամանակի գրական դեմքերից Եղիա Տեմիրճիպաշյանը և ուրիշներ, որպեսզի իրենց միջամտություններով ավելի համոզիչ դարձնեն դեպքը։

Բայց այս թերություններով հանդերձ, «Կյանքի պատկերներ» նովելները մնում են արևմտահայ ռեալիստական նովելային գրականության առաջին նմուշները։ Եվ պատահական չէր, որ նույնիսկ արևելահայ քննադատությունը, որ սովորաբար զուսպ էր Պոլսի հայ ռոմանտիկական գրականության նկատմամբ, հենց առաջին օրերից ողջունել է Արփիարյանի ռեալիստական արձակը։

Լեոն «Մշակում» գրել է մի ընդարձակ քննադատական հոդված, որի մեջ ողջունել է պոլսահայ գրական նոր սերնդի նախաձեռնությունը, կյանքի հարցերով զբաղվելու վերաբերյալ։ Նշելով, որ գրական այդ սերընդին ղեկավարողը, նրանց ուղղություն ցույց տվողը Արփիարյանն է, նա գրում է.

«Պատիվ երիտասարդ հեղինակին, որ արծարծում է այսպիսի թարմ, ժամանակակից հարցեր, ինքնուրույն պատկերներ է նկարում, զերծ մնալով կույր հետևողու-

թյունից և մեր գեռաբույս վիպասաններին վիճակված մի հին երգը հազար տեսակ երգելու ակարողությունից»[1]։

Լեոն բարձր է գնահատում Արփիարյանի նովելները ոչ միայն իրենց թեմատիկայի, այլև գեղարվեստական արժանիքների համար։

Նա Արփիարյանի մեջ տեսնում է դեպքերը և դեմքերը հարազատորեն գծագրելու ուժ և կարողություն։

«Նորա «Դատապարտյալը»,— գրում է նա,— մի սրտահույզ ողբերգություն է։ Ընթերցանության ժամանակ ձեր առջև նշմարվում է մի հասարակական հարց, որ հետզհետե բարձրացնելով իր այլանդակ գլուխը, վերջապես ցույց է տալիս իր ահարկու դեմքը»[2]։

Արփիարյանը, քաջալերված ընթերցող հասարակության և մամուլի ջերմ գնահատականներից, վերոհիշյալ երեք պատմվածքները 1885 թ. հրապարակում է առանձին գրքով «Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագրով։

* * *

«Մասիս» պարբերականի մի քանի համարներում տպագրելուց հետո 1886 թ. Արփիարյանը առանձին գրքով լույս է ընծայում «Ապուշը» վիպակը, շատ ջերմ մի ձոնով այն նվիրելով Գ. Սունդուկյանին։ Այդ ձոնը, որտեղ Արփիարյանը խոստովանում է թե մասնավորապես Գ. Սունդուկյանի պիեսներն են ազդել իր «մտքի ուղղության վրա», հետևյալն է.

---

1 «Մշակ», 1886, № 30։

2 Նույն տեղում։

«Առ Պ. Գաբրիել Սունդուկյանց

Հարգելի բարեկամ Պ. Գաբրիել Սունդուկյանց

1884 թվականին Տփղիսի Ամառային թատրոնին մեջ հանդիսատես էի «Պեպոյին»։ Առաջին անգամն էր, որ կը տեսնեի հայ թատերաբեմի մը վրա մեր ընտանեկան կենաց, մեր օրվան վշտերու պատկերները։ Ինձ անծանոթ էր Տփղիսու հայոց ժողովրդային բարբառը, և սակայն հասկցա Պեպոն և հուզվեցա խորապես։ Եվ կարելի՞ էր չհասկնալ, երբ այդ շեշտերն բխյալ գթած, մարդասեր սրտե մը, կը թարգմաներ թատերաբեմին վրա մի այնպիսի աննման թարգման, որպես է Պ. Չմշկյան։ Այդ օրն ըմբռնեցի, թե Կովկասու հայերն ինչու գձեզ այնքան կը սիրեն։

Հաճեցաք ինձ ընծայել ձեր գործերն, զորս խորին ուշադրությամբ կարդացի և կը կարդամ ստեպ։ Չեմ գիտեր, որպիսի անորոշ տխրություն մը կը պատե զիս, երբ կը բանամ «Էլի մեկ զոհ», «Խաթաբալա», «Քանդած օջախ» և «Պեպո»։

Ձեր այդ «պատկերգությունները», ինչպես դուք անվանած եք զայնս, անշուշտ այն համոզմամբ, թե ամեն ծիծաղ կը փարագուրե ցավ մը, ազդեցին իրենք ևս մըտքիս ուղղության վրա. քաղցր է ինձ ուրեմն ձեր անվանն նվիրել այս փոքրիկ վեպս։

Կ. Պոլիս, Օրթագյուղ,

1 ապրիլի 1886.

Ձերդ

Ա. Ա.»[1]

---

1 Ընտիր երկեր, էջ 90։

Բուրժուական ապականված ու քայքայված բարքերը շատ ցայտուն կերպով են ցուցադրված «Ապուշը» վիպակում, որը ավելի ճիշտ կլիներ կոչել «Ցորթյունե», նրա գլխավոր հերոսուհու անունով:

«Ապուշի» հերոսը զարգացած, խելոք, համեստ ու ազնիվ մի երիտասարդ է: Նրա ծննդյանը զուգադիպել է հոր դժբախտությունը: Արագ հարստանալու տենչով տարված, հայրը իր կարողությունը դրել է վիճակախաղի տոմսերի վրա և սնանկացել է: Հոր հարուստ բարեկամներից մեկը ուզում է օգնել նրա ընտանիքին, գեթ Լևոնի ուսման ծախսը վերցնել իր վրա: Այսպես երկու ընտանիքներ կապվում են միմյանց հետ և Լևոնը երախտապարտ է զգում իրեն հարուստ Սինանյան ընտանիքի նկատմամբ:

Լևոնը ամուսնացել է միանգամայն այլ համոզմունքների, գաղափարների տեր մի աղջկա՝ օրիորդ Ցորթյունեի հետ:

Ամուսնությունից հետո Ցորթյունեն վրեժ լուծելու համար իր ընկերուհուց՝ Հերիքայից, որը ամուսնացել էր իր սիրած, Մկրտիչ Սինանյանի հետ, գաղտնի սիրային կապ է հաստատում վերջինիս հետ: Այս բանը իմանում է Լևոնը, երկար տառապում և վերջապես հուսահատությունից խելագարվում է:

Այս է «Ապուշը» վիպակի համառոտ բովանդակությունը:

Նպատակը արտահայտված է հենց վերնագրի մեջ. «Ապուշը» Լևոնն է, նա խելագարվել է հասարակական միջավայրից ստացած հարվածից, իր միջավայրի զոհն է, ինչպես իրենց միջավայրի զոհերն էին Արփիարյանի մյուս հերոսները՝ Սաթենիկը և մյուսները, ինչպես իրենց

միջավայրի զոհերն են Գ. Սունդուկյանի մի շարք հերոսները, «Էլի մեկ զոհում» ներկայացված Անանին և ուրիշներ։

Այս վիպակում արծարծված է շատ կարևոր և հայ գրականության մեջ քիչ տեղ գտած մի պրոբլեմ՝ այն չարիքը, որ առաջանում է բանվորական միջավայրում ծնված անհատի բուրժուական դաստիարակության ու նրա սոցիալական դրության բախումից։

Այդպիսին է Ցորթյունենն։

Վիպակի հերոսը, Լևոնը օժտված է մի շարք բարեմասնություններով. խելոք է, համեստ, պատվավոր, աշխատասեր։ Նրա ցանկությունն է ծնողներին օգտակար լինել, հասարակությանը ծառայել, ընտանիք կազմել, երեխաների հայր դառնալ։ Այս բոլոր առաքինություններով հանդերձ նա կյանքում հաջողություն չի ունենում։ Նա շատ բան գիտի, բայց չգիտի կյանքի լեզուն, չգիտի, որ այդ հատկություններով չի կարող երջանիկ ապրել այն միջավայրում, որի մեջ գտնվում է ինքը։ Նրա բնավորության այդ գծերի, ցանկությունների և հասարակական կարծիքի ու ազդեցության ուժեղ հակադրությունից, բախումից է, որ առաջանում է, սրվում կոնֆլիկտը, կործանում Լևոնին։

Լևոնը անվճռական է։ Նա իր թշնամուց չի կարողանում վրեժ լուծել նույնիսկ այն ժամանակ, երբ ականատես է լինում իր կնոջ դավաճանությանը։ Փոթորկվում է, տանջվում, բայց տատանվում է, վճռական որևէ քայլի չի դիմում։ Հեղինակը պատճառաբանել է այդ տատանումը. նրան ճակատագրական քայլից հեռու է պահում այն միտքը, որ նման մի ակտի հաջորդելու է իր շարքից դուրս գալը և երեխայի որբանալը։ Ինչով է մե-

ղավոր այդ անմեղ երեխան իր մոր անբարոյական արարքի համար։

Մյուս կողմից, Լևոնը համոզված է, որ ինքը բացի հակամարդկային, գազանային վրեժխնդրությունից, ուրիշ կերպ չի կարող պայքարել հանուն իր ոտնահարված արժանապատվության ու իրավունքի։ Նա համոզված է, որ ինչքան էլ մեղավորը, անբարոյականը Մկրտիչ Սինանյանն է, այնուամենայնիվ հարուստի շահերին ծառայող հասարակական կարծիքը վերջ ի վերջո արդարացնելու է Մկրտչին և մեղադրելու է իրեն։ Լևոնի ամբողջ կերպարը հեղինակը կերտել է այնպես, որ ընթերցողը խորը թափանցելով նրա միջավայրի ու բնավորության մեջ, արդարացնում է Լևոնի վարքագիծը և նույնիսկ պատճառաբանված համարում նրա խելագարությունը։

«Ապուշը» վիպակի գլխավոր դեմքերից է Ցորթյունեն։ Ցորթյունեն հայ ռեալիստական գրականության ստեղծած լավագույն կերպարներից է։ Նա հասարակական մի ամբողջ խավի, այսպես կոչված դեպի եվրոպականացում, բայց ըստ էության դեպի այլասերում ու կործանում գլորվող խավի տիպիկ ներկայացուցիչն է։ Ծնվել է արհեստավորական միջավայրում (նրա հայրը կոշկակար է), բայց ստանալով ֆրանսիական (եվրոպական) դաստիարակություն, շփվելով քաղքենիական ընտանիքների հետ, ձգտում է կյանքում առաջնորդվել նույն այդ խավի նորմաններով և ապրել նրանց նման, առանց նկատի ունենալու, որ դրա համար անհրաժեշտ են իր բանվորական միջավայրի ընձեռած նյութական հնարավորությունները։ Ցորթյունեի այդպիսի հակումների ու նրա նյութական հնարավորության բացակայության հակադրության ֆոնի վրա է, որ գծված է նրա կերպարը։

Ցորթյունեի մայրը, տարվելով իր աղջկան անպայման «բարձր» դաստիարակություն տալու ցանկությամբ, որոշում է ուղարկել հարուստ դասակարգի միջավայրը՝ կրթվելու: Նա օտար միջավայրում սովորում է եվրոպական լեզուներ, սովորում է դաշնամուր նվագել, կարդում է ֆրանսիական արկածային վեպեր ու դրանց ազդեցության տակ իրեն երևակայում է արիստոկրատական շըրջանի աղջիկ: Բայց ընտանիքը նույնն է, նյութական նույն միջոցների տեր և ավելի վատ, քան առաջ: Սկըսվում է Ցորթյունեի (որի իսկական անունն է Պիրիճիկ) դժբախտությունների շարքը: Նա սկսում է ատել և անիծել այն միջավայրը, որտեղ ծնվել է, արհամարհանքով, զարշանքով վարվել իր հարազատ ընտանիքի հետ: Այդ օջախը, սրբազան ընտանիքը նրան թվում է մի տեսակ դժոխք, որը երկաթյա կարթով իրեն ետ է պահում իր ցանկություններից ու ծրագրերի կատարումից: Ինչքան Ցորթյունեն ուզում է հեռանալ այդ միջավայրից, մոռանալ, ոչ մի կապ չունենալ նրա հետ, իր սոցիալական ծագման դրության մղձավանջը հալածում, գտնում է նրան նույնիսկ երբ նա փախել է ընտանիքից:

Ճակատագիրը կարծես հալածում է Ցորթյունեին: Հենց այն պահին, երբ հարուստ դասակարգի աղջիկների նման հագնված նրանց միջավայրում է, իր ընկերուհու՝ Հերիքայի տանը, ուր արհամարհանքով խոսում են ստոր դասի մարդկանց մասին, Հերիքայի մայրը հետեյալ հարցով փշրում է նրա բոլոր երազները.

«— Քա աղջիկ, սա մորդ.բուն, երկուշաբթի թող գա. աղտոտները լեռան պես դիզվել են, թող գա չամաշիր մը ընե. չմոռնաս հա՞»...

«Ցոլթյանի դեմքը մեռելի գույն առավ»։

Ցոլթյանն ամեն մի առիթով այսպես ապտակվում է կյանքից, համոզվում, որ միայն անվանափոխությունը կամ ընտանիքի ապրուստից կտրված կոպեկներով մի շքեղ զգեստ ունենալը դեռ քիչ է՝ բարձր դասի կենցաղով ապրելու համար։

«Իր աղքատությունը ճակտին վրա դրոշմված էր»։

Չնայած դրան, նա չի կարողանում հեռանալ ոչ այդ միջավայրից, և ոչ էլ այդ երազներից։ Նա չի կարողանում ըմբռնել, որ իր միջավայրը այդ չէ, որ ինքը չի կարող կյանքը չափել նույն արշինով, ինչ-որ Հերիքան, հարուստ, ապահովված ընտանիքի այդ շփացած աղջիկը։

Որոնք են Ցոլթյանի բնորոշ հատկանիշները։ Ամենից առաջ կրկնակի ուրացում։ Ուրացում՝ թե իրեն ծնող ժողովրդի և թե իրեն ծնող ընտանիքի։ Նա դժգոհ է, որ հայ է ծնվել, ամաչում է հայտնելու իր ազգությունը, փոխում է անունը-ազգանունը, փորձում դառնալ ֆրանսիացի, խոսում է այդ լեզվով։ Նա դժգոհ է և իր սոցիալական դրությունից, այն բանից, որ ծնվել է աղքատ արհեստավորի ընտանիքում։ Այդ մի կողմից նրան հնարավորություն չի տալիս ապրելու այնպես, ինչպես ապրում են իր հարուստ ընկերները, մյուս կողմից՝ ուրիշների ներկայությամբ ազդարարվում է իր աղքատությունը։

Այս կրկնակի ուրացման ճանապարհին է, որ նա կորցնում է մարդկային բոլոր ազնիվ հատկությունները, գնալով դառնում է չար, թունոտ, ջղագար մի կին,

---

1 *Ընտիր երկեր, էջ 106։*

ուզում է վրեժ լուծել բոլորից՝ և՛ ծնողներից, և՛ ամուսնուց, և՛ իր երեխայից և՛ այն հարուստ միջավայրից, որը չի ընդունում իրեն: Նա լքում է ծնողներին, չի ցանկանում ճանաչել նրանց, դավաճանում է ամուսնուն, պատճառ դառնում նրա խելագարության, բռնում անբարոյականության ուղին, վերջապես հարկադրված լքում է նաև իր ծնած երեխային:

Ցորթյունեի կերպարը կերտելիս, ինչպես տեսանք, Արփիարյանին ամենից շատ զբաղեցրել է այն սխալ դաստիարակության հարցը, որ տրվում էր Կ. Պոլսում հայ երիտասարդությանը: «Մշակում» գրած մի քանի հոդվածներով Հայկակը ուժեղ պայքար է մղել այդպիսի դաստիարակության դեմ: Կյանքից բերելով բազմաթիվ օրինակներ, նա ցույց է տվել, թե ինչպես հայ ընտանիքներում մեծացած աղջիկները, օտար դպրոցներում ստանալով հայ իրականությանն ու կենցաղին միանգամայն խորթ դաստիարակություն, դժբախտանում էին: Եթե այդ երիտասարդը աղքատ ընտանիքի զավակ էր, ապա Ցորթյունեի վիճակին էր արժանանում, պատուհաս դառնում իր խեղճ ծնողներին, իսկ եթե հարուստ ընտանիքի զավակ էր, ավելի ևս տարվելով այլանդակ, անբարոյական կենցաղով, գնում էր դեպի ապականում և կործանում, երկու դեպքում էլ ոչ մի օգուտ չտալով հասարակությանը:

Հեղինակը չափազանց դաժանորեն է պատժել Ցորթյունեի անհեռատես մորը, որը պատճառ է դարձել աղջկա այլասերմանը, ցանկացել է նրան տալ «ալաֆրանկա» (ֆրանսիական) կրթություն:

Ցորթյունեի մայրը, ինչպես ամեն մի մայր, գուր-

գուրող է, բարեհոգի։ Նա անչափ սիրում է իր աղջկան։ Վերջինիս բոլոր սանձարձակությունները տանում է միևնույն համբերությամբ, ամեն կերպ աշխատում է, որ աղջկան պահի տանը, ամուսնացնի։ Աղջիկը, սակայն, հակառակ ծնողների բուռն թախանձանքին, «հարուստ հույն մը իր ճիրաններուն մեջ առնելու» նպատակով ֆրանսերենի ուսուցչուհի է դառնում մի հույն ընտանիքում, թաքցնելով իր ազգությունը, որից արդեն ամաչում էր։ Ներկայանում է որպես ֆրանսուհի։

Մայրը երկար փնտրում է աղջկան, հուսահատ ճիգերով միայն գտնում։ Ուրախությամբ շտապում է հույնի տունը։ Հայերեն լեզվով հույների ներկայությամբ ասում է.

«—Աղջիկ, աս ո՞ւր ես եկեր, հոգիս ելավ փնտրելով. նա՞ղ ես, աղեկ ես։ Հայրիկդ ալ հիվանդ պառկած է»։

Ոչ հարազատ մոր ներկայությունը իր շեմքին և ոչ էլ հոր հիվանդ լինելու լուրը չեն փոխում այլասերված, փչացած, ազգությունից ու ընտանիքից հեռացած աղջըկա զգացումը։ Նա արհամարհանքով նայում է նրան, ձևացնում, թե չի ճանաչում այդպիսի կնոջ և իր դասատիարակության տակ գտնվող երեխաներին ասում է ֆրանսերեն.

«Ով է այս կինը, վռնդեցեք»[1]։

Ծառաները վռնդում են կնոջը։

Ահա «մայրաքաղաքում կրթված» պոլսահայ աղջկա տիպարը։

---

[1] Ընտիր երկեր, էջ 108։

* * *

1887 թ. «Մասիսում» լույս է տեսնում Ա. Արփիարյանի «Դերասանուհին» վիպակը, որը մեծ աղմուկ է բարձրացնում Կ. Պոլսում։

«Դերասանուհին» վիպակը ցույց էր տալիս, որ ազգային իշխանություններում ղեկավար պաշտոններ վարող տգետ, շաղակրատ շատ մարդիկ իրենց պաշտոնը չարաշահելով, կանանց ու աղջիկների պատիվն են արատավորում, երիտասարդության դաստիարակությունը միանգամայն սխալ ճանապարհով տանում։

Պատմվածքի բովանդակությունը հետևյալն է։

Բաղդասարը 50 տարվա ուսուցիչ է. նա կրթել է շատ սերունդներ, նրանց տվել է ազգային դաստիարակություն, սովորեցրել է կյանքի համար անհրաժեշտ գիտելիքներ։

Ահա այսպիսի մի վաստակավոր ուսուցչի հեռացնում են պաշտոնից, որպեսզի նրա փոխարեն նշանակեն մի տգետ, շաղակրատ երիտասարդի։ Պատվելին նյութական ծանր վիճակ է ապրում, ծախում է իր բոլոր գրքերը, ունեցվածքը, քարշ տալիս իր կյանքը մի առ ժամանակ, բայց երբ նորից սովը բախում է նրա դուռը, մտածում է իր աղջկան որևէ աշխատանքի ուղարկելու մասին։ Աղջիկը ուզում է դերասանուհի դառնալ։ Թատրոնում նա հանդիպում է իր հոր փոխարեն ուսուցիչ դարձած երիտասարդին, որի պիեսի գլխավոր դերն է կատարում։ Հասարակության մեջ և մամուլի էջերում թմբկահարված Նրմողեն էֆենդին կարողանում է իր ցանցի մեջ գցել անփորձ աղջկան և խլել նրա պատիվը։ Հայրը լսում է իր ընտանիքի անպատվությունը, վշտից հիվանդանում ու մեռնում է։ Նրմողենը մի առ ժամանակ

իր հաճույքի առարկան դարձնելով Սրեզնազին, լքում է նրան ու ամուսնանում ուրիշի հետ։

Արփիարյանը հաջող է գծել մասնավորապես Կ. Պոլսի իրականության համար շատ տիպական այս «Ներսեսին»։ Նա ամենից առաջ շաղակրատ է, պոռոտախոս, գրողի, դրամատուրգի հավակնություններով տարված մի տգետ մարդ։ Նրա խոսքի և գործի մեջ չկա որևէ տրամաբանություն, սիրում է անվերջ ճառել, խոսել վեհ սկզբունքների մասին, բարոյականության, ազնվության մասին և խոսել ամենամեծ պաթոսով, գիտնականներից մեջբերումներ կատարելով։ Մրցանակաբաշխության հանդեսի ժամանակ արտասանում է մի ճառ, որը սկսում է Գյուտենբերգի գյուտից, շոշափում Հիսուսի յոթը նկանակների պատմությունը, մեջ բերում Շոպենհաուերի փիլիսոփայությունը, ապա անցնում Ռասինին ու Բիսմարկին։

Կյանքում նա անբարոյական է, իր բոլոր անառակությունները տեսականորեն արդարացնող մի սրիկա։ Նրա համար մի դերասանուհու պատիվը խլելը, բարոյապես կործանելը նույնքան բնական է, որքան մի բաժակ ջուր խմելը։

Միաժամանակ նա քծնող է, շողոքորթող, գիտի, թե հասարակության մեջ ումը պետք է սիրաշահել, ում հետ խոսելիս պետք է քծնել, գովել, բարձրացնել, իսկ ում նկատմամբ պետք է լինել դաժան ու խիստ։ Նա անտարբեր է իր պատճառով փողոց շպրտված ուսուցչի ողբերգության հանդեպ, բայց երբ մեռնում է դպրոցի հոգաբարձուի եղբայրը, «Երմոգեն էֆենդին նորա գերեզմանի վրա շնորհած էր նմա անձագիր մը, առաքինության և անմահության։ Ոմանք կըսեին, հանգուցյալը

դժոխքին մեջ իսկ տեղ մը գտնելու համար կը կարոտեր բարեխոսի մը»[1]։

Արփիարյանը մի շարք առիթներով է անդրադարձել հայ ուսուցչի ծանր վիճակին։

Բայց ուսուցիչը չէ միայն, որ թշվառ է, թշվառ են առհասարակ մտավորականները, գրողները, դերասանները։

Երբ Վիկտոր Հյուգոյի մի պիեսի ներկայացումից հետո Երմոգենը հարցնում է դերասանուհիներին, թե ինչու այնքան հոգնած են խաղում.

«— Ի՞նչ ընենք,— պատասխանեց դերասաններեն մին,— շաբաթ մ'է, էֆենդի, որ պատառ մը տաք կերակուր չէ սահած մեր կոկորդեն վար, շաբաթ մ'է պանիր հաց կուտենք և կուզեք, որ առողջ ու դիմացկուն կուրծքո՞վ տեսարանին վրա ելնենք»[2]։

«Դերասանուհին» պատմվածքը գուցե այնքան մեծ աղմուկ չբարձրացներ, և ինչպես հետագայում Արփիարյանն է վկայում, չընդհատվեր, եթե նրա մեջ գործող անձինք որոշակիորեն չը հիշեցնեին կենդանի Երմոգեններին։

Ընթերցողները, որոնք ամեն օր կյանքում տեսնում էին նման մարդկանց, լսում նրանց արարքները, պատմվածքը կարդալիս իսկույն ճանաչում էին իրենց ծանոթ դեմքերին։ Պատմվածքը դառնում էր օրվա խոսակցության նյութ՝ ընտանիքներում և հասարակական վայրերում։ Շարունակում էր հուզել մարդկանց, մինչև որ մի ավելի թարմ դեպք մոռացնել էր տալիս այն։ Շատ

1 Ընտիր երկեր, էջ 153։
2 Ընտիր երկեր, էջ 165—166։

հաճախ բանավոր կամ գրավոր դիմում էին հեղինակին, թե արդյոք այսինչ պատմվածքի հերոսը հանրային այսինչ գործիչը չէ՞: Արփիարյանը դրանց պատասխանել է հրապարակով:

«Բայց վեպին այսինչ անձը կը նմանի ճիշտ այսինչ մարդուն, սառը ինչ պիտի ըսենք, սառը պիտի ըսենք, թե շատ կարելի է ատիկա, և շատ ալ կարելի է, որ այդ մատնանիշը եղած դեմքը բնավ ծանոթ չըլլա գրողին: Վեպ գրողը անշուշտ վերացական աշխարհի մը մեջ չի ապրած, այլ իր շուրջը տեսած է, քննած է, հոգեբանական ուսումնասիրություններ ըրած է այդ ամեն տեսածներուն, լսածներուն»[1]:

Եթե գեղարվեստական երկի մեջ տիպականացնելով երևույթները, Արփիարյանը ցույց էր տալիս այդ կարգի բազմաթիվ մարդկանց արարքները, ապա նա ավելի համարձակությամբ իր հոդվածներում քննադատում էր նույն այդ մարդկանց իրենց անունով, ազգանունով, պաշտոնով և կոնկրետ արարքով:

Ահա նրա Երմոգենը, իր իսկական անուն ազգանունով, իր միջավայրի մեջ պաշտոնի վրա իսկական ամբիոնից ճառ ասելիս.

«Հզոր ձայնիվ կը խոսի Նուրյան էֆենդի, բառերն հատակ-հատակ կարտասանե, մերթ վրդովյալ, մերթ հանդարտ, որ պարտավոր ես անկեղծությանը հավատալ, այնքան լավ հուզում կեղծել գիտե, որ անկեղծ կերևի»[2]:

Հանկանալի է, որ «Մասիսի» գրեթե յուրաքանչյուր համարում Նուրյանի և Ուսումնական խորհրդի առե-

[1] «Հայրենիք» լրագիր, 1894, № 893:
[2] «Մշակ», 1888, մարտի 16:

նապես Հակոբ Գուրգենի մասին սուր սլաքներ տեսնող ընթերցողը «Դերասանուհին» պատմվածքը կարդալով իսկույն Երմոգեն անվան տակ ճանաչում էր այդ երկուսի համար շատ բնորոշ հատկանիշներ, նույնիսկ նրանց արտաքին նկարագրությունը։ Նուրյանն էլ կամ Հակոբ Գուրգենը այդ ընդհանրացած տիպի մեջ տեսնում էին իրենց համար բնորոշ շատ գծեր։ Եվ Արփիարյանի շուրջ ստեղծված հակառակության հիմնական պատճառներից մեկը նրա նիզակների այդպիսի նպատակասլաց լինելն էր։

Կյանքից վերցված իրական տիպար էր նաև պատմվածքի հերոսուհին՝ Արեգնազը։ Դեռ բոլորի հիշողության մեջ թարմ էր հայտնի դերասանուհի Մարի Նվարդի ողբերգական մահը։ Մարի Նվարդը Կ. Պոլսի, Թիֆլիսի հայ բեմերում կատարյալ հայտնություն գտնելուց, Սիրանուշի, Ազնիվ Հրաչյայի, Երանուհի Գարագաշյանի ձեռք բերած փառքը բաժանելուց, Պ. Ադամյանի կողմից բարձր գնահատվելուց հետո, վերադարձել էր Կ. Պոլիս, հայկական ներկայացումները արգելված տեսնելով նվիրվել թյուրքական բեմին, դառնալով այդ բեմի չգերազանցված աստղերից մեկը։ 1885 թվականին Մարի Նվարդը խաբվելով մի սրիկայից, հղիացել էր, և, վախենալով հասարակական կարծիքի ահավոր դատաստանից, Մարգարիտ Կոթիեի դերը կատարելուց մի քանի ժամ առաջ թույն էր խմել և մեռել ներկայացումից հետո։

* *
*

Եկեղեցական օրենքների քննադատությանը, այդ օրենքների վերափոխմանն է նվիրված Արփիարյանի «Սիմոնական տերտերը» պատմվածքը (1887 թ.)։

Շատ կնճռոտ մի հարց է շոշափել Արփիարյանը իր պատմվածքում։ Երկու եղբայրներ սիրում են երկու քույրերի. օրենքը չի արտոնում նրանց ամուսնությունը, նրանք կանգնած են կործանման առաջ։ Գիտականորեն քահանան չի կարողանում արդարացնել այդ արգելքը, քանի որ երկու քույր բնավ արենակցական կապ չունեն երկու օտար եղբայրների հետ «արյուններն իրարու չի խառնվիր, հետևաբար բժշկական օրենքներով ալ այս ամուսնությունը արգելելու պատճառ մը չկա»։

Արփիարյանը այստեղից էլ սկսում է հազար տարի առաջ այդ օրենքները սահմանողների դեմ իր հարձակումները։ Չէ որ այդ բոլոր օրենքները բավարարել են հազար տարի առաջվա պահանջները, բխել են այն ժամանակվա անհրաժեշտությունից, մի՞թե հազար տարվա ընթացքում կյանքը մնացել է նույնը, որ օրենքներն էլ նույնն է մնացել։

«Սիմոնական տերտերը» պատմվածքում ամուրի հոգևորականները ներկայացված են իրենց ամբողջ դաժանությամբ, խստությամբ ու էգոիզմով։ Մինչդեռ քահանան մտնում է երկու եղբայրների դրության մեջ, ցանկանում է ամուսնացնել նրանց, եպիսկոպոսը մինչև վերջն էլ մնում է անհողդողդ իր սկզբունքի մեջ, մազաչափ անգամ չի մտահոգվում, որ իր արգելքը դժբախտացնելու է մարդկանց։

Այս պատմվածքի քահանան Արփիարյանի իդեալ հոգևորականն է, նա երևակայական մի տիպ է, Արփիարյանը նրան ստեղծել է որպես տիպար իր պատկերացրած հոգևորականության։ Նա կյանքի մարդ է, ամուսնացած է, ընտանիքի հայր։ Ամուսնությունը, ընտանեկան երջանկությունը, երեխաների բարերար

ազդեցությունը փափկացրել, ազնվացրել են նրան, դրանով էլ նա կարեկից է Թշվառների նկատմամբ, հոգատար կարիքավորների պահանջին։

«Սիմոնական» տերտերը կարողանում է քննադատել եկեղեցական օրենքները, որովհետև կարդացած, զարգացած մարդ է։

Հայոց պատմության, հայոց լեզվին քաջահմուտ, հայկաբանության ուսուցիչ այդ քահանան սիրում է «Թշվառների» նման գրքերը, այնպիսի գրքեր, որոնք «գաղափարներու մեջ մեծ փոփոխություն ներմուծած են» և «ժողովրդի մտքին վրա խորին տպավորություն կը թողուն»։

Պատմվածքում Արփիարյանի քահանան պատժվում է իր հանդգնության համար, հոչակվ-ւմ «սիմոնական», այսինքն՝ եկեղեցական կանոնները ոտնահարող և դատապարտվում է փիլոնազրկման։

Թե «Դերասանուհին» և թե մանավանդ «Սիմոնական տերտերը» գեղարվեստական տեսակետից թույլ գործեր են և հայ գեղարվեստական գրականության մեջ որևէ տեղ չեն կարող ունենալ. սակայն դրանք ժամանակին իրենց արծարծած հասարակական գաղափարներով ազդել են մարդկանց վրա, մտքեր հուզել։

* *
*

Արփիարյանի ուշագրավ պատմվածքներից է «Հոգու զավակը»։ Վիպային, կիսաարկածային մի ֆաբուլա ընտրելով, նա կարողացել է տալ իր միջավայրի բավական լայն և ընդարձակ պատկերը։

Ջկնորս Ղուկասի միակ որդին մեռել է։ Նույն այդ

օրերին եկեղեցու դռանը հայտնվում է մի զամբյուղ, կախված պատից, որի մեջ դրված է մի նորածին երեխա: Հարուստները նայում, անտարբերությամբ անցնում են: Ղուկասը խղճում է անտեր երեխային, վերցնում է նրան տանում տուն, մեծացնում, դպրոց ուղարկում: Մովսեսը լավ է սովորում: Նրան նախանձում են շատերը, նախանձում է և Թաղական խորհրդի ատենապետի որդին՝ Պետրոս Ագրիպյանը, որը մի օր վեճի բռնվելով նրա հետ, երեսովն է տալիս նրա ծագումը, կոչելով բիչ: Երեխան հարցնում է հորը այդ բառի իմաստը: Ջկնորը խուսափում է բացատրություն տալուց, միակ ելքը գտնում է այդ փողոցից հեռանալու մեջ: Մովսեսը նոր միջավայրում հանգիստ սովորում է, ավարտում ուսումը, դառնում նշանավոր հրապարակախոս, գրական հրապարակում կոչվում է Նավարյան, կապեր է հաստատում ամիրայական տոհմից մի ընտանիքի հետ, սիրում նրանց աղջկան՝ Արուսյակին:

Աղջկան սիրում և նրա հետ ամուսնանալ է ուզում նաև Պետրոս Ագրիպյանը, որը Արուսյակենց տանը հանդիպում է Նավարյանին, բայց չի իմանում, որ նա հենց Մովսեսն է: Մոր բացատրության վրա գլխի է ընկնում, որոշում է նրանից վրեժ լուծել: Մամուլում հրատարակում է նրա անձնական գաղտնիքը և ասում թե այդպիսի ապօրինի հարաբերության ծնունդ մի երիտասարդ, թափանցելով ազնիվ ընտանիքների մեջ, ուզում է գայթակղեցնել երիտասարդ աղջիկներին: Նավարյանը Արուսյակի տանը հանդիպում է անբացատրելի սառը վերաբերմունքի, իսկ դաշնամուրի վրա դրված թերթում կարդալով իր մասին գրվածը հասկա-

նում է ամեն ինչ, ինքն իրեն կորցրած դուրս է ընկնում և մի նավ նստելով փախչում է արտասահման:

Պատմվածքի նպատակը պարզ է, այն շատ է հիշեցնում «Ապուշի» մեջ արծարծված հիմնական հարցը: Այնտեղ բուրժուական հասարակության զոհը Լևոնն է, որը խելագարվում է, այստեղ Նավարյանն է, որը հարկադրված է թողնել ապականված միջավայրը, հեռանալ:

Չնայած այս նմանությանը «Հոգու զավակն» ունի մի շարք առանձնահատուկ կողմեր: Ամենից առաջ այս գործը գեղարվեստական տեսակետից անհամեմատ ավելի հաջողված է, քան «Ապուշը», որը ունի հրապարակախոսական տարրեր: Այստեղ հեղինակին հաջողվել է ռեալիստական վրձինով նկարագրել Պոլսի երկու տարբեր խավերի առօրյան, նրանց կենցաղը, հոգեբանությունը, գաղափարախոսությունը, նրանց նման և տարբեր գծերը:

Ինչպես «Կատակ մը» պատմվածքի մեջ, այստեղ էլ նկարագրվում է ձկնորսի կյանքը: Բուրժուական հասարակարգում ապրող, բայց նրա հետ շփման մեջ չմտած Ղուկասը ապրում է խաղաղ ու անդորր կյանքով: Նա երջանիկ է նրանով, որ հեռու է այդ ապականված միջավայրից, նրա պայքարը բնության հետ է, ծովի ալիքների, փոթորիկների, նրա հացը ծովից է դուրս գալիս ու աղի քրտինքն էլ թափվում է ծովը: Նա 20 տարի է, որ առավոտ կանուխ, արշալույսին դուրս է գալիս տնից և տուն վերադառնում գիշերը, երբ ճրագները վառված են: «Կյանքը, սերը զավակներն էին, կնիկն էր կարմրուկ, անուշիկ Բուբուլ տուտուն»:

Ղուկասի բնավորության գծերը լրացնում է նրա-

կինը՝ միամիտ, բարեսիրտ Բուբուլ տոտոն, որը իր ուրախ, աշխատասեր բնավորությամբ մոռացնել է տալիս ամուսնու հոգսը, առօրյա չարչարանքը, բաժանում նրա հոգնածությունը։

Արփիարյանը Նավարյանի տիպը կերտելիս շատ բան է վերցրել իր կյանքից, իր բնավորության գծերից։ Նավարյանի հասարակական պայքարը նույն Արփիարյանի պայքարն է։

Նավարյանը Արփիարյանի նման հայտնի հրապարակախոս է, մամուլի էջերից անխնա մերկացնում է ժողովրդի նախապաշարումը, տգիտությունը, դիմակազերծ անում կեղծ բարեպաշտներին, ազգի անունից խոսող, բայց ազգի դեմ գործող շաղակրատներին։

Նա էլ տեսնում է, որ իր ապրած դարաշրջանում ամեն ինչ հիմնվում է կեղծիքի ու խաբեբայության վրա։

Զզված, հուսահատված տիրապետող այդ բարքերից, Նավարյանը ըմբոստանում է այդ միջավայրի դեմ և գտնում, որ իր համար ավելի լավ կլիներ ծնված լինել մարմնական որևէ արատով, քան թե ապրել այդպիսի նեխված, ապականված միջավայրի մեջ։

«Մարմնական արատ մը շատ ավելի զզվելի չէ՞ ընկերային (իմա՝ սոցիալական) կեղծ ու պատիր ավանդության դեմ մեղանչում մը, իր գոյությունը կարծիքի վրա հիմնված ընկերության համար»[1], ասում է նա։

Նավարյանը բնավորությամբ շատ ավելի թույլ է, մեղմ, քան Ա. Արփիարյանը։ Նավարյանի մոտ շեշտված է ինտելիգենտը, խորհող մարդը, կյանքում նա հաջողություն չի կարող ունենալ, մանավանդ, որ այդ կյանքին նա նայում է իդեալիստական աչքերով։ Նրա

---

1 Ընտիր երկեր, էջ 214։

համոզմունքների և պրակտիկ կյանքի մեջ կա վիթխարի տարբերություն, ահա թե ինչու բախվելով դառը իրականության, պարտվում է: Նա չի պարտվում, քանի դեռ մամուլում է չափվում արիստոկրատական խավերի, ազնվաշուքների հետ, քանի դեռ գրչով է պայքարում նրանց դեմ: Հենց որ նա տեսական պայքարից անցնում է գործնականի, մոտիկից շփվում բուրժուական միջավայրի հետ, այդ միջավայրում չգտնելով իր համար հենման կետ, զինաթափ է լինում, կործանվում Ագրիպյանների շրջանի մարդկանց ծաղր ու ծանակին արժանանալով:

Արփիարյանը իր հայացքների մի մասն էլ արտահայտել է Նավարյանի սիրած աղջկա հորեղբոր՝ Տիրան էֆենդու միջոցով: Այս մարդը բավականաչափ հիշեցնում է գրող Եղիա Տեմիրճիպաշյանին: Մերթ միստիկ է, երկչոտ, կրոնասեր, մերթ խիզախումներ է ունենում այդ բոլորի դեմ, մերթ պաշտպանում է ամիրայական տոհմիկ սովորություններն ու նախապաշարումները, մերթ ամենաանողոք քննադատությամբ խիզախում է դրանց դեմ, արտահայտում համարձակ մտքեր, մերթ նա հակվում է այդ աղջկան Նավարյանի հետ ամուսնացնելու գաղափարի կողմը.

«Աղջիկ մը մեծ հանցանք կը գործե, վշտացնելով իր մայրը, բայց միթե նվազ հանցավոր, ոճրագործ մը չէ մայրը, երբ իր աղջիկը դժբախտ կընե, մինչև իսկ կը մեռցնե՝ իր անձնավորությունը գոհացնելու համար: Եվ ինչ իրավունքով պահանջել դեռատի աղջկե մը իր կյանքը զոհել պառավի մը անձուկ շահախնդրությանը»[1]:

[1] Ընտիր երկեր, էջ 232:

Տիրան էֆենդին ակնարկելով Արուսյակի մորը, ասում է.

«Իր հաճույքին համար արարած մը հրապարակ նետած է... և պետք է որ իրեն գերի ըլլա»[1]։

Այս միտքը Արփիարյանի համար բնորոշ է, բայց Տիրան էֆենդու նման մի պահպանողական աշխարհայացքի տեր մարդու համար՝ չինծու, այն մարդու, որը մի այլ տեղ քարոզում է վերանալ կյանքից, անջանալ, մոռանալ այս աշխարհի վիշտն ու տառապանքը, եթերի մեջ որոնել սփոփանք։

Արփիարյանը ցանկացել է արիստոկրատիկ կյանքի, պահպանողական սովորությունների քննադատությամբ հանդես բերել նույն այդ խավի ծոցից դուրս եկած մարդկանց։ Այդպիսին է պատմվածքի հերոսուհին՝ Արուսյակը, ամիրայական տնից սերած, նույն միջավայրում մեծացած մի աղջիկ։

Ահա թե ինչպես է քննադատում նա իր սեփական դասակարգի սովորությունները.

«Ընկերային պարտականություն, բայց ինչ անմտություն է այն քիչ մը կյանքը, որ՝ ունինք, ենթարկել ասոր անոր քեֆին, մեկուն մեկալին «ինչ պիտի ըսեն»։ Իբր թե մենք ուրիշին համար ծնած ըլլայինք, և ոչ մենք մեզի»[2]։

Ռոմանտիկ աղջիկ է Արուսյակը։ Նրա արիստոկրատիկ միջավայրը կարող էր լինել հայկական կյանքից կտրված, կիսաֆրանսիացած մի շրջապատ։ Այդ ընտանիքների աղջիկների համար տիպականը մի քիչ ֆրան-

---

[1] Ընտիր երկեր, էջ 232։

[2] Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 229։

սերին խմանալը, մի քիչ դաշնամուր նվագելն էր, ավելի շատ դատողություն, ամբարտավանություն և արհամարհանք դեպի սեփական ժողովրդի կուլտուրան։ Այդպես չէ Արուսյակը։

Հակառակ իր դասի շփացած ու մեծամիտ աղջիկներին, նա համեստ է, խորհող, դատող, ծանոթ է ոչ միայն եվրոպական գրականության, այլև հայ գրականության։ Կարդացել է Նավարյանի գրածները, հավանել նրան։ Դրա համար էլ հենց առաջին հանդիպումից հրապուրվում է այդ երիտասարդով, ուզում է միշտ լինել նրա հետ, լսել նրան։ Նավարյանի տաղանդի մեծությունը մոռացնել է տալիս Արուսյակին՝ ամիրայական գերդաստանից սերած աղջկա և մի գրողի սոցիալական տարբերությունը։

Անհամեմատ հաջող է գծված հարուստ Ագրիպյանների միջավայրը։ Նրանց ամբողջ ընտանիքը՝ հայրը, մայրը և որդին տրված են վարպետ վրձինով։

Ո՞վ է Պետրոս Ագրիպյանի հայրը։ Նա ներքևից բարձրանալով բուրժուականացած մի մարդ է և Ֆորթյունեի նման արհամարհանք միայն ունի իր ծագումը հիշեցնող մարդկանց նկատմամբ։ Թաղական խորհրդի ատենապետության պաշտոնը բավական է դարձել, որ նա արհամարհանքով վերաբերվի «հասարակ», աշխատավոր մարդկանց հետ։

Բարեսիրտ, ազնիվ մարդու դիմակով է հարստացել նրա որդին՝ Պետրոս Ագրիպյանը։ Պետրոսը իր հոր նյութական միջոցներով հարստանալով, դարձել է հարուստ Ագրիպ էֆենդի։

«Քիչ մը բախտը դեպի իրեն առաջացավ, շատ մըն ալ ինքը բախտին առքը գնաց՝ կաթին մեջ ջուրը առատ

խառնելով։ Ողճահարությունը իր զգացմունքներուն տկարագույնն էր»[1]։

Որպես հետագայում «կաթին մեջ ջուր խառնելով» հարստացած երիտասարդ՝ Պետրոսը յուրահատուկ փիլիսոփայություն ունի կյանքի նկատմամբ։ Նա սովորել է համարվել այդ կյանքին՝ ըստ պահանջի։

Հիանալիորեն տիրապետել է իր անձը ռեկլամ անելու արվեստին։ Նա ժամանակի այն երիտասարդներից է, որոնք իրենց հանդերձները շինել են տալիս այն դերձակին, որի անունը բարձր է հնչում։

Նրա կարգի մարդկանց մասին Արփիարյանը գրել է.

«Ցերեկները քլուբի ճաշարանը կը ճաշե և դուրսը իր խոսակցության մեջ կըսե «Այսօր քլուբը Զարիֆին ինձ ըսավ թե... «... գիշերները վիսթ կամ պեզիկ խաղալու կերթա՝ առջևեն սպասավորը բռնած լապտերը, մեջն երեք մոմ ...»[2]։

Ազրիալը թատրոն է գնում. «երկրորդ արարվածի կեսին» հանդիսատեսների ուշադրությունը «րոպե մը գերասաններեն իր վրա փոխադրել տալով»։

Նա «Դատապարտյալի» հերոս Քերոբ էֆենդու այն համոզմունքներն ունի, թե հարուստ երիտասարդը կարող է ամուսնանալ ցանկացած աղջկա հետ, թեկուզ այդ աղջիկը շատ էլ չկամենա կամ չսիրի նրան։

Մինչև Նավարյանի արտասահման անցնելու նկարագրությունը, պատմվածքը կուռ է, սյուժեն զարգանում է միանգամայն ռեալիստորեն։ Այստեղից է, որ

---

1 *Ընտիր երկեր, էջ 193։*

2 *Նույն տեղում, էջ 194։*

Արփիարյանը վրիպել է և՛ գեղարվեստական տեսակետից և՛ իդեական տեսակետից: Գեղարվեստական տեսակետից վրիպել է, որովհետև այն ուժեղ տպավորությունը, որ ստանում է ընթերցողը, աստիճանաբար թուլանում է, երբ հեղինակը երկու տարբեր դասակարգի ներկայացուցիչներին՝ Նավարյանին ու Արուսյակին հանդիպեցնում է Վենետիկում:

Բոլորովին չի պատճառաբանված այդ մերձեցումը, ամիրայական տոհմի շառավիղների տեղի տալը «սառը դասի» մի մարդու: Եվ զարմանալին այն է, որ Վենետիկում ոչ միայն Արուսյակն ու Նավարյանը իրենց մեջ մոխիրների տակ թաքնված կայծերի բորբոքումը տեսնելով ցանկանում են ամուսնանալ, լեզու են գտնում միմյանց հետ, այլև հորեղբայրը՝ Տիրան էֆենդին, անգամ մայրը, որը առաջ «հյուրերեն ոչ մեկուն, բացի եպիսկոպոսէն,— այնքան ընդառաջ կերթար սենյակ մտած ատեն, որքան Ազրիպ էֆենդիի, որուն մեկնած պահուն մինչև սենյակի դուռը անոր ընկերանալը իրեն պարտականություն կը համարեր»,[1]— այժմ, ստանալով Տիրան էֆենդու այն նամակը, որով խնդրվում էր արտոնել աղջկա ամուսնությունը Նավարյանի հետ, միանգամայն փոխում է իր կարծիքը: «Փողը կուշտ, կռնակը տաք» սկզբունքի վրա կանգնած այդ կինը հաճույքով համաձայնվում է, որ իր ազնվական ծագում ունեցող աղջիկը ամուսնանա Ղուկաս աղայի հոգեզավակի հետ:

Գաղափարական տեսակետից ևս հեղինակը վրիպել է այստեղ: Այն դժոխային միջավայրը, որից փա-

---

1 Ընտիր երկեր, էջ 180:

խել էր Նավարյանը, թվում էր թե չէր կարող այդպիսի հեշտ վերադարձի ճանապարհ ստեղծել:

Արփիարյանի ռեալիզմը վերջում բարեբախտաբար փրկել է նրան, նրա հերոսները այնուամենայնիվ չեն կարողանում վերադառնալ Պոլիս, ներկայանալ հասարակական կարծիքի առաջ, ապրել բամբասանքի ու ասեկոսեի միջավայրում:

* * *

«Հաճույքի համար» պատմվածքը Արփիարյանի ամենաինքնատիպ ստեղծագործություններից մեկն է:

Համիդյան ժամանակաշրջանի մասին խոսելիս մենք ցույց տվինք, թե արյունոտ սուլթանը ինչպիսի լրտեսական ցանցով էր պատել երկիրը: Լրտեսները թափանցում էին յուրաքանչյուր տուն ու գրասենյակ, թափանցում էին հասարակական բոլոր վայրերը: Քաղաքական այս ուժեղ ռեակցիան խոր կերպով ազդել էր նաև կենցաղի վրա. բամբասանքը, գրպարտությունը, լրտեսությունը, հատկապես բուրժուական ընտանիքում, սովորական երևույթներ էին: Ընտանիքներ էին դժբախտանում կամ բարձրացվում որևէ բախտախնդիր մարդու տարածած լուրերի հիման վրա:

Հասարակության մեջ առաջացել էր մի խավ, որի մասնագիտությունն էր թափանցել ուրիշների գաղտնիքների մեջ և հրապարակելով դրանք, վնասել այդ մարդկանց, կամ նրանց գաղտնիքների հրապարակման սպառնալիքով, շանտաժով փող կորզել ու ապրել:

«Հաճույքի համար» պատմվածքի հերոսը՝ Էդուարդը հասարակության այդ այլասերված և քայքայված խավի

ամենատիպիկ ներկայացուցիչն է։ Նա շատ լավ գիտի Բերայում կատարված իրադարձությունները։ Դրանք լսում է բոլորից շուտ և տարածում ամենուրեք։ Դրա համար նրան կոչում են «Էդուարդ տուտու»։ Նա ճանաչում է բնիկին ու եկվորին, գիտի բոլորի կենսագրությունը, գիտի թե նախորդ գիշեր ում տանը ինչ է պատահել, թղթախաղի մեջ ինչպիսի կռիվներ ու բախումներ են եղել և այս բոլորը 24 ժամվա ընթացքում հասցնում է ամեն տեղ։

Էդուարդը իր այդ մասնագիտությունը կատարելագործելու համար «ահագին քանակությամբ վեպ կարդացած է, որպեսզի կատարելագործէ սիրահարության մը գուշակելու մասնագիտական արվեստը»[1]։

Ամենափոքր կասկածի դեպքում զարթնում է նրա հետաքրքրությունը. «ռունգերը հոտ կառնեին»։

Ո՞վքեր են նրա զոհերը. մեծ մասամբ անմեղ մարդիկ։ Ահա պատմվածքում բերված դեպքը։ Գարեգին Սուրենյանը սիրում է այրի տիկին Զարուհի Ստեփանյանին։ Կինը մերժում է ամուսնանալ, պատճառաբանելով, որ մինչև աղջկան չմեծացնի, չամուսնացնի, ինքն էլ չի ամուսնանա։ Անցնում է 17 տարի։ Նրա աղջիկը մեծանում է, նշանվում, Սուրենյանը նորից կապեր է հաստատում նրանց ընտանիքի հետ։ Էդուարդի առաջին պարտականությունն է լինում նախ տարածել աղջկա նշանվելու լուրը, ապա լրտեսել Գարեգինի ու Զարուհու հանդիպումները, կորզել նրանց սիրային գաղտնիքը։ Ճիշտ երբ խեղճ աղջկա հարսանիքն է կատարվելու, ամբողջ Բերայով մեկ հայտնի է դառնում Զարուհու և Գա-

---

1 Ընտիր երկեր, էջ 241։

բեգինի գաղտնի սերը, դրան տրվում ապօրինի կենակցության բնույթ, անբարոյականության գունավորում:

Հետևանքը միանգամայն ողբերգական է, աղջկա նշանը ետ են ուղարկում՝ «մորը նայիր աղջիկը առ» սկզբունքով:

«Էդուարդի հաղթանակը փառավոր էր, այսպիսի հաճույք երբեք չէր զգացած»:

Իդեական ինչպիսի նպատակ է հետապնդել Արփիարյանը այդ պատմվածքը գրելիս: Արդյոք նրան հետաքրքրել է միայն բուրժուական ընտանիքում տիրող բամբասանքն ու լրտեսությո՞ւնը, թե նաև քաղաքական նպատակներ:

Մեր կարծիքով վերջինն է հիմնականը: Ամենից առաջ, այս պատմվածքը լույս է տեսել 1892 թվականին՝ այն օրերին, երբ Համիդի լրտեսների հետապնդմանը ենթակա էր նաև ինքը՝ Ա. Արփիարյանը: Մատնիչները նրա և ընկերների ամեն մի գրչի կամ բանավոր արտահայտությունը հասցնում էին ժանդարմական բաժին:

Հասարակության այդ տականքների դեմ պայքարելը ամենից դժվարն էր: Նրանք վայելում էին սուլթանական կառավարության պաշտպանությունը, մամուլում հնարավոր չէր նրանց դեմ գրելը: Արփիարյանը և նրա ընկերները այդպես մարդկանց դեմ գրում էին եզոպոսյան լեզվով:

Մենք արդեն տեսանք, որ Էդուարդը սովորական մի բամբասող չէ, նա օժտված է այն բոլոր տվյալներով, որոնցով օժտված էին Համիդի լրտեսները: Նրա ամբողջ առօրյան լրտեսությունն է: Բնիկն ու եկվորը «մատնե-րի վրա ճանաչող», բոլորի կենսագրությունը իր ուղեղի

մեջ լցրած այդ մարդը «առտուն գրասենյակը երթալու համար որչափ կարելի է կամաց-կամաց կը քալե, ամեն ծանոթ հանդիպողի հետ կանգնիլ, բան մը կրնա քադել: Յերեկները ժամանակ կը գտնե քանի մը գրասենյակ այցելելու... Իրիկունները իր կեդրոնավայրը՝ Պոլիշանի պարտեզն է, ուր քանի մը անգամ կը մտնե կելնե: Մեծ դյուրություններ կուտա տանը՝ խոհարարներուն և սպասավորին, ծառաներուն, սրճարանները երթալու: Գիշերը ճաշեն հետո, դուրս ելլելեն առաջ գիտե ճարտարօրեն խոսեցնել տալ զանոնք»:

Ինչպես տեսնում ենք, խոսքը մի սովորական շատախոսի, բամբասողի մասին չէ, այլ պրոֆեսիոնալ լրտեսի, որը գործում է ոչ թե «հաճույքի համար», ինչպես այդ վերնագիրը տվել է Արփիարյանը՝ շեղելու համար ցենզորի ուշադրությունը, այլ պարզապես նա ոստիկանության փորձառու գործակալն է:

Պատահական չպետք է համարել, որ Ա. Արփիարյանը իր այս հերոսին չի վերցրել կանանց միջավայրից, ինչպես դա ավելի տիպական կլիներ, այլ վերցրել է տղամարդկանց միջավայրից: Դրանով նա ոչ թե նպատակ է ունեցել մեր գրականության մեջ մի նորություն մտցնել, և ցույց տալ, որ տղամարդիկ էլ զբաղվում են կանացի բամբասանքով, այլ այն, որ այդ գործով, այսինքն՝ քաղաքական լրտեսությամբ գերազանցապես զբաղվում էին տղամարդիկ:

Արփիարյանը Էդուարդին բնութագրելիս գրում է հետևյալը.

«Էդուարդը կը նմաներ ոստիկանի մը, որ կը կարծե գտած ըլլալ փնտռված մեծ ոճրագործի մը հետքը, բայց

1 Ընտիր երկեր, էջ 244:

հետախուզությունները շատ գաղտնապահությամբ առաջ կը տանի, որպէս չխափանելու և օր մը երբ ոչ ոք կսպասեր, ձեռքը օձիկին վրա դնելու համար»:

«Հաճույքի համար» պատմվածքը անշուշտ ունի թերություններ, թույլ, աղոտ են գծված Գարեգին Սուրենյանը և Զարուհի Սանփանյանը, նրանք չեն տիպականացված, սակայն դրան հակառակ Էդուարդը գծված է խոր ռեալիզմով:

«Կյանքի պատկերներ» ընդհանուր վերնագրի տակ Ա. Արփիարյանը 80-ական թվականներին հրատարակել է երկու նովել ևս: 1886 թ. «Արևելք» օրաթերթում լույս է տեսնում նրա «Խնդամոլիկ աղջիկը» պատմվածքը, որը նույն թվականին արտատպվում է «Մշակում»: 1890 թ. «Մասիսում» լույս է տեսնում «Հարսանքի կոչումը»:

Սրանց հասարակական արժեքը անհամեմատ մեծ է այն տեսակետից, որ առաջին անգամ արևմտահայ իրականության մեջ այս պատմվածքներում է, որ գրականության նյութ էին դառնում քաղաքային բանվորները, առաջին անգամ սրանց մեջ էր, որ երկու հակամարտ դասակարգերի շահերը արտահայտող մարդիկ հանդես էին գալիս միմյանց դեմ:

Այս երկու պատմվածքները հեղինակի կողմից հիմնովին վերամշակվելով 1906—1907 թթ. լույս տեսան տարբեր անուններով, առաջինը «Ոսկի ապարանջան», երկրորդը՝ «Մինչև երբ»:

Նկատի ունենալով, որ մեր աշխատության վերջին գլուխներից մեկը նվիրված է այդ երկու պատմվածքների վերամշակման շարժառիթներին և նրանց վերլուծմանը, այստեղ կանգ չենք առնում դրանց վրա:

ԳԼՈՒԽ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ԱՐՓԻԱՐՅԱՆԸ ՏԱՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1890 թվականին Մխիթարյան միաբանությունը տոնում է Ղ. Ալիշանի հոբելյանը։

«Արևելքի» խմբագրությունը Արփիարյանին ուղարկում է Վենետիկ՝ հոբելյանին մասնակցելու։

Այդ օրերին է, որ Կ. Պոլսում կազմակերպվում է հնչակյանների 1890 թվականի արկածախնդրական ցույցը, որին մասնակցում է Վենետիկից նոր վերադարձած Արփիարյանը, առանց դեռևս այդ պարտիայի անդամը լինելու։ Ցույցից հետո նա մեկնում է Կովկաս։ Վերադարձին ձերբակալվում է ու բանտարկվում։

Նա մեղադրվել է հետևյալ հարցերում՝ մասնակցություն կազմակերպված ցույցին, հանցավոր կապ Կովկասի, մասնավորապես «Մշակի» հետ։

Մինչև 1891 թվականի հունվարի 6-ը բանտում մնալուց հետո Արփիարյանը՝ 75 քաղաքական այլ բանտարկյալների հետ ազատվում է, այն պայմանով, որ հրապարակով իր մեղայականն տա և խոսք տա այլևս չզբաղվել քաղաքական գործերով։ Նա կատարում է այդ

կարգադրությունը և 1891 թվականի հունվարի 12-ին «Արևելքում» հրապարակում է իր «մեղայականը», որը ըստ էության մի պամֆլետ է սուլթանի հասցեին։

Հրապարակելով այդ «մեղայականը», Արփիարյանի նպատակն է եղել դարձյալ վերականգնել իր հրապարակախոսական իրավունքները և հրատարակել մի նոր օրաթերթ։ Եվ արդարև, որոշ նախապատրաստական աշխատանքից հետո, 1891 թվականի հուլիս ամսին նրա խմբագրությամբ լույս է տեսնում «Հայրենիք» օրաթերթը քաղաքական խստագույն պայմաններում։

Այսպիսի մի ժամանակաշրջանում լույս տեսնող մի թերթ, հասկանալի է, որ չէր կարող իր ծրագրերը հրապարակել ազատորեն։ Թերթի առաջին համարի առաջնորդողը պարունակում է հետևյալ միտքը, որը որոշ գաղափար կարող է տալ նրա նպատակների մասին։

«Եթե պիտի ըլլա ապարանքին թերթը, պիտի ըլլա **նամանավանդ** *խրճիթին թերթը, եթե պիտի ըլլա զարգացյալին թերթը, պիտի ըլլա* **նամանավանդ** *մտքով հետամնացին թերթը»*[1]. *(ընդգծումը մերն է։— Գ. Ստ.)։*

«Հայրենիք» օրաթերթը 80—90-ական թվականներին հրատարակվող մյուս թերթերից տարբերվում էր հենց դրանով։ Նա հատուկ առաջնորդողներ էր նվիրում գավառի հայ ժողովրդի լուսավորությանը, թղթակիցների բավականաչափ լայն ցանց էր ստեղծել գավառում, որոնք օրը օրին թերթի էջերում լուսաբանում էին իրենց հուզող հարցերը, որքան այդ թույլ էր տալիս ցենզուրական խստությունը։

Արփիարյանը այն միտքն էր զարգացնում շարու-

---

1 «Հայրենիք», 1891, № 1։

նակ, թե բուն հայ ժողովուրդը գավառի ժողովուրդն է և ոչ Պոլսի հայ բնակչությունը։

«Տակավին Պոլսո մեջ կա ստվար մեծամասնություն մը հայոց, որ կկարծե թե Պոլսո սակավաթիվ հայ գաղթականությունն է հայ ազգը, թե գրագետները, խմբագիրները միայն այդ պոլսեցիներուն համար պարտավոր են խորհիլ ու մտածել, ու պոլսեցիներու հաճո ըլլալու տեղը պետք է վեր դասեն ամեն գաղափարե, ամեն զգացումե»։

Անշուշտ, «պոլսեցի» ասելով Արփիարյանը ակնարկում էր Պոլսի հարուստ դասին, «ազնվաշուքներին», որոնց շողոքորթում էին լիբերալ թերթերի խմբագիրները։

Սակայն, հատկապես քաղաքական այդ ծանր պայմաններում դժվար էր լայն ճակատով պայքար մղել հենց այն մարդկանց դեմ, որոնցից շատ-շատերը կապված էին Բ. Դռան հետ, մոտ էին ցենզորական վարչությանը։

Հազիվ մի քանի համար հրատարակած, հակառակորդներն անցնում են աշխատանքի. լրտեսագրերը թռչում են դեպի Յըլդըզ։

«Հայրենիքը» փակվում է Տպագրական տեսչության հրամանով։

Հնարավորություն չունենալով Կ. Պոլսում ընթերցողներին հայտնել թերթի փակման շարժառիթները, Արփիարյանը «Մշակում» տպագրած իր մի թղթակցության մեջ իմացնում է, որ իր թերթը փակվել է «հայ մեծատուններու միջնորդությամբ»։

1891 թվականի սեպտեմբերի 1-ից թույլատրվում է վերահրատարակել թերթը։

Արփիարյանը հենց առաջին համարներից վեր-

սկսում է պայքարը սուլթանական կառավարության կամակատար հայ էֆենդիների և հոգևորականների դեմ, որոնց միջնորդությամբ, այս անգամ էլ «Նուրյանի բարեխոսությամբ» դարձյալ դադարեցվում է թերթը մեկ ամսով, 1891 թ. նոյեմբերի 29-ից մինչև դեկտեմբերի 28-ը:

Երկրորդ վերաբացումից հետո հազիվ երեք ամիս էր անցել, երբ նա գրում է մի առաջնորդող, ուղղված պատրիարքարանի դեմ: Այդ առաջնորդողի վերնագիրն էր «Անտեր գիակը», որտեղ ասվում էր.

«Երկուշաբթի օր, ի Բերա, ս. Երրորդության եկեղեցիին քովերը մեռել մը կար. եկեղեցին կը մերժեր դագաղ մը, քահանա մը, աղոթք մը, ափ մը հող տալ այդ գիակին: Մեռնողը չզղջացող մեղավո՞ր մըն էր: Եկեղեցիին օրենքնե՞րը ոտնակոխ ըրած էր, եկեղեցիեն մերժվա՞ծ մըն էր, նզովյա՞լ մըն էր: Ո՛չ, ասոնցմե ավելի գեշ բան մըն էր — աղքատ մըն էր. ու աղքատներուն ալ է՛ն գեշ տեսակնեն էր, ղարիբ մըն էր»[1]:

Առաջնորդողի վերջում կոչ էր արվում բոյկոտի ենթարկել եկեղեցին, ոչ մի կոպեկ չտալ եկեղեցու գանձանակին, քանի որ նա այդպես էր վարվում պանդուխտների, աղքատների հետ, որոնք Արփիարյանի հաշվումներով իրենց չնչին գումարներից տարեկան 20.000 ոսկի էին տալիս հայ եկեղեցիներին: Առաջնորդողը պահանջում էր այդ գումարի մի մասը գցել «դրսի գանձանակի» մեջ, այսինքն՝ բաց անել աղքատներին, անգործներին օգնող մի սնդուկ, այնտեղ հավաքել բանվորների կոպեկները, իրենց վերահսկողությամբ:

---

1 «Հայրենիք», 1892, № 169:

Այս առաջնորդողի հաջորդ օրը 1892 թվականի մարտի 12-ին Տպագրական տեսչության մի նոր կարգադրությամբ անորոշ ժամանակով դարձյալ փակվում է «Հայրենիքը»: Փակումը այս անգամ տևում է շատ երկար՝ 115 օր:

Տպագրական տեսչությունը թույլատրելով թերթի հրատարակումը, անում է մի վերջին նախազգուշացում, թե՝ եթե թերթը նորից որևէ վնասակար բան գրի, վերջնականապես փակվելու է:

«Երէ նորէն ըմբոստանաք,— ասվել է,— ա՛լ աս անգամ ջնջում է ու ոչ թէ դադարում»: *Թերթը այդպիսի հրահանգ ստանալուց հետո դառնում է ավելի զգույշ և վեց ամիս շարունակում իր գոյությունը: Չնայած այդ ժամանակամիջոցում էլ պատահում են ահարեկող դեպքեր, մարդիկ Արփիարյանի գրած ամեն մի հոդվածի մեջ ակնարկներ են որոնում Ռուսաստանի մասին*[1]:

---

1. *«Ու ատեն մը,— պատմում է Արփիարյանը իր հիշողություններում,— ինքնամփոփ մնացած, ոտա մեռակ եղած կը մնայինք, ուստի և մեզի ալ հանգիստ կը թողուին... ամբողջ 6 ամիս առանց դադարումի ապրեցանք: Օ՜հ, երջանկություններ աններևակայելի էր և կրնար երկար ըլլալ: Շաբաթ իրիկուն մըն է. մեր հիշողության մեջ անջինջ մնացած իրիկուններեն մին, երբ գրաընկերը ներս մտավ կամարակապ սենյակեն: Հասկցանք, թե աղետ մը կպատմե մեզի: Անմիջապես շուրջը բոլորեցանք: — Քիչ մը ջո՞ւրը,— մրթմրթաց մառած ձայնով, քանի մը կա՞թիլ առավ, համբեցինք՝ ով մենե դուրս կար: Ել դռները փակելով ջանացինք իմանալ, թե ինչ կա, ինչ է պատահել:*

— Սո՜ւս,— ըսավ խեղճը մարմրած ձայնով. գացի՛նք, լմընցա՜նք, թերթը ջնջվա՜ծ, եւ Ղարս Թարապլուս, գուք Աչյաձ»

Մարդը պահանջում է թերթի 180-րդ համարը, որը հրատարակված էր մի քանի ամիս առաջ: Ուշադրությամբ կարդում է Արփիարյանի «Օրվան կյանքը» հոդվածը, ինչ-որ բան փնտրում

Անկախ գրաքննության կողմից եղած այս վերաբերմունքին, Տպագրական տեսչությունը լավ աչքով չէր դիտում հատկապես Արփիարյանի ներկայությունը խմբագրությունում՝ նրա անվան ամենօրյա հիշատակությունը թերթի ճակատին, որպես «խմբագրապետ»։

1893 թվականի հուլիս ամսին թերթի ճակատից ջնջվում է «Խմբագրապետ Արփիար Արփիարյան» նախադասությունը։ Կ. Պոլսում, մանավանդ գավառում, շատերի կողմից աննկատելի է անցնում այդ բանը. ոչ ոք, բացի խմբագրության մոտ կանգնած մարդկանցից, չի իմանում, թե ինչի արդյունք էր նոր փոփոխությունը. միայն Թիֆլիսում «Մշակը» հրատարակում է մի քանի տող, որն ամեն ինչ պարզում է և վկայում, թե կատարված ներքին, խմբագրական բնույթի մի փոփոխություն չէր, այլ «Կ. Պոլսի թյուրքաց Տպագրական տեսչության հրամանով «Հայրենիք» լրագրի ճակատից ջնջված է Պ. Արփիար Արփիարյանի անունը, որ վարում էր այդ լրագրի խմբագրապետի պաշտոնը»։

նրա մեջ։ Արփիարյանը սրտատրոփ հետևում է։ Գրաքննիչը մատը դնելով մի հատվածի վրա, ցույց է տալիս և ասում, թե այդ հատվածն է կործանելու իրենց, այդ հատվածն է Ղարա Թարաբլուս աքսորելու իրենց։ Այնտեղ խոսվում էր 1865 թվականի ժանտախտի մասին, հիշեցվում էր թե այդ ժամանակ Հովհաննես եպիսկոպոսը եկեղեցում ասել է, «Օրհնյալ ժողովուրդ, չնիկ ատաղն է, կանցնի, խոլերան ալ կը վերանա»։ Արփիարյանը այս դեպքը պատմելուց հետո ավելացրել էր.— «Ճնիկ ատաղը անցավ, բայց խոլերան մնաց, մինչև որ հարավին հրդեհ մը ծագեցավ, ճարակեցավ, հարավային սատակաշունչ հովին մղված և քշեց տարավ խոլերան»։

Այս տողերով Արփիարյանը ակնարկել էր այդ օրերում Սամաթիա թաղամասում տեղի ունեցած մի հրդեհ։

Այս անմեղ հատվածը, Արփիարյանի հակառակորդները կատա-

ամենատիպիկ ներկայացուցիչն է։ Նա շատ լավ գիտի Բերայում կատարված իրադարձությունները։ Դրանք լսում է բոլորից շուտ և տարածում ամենուրեք։ Դրա համար նրան կոչում են «Եգուարդ տուտու»։ Նա ճանաչում է ընկերին ու եկվորին, գիտի բոլորի կենսագրությունը, գիտի թե նախորդ գիշեր ում տանը ինչ է պատահել, թղթախաղի մեջ ինչպիսի կռիվներ ու բախումներ են եղել և այս բոլորը 24 ժամվա ընթացքում հասցնում է ամեն տեղ։

Եգուարդը իր այդ մասնագիտությունը կատարելագործելու համար «ահագին քանակությամբ վեպ կարդացած է, որպեսզի կատարելագործե սիրահարություն մը գուշակելու մասնագիտական արվեստը»[1]։

Ամենափոքր կասկածի դեպքում զարթնում է նրա հետաքրքրությունը. «ունգերը հաս կաննեին»։

Ո՞վքեր են նրա զոհերը. մեծ մասամբ անմեղ մարդիկ։ Ահա պատմվածքում բերված դեպքը։ Գարեգին Սուրենյանը սիրում է այրի տիկին Զարուհի Ստեփանյանին։ Կինը մերժում է ամուսնանալ, պատճառաբանելով, որ մինչև աղջկան չմեծացնի, չամուսնացնի, ինքն էլ չի ամուսնանա։ Անցնում է 17 տարի։ Նրա աղջիկը մեծանում է, նշանվում, Սուրենյանը նորից կապեր է հաստատում նրանց ընտանիքի հետ։ Եգուարդի առաջին պարտականությունն է լինում նախ տարածել աղջկա նշանվելու լուրը, ապա լրտեսել Գարեգինի ու Զարուհու հանդիպումները, կորզել նրանց սիրային գաղտնիքը։ Դեռ երբ խեղճ աղջկա հարսանիքն է կատարվելու, ամբողջ Բերայով մեկ հայտնի է դառնում Զարուհու և Գա-

[1] Ընտիր երկեր, էջ 211։

Այստեղ է, որ Տ. Կամսարականը հրատարակում է «Հայ գրականության ձգտումը» ընդարձակ հոդվածաշարքը, որտեղ հետևելով Արփիարյանին, այն միտքն էր զարգացվում, որ արևմտահայ գրականության վրա բացասական ազդեցություն է թողել ֆրանսիական ռոմանտիկ գրականությունը, «պետք է հավատալ, որ ռոմանտիկ դպրոցը մոլորեցուց մեր գրականության բնական

հարկադրված է լինում Վենետիկում, Վիեննայում, Պոլսում տպագրված բոլոր բառարաններն ու օրացույցները շալակելով տանել ժողով, և ապացուցել «Շնիկ աստղ» արտահայտության դարավոր անմեղ գործածությունը, Բենջեդ բեյը և Հըվսի բեյը, ոչ այնքան համոզվում են բառարանների ճշմարտախոսությանը, որքան վախենալով հարցը ավելի արծարծելով սուլթանին հասցնելու վտանգից, մի կերպ փակում են։

Հաջորդ օրը հայ գրաքննիչը նորից է գալիս «Հայրենիքի» խմբագրատունը և մի քիչ ավելի հանգիստ, ուրախ հայտնում է.

— Մեյ մըն ալ, սա ձեզի խրատ ըլլա, աստղ, աստղաբաշխություն, աստղաբաշխ նըմանից բառերը բերաննիդ պիտի չառնեք, գրիչնուդ ներքև պիտի չիջան։

— Էհ, Հակոբ էֆենդի, ինչ պիտի դնենք աստղաբաշխության տեղը.

— Մենք մեր տղայությանը նամարաբանություն կըսեինք, դուք ալ անանկ ըսեք»։

Դրանից հետո է, որ Պոլսի թերթերը հարկադրված այլևս «աստղ» բառի փոխարեն գործածում են «երկնային լուսատու», «աստղիկի» փոխարեն «վենյուս» և այլն։

Առանց այս ներխմբագրական մանրամասնությունները իմանալու դժվար է պատկերացնել, թե ինչ պատճառով հանկարծ Կ. Պոլսի բոլոր թերթերից մի անգամից վերացան աստղ բառի հետ կապված բոլոր արտահայտությունները և մինչև 1908 թ. այլևս չգործածվեց աստղ բառը հայերեն թերթերում։

ընթացքը», և թե «արդեն գրականություն մը, որ իր ուժը, իր ներշնչումը տոհմային կենսատու ոգվույն մեջ չփնտռեր, չապրիր»[1]:

Արփիարյանին հաջողվում է «Մասիսի» խափանումից հետո ցրված գրական ուժերին համախմբել նոր թերթի շուրջը և շարունակել պայքարը՝ հանուն քննադատական ռեալիզմի զարգացման:

«Հայրենիքի» հենց առաջին համարներից շարունակում է աշխատակցել ժամանակի գրական սերնդի ամենախոստումնալից դեմքը՝ Գր. Զոհրապը: Նա այնտեղ հրատարակում է բազմաթիվ հոդվածներ գրականության, արվեստի մասին: Զոհրապը այդ թերթում սկսում է հրատարակել «Նարդիկ» վիպակը, որն ընդհատվում է, ամենայն հավանականությամբ դարձյալ «ազնվաշուքների» «բարեխոսությամբ»: Բացի «Նարդիկից», նա հրատարակում է իր մի շարք երկերը՝ «Քոքինակի», «Ծեյրան» և այլն, ինչպես և «Ծանոթ դեմքեր» դիմանկարներից մի քանիսը:

Հակառակ քաղաքական աննպաստ պայմաններին, Ա. Արփիարյանը շարունակում է պրոպագանդել ռուսական գրականությունը: «Հայրենիքի» էջերում նա տպում է թարգմանություններ Պուշկինից, Լերմոնտովից, այդ թվում «Մծիրին»: Հատուկ հոդված է գրում Գոնչարովի մասին, չմոռանալով հիշատակել անգամ Բելինսկու անունը: Արփիարյանը իր ընթերցողներին ծանոթացնում է ռուսական գյուղագրության, Ուսպենսկու երկերի հետ:

---

1 «Հայրենիք», 1891, № 13:

* * *

Սուլթանը 1895 թվականի կեսերից սկսում է նոր կոտորածներ ոչ միայն մայրաքաղաքում, այլև բոլոր գավառներում։ Չնայած սպանություններին, թալանին ու ճնշումին Համիդի գործակալները գավառներում կազմակերպում են գոհունակության հեռագրեր, որոնց բովանդակությունը հետևյալն էր. «Շնորհիվ օգոստափառ կայսեր՝ անդորրությունը կատարյալ է»։

Սկզբում այս հեռագրերը հրատարակվում են մի այն թյուրքական, հետագայում Բ. Դռան ճնշումով տպագրվում են նաև հայկական և հունական մամուլի որոշ օրգաններում։ Իսկ ավելի ուշ՝ հատուկ խիստ հրամանով տպագրվում են բոլոր թերթերում։

Ոստիկանական նախարար Նազըմը, որ դաժանորեն հետևում էր հայկական մամուլի ամեն մի քայլին, հատկապես «Հայրենիքի» խմբագիրների գործունեությանը, կանչելով նրանց՝ պարտադրում է հրատարակել պաշտոնական բոլոր նյութերը։

Կ. Պոլսի մամուլի այդ ամենատագնապալի օրերին է աՀա, որ դաշնակցական արկածախնդիրները գրավոր հրահանգներ են ուղարկում Կ. Պոլսի հայ թերթերին, մահվան սպառնալիքով պարտադրելով նրանց կենսագործումը։ Արփիարյանը չի ենթարկվում բացարձակ արկածախնդրական այդ կարգադրություններին։ Դաշնակցականները, տեսնելով, որ Արփիարյանը արհամարհում է իրենց հրահանգը, նորից սպառնագրեր են ուղարկում՝ արդեն ոչ թե «Հայրենիքի» խմբագրությանը, այլ նրա խմբագիրներին՝ անհատապես Արփիարյանին, Ե. Օտյանին և մյուսներին։

Արփիարյանը դարձյալ չի ենթարկվում։

1895 թվականի դեկտեմբերի 25-ին, երկուշաբթի, երեկոյան ժամը 8-ին, նա դուրս է գալիս խմբագրատնից և ոտքով ուղղվում է իր բնակարանը։ Մի անծանոթ մարդ, որ ստվերի նման հետևում է նրան, մի ակնթարթում դաշույնը իջեցնում է նրա կրծքին։ Արփիարյանը ետ դառնալով փորձում է հովանոցով պաշտպանել իրեն, բայց չի կարողանում, դաշույնի երեք հարվածից գլորվում է։ Տեռորիստը առանց ձայն հանելու անհայտանում է մթության մեջ։ Արփիարյանը զսպելով իր մարմնական ցավերը, արյունաթաթախ ընկնում է տուն։ Դաշնակների կողմից կազմակերպված այս արյունալի տեռորը բուռն զայրույթ է առաջացնում արևմտահայ առաջավոր գրողների շարքերում։

Սուլթանական կառավարության հալածանքը մտավորականության նկատմամբ ուժեղանում է 1896 թվականի սկզբներից։ Հրապարակի վրա չի մնում ոչ մի գրող կամ հրապարակախոս։ Մի մասը թաքնվում է, մի մասը ձերբակալվում, ավելի մեծ մասը փախչում արտասահման։ 1896 թվականի մարտ ամսին ֆրանսիական մի նավով արտասահման է անցնում նաև Ա. Արփիարյանը։ Արփիարից հետո օգոստոս ամսին փախչում է Երվանդ Օտյանը։ Նրան հետևում են Տիգրան Կամսարականը, Լ. Բաշալյանը և ուրիշներ։

* * *

«Հայրենիքի» խմբագրական կազմը մինչև 1895 թվականի սկիզբը հիմնականում մնացել էր հայ նացիոնալիստական պարտիաներից դուրս, թեև նրանք հա-

մակրական որոշ վերաբերմունք ունեցել են դեպի հնչակյան պարտիան. Արփիարյանը, որ դեռևս 1890 թվականին խանդավառվել էր հնչակյանների գործունեությամբ և մասնակցել նրանց կազմակերպած քաղաքական ցույցին, բանտից դուրս գալուց հետո զգուշանում է հնչակյաններից, սակայն 1895 թվականից նա նորից է խանդավառվում այդ պարտիայով և դառնում նրա գործոն անդամներից մեկը: Ուստի, նա արտասահման է անցնում արդեն որպես հնչակյան:

Ա. Արփիարյանի գործունեության արտասահմանյան շրջանի առաջին տարիները բնութագրական են գաղափարական լուրջ որոնումներով ու սայթաքումներով: Ճիշտ է, նա Լոնդոնում մոտիկից ուսումնասիրելով հընչակյան պարտիայի գործնական աշխատանքը, հիասթափվում է այդ պարտիայից, որոշում հեռանալ նրանից, սակայն, չկարողանալով ճիշտ կողմնորոշում ունենալ, նա փորձում է հնչակյաններին հակադրել այսպես կոչված վերակազմյալ հնչակյաններին, որոնց ակտիվ ներկայացուցիչներից մեկն է դառնում ինքը:

Նրա այդ տարիներին գրած բազմաթիվ հոդվածները վկայում են, որ Արփիարյանը, հիասթափվելով հնչակյաններից, մերժելով հանդերձ հատկապես նրանց տեռորիստական գործունեությունը, չի կարողացել որևէ ուղի գտնել, և այնքան է խճճվել իր գաղափարական հակասությունների մեջ, որ անգամ ձգտել է դասակարգերի հաշտեցման, ինչպես այդ կտեսնենք «Կարմիր ժամուց» վիպակում:

1897 թվականին Արփիարյանը Լոնդոնից մեկնում է Եգիպտոս, որտեղ ապրում էր իր գրչի ընկերներից Ե. Օտյանը: Նրանք միաժամանակ ապրում են միասին:

Արփիարյանը և Օտյանը, որոնք Կ. Պոլսի արիստոկրատական շրջանների կյանքը մոտիկից ուսումնասիրելով, այն պատկերել էին «Արևելքում», «Մասիսում» և «Հայրենիքում», այժմ առատ նյութ են գտնում եգիպտահայ գաղութի կյանքում։ Այդ կյանքը և բազմազան էր, և ուներ իր ուրույն, տիպական կողմերը, որ բացակայում էր Կ. Պոլսում կամ Լոնդոնում։

Եգիպտոսում Արփիարյանը և Օտյանը ականատես են լինում արտաքնապես զվարճալի, բայց ըստ էության ողբալի մի երևույթի։ Որպես ազգի փրկիչներ, «հերոսներ» հանդես են գալիս մարդիկ, որոնք ոչ մի առնչություն չէին ունեցել քաղաքական խնդիրների հետ, Թյուրքիայում զբաղվել էին մանր ու խոշոր առևտրով, վաճառականական գործարքներով։ Այս մարդիկ, ընկնելով անծանոթ մի գաղութ, որտեղ ոչ ոք իրենց չէր ճանաչում, ներկայանում էին որպես երկար տարիներ թյուրք բռնապետության դեմ զինված պայքար մղած, իրենց կյանքը սարերում անցկացրած, կամ բանտերում շղթայակապ տառապած հերոսներ, պատմում էին ֆանտաստիկ արկածներ, հուզում եգիպտահայ գաղութը, արտասուքի կաթիլներ խլում շատ զգայուն կանանց ու օրիորդների աչքերից, տնե-տուն ման էին գալիս, վայելում նյութական օժանդակություններ։ Բախտախնդրությունը զբաղմունք դարձնող այդպիսի «հերոսներ» հանդես էին գալիս ամեն օր։

Արփիարյանը և Օտյանը տեսնում էին, որ «հեղափոխության այդ մակաբույծների» առաջացմանը նպաստում են հայ նացիոնալիստական պարտիաները, որոնք անգո հերոսներ ճարելով, ցանկանում են հասարակական կարծիք ստեղծել իրենց պարտիաների համար։ Հաճախ

միմյանց ձեռքից խլում էին այդ հերոսներին։ Հավատալով հանդերձ, որ նրանք սովորական շառլատաններ են, փառաբանում էին նրանց, ներկայացնում որպես ժողովրդի համար տառապած, բազմաթիվ սխրագործություններ կատարած հերոսներ։

«— Ի՞նչ ընեի,— պատասխանել էր նման մի «հերոս» կեղծ Արխանյանը,— իմ անունս ալ Գալուստ է. ուրիշ անո՞ւն մը տայի, մեյ մըն ալ տեսա, որ եսևեն՝ Արխանյան մըն ալ թախմիշ ըրեր են։ Չհասկցա՝ ինչո՞ւ համար. «պարոն Արխանյանց վեր, պարոն Արխանյանց վար» ըսելով ինձի ձեռքե ձեռք կը քաշեն։ Սենյակ տվին, կերակուր կուտան, պատիվ կընեն «մեր ընկերը» կանվանեն ինծի, երբ ուրիշներուն կը ներկայացնեն։ Չեմ գիտեր ինչ է գործերնին, որ ինծի ալ ընկեր կընեն։ Արհեստի մը տեր եմ եղեր, չգիտեի։ Մարդ մը եկավ, անունը տվավ, չը ճանչցա. արդեն մեկը չեմ ճանչնար. որ դուն հերոս, որ մենք հերոս, ըսելով ձեռք երկնցուց. լսած արհեստս չէ— ինչ է նե, կերևա թե աստված վրաս դթաց ու ալ նեղություններուս վերջ պիտի տա, կըսեի ինքնիրենս, երբ դուն վրա հասար։ Ի՞նչ ընեմ, ես ինչ ըրի»[1]։

Այս բոլոր տպավորությունները նրանք գրի են առնում և լույս ընծայում Լոնդոնում 1898 թվականից հրատարակվող «Նոր կյանք» պարբերականում։

Այդ պարբերականի էջերում լույս են տեսնում Ե. Օտյանի մի շարք կարևոր երկերը՝ «Տասներկու տարի Պոլսեն դուրս» մեմուարներից հատվածներ («Արյունոտ հիշատակներ» վերնագրով), «Հեղափոխության մակաբույծները», «Պրոպագանդիստը» և այլն, որոնց մեծ

[1] «Նոր կյանք», 1898, № 14։

մասի մեջ ներկայվում է դաշնակների և հնչակների ավանտյուրիստական գործունեությունը։

Արփիարյանը «Նոր կյանքում» լույս է ընծայում մի քանի ընդարձակ հոդվածներ՝ «Կ. Պոլսի պահպանողական վարչությունները», «Հրոսակի մը հիշատակներեն», «Հայաստան և Կ. Պոլիս», «Պատրիարքական ընտրություն մը» և այլն, որոնք իրենց վրա կրելով հանդերձ Արփիարյանի այդ տարիների գաղափարական տատանումների կնիքը, պարունակում են փաստական հարուստ նյութ XIX դարի երկրորդ կեսի հայ իրականության մասին։

«Կ. Պոլսի պահպանողական վարչությունները» վերնագիրը կրող հոդվածաշարքը ամփոփ, սակայն փաստերով հարուստ շարադրանքն է այն բոլոր դեպքերի, որոնք կատարվել են Կ. Պոլսում Ներսես Վարժապետյանի մահից հետո, մի ամբողջ տասնամյակ, մինչև 1895 թվականը՝ մինչև Իզմիրլյանի պատրիարք դառնալը, պահպանողական վարչության օրվերը։

Այս հանդեսի էջերում լույս տեսան Արփիարյանի «Օրագրողի վերհիշումները» ու «Գրական դեմքեր» պորտրեները Գ. Օտյանի, Ե. Աղաթոնի և ուրիշների մասին։

«Օրագրողի վերհիշումները» հետաքրքիր տեղեկություններ են տալիս համիդյան գրաքննության մասին, պոլսահայ մամուլի վիճակի մասին։

Այստեղ լույս են տեսնում Արփիարյանի «Ժամանց» վերնագրով երգիծական գործերը՝ մեծ մասամբ ուղղված դաշնակ-հնչակ բախտախնդիրների դեմ։ Սակայն Արփիարյանը, այդ թվերին գտնվելով գաղափարական որոնումների մեջ, չկարողանալով ազատագրվել հնչակյան գաղափարախոսությունից, երգիծական իր այդ երկերում

շատ ավելի մղում էր ներպարտիական բանավեճ, քան կատարում էր գեղարվեստական ընդհանրացումներ, ինչպես այդ կատարում էր նացիոնալիստական պարտիաներից հեռու կանգնած Ե. Օտյանը «Հեղափոխության մակաբույծների» և «Պրոպագանդիստի» մեջ, որոնք հայ երգիծական գրականության մեջ միշտ էլ կարող են ունենալ իրենց արժանի տեղը:

Բացառություն են կազմում Արփիարյանի այդ շարքից «Օրհնյալ գերդաստանը» և «Ազգիս բարերարները», որոնք անհամեմատ մշակված գործեր են:

Արփիարյանը Լոնդոնում զբաղվում է գրականությամբ:

«Արփիարյան կատարյալ դերվիշի կյանք մը կվարեր Լոնդոնի մեջ,— գրում է իր հուշերում Ե. Օտյանը, որը 1898 թ. այցելել էր իր ընկերոջը,— գիշերները իր սենյակը կառանձնանար հոգնած գրելու համար, առտուն կանուխ կելլեր հանրային ընթերցարանները վազելու, ուր ցուցադրված են օրվան թերթերը գրակալներու վրա, զոր հարկ է կարդալ ոտքի վրա կեցած: Արփիար այսպես հաճախ 4—5 ժամ կկենար թերթ կարդալու համար: ...Ընթերցումեն ետքը կերթար ճաշելու, եթե նյութական միջոցները ներեին, իսկ հակառակ պարագային, թեյով մը կգոհանար»[1]:

Լոնդոնում Արփիարյանի նյութական վիճակը օրեցօր վատանում է: Օտյանը նրան հրավիրում է Փարիզ պանդուխտի ծանր կյանքը միասին անցկացնելու:

1901 թվականին Արփիարյանը պաշտոնապես հրաժարվում է հնչակյան պարտիայից ու մեկնում Փարիզ:

«Արփիար, ալ բոլորովին քաշված հնչակյան կու-

[1] Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս, էջ 202:

սակցութենեն,— գրում է Օտյանը,— 1901 թ. վերջերը եկավ Փարիզ՝ նյութական շատ անցուկ վիճակի մը մեջ:

Իր լայնեզր, աղտոտ գլխարկովն ու մորուքովը, վառնգավոր անիշխանականի այնպիսի կերպարանք մը ուներ, որ մեկ քանի պանդոկապետներ մերժեցին սենյակ տալ իրեն և ի վերջո ստիպվեցա երաշխավոր մը գտնել, որպեսզի կարելի ըլլար զինքը տեղ մը տեղավորել»[1]:

Այստեղ Փարիզում ապրուստի միջոցներից, բնակարանից ու եկամտի որևէ աղբյուրից զուրկ՝ երկու գրողները ապրում են թշվառ վիճակում:

Օտյանի տրամադրության տակ եղել է մի կահավորված բնակարան: Նրա ծանոթներից մեկը, որ ապրել էր այդ բնակարանում ու կահավորել այն, չկարողանալով վճարել բնակարանի վարձը, ամեն ինչ թողնում հեռանում է, որպեսզի փող ճարի ու վերադառնա: Տան տերը հարկադրված գրավ է դնում բոլոր կարասիները: Արփիարյանը տեղափոխվում է այդ սենյակը: Իսկույն գրավի տակ է դրվում նրա հնամաշ վերմակը: Վրա է հասնում դաժան ձմեռը, ապրուստի ոչ մի հեռանկար: Երկու գրողները հարկադրված գաղտնի կերպով դուրս են հանում սենյակի կարասիները, ծախում և դրանով ապրում:

«Ամեն առատու տունեն դուրս կելլեինք վերարկունիս ուռեցուցած և կվերադառնայինք բոլորովին թեթևցած:

Սեղանի սպաս, գիրք, կերակուրի անոթներ, փոքրիկ հայելիներ, պնակ և այլն կամաց կամաց դուրս կրեցինք, մինչև որ օր մը դռնապանը նշմարեց Արփիարյանի վերարկուի տակեն կախված կասկարա մը: Հարկ եղավ

---

1 Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս, էջ 264:

խնդիրը անուշ տեղը կապել, դռնապանին մեծկակ հայելի մը նվիրելով, իբրև կաշառ»[1]:

Նրանք հարկադրված են լինում սեղան, աթոռ և այլ իրեր կտրել և տաքանալ, ձմեռը անցկացնելու համար:

Չնայած տնտեսական այս ծանր պայմաններին՝ Արփիարյանը չի կորցնում իր հոգու արիությունը: Փարիզում նա ցանկանում է հրատարակել մի գրական պարբերական:

Ամսագիրը կոչվելու էր «Հայ հանդես»: Անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքից հետո, 1902 թվականի սեպտեմբերին նա ձեռնարկում է այդ հանդեսի առաջին համարի հրատարակմանը, սակայն, նյութական դժվարության պատճառով ընդհատում է: Հարկադրված անցնում է Վենետիկ, այնտեղ հայերեն տառեր ճարում և շարունակում գործը: «Հայ հանդեսի» առաջին համարը լույս է տեսնում Վենետիկում 1902 թվականի օգոստոսի 1-ին:

«Հայ հանդեսում» տպագրված միակ գեղարվեստական մնայուն երկը Արփիարյանի «Կարմիր ժամուց» վիպակի առաջին մասն է,—մի վիպակ, որը հետագայում լրիվ լույս տեսավ Պետերբուրգում հրատարակվող «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսում:

«Հայ հանդեսում» Արփիարյանը շարունակում է մերկացնել դաշնակ-հնչակ ավանտյուրիստներին ընդարձակ հոդվածներով, որոնք կատաղեցնում են այդ պարոններին: Նրանք աշխատում են մի նոր տեռորով վերջ տալ վտանգավոր հակառակորդի կյանքին:

[1] Ե. Օտյան, Տասներկու տարի Պոլսեն դուրս, էջ 264—265:

1903 թվականի փետրվարի 15-ին երեկոյան Արփիարյանը ենթարկվում է հնչակյանների կողմից կազմակերպված տեռորի և ծանր վիրավորվում: Հիվանդանոցից դուրս գալուց հետո, նյութական դժվարությունների պատճառով հարկադրված է լինում դադարեցնել «Հայ հանդեսի» հրատարակությունը:

Ն. Ադոնցը Պետերբուրգից հատուկ նամակով խնդրում է Արփիարյանին՝ օգնել իր հրատարակելիք «Բանբեր գրականության և արվեստի» հանդեսի լույս ընծայմանը՝ ապահովելով արևմտահայ մի քանի գրողների աջակցությունը և իր անձնական մասնակցությունը: Ադոնցի առաջարկի արդյունքն է լինում Երվանդ Օտյանի լավագույն գործերից մեկի՝ «Համբարձում աղայի», Ա. Արփիարյանի «Կարմիր ժամուցի» ավարտված տեքստի ու նրա «Արևմտյան հայոց արդի գրականությունը» արժեքավոր հոդվածաշարքի լույս ընծայումը «Բանբերի» առաջին և երկրորդ համարներում:

Տնտեսական ծանր պայմանները մի կողմից, Կովկասից կատարվող նոր դիմումները մյուս կողմից, կոտրում են Արփիարյանի համառությունը և նա երեք տարվա լռությունից հետո 1903 թվականից վերսկսում է թղթակցել «Մշակին», խուսափելով քաղաքական հարցեր շոշափելուց:

Այդ շրջանի նրա հոդվածները, որոնք գերազանցապես շոշափում են լեզվաբանական հարցեր, անհամեմատ ավելի մշակված են, խմբագրված:

Այդ օրերին Արփիարյանը ապրել է իր տառապալից կյանքի ամենածանր շրջանը: Եղել են դեպքեր, երբ հոդվածներ է գրել հոգնած, սոված և հիվանդ: Հաճախ շա-

բաթներով հնարավորություն չի ունեցել մի բաժակ թեյ խմելու։

Այս ծանր պայմաններում էլ նա չի փորձել ապավինել որևէ հարուստի, շողոքորթել որևէ կապիտալիստի։ 1903 թվականին Լեոյին գրած նամակում նա տվել է հետևյալ խոստովանությունը. «Ես չեմ կարող Չերազի, Չոպանյանի նման հարուստներուն դիմում ընել։ Ինչ որ կյանքիս մեջ չի պատահած ընավ»[1]*։*

Արփիարյանի այս շրջանի կյանքը հիանալի կերպով նկարագրված է նրա օրագրերում, որոնք բարեբախտաբար մնացել են անկորուստ և Երվանդ Օտյանը այսպես կոչված օսմանյան «Սահմանադրությունից» հետո հրատարակել է դրանք իր «Կառավինատ» երգիծաթերթում[2]*։*

Արփիարյանի վերոհիշյալ օրագրերը ուժեղ բողոք են ընդդեմ սեփականատիրական կարգերի, ընդդեմ վենետիկյան Մխիթարյանների, որոնց խոսքը, ինչպես

[1] *Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարան, Լեոյի ֆոնդ։*

[2] *Այդ օրերին իր կրած տառապանքները նա նկարագրել է նաև Ե. Օտյանին ու Հ. Առաքելյանին գրած նամակներում։ Հ. Առաքելյանին գրած նամակները անտիպ են և պահվում են Հայկական ՍՍՌ Գիտությունների ակադեմիայի գրականության և արվեստի թանգարանում։ Ե. Օտյանին գրված նամակներից մի քանիսը լույս են տեսել նրա խմբագրությամբ 1910 թվականին լույս տեսած «Կառավինատ» երգիծաթերթի մի քանի համարներում և «Ժամանակ» թերթի 1912 թվականի համարներում՝ «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հայտնի մեմուարների մեջ։ Հետագայում, երբ Օտյանը 1922 թվականին վերամշակել է իր այդ հիշողությունները և հրատարակել, դուրս է գցել Արփիարյանի նամակներից կատարված մեջբերումները։*

պատկերավոր ձևով ասել է Վարուժանը, «քաղցր է իրենց աղոթքին պես, բայց իրենց սիրտը սև է իրենց գդակին պես»[1]:

Այդ օրագրերից կատարված մի քանի մեջբերումներով ծանոթանանք Արփիարյանի Վենետիկում՝ 1904 թվականի վերջին ամիսներին անցկացրած կյանքի հետ: Նույն թվականի նոյեմբերի 29-ին իր օրագրում նա գրում է.

«Այսօր չորեքշաբթի, թանձր մառախուղով մը մինչև Քիրինը եկա և անհանգիստ եմ: «Շիրակին» հոդվածը պիտի գրեի, բայց ձեռքս կդողա անոթութենե, ոտքերս կը կտրին, և գլուխս կը դառնա, ու այսպես պիտի շարունակեմ»:

«Դեկտեմբեր 1.— մառախլապատ առտու մը... Առտուն մինչև 8 անց կես անկողինը մնացի մտատանջ, բան մը չունինք, ոչ ուտելիք, ոչ դրամ մը, ոչինչ»:

«Դեկտեմբեր 2.— ժամը 4-ին Քիրինի գրատունն եմ. գլուխս կը դառնա անոթութենե, ոտքերս կը կտրին. թեև երեկ իրիկուն ալ այս վիճակին մեջ էի, բայց գոնե լավ ճաշի մը հեռապատկերը կար... ու կը գրեմ «Շիրակին» «Հողվտիքը»: Չիտեմ գրիչես ինչ կելլա»:

Նույն դեկտեմբերի 2-ի օրագրի շարունակությունը հետևյալն է.

«Կը շարունակեմ հոդվածս, ձեռք կառնեմ կես ձգած տեղս «Մասիս» և պահպանողականության հետ սահմանադրության»: Աչքերս կը փակվին անոթութենե ու «գիշերը կը գրեմ» կըսեմ, և միտքս կուգա թե գիշերն ալ անոթի պիտի մնամ, վաղն ալ, մյուս օրն ալ»:

«Դեկտեմբեր 10.— Այսօր տան պայմանաժամը

[1] Դ. Վարուժան, Երկեր, Երևան, 1946, էջ 421:

կլրանա։ «Մշակեն» սպասած ստակս չեկավ։ Երեկ գիշեր բերանս չէր բացվեր։ Այս առտու ուշ ելա փախուստի կեր- պարանք չստանալու համար։ Տանտիկինը հույս կուտա, քանի մը օր կարելի է սպասել։ Քիչ մը սիրտ առի։ Ժամը 10-ը։ Նստած կը գրեմ վեպ «Խնդամոլիկ աղջիկը»։ Հեգ- նությո՞ւն. Ղուկաս աղայի անոթության շենքն է, որ կը նկարագրեմ»։

Մի քանի ամիս էլ այս տառապալից կյանքը քարշ տալուց հետո՝ 1905 թվականի հուլիս ամսին Արփիար- յանը մեկնում է Եգիպտոս, որտեղ գտնվում էր Ե. Օտ- յանը։

Ուղիղ տասը տարի էր անցել այն օրից, երբ նա դուրս էր եկել Պոլսից։ Այդ տասը տարիների ընթացքում շատ էր փոխվել նա, ծերացել, կորցրել առողջությունը։ Հնա- մաշ, կարկատաններով շորերն ու կոշիկները նրան տվել էին կատարյալ մուրացիկի կերպարանք։ Այդպես էլ տես- նել է նրան նովելիստ Երուխանը՝ Ալեքսանդրիայի Առաջ- նորդարանի դահլիճում։

«Սանկ կամացուկ մը, անկյուն մը նստեր էր հոն. բազկաթոռի մը ծայրը, այն ճիշտ ծուռ աղքատներեն մեկուն պես, որ առաջնորդարան կիյնան ողորմության համար։ Անհարդար վարսերու աղեբեկ մացառուտ մը գլխեն մինչև վիզը կը ծածկեր զանիկա, անճանաչ, խառնափնթոր բան մը դարձնելով, տեսակ մը աբբա Մարկոս։ Ոտքերը ահագին սանդալի նման ոտնաման- ներ անցուցած էր, հաստաբեստ ներբանով՝ Սահարան կտրող անցնող անապատական ճամբորդի մը պես, խա- շոր փալթոյի մը մեջ կորսված էր մարմինը։ Ո՞ր էր

1 «Վառավինար», 1910, № 41։

տասը տարի առաջվան Արփիարը։ Խեղճության փլատա՞կ մը։

— Բարև մյուսյու Արփիար,— ըսի ձեռքս երկնցնելով,— զիս ճանչցա՞ք։

— Վա՜յ, դո՞ւն ես, Նրվանդ. հասցեր ես, տղա, ինչ կընես կոր, աղեկ ես, կը գրե՞ս կոր նորեն» [1]։

Արփիարյանը մեկնում է Գահիրե և այնտեղ մասամբ մոռանում իր վշտերը, ընկերական ջերմ մթնոլորտում նորից նվիրվում գրականությանը, մեծ եռանդով աշխատակցում «Շիրակ» պարբերականին, որը լույս էր տեսնում 1905 թվականից։

Ստանձնելով «Շիրակի» խմբագրությունը, նա ցանկանում է այս նոր հանդեսում, բացի գեղարվեստական ստեղծագործություններից, յուրաքանչյուր ամիս հանդես գալ «Հովվութիք» վերնագրով մի ակնարկով, որտեղ խոսեր տվյալ ամսում մահացած հայտնի անձնավորությունների մասին։ «Հովվութիք» գավառաբարբառով նշանակում էր գերեզմանատուն։

«Շիրակում» տպագրված են Արփիարյանի մի քանի «Հովվութիքները»։ Դրանք ըստ էության յուրահատուկ գրական դիմանկարներ են, փաստական հարուստ տվյալներով, գրված նկատելի հումորով, որը տեղ-տեղ փոխվում է սատիրայի։

Ինչպես ասացինք, 1901—1905 թվականների շրջանում Արփիարյանի գրած միակ գեղարվեստական գործը «Կարմիր ժամուցն» է, որը լիովին արտահայտում է վերջին տարիների ընթացքում հեղինակի ապրած գաղափարական որոնումներն ու լուրջ սայթաքումները։

---

1 «Լուսաբեր», 1908, № 488։

* *
*

«Կարմիր ժամուց» վիպակի նյութը Արփիարյանը հղացել է դեռևս Լոնդոնում, 1898 թվականին, բայց գրել ու մաս-մաս սկսել է հրատարակել 1902 թվականին «Հայ հանդեսում», իսկ ամբողջացրած վիճակում առաջին անգամ լույս է տեսել 1903 թվականին «Բանբեր գրականության և արվեստի» պարբերականի առաջին համարում:

Նախասովետական գրականության մեջ «Կարմիր ժամուցը» համարվել է հեղինակի գլուխ գործոցը: Լիբերալ քննադատության այդ կարծիքը, որ շարունակվել է նաև մեր օրերում, կարիք ունի որոշ վերանայման: «Կարմիր ժամուցը»՝ մնալով հանդերձ ռեալիստական մի երկ, որը հարազատորեն արտացոլում է սուլթանական բռնապետության ամենածանր օրերը, գաղափարական տեսակետից նկատելի նահանջ էր հեղինակի համար:

Վիպակի բովանդակությունը հետևյալն է: Պահպանողական գաղափարների տեր Հայրապետ էֆենդին ապրում է Օրթագյուղում: Նա որպես ամիրայական հին տների շառավիղներից մեկը, իրավունք է համարում միանձնյա ղեկավարությամբ իշխել ամբողջ Օրթագյուղի հայերի վրա, ղեկավարել նրանց գործերը: Նրա ամբողջ գործունեությունը հետապնդում է մի նպատակ՝ հայերին հեռու պահել քաղաքական պայքարից, տեղի չտալ սուլթանի կասկածին:

1890 թվականի հուլիսյան ցույցից անմիջապես հետո, Օրթագյուղում հայտնվում է հայաստանցի մի քահանա, որի համար միանգամայն անծանոթ են Պոլսի քաղաքական պայմաններն ու կաշկանդումները: Գավառացի քահանան, չիմանալով, որ Կ. Պոլսի եկեղեցինե-

գում աղոթքների սովորական արտահայտությունները փոփոխված են հիշվում, որպեսզի շատ նախադասություններ կասկածի տեղի չտան, պատարագի ժամանակ բարձր ձայնով արտասանում է հայ եկեղեցիներում գործածվող «ազատությո՛ւն եղբարց մերոց գերելոց» նախադասությունը, իսկ մի այլ առիթով, նույնպես հանգիսավոր, արտասանում է «թագավորաց քրիստոնեից» արտահայտությունը:

Այստեղից էլ սկսում է երկի հիմնական հանգույցը: Հայրապետ էֆենդին ահաբեկված կանչում, հանդիմանում է քահանային, սովորեցնում, թե ինչպես պետք է արտասանել «ազատություն եղբարց մերոց գերելոց» նախադասությունը:

«— Սա «ա՛»-ն բերնեդ կամացուկ մը կը հանես. հազալով մը: — Մարդ ենք, հազերնիս կը բռնե. ան ալ մեղք չէ յա. «-զատ»-ը կուտես. կուտես, տերտեր, կուտես, չէ նե ան մեղի կուտե: «Եղբարց մերոցին» հազգիչ մը կանցնի: «Գերելոցին»՝ վրայեն, լփռտելով: Էֆենդիմ, գերելոց ըլլալ չեն ուզեր նե, թող խելքերնին գլուխնին կենան: Փառք աստուծո, մենք ալ հայ քրիստոնյա ենք, մեղի ինչու գերելոց չեն ըներ»[1]:

Բայց գավառացի անտաշ քահանան այդ դասախոսությունից այնքան էլ բան չի հասկանում, նա մասնավորապես «թագավորաց քրիստոնեիցը» արտասանում է իր սովորած ձևով:

Հայրապետ էֆենդին հարկադրված է լինում նրան վռնդել Օրթագյուղից:

Չնայած Հայրապետ էֆենդու բոլոր զգուշություննե-

---

1 «Բանբեր գրականության և արվեստի», Ա. գիրք, էջ 8:

րին, թյուրքական կառավարությունը նրան էլ է ձերբակալում և բանտարկում ինչ-որ կասկածի համար։ Բանտից ազատվելուց հետո էֆենդին միանգամից փոխվում է, պաշտպանում է այն կարծիքը, թե սուլթանի համար բոլոր հայերն էլ թշնամի են և վտանգավոր, ուստի նրա վրա հույս դնելը անիմաստ է, ավելի լավ է միասնական ճակատով պայքարի դուրս գալ բռնապետության դեմ, վերջ տալ հլու-հնազանդությանը։

Այս գիտակցությամբ ու համոզմունքով է, որ նա զղջում է գավառացի քահանայի նկատմամբ իր ցուցաբերած կույր վերաբերմունքից և գնում է Հուսիկի մոտ, ներողություն խնդրում, «սուրբ գործի» համար առատ գումար է տալիս նրան որպես «ժամուց», «կարմիր ժամուց»։

Ասացինք, որ «Կարմիր ժամուցը» ռեալիստական վրձինով գծված հաջող մի գործ է, որը երկար տարիներ զետեղվել է դասագրքերում և ժողովածուներում։

Արփիարյանը վարպետ գրչով, սեղմ, դիպուկ շտրիխներով գծագրել է սուլթանական Թյուրքիայի մայրաքաղաքում մոլեգնող քաղաքական ճնշումը, հեղձուցիչ մթնոլորտը, որտեղ կանգ է առել ամեն մի առաջադիմություն, ամեն մի շարժում ու մտավոր զարգացում, որտեղ ոչ կյանքի, ոչ ինչքի և ոչ պատվի ազատություն կա։ Այնտեղ թագավորում է միայն սարսափը, «ճուռնալ» դառնալու, այսինքն՝ լրտեսագրերի մեջ ընկնելու երկյուղը։

Հայերը ոչ միայն իրենց մտքերն են պարտավոր թաքցնել այդ լրտեսներից ու դավաճաններից, այլև իրենց հարստությունը՝ չգրգռելու համար թշնամու նախանձն ու ատելությունը։

Ահա այս միջավայրի մեջ է գծված վեպի գլխավոր հերոսը՝ Հայրապետ էֆենդին։ Նա հին, պահպանողական սերնդի ներկայացուցիչ է, կապված կառավարական շրջանների հետ, բայց նա, ըստ հեղինակի, միաժամանակ լավ հայ է, սիրում է իր ազգությունն ու եկեղեցին։

Լավ ճանաչելով շրջապատի քաղաքական պայմանները, նա դարձել է խոհեմ, հեռատես, ունի բարձրաստիճան թյուրք պաշտոնյաներին սիրաշահելու, նրանց մեջ որևէ կասկած չառաջացնելու հմտություն։ Նա աչալրջությամբ հետևում է իր թաղամասի բոլոր գործերին, ամեն կերպ աշխատում է, որպեսզի որևէ առիթ չտրվի կասկածի. լուռ պայքար է մղվում համիդյան լրտեսական ցանցի և Հայրապետ էֆենդու զգուշավոր քաղաքականության միջև։

Շրջապատում տիրող ծայր աստիճան լարված մթնոլորտը, ճնշումը նրան դարձրել են զգայուն։ Ամենաաննշան դեպքը, որը կարող է կասկածի տեղի տալ, ամենից առաջ հասնում է նրան, ցնցում, զգուշացնում։ Նրա համար չկա ավելի մեծ պատիժ, քան լրտեսագրերի մեջ ընկնելը, քան որպես պետության դավաճան ներկայացվելը։

Նրա մեջ խոսում է մի կողմից պետության մոտ կանգնած մարդը, մյուս կողմից՝ լուսավորչական եկեղեցու հավատարիմ «հին հայը»։ Ահա այս զգացումների հաշտեցմանն է ձգտում այն ամբողջ «դասախոսությունը», որ նա անցնում է քահանայի հետ, երբ սովորեցնում է նրան թե պոլսական պայմաններում ինչպես պետք է արտասանել «ազատություն եղբարց մերոց գերելոցը», որպեսզի թե՛ եկեղեցական ավանդությունը պահպանվի և թե՛ հայ ժողովուրդը կասկածի չենթարկ-

վի։ Ուշագրավ է էֆենդու այս «դասի» ներածական մասը, որտեղ մայրաքաղաքի էֆենդին փորձում է հայաստանցի պարզամիտ քահանային սովորեցնել Պոլսի ու գավառի տարբերությունը։

— «Հրամանքդ ո՞րտեղեն ես, տերտեր,— հարցնում է Հայրապետ էֆենդին քահանային։

— Տոմուս գեղեն,— պատասխանեց Տեր Հուսիկ, առանց «ծառայեմ էֆենդի» նախաբանին, որ պանդուխտներում բերանը պարտավորիչ էր։

— Տոմուս գեղե՞ն, հը՞մ,— մրթմրթաց էֆենդին քթի տակը ու բարձրաձայն.

— Է, հոս ալ գիտե՞ս ուր է։

— Ստամբոլ չէ՞։

— Հա՛, ա՛ռ ալ գիտես եղեր։ Աղե՛կ, աղե՛կ, է՛, Հասան փաշան ալ գիտե՞ս ով է։

— Է, ես ինչ գիտնամ, ով կուզե թող ըլլա, աշխարհիս երեսը չնեն շատ Հասան փաշա կա»[1]։

Քահանայի այս խոսքերից վտանգ է բուրում ազնվաշուքների համար։ Բոլորը սարսափում են, եկեղեցականներն սկսում են իրենց մորուքը շոյել, իսկ էֆենդին պարտավորվում է թաշկինակի օժանդակությանը դիմել «արքայասպիղծ» նախադասությունը չլսել ձևացնելով։

Էֆենդին «կը ջանար հայ ազգը օսմանյան գահուն հավատարիմ և անձնվեր ցույց տալ»։

Երբ Թյուրք փաշան գովում է նրա այն քայլը, որ վտանգավոր քահանային հեռացրել է մայրաքաղաքից, էֆենդին դրանից ոչ միայն չի ուրախանում, այլ սար-

---

1 «Բանբեր գրականության և արվեստի», Ա. գիրք, էջ 5։

տափում է ու համոզում, թե քաղաքական նկատառումով չէ, որ քահանան ճամփվել է իր երկիրը, այլ պարզապես ձայնի պատճառով, թե այդ քահանայի ձայնը եղել է կոշտ, անհաճելի։

Էֆենդու համոզմունքները եթե ամփոփենք, կըստանանք հետևյալը. հայ ժողովուրդը իր թվական ուժով, անմարտունակությամբ չի կարող պայքարի դուրս գալ իր պետականությունն ու բանակը ունեցող Թյուրքիայի դեմ, ուստի անհրաժեշտ է շարունակել հնազանդությունը մինչև որ դեպի նեխում գնացող Թյուրքիան, ինչպես ինքն է ասում, արդեն «կանգրենա» դարձած այդ երկիրը ներսից փտի։ Այդ փոփոխությունը էֆենդին երբեք չի պատկերացնում ազատագրական պայքարի ճանապարհով, այլ աստիճանաբար՝ ռեֆորմներով, առանց արյունի, առանց բախումների։

Էֆենդու կարծիքով դարերի փորձը պետք է սովորեցներ հայ ժողովրդին, որ նա գործ ունի նենգ ու խորամանկ թյուրք սուլթանների ու փաշաների հետ։ Ուստի պետք է միշտ յուրաքանչյուր քայլից առաջ հայը մտածի «ի վերա այսր ամենայնի թագավորնիս տանի՛կ է»։ Եթե անհրաժեշտ է, նույնիսկ չպետք է ցույց տալ հայ ժողովրդի հարստությունն ու ինչքը, մամուլում չպետք է գրել ազգային հարստությունների, եկեղեցական կալվածների մասին։ Նույն քաղաքականությունը պետք է կիրառել նաև ընտանիքում. «մեր կնիկներուն երեսները ծածկելու ենք»—ասում է նա «չենէ կառնեն կը տանին, մեր տուները աչքե հեռու պահելու ենք, չենէ կը քանդեն. վրանիս գլուխնիս աղքատ երևալու է, չենէ կը կողոպտեն»։

Ովքեր են շրջապատում Հայրապետ էֆենդուն։ Մի կողմից Թյուրք բարձրաստիճան էֆենդիներն ու պաշտոնյաները, որոնց հետ նրա հարաբերությունները ըստ Արփիարյանի կեղծ են ու շինծու, մյուս կողմից՝ հայ եկեղեցական և աշխարհական պահպանողական, ազգային մարմիններում բույն դրած ամեն կարգի «վսեմաշուքներն» ու «ազնվաշուքները», որոնց պաշտոնն է կարծես շարունակ հաստատել էֆենդու խոսքերը, արդարացնել նրա արարքները։

Այս խմբի մարդկանց մեջ աչքի է ընկնում Օգսենտիոս էֆենդին։ Նա այն արտաքուստ ծանրախոհ մեծ գիտնականի, փիլիսոփայի տպավորությունը թողնող գրաբարյաններից է, որոնք Արփիարյանի ապրած ժամանակամիջոցում կարևոր դիրքեր ունեին ազգային իշխանություններում և պայքարի մեջ էին առաջադիմական գաղափարախոսության դեմ։ Օգսենտիոսը խոսում է քիչ, նախադասությունները կարծես աքցանով պետք է քաշել նրա բերանից, բայց երբ բարեհաճում է մի նախադասություն արտասանել, և այդ անպայման կլինի որևէ մեջբերում աստվածաշնչից, ցուցամատն ու միջամատն էլ բարձր պահած,— խոր ազդեցություն է թողնում ներկաների վրա։

Օգսենտիոսը հիշեցնում է Երվանդ Օտյանի Համբարձում աղան, որի բնորոշ գծերն են ներքին, մտավոր դատարկության, ագիտության ու ողորմելիության քողումը արտաքին լռությամբ, ծանրախոհությամբ։

Օգսենտիոսից բուրում է հնության և պահպանողականության, նրա հիմնական գաղափարախոսությունը, որը գալիս է Սողոմոն իմաստունից, հանգում է հլության և հնազանդության։ Դրա համար էլ՝ Հայրապետ

էֆենդին անչափ խանդավառվում է, երբ նա հայտնում է իր հեղինակավոր կարծիքը այս կամ այն հարցի մասին։ Օրինակ, երբ էֆենդին համոզում է քահանային, թե առաջ հայոց եկեղեցում հնարավոր էր այդպիսի նախադասություններ արտասանելը, իսկ այժմ ոչ, հանկարծ

— «Այլ դարք, այլ բարք,— ձայնեց հատիկ-հատիկ, ցուցամատը վերամբարձ, Օգսենտիոս էֆենդին»[1]։

Միանգամայն այլ միջավայրի մարդ է «Կարմիր ժամուցի» մյուս գլխավոր դեմքը՝ Հուսիկը։ Ամենից առաջ նա գյուղական միջավայրի ծնունդ է, ժողովրդական մարդ, հենց հողի աշխատավոր, չարքաշ կյանքի մեջ մեծացած, ֆիզիկական ծանր աշխատանքների ընդունակ։ Նա մեծացել է ազատ բնության մեջ, անծանոթ Պոլսի խամրող, շնչահեղձ անող քաղաքական պայմաններին, դրա համար էլ անվախ է, համարձակ։ Էֆենդին հանձին Հուսիկի տեսնում է մի մեծ հակառակորդի, որը բոլորովին կարևորություն չի տալիս ոչ նրա տիտղոսներին և ոչ էլ այն բանին, որ նա կապված է պալատի հետ։ Համարձակ հակաճառում է էֆենդու հետ և երբ վերջինս վայրացած գոչում է.— «Ծո տերտեր, ես քու մորուքդ թրաշ ընել կուտամ», Հուսիկն էլ նույնպիսի ցասումով պատասխանում է.

— «Ծո Հայրապետ, ես ալ քու բեղերդ կը…

— «Վայ, դուն ինձի ծո՞ մի ըսես, ես՝ նորին վեհափառության պաշտոնյան, ես պալայով պատված, դուն ինձի ծո՞ մի…։ Բերանդ պիտի չորցնեմ, լեզուդ պիտի կտրել տամ»[2]։

---

1 «Բանբեր», էջ 33։

2 Նույն տեղում, էջ 35։

Հայաստանցի քահանան էլ ունի իր համոզմունքները։ Նկատի ունենալով, որ հայ ժողովուրդը շրջապատված է ազգային ու կրոնական մոլեռանդությամբ տոգորված թշնամիներով, անհրաժեշտ է միշտ զգաստ ու պատրաստ լինել, իմանալ հարկ եղած դեպքում զենք գործածել։ Դպրոցներում երեխաներին պետք է դաստիարակել այնպես, որ նրանց մեջ զարգանա ինքնապաշտպանության բնազդը, նրանք ձեռք կբերեն համարձակություն, խիզախություն ու տոկունություն։

Հուսիկի կարծիքով չպետք է հույս դնել ուրիշների, դրսից սպասվելիք օժանդակության վրա։ Յուրաքանչյուր անհատ ինքը պետք է իրեն պատրաստ զգա ամեն մի անակնկալի։ Հայ ժողովրդի դժբախտության բուն պատճառը այն է, որ կրոնի պաշտոնյաները, այսինքն՝ իր նման քահանաներն ու վարժապետները մինչ այդ թութակի նման կրկնել են քրիստոնեական հնազանդության քարոզը, մեռցրել են ժողովրդի մեջ ինքնապաշտպանության բնազդը, կրոնից չեն վերցրել այն ուսմունքը, որ նպաստավոր է գոյության կռվում, կյանքի պայքարում։ Ինքը այլ կողմից է դիտում կրոնը, նա Ավետարանին հակադրելով Աստվածաշունչը, Քրիստոսին փաստորեն դեն է դցում և առաջ է քաշում վրեժխնդիր ու հիշաչար աստծուն՝ Եհովային։ Ինչո՞ւ, որովհետև «Եհովան իր ժողովուրդը տանջողին գլխուն ամեն փորձանք կբերեր։ Եգիպտացիներուն զավակներն ալ սպանել տվավ, անոնց ոսկեղեններն ու արծաթեղեններն ալ իսրայելացիներուն հալալ ընել տվավ»։

Հուսիկը Արփիարյանի «Սիմոնական տերտերն է», որ ցանկանում է կապ ստեղծել կրոնի ու կյանքի միջև։ Նա երկար ժամանակվա փորձով համոզվել է, որ Ավե-

տարանի այն պատգամը, թե չպետք է չարին հակառակվել, թե՝ եթե թշնամին ուզում է քո շապիկը, պետք է դու բաճկոնդ էլ սիրով տաս, միանգամայն վտանգավոր է այնպիսի մի շրջապատում, երբ հայ ժողովրդի վրա իշխող կրոնի սկզբունքն է սպանել նրանց։

Նա՝ «սուր քո և պարանոց մեր» սկզբունքին, «որ զենք առցե, զենքով անկանի» քարոզին հակադրում է սրի դեմ՝ սուր բարձրացնելու, «ակն ընդական, ատամն ընդ ատաման» սկզբունքը։

Հուսիկի հակաավետարանական ագիտացիան անշուշտ նորություն չէր հայ գրականության մեջ և գալիս էր դեռևս Աբովյանից, առկա է մասնավորապես Րաֆֆու վեպերում։

Արփիարյանը նկատելի պարզությամբ տվել է հողի աշխատավորի պատճառաբանությունը այդ առթիվ։ Վարժապետ Արշամը դիտողություն է անում, թե ինչո՞ւ քահանան միշտ քարոզներ խոսելիս բնաբան է վերցնում միայն Աստվածաշնչից, չի վերցնում Ավետարանից․

— «Հին կտակարանն ալ սուրբ գիրք չէ՞,— հարցուց տերտերը ժպտալով.

— Անանկ է, սուրբ գիրք է, բայց Ավետարանն ալ շատ անուշ է, պատասխանեց վարժապետը։

— Չե՞ս վախնար, որ շատ անուշությունը մեր ժողովուրդը մեղկացնե... կը տեսնե՞ս եղբայրս, շարունակեց տերտերը, որ մեր արորների վարողները եզներն են։ Մեզի կյանք տվող ցորենին ան պտըտիկ հատիկները ունենալու համար խոշոր ուժով եզներ պետք են։ Գառնուկով արտ կրնա՞նք հերկել։ ...Գառնուկին քաշած արորովը չենք կրնար հոն ակոս բանալ ու սերմնացանք

ընել... գառնուկը կըսիրենք, կը փայփայենք, բայց ան մեր գործը չի տեսնար»[1]։

Արփիարյանի հերոսը ցանկանում է թշնամու ուժեղ աստուծո դեմ ունենալ նույնպիսի ուժեղ, նրան կուլ չգնացող աստված։

Տեր-Հուսիկը վիպակում մի կողմից հակադրված է Հայրապետ էֆենդուն, մյուս կողմից՝ Արշամին։ Առաջինի հետ նրա հակառակությունը գաղափարական է, սկզբունքային, իսկ Արշամի հետ նրա տարակարծությունները տակտիկական են։ Երկուսն էլ խանդավառվում են ազգային-ազատագրական շարժումով, ցույցերով, բայց տեր-Հուսիկը, որպես գործնական մարդ, ուզում է գործը հիմքից բռնել։ Նա կողմնակից է երկարատև աշխատանքով ժողովրդին զինված ապստամբության նախապատրաստելու գաղափարին։ Հիմնում է «ապաշխարության սնդուկ», փող է հավաքում, զենք գնում «ի քավություն և ի թողություն մեղաց». երիտասարդներին սովորեցնում է զենք գործածել և այդ զենքի կրակոցն էլ համարում է «ապաշխարանքի աղոթք»։ Այդպես չէ Արշամը։ Նա արկածախնդիր է, խանդավառվում է թերթերում տպագրված «պատերազմի շեփոր, մարտերու գոռում» և նման արտահայտություններով ու կարծում է, թե «ալ գործի ժամը հնչած է»։ Բավական է, որ եվրոպական պետություններից որևէ մեկի միջամտության մասին մի բան գրվի, նա ձեռքերը շփելով ասում է. «ինչե՞ր, ինչե՞ր պիտի ըլլան»։

Արշամը, Կում Կափուի ցույցի մասնակիցներից

[1] «Բանբեր», էջ 21—22։

է. նա ցատկելով եկեղեցու ամբիոնի վրա, հիստերիկ ճիչեր է արձակել ու բղավել.

— «Այսօր Էրզրում, վաղը Մուշ, հաջորդ օրը Վան ու այսպես ամբողջ Հայաստան, պիտի ջարդե՜ն, եղբարք, պիտի ջարդե՜ն, հիմի՞ էլ լռենք». իսկ նրա գաղափարակիցները դրսում «օ՜ն, ի Յըլդը՞զ» են գոռացել։ Նա անհեռատես ու արկածախնդիր այն երիտասարդներից է, որոնք մտածում էին մի քանի հոգով գրավել օսմանյան բանկը, մի քանի ռումբով օդը հանել ամբողջ Պոլիսը և «փրկել» հայերին։

Արփիարյանը նուրբ հումորով ծաղրել է Արշամի և նմանների գործունեությունը։ Այդ վկայում է, որ հեղինակը վերագնահատելով հայ քաղաքական պարտիաների արկածախնդրական գործունեությունը, որը հիմնականում հենվում էր օտար միջամտությունների վրա, դատապարտում է այն։ Սակայն ո՞ր ճանապարհն է հակադրում դրան՝ դասակարգերի հաշտեցմամբ համազգային պայքարի գաղափարը, մի բան, որը նույնպես սխալ էր և վկայում է Արփիարյանի այդ տարիների գաղափարական, քաղաքական որոնումների մասին։

* *
*

Արփիարյանի «Կարմիր ժամուցը» ունի գեղարվեստական անուրանալի արժանիքներ։ Հեղինակը դեմքերն ու դեպքերը գծագրել է արվեստագետի գունեղ վրձինով, ի հայտ բերելով գրական անուրանալի տաղանդ։

Արփիարյանի երկերից և ոչ մեկում տիպերն այնքան կենդանի չեն ու կոնկրետ, հարազատ իրենց միջավայրում, որքան «Կարմիր ժամուցում»։ Սեղմ, բայց բնութագրող են ու արտահայտիչ վիպակի դիալոգները։ Եր-

գիծաբան հեղինակը զգացվում է գրեթե յուրաքանչյուր էջում, նա մերթ հումորիստ է իր գրական հերոսի՝ Հուսիկի նկատմամբ, մերթ նրա խարազանող սատիրայի տակ ընկնում են Օգսենտիոսը և նման պահպանողականները։

«Կարմիր ժամուցում» իսպառ բացակայում է վերամբարձ ոճը, բառերի խճողումն ու կուտակումը, համանիշների անտեղի սփռումը։

«Կարմիր ժամուցի» հերոսներից յուրաքանչյուրի գործածած առածներն ու ասացվածքները բխում են նրա միջավայրից, գաղափարական զինանոցից, եթե Օգսենտիոս էֆենդին գործածում է Սողոմոն իմաստունի «այլ դարք, այլ բարք» արտահայտությունը, իսկ էֆենդին իր գործելակերպը, գաղափարները արդարացնում է հիմնականում կրոնական արսենալից վերցված զենքերով, գրաբար դարձվածքներով. «սկիզբն իմաստության, երկյուղ Հասան փաշայի» — «ականջ ունին և ոչ լսեն, աչս ունին և ոչ տեսանեն», «որ սուր առցե, սրով անկցի» և այլն, ապա Հուսիկը բացառապես գործածում է ժողովրդական առածներ, դարձվածքներ. «դանակ զարնես արտիս՝ արյուն չելլեր», «գնա նայե կարասին մեջ բան մը կա», «մեծ քար վերցնողը չի կրնար նետել», «ավել բարին աչք չի հաներ», «տանձին պահպանությունը արջեն խնդրել», «մի մեռիր իշուկս, գարուն պիտի գա, առվույտ պիտի ուտես» և այլն։

«Կարմիր ժամուցը» սակայն ունի թերություններ։ Նախ՝ նրա երկու գլխավոր հերոսներն էլ, թե՛ Հայրապետ էֆենդին և թե՛ Հուսիկը՝ ընդհանուր առմամբ իրենց միջավայրի մեջ գծված լինելով հանդերձ ռեալիստորեն, հիմնականում մնում են հեղինակի մտա-

տիպարները։ Ինքը՝ Արփիարյանը, իր քսան տարիների հրապարակախոսական գործունեության ընթացքում, ապացուցել է, որ «կաթին ջուր խառնելով», «փաշաներին գողակից» լինելով, հարստացած այդ Հայրապետ էֆենդիները միշտ ավելի մոտ են եղել իրենց դասակարգային շահերը պաշտպանող թյուրք փաշաներին, կառավարությանը, սուլթաններին, քան իրենց ազգակից, սակայն դասակարգային հակառակորդ հայերին, որոնց անխնա շահագործումով է, որ բարձրացել են իրենք։

Ահա այս կարգի մարդկանց դեպի ապստամբություն, քաղաքական պայքարը հրելը դժվար էր գեղարվեստորեն հիմնավորել և այդ բանը չի հաջողվել Արփիարյանին։ Նրա այն հավաստիացումը, թե «Հոն, փողոցը, դասակարգերը իրարու կեղբայրակցեին, ցեղին տառապանքներուն մեջ իրենց հավասարությամբ, էֆենդին ու աղքատը միևնույն տանջանքներով կը խոշտանգվեին, առանց խտրանքի, իբրև միևնույն ազգին զավակները»[1], ո՛չ Հայրապետ էֆենդիների դասակարգի մարդկանց համար էր տիպական, և ոչ էլ աշխատավոր ժողովրդի։

Առևտրա-վաշխառուական իր ամբողջ գործունեության ընթացքում Հայրապետ էֆենդու պաշտպանն ու զորավիգը եղել է թյուրքական կառավարությունը և ոչ ժողովուրդը, ինչպես փորձում է հիմնավորել Արփիարյանը։ Հայրապետ էֆենդին ժողովրդի հետ ունեցած իր բախումների ժամանակ երբեք երկյուղ չի կրել իր հարստության համար, բայց երբ ձերբակալվում է,

[1] «Բանբեր», Ա. գիրք, էջ 53։

բանտում նրա առաջին միտքը լինում է այն, թե ջուրն են ընկնելու իր բոլոր ստանալիքները։

Չի պատճառաբանված էֆենդու հանկարծակի վերափոխվելը և «ուխտի գնալը» տեր-Հուսիկի մոտ և ասելը «հեյ, հե՜յ, մենք ալ հա՞յ ենք եղեր, մենք ալ բա՞ն գիտենք եղեր, իբր թե ազգին մեջ ալ կարևոր դեր մը ունեինք։ Ժողովուրդն ինքն իր գլխուն մենե ավելի աղեկ գիտեր թե խոհեմությունը ինչ ընել կը պահանջե»[1]։

Նույնիսկ Հայրապետ էֆենդու շրջադարձից առաջ, երբ նա գծված է ռեալիստորեն, կան որոշ հակասություններ, որոնք թուլացնում են երկի գեղարվեստական արժեքը։ Այսպես, մի կողմից էֆենդին ներկայացվում է ազատագրական շարժումների, ցույցերի, քաղաքական ելույթների կատաղի հակառակորդ, նրա զգուշությունը հասնում է գրեթե ծայրահեղության, մյուս կողմից՝ նա արդարացնում է Կում Կաբուի ցույցը, «դանակը ալ ոսկորին հասած կերևա» արտահայտությամբ։ Քիչ է մնում, որ նա բաժանի նաև Արփիարյանի ռուսասիրությունը։ Նա «կարծեց թե գործին մեջ ռուսին մատը կա»։ Էֆենդին ուրախանում է, հրճվում «սիրտը պաղբըշտկեցավ, օ՜խ մը քաշեց. հազար տարվա ցեղային վրիժառության սկզբնավորությունը կը տեսներ»։ Իր դասակարգի մարդկանց այն սկզբունքը, թե «աստված տաճկին թափուզը հայուն գլխեն պակաս չընե», լրացվում է «Մոսկոֆին թափուզն ալ տաճկին գլխեն պակաս չընե» արտահայտությամբ։

Վիպակի վերջում ավելի անհամոզիչ է Արփիարյանը։ Էֆենդին, որ սկզբում այնքան զգուշություն է

---

1 «Բանբեր», էջ 59։

հանդես բերում, նախադասությունների և բառերի ու նույնիսկ վանկերի, տառերի վրա ուշադրություն դարձնում, քաղաքական նույնպիսի պայմաններում, ոչ միայն ազատ, համարձակ մտածում է «անբարեհույս» տարրերի հետ կապ հաստատելու, նրանց նյութական օգնություն ցույց տալու մասին, այլև իր հակասուլթանական տրամադրությունները ազատ կերպով արտահայտում է իրեն շրջապատող պահպանողականների միջավայրում: Անգամ Օգսենտիոս էֆենդին թվում է թե համակրում է Հայրապետ էֆենդու գաղափարներին, այլևս ավելորդ է համարում առաջ քաշել իր «այլ պարք, այլ բարք» հռչակավոր լոզունգը:

Հուսիկի կերպարի պատկերման մեջ ևս կան չպատճառաբանված մոմենտներ: Արփիարյանը ցանկանալով ժողովրդական մի քահանայի միջոցով տալ ինքնապաշտպանական ու նույնիսկ ակտիվ պայքարի իր ծրագիրը, սայթաքել է: Նախ՝ Հուսիկը իր հակաավետարանական քարոզներով ու մտածելակերպով բոլորովին հայ եկեղեցու քահանա չէ, այլ պարզապես մի ագիտատոր, որի առավելությունը մնում է հողի աշխատավոր լինելը: Գյուղական ոչ մի քահանա, ինչպիսի դաստիարակություն էլ ստացած լիներ, չէր կարող այդքան հեռանալ կրոնից՝ այդպիսի ըմբոստ մտքեր արտահայտեր Քրիստոսի դեմ: Հանձին Հուսիկի ընթերցողը նկատում է միայն հեղինակին, վերջի-վերջո Եհովային հարելու նրա փիլիսոփայությունը ըստ էության փախուստ է ոչ միայն Ավետարանից, այլ առհասարակ քրիստոնեությունից: Հուսիկը այնքան հեռու է գնում իր գաղափարական և գործնական անկախության մեջ, որ նույնիսկ չի ցանկանում ճանաչել հոգևոր ղեկավարու-

թյունը, ենթարկվել պատրիարքարանին։ Յուրօրինակ մի ինքնավարություն է ստեղծել գյուղում, դպրոցներ է բաց անում, ծրագրեր կազմում, ժողովրդին ֆիզիկական պաշտպանություն է տալիս, հետևում է նրա առողջապահությանը, անմաքուրներին, կեղտոտներին զրկում է հաղորդությունից, որպեսզի տարածի մաքրությունը. գյուղատնտեսության մեջ մտցնում է փոփոխություններ, զարկ է տալիս խաղողագործությանը և այլն։ Իրոնիայով է նա խոսում առաջնորդարանների ու պատրիարքարանների մասին, թե՝ եթե ինքը դիմի առաջնորդին, առաջնորդն էլ դիմելու է պատրիարքին, պատրիարքն էլ սադրազամին, իսկ այդ նշանակում է «տանձին պահպանությունը արջին խնդրել»։

Այսպիսով, «Կարմիր ժամուցը» ունի գրական անուրանալի արժանիքներ, սակայն նրա մեջ արտահայտվել է նաև Արփիարյանի գաղափարական տատանումները։

Բարեբախտաբար Արփիարյանը շուտ ըմբռնեց իր այդ տարիների գաղափարական սխալ դիրքավորումը և 1905 թվականի ռևոլյուցիայի հենց առաջին օրերից հրապարակախոսական և գեղարվեստական ստեղծագործությունների մեջ թևե աղոտ, տարերայնորեն, բայց կանգնեց դասակարգային պայքարի ուղու վրա, հրատարակելով այնպիսի մի ուշագրավ գործ, ինչպիսին է «Ոսկի աքաղաղ» սոցիալական պատմվածքը։

ԳԼՈՒԽ ՎԵՑԵՐՈՐԴ

1905 ԹՎԱԿԱՆԻ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

1905 թ. հոկտեմբերյան օրերին Արփիարյանը ստանձնում է «Լուսաբեր» թերթի խմբագրությունը։

Այդ շրջանի նրա հրապարակախոսական մի շարք գործերում կարելի է նկատել գաղափարական տատանումներ, հակասություններ, կատարվող դեպքերի ոչ հստակ ըմբռնում։ Դրանց մեջ, որոշ չափով, նկատելի են նեղ-ազգայնական երանգներ, սակայն, այս բոլորով հանդերձ, հենց այդ հրապարակախոսության վրա որոշակի կերպով երևում է ռևոլյուցիայի բարերար ազդեցությունը, և որ ամենակարևորն է, նա այդ շրջանում լույս ընծայած իր «Ոսկի ապրանջան» պատմվածքում հայ ժողովրդի ազատագրության նոր ուղի է առաջադրում։

Նախ ծանոթանանք այդ տարիների նրա հրապա-

բանախոսությանը, որի մեջ յուրովի արտացոլում է գտել 1905 թ. ռևոլյուցիան։

Արփիարյանը «Լուսաբերի» էջերում ստորագրել է մոտ 200 առաջնորդող և հոդված։ Այդ հրապարակախոսական ժառանգության մանրամասն ծանոթացումը ցույց է տալիս, որ նա հիմնականում հետապնդել է երկու նպատակ։ Նախ՝ շարունակել պայքարը հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ, բացահայտել նրանց գործունեության ավանտյուրիստական էությունը, և երկրորդ՝ հայ ժողովրդի ազատագրական պայքարը կապել Ռուսաստանում սկսած ռևոլյուցիոն շարժումների հետ։

«Լուսաբերում» տպագրված հոդվածների մեջ ամենից ուշագրավներն այն առաջնորդողներն են և լուրերը, որոնք անմիջապես վերաբերում են 1905 թվականի ռևոլյուցիային։

Այդ թերթի 1905—1906 թվականների համարների պատահական ծանոթացումն անգամ ընթերցողին կարող է համոզել, թե Արփիարյանը որքան է խանդավառվել հեռավոր Ռուսաստանում ծավալվող ռևոլյուցիոն շարժումներով։ Նա ռևոլյուցիոն դեպքերին վերաբերող լուրերը տպագրել է ընդարձակ ու ոգևորող վերնագրերով, այդ դեպքերը վերլուծել է հատուկ առաջնորդողներում, միշտ նկատի ունենալով հայ ժողովրդի բախտը ռուսական շարժման հետ կապելու հնարավորությունը։

Ռուսական ռևոլյուցիայի հուժկու ալիքը կարծես առավել հստակությամբ է նրան ցույց տվել հայ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գործունեության արկածախնդրական էությունը։

Արփիարյանը, որ Լոնդոնում, իր գաղափարական որոնումների շրջանում, հիասթափված ցարիզմի արտաքին քաղաքականությունից մի պահ կարծեց թե կտրել էր իր հույսը Ռուսաստանից,— այժմ Հայաստանի ապագան տեսնում է Ռուսական ռևոլյուցիայի հաղթանակի մեջ։ Նա այն կարծիքն է պաշտպանում, թե ով ինչ ուզում է թող ասի կամ գրի, հայ ժողովրդի բախտը կապված է Ռուսաստանի հետ, մանավանդ «Թուրքիո հպատակ Հայաստանի ապագան Ռուսիո կյանքէն կախում ունի»[1]։

Արփիարյանը ըմբռնում է Ռուսաստանի դերը համաշխարհային առաջընթացի մեջ, նա տեսնում է, որ սեփականատիրական կարգերում տառապած մարդկության փրկությունը գալու է Ռուսաստանից։ Ռևոլյուցիայի օրերին «Շիրակում» գրած իր մի հոդվածում նա կոչ է անում թողնել հնություններով, հին փառքերով օրորվելու պատրանքը և ճանաչել նոր երևույթները և այդ նորը տեսնել հատկապես Ռուսաստանում։ «Քան երեկվան Ասորեստանը,— գրում է նա,— այսօրվան Ռուսաստանը ճանչնալու պետք ունինք»... «Ոսկեբերանին տեղ՝ Կարլ Մարքսը»[2]։

Արփիարյանը հրճվանքով է իր ընթերցողներին հայտնում, որ «հեղափոխությունը Ռուսիա մը կը փրկե իր աչքին առջև», որ տապալվելու է Ռոմանովների արյունոտ ինքնակալությունը։

Արփիարյանը ըմբռնում է, որ ռուսական ռևոլյու-

---

1 «Լուսաբեր», 1906, № 307։

2 «Շիրակ», 1905, № 10—11։

ցիան կատարողները բարձրաստիճան զինվորականները չեն, այլ հասարակ ժողովուրդը, բանվորները, գյուղացիները և նրանց ծոցից դուրս եկած զինվորները: Դրա համար էլ այդ վեհ նպատակի համար մղվող պայքարի մասնակցող շարքային բանվորն ու արհեստավորը նրա կարծիքով շատ ավելի մեծ մասնակցություն են ունենում պատմության առաջընթացի մեջ, քան ռուսական բանակում հռչակված հայ գեներալները, որոնցով սիրում էր պարծենալ հայ բուրժուազիան և որոնք սակայն հայ ժողովրդի պայքարին ոչնչով չէին օգնել, նույնքան քիչ էին կապված ժողովրդի հետ, որքան ցարական բանակի մյուս գեներալները: «Հիմակ սկսում են ծնել թերևս ավելի մեծ մարդեր, քան Լոռիս Մելիքովները, Տեր-Ղուկասովները, Լազարևները: **Մեծագույնները ժողովրդին ազատության համար անփառունակ մեռնող հերոսներն են**»[1]: *(Ընդգծումները մերն է—* **Գ. Ստ.**):

Արփիարյանը, որ իր «Կարմիր ժամուցը» գրելու օրերին դեռևս ազգային-ազատագրական պայքարի հարցում հայ ժողովրդի պայքարը անջատում, մեկուսացնում էր մյուս ժողովուրդների պայքարից, այժմ ռուսական ռևոլյուցիայի ազդեցության տակ՝ վերանայելով իր կարծիքները, առաջ է քաշում ժողովուրդների համերաշխության առաջադեմ գաղափարը, նրանց միասնական պայքարը բռնապետական կարգերի դեմ, ընդգծելով, որ աշխատավորները ըստ էության ոչինչ չունեն այլ ազգության պատկանող աշխատավորների հետ և որ տիրապետող իշխանություններն են

---

1 «Լուսաբեր», 1905, № 175:

միմյանց դեմ հանում նրանց, արյան բաղնիքներ սարքում: Այս տեսակետից կարևոր է նրա վերաբերմունքը Կովկասում տեղի ունեցող հայ-թյուրքական ընդհարումների նկատմամբ: Հատուկ առաջնորդող նվիրելով այդ հարցին, նա գրում է.

«Ո՞ւր պիտի երթա սակայն «վրեժ լուծել»-ներու վերջը: Մահմեդականը հայեն վրեժ կը լուծե, հայը՝ մահմեդականեն: Հայն ալ մարդ է, մահմեդականն ալ մարդ է, ան ալ մարը բերեր է, ան ալ: Բռնապետներն են որ ձեռքերնին կը շփշփեն»[1]:

Կամ՝ «ի՞նչ վիճակ ալ որ վերապահվի մեր երկրին, միշտ մահմեդականներու հետ բնակակից պիտի ըլլանք իբրև մեկ երկրի հայրենակիցներ...»[2]:

Արփիարյանը այն համոզմանն է եղել, որ ցարական ինքնակալության տապալումը անմիջական ազդեցություն կարող է ունենալ հարևան երկրների ռևոլյուցիոն շարժումների վրա, առանձնապես Թյուրքիայի, որտեղ տիրապետում էին սուլթանական բռնապետական կարգերը և որտեղ թե՛ փոքրամասնությունները և թե՛ բուն թյուրք ժողովուրդը հեծում էին աղաների ու բեկերի կրնկի տակ:

1905 թվականին Թիֆլիսի իր բարեկամներից մեկին ուղղած նամակում նա գրում է.

«Դեպքերը, որ կը պատահին ձեր կողմերը, պիտի կրնան մեծ ազդեցություն ունենալ մեր վրա և անշուշտ բոլոր Թյուրքիո վրա: Առայժմ մենք կը ջանանք, որ

1 «Լուսաբեր», 1905, № 164:

2 «Լուսաբեր», 1906, № 240:

եթե Կովկասը մի ձգողական ուժ դառնա Թյուրքիայի հայոց համար, անպատրաստ չգտնվինք»[1]:

Անշուշտ 1905 թվականի ռևոլյուցիան իր որոշակի ազդեցությունը ունեցավ թյուրք աշխատավոր ինտելիգենցիայի և աշխատավորության վրա: Միանգամայն իրավացի էր Արփիարյանը երբ գրում էր.

«Հիմակ գրեթե ստույգ է, որ թյուրքերն ալ կսկսին շարժիլ Ռուսիո հեղափոխության ազդեցությամբ»[2]:

Ի՞նչպես էր հասկանում Արփիարյանը ռևոլյուցիայի հեռանկարները: Գտնվելով հեռու Եգիպտոսում, նա հնարավորություն չուներ ռևոլյուցիայի մասին ճիշտ պատկերացում կազմելու: Նրա համար որոշակի էր, որ սկսված ռևոլյուցիան սովորական մի թագավորի տապալում չէր, այլ տնտեսական ու քաղաքական սիստեմի տապալում, որին հաջորդելու էր մի այլ, ավելի ժողովրդական դեմոկրատական տնտեսաձև:

«Պայթած հեղափոխությունը, գրում էր նա, միահեծան իշխանություն մը չէ, որ պիտի տապալե, այլ նաև տնտեսական դրություն մը, ուստի և տարակույս չկա թե իր հաղթանակն օր մը չէ օր մը պիտի սայլե ո՛չ միայն թագավորությունները, այլև հանրապետությունններն ալ»[3]:

Այսպիսի անվերապահ և հաստատ համոզմունք արտահայտելով 1905 թվականի ռևոլյուցիայի մասին, Արփիարյանը չէր տարակուսում, որ վերջ ի վերջո ռուսական պրոլետարիատը իր թափած արյան փոխարեն

---

1 Հայկական ՍՍՌ Գրական թանգարան, Համբարձում Առաքելյանի արխիվ:

2 «Հուսաբեր», 1906, № 169:

3 «Հուսաբեր», 1905, № 147:

ձեռք է բերելու ազատություն. «Վախ անոնց,— գրում էր նա,— որ այսօր փլատակներուն տակը կը մնան, բայց Երնեկ անոնց, որ վաղվան համար պիտի ապրին»[1]:

Նույնիսկ այն ժամանակ, երբ 1905 թվականի ռևոլյուցիան ժամանակավորապես պարտվեց և Ստոլիպինյան ռեակցիայի սարսափը տարածվեց ամբողջ երկրով մեկ, երբ շատ մտավորականներ հուսալքում էին ապրում և քաշվել էին իրենց պատյանների մեջ, Արփիարյանը 1906 թ. գրում էր.

«Թող չը կարծվի թե ռուսական շարժումը ջախջախվեցավ, լմնցավ: Ահեղ պատերազմ մըն է, որ կը մղվի միահեծանության ու ժողովրդական իրավունքի միջև: Հեղափոխությունը կրնա քանի մը ճակատամարտ կորսնցնել, բայց վերջնական հաղթանակը իրեն պիտի մնա երկարատև կռվե մը հետո»[2]:

Արփիարյանն այդ օրերին ընդհուպ մոտենում էր դասակարգային ըմբռնմանը, գտնելով, որ այդ ռևոլյուցիան, «մարտնչումը ցեղային չէ, այլ ընկերային, դասակարգային»[3]:

Որ Արփիարյանը ռևոլյուցիայի հաղթանակի մեջ տեսնում էր սեփականատիրական դասակարգերի կործանումը, աշխատավորների վերջնական ազատագրումը շահագործողներից, երևում է նրա հետևյալ բնորոշ խոսքերից.

«Թեև թնդանոթը, բյուրավոր բանվորներ ջարդ ու փշուր կընեն, բայց ընկերվարական գաղափարը գործնականապես կը հաղթանակե ու տիեզերքի բոլոր կալվա-

[1] «Լուսաբեր», 1905, № 147:

[2] «Լուսաբեր», 1906, 171:

[3] Նույն տեղում:

ծառերը, դրամատերերը կը սարսափահարին: Նորա-տեսիլ յեղափոխութիւն մըն է, որ կը ծագի, անոր դէմ թնդանօթը, հրացանը, սուրը անզօր պիտի գտնուին»[1]: *(Ընդգծումը մերն է— Գ. Ստ.)*:

Արփիարյանը ժամանակը հասած էր համարում հայ երիտասարդությանը տալու այնպիսի գրականություն, որը քաղաքական, գաղափարական կոփվածություն տար նրան, նախապատրաստեր ապագա մարտերին, վեր հաներ նեխված կապիտալիզմի ողջ էությունը և ատելություն առաջացներ ընթերցողի մեջ դեպի կապիտալիստական կարգերը:

1905 թ. հոկտեմբերյան օրերին նա իր ընթերցողներին ծանոթացնում է Գերցենի կյանքի հետ, նշում, որ Գերցենը այն մեծ ռուս հայրենասերն է, որ XIX դարու երկրորդ կեսին իր «հայրենի երկրեն տարագիր, Եվրոպա ապաստանած, իր հրապարակախոսություններովը ամբողջ Ռուսաստանը ցնցեց»[2]*:*

Ակնարկելով այն մեծ ազդեցությունը, որ ուներ Գերցենը ռուսական առաջավոր մտքի վրա, Արփիարյանը գրում էր, որ Գերցենը «վաղվան Ռուսիան պատրաստողներեն մեկն է»[3]*:*

Արփիարյանը ամենից ավելի գնահատել է Գերցենի «Մյուս ափից» աշխատությունը, որը հանդիսանում է բուրժուական կեղծ քաղաքակրթության ուժեղ մերկացումը, սոցիալիստական գաղափարներով հագեցված մի աշխատություն, որի առանցքն է մեռնող կապիտալիստական աշխարհից դեպի նոր՝ սոցիալիս-

---

[1] «Լուսաբեր», 1905, № 172:

[2] « ուսաբեր», 1906, № 169:

[3] «Լուսաբեր», 1905, № 135:

տական հասարակարգին անցնելու անխուսափելիությունը: Այդ գրքում, որը պարունակում է 1847—50 թվականներին Եվրոպայում գրի առած իր դիտողությունները, Գերցենը մեծ տաղանդով մերկացնում է ֆրանսիական ռևոլյուցիայի առաջ քաշած լոզունգների — ազատության, հավասարության և եղբայրության սնամեջ ֆրազներ լինելը:

«Մյուս ափից» աշխատությունը միաժամանակ համոզիչ փաստերով ցույց էր տալիս, որ այն աշխարհը, որի մեջ ապրում են իրենք, կործանվում է, մեռնում, քանդվում և անհրաժեշտ է ոչ թե կասեցնել, արգելակել այդ կործանումը, այլ արագացնել այն, կատարել կապիտալիզմի թաղումը:

Գերցենը իր «Մյուս ափից» գործը նվիրել է որդուն, Ալեքսանդրին: «Մենք ալ,— գրում էր Արփիարյանը,— երիտասարդներուն, մանավանդ մեր պատանիներուն կը հանձնարարենք «Մեկալ ափենը», վասնզի վաղվան հայերն են անոնք և պետք չէ, որ մտավորականության հին ափունքի վրա համենան»[1]:

* * *

Արփիարյանի դավանած այս նոր գաղափարներն են, որ իրենց որոշակի արձագանքն են գտել նրա «Ոսկի ապրանջան» պատմվածքում: Պատահական չպետք է համարել նաև «Մինչև ե՞րբ» պատմվածքի վերամշակումն ու հրապարակումը այդ օրերին:

«Մինչև ե՞րբ» պատմվածքի առաջին վարիանտը լույս է տեսել «Մասիսում», 1890 թվականի օգոստոս ամսին, «Հարուստին կոչումը» վերնագրով: Հետագայում

---

1 «Լուսաբեր», 1905, № 135:

մանակի փոփոխությունների ու վերամշակման ենթարկվելով, 1906 թվականին լույս է տեսել «Շիրակում» «Մինչև ե՞րբ» բնորոշ վերնագրով, որը վերցված է պատմվածքի վերջին տողից։

«Ոսկի ապրանջան» պատմվածքի առաջին վարիանտը նույնպես տպագրվել է վաղուց, 1886 թվականին «Մշակում» «Խնդամոլիկ աղջիկը» վերնագրով և նույնությամբ արտատպվել է «Արևելքում»։ Հետագայում, 1904—1905 թվականներին հիմնովին փոփոխվել և վերամշակվել է հեղինակի կողմից և մինչև 1905 թվականի վերջերը մաս-մաս ուղարկվել է Թիֆլիս՝ Հ. Առաքելյանին՝ «Մշակում» կամ առանձին մի ժողովածուի մեջ հրատարակելու համար։ Առաքելյանը հնարավորություն չունենալով այդ թվականներին հրատարակելու «Խնդամոլիկ աղջիկը», պահել է իր մոտ և հրատարակել 1910 թվականին, «Արորի» մի քանի համարներում։

Արփիարյանը Թիֆլիսում հրատարակված չունենալով այդ պատմվածքը, այն երրորդ անգամ վերամշակում է, ոճական հիմնական փոփոխությունների ենթարկում և «Ոսկի ապրանջան» վերնագրով 1906 թվականին հրատարակում իր խմբագրած «Շիրակ» պարբերականում, ցենզուրական կամ խմբագրական այլ նկատառումով պատմվածքի վերջից հանելով այն տողերը, որոնք կոչ են անում տապալել կապիտալիստական հասարակարգը։

«Շիրակի» այս վարիանտն է, որ տպված է Արփիարյանի վիպակների և պատմվածքների փարիզյան հրատարակությունում, իսկ «Արորի» վարիանտը նույնությամբ, նույնիսկ տպագրական սխալներով, լույս

է տեսել 1913 թվականին, Պոլսում հրատարակվող «Շուշան» պարբերականում, Ե. Օտյանի ջանքերով:

Արփիարյանի «Մինչև ե՞րբ» և «Ոսկի ապրանջան» պատմվածքները արևմտահայ գրականության մեջ առաջիններն են, որ պատկերելով բանվորների կյանքը, նրանց շահագործումը կապիտալիստների կողմից, առաջ են քաշում բանվոր դասակարգի ազատագրության հարցը:

Առաջին պատմվածքում դեմ դիմի կանգնած են երեսուն տարվա բանվոր Թորոս աղբարը և երկար տարիներ նրան շահագործող, նրա չարքաշ աշխատանքի կոպեկները խլող, հարուստ ճարտարապետ Գասպար էֆենդին, որը 5—6 հարյուր բանվոր է աշխատեցնում:

Գասպար էֆենդին այն դասի մարդկանցից է, որոնք հարստացել են աշխատավորներին շահագործելով «արվեստի գաղտնիքը գիտնալնուն» պատճառով, որ «կը նշանակե պատվավոր գողություն», աչքի են ընկել «գործավորներուն նկատմամբ ունեցած իրենց դաժանությամբ»:

Գասպար-էֆենդին Պոլսի հարուստ դասից դուրս չի եկել, նա նույն գավառացի պանդուխտներից է, որն ընկնելով փողի վրա հիմնված բուրժուական հասարակարգի ոլորապտույտի մեջ, կորցրել է գավառից իր հետ բերած լավ հատկությունները:

Նրա բնավորության գծերն են՝ անխղճությունը, խաբեբայությունը, խարդախությունը, արհամարհանքը այն մարդկանց նկատմամբ, որոնց շարքից է դուրս եկել ինքը և «որոնց քրտինքները ոռոգած էին, արդարաբեր ըրած էին Գասպար էֆենդու հարստության ագարակը»:

Նրա սկզբունքն է «շատ մեղքնանք նէ, մենք ալ մեղքնալու կըլլանք»։

Տարբեր դասակարգի ներկայացուցիչ է Թորոս աղբարը։ Նա այն 40 հազար պանդուխտներից է, որոնք հայրենիքում, գավառում պարտքի տակ խեղդված, կեղեքված մի կերպ իրենց գցել են Պոլիս, կարծելով, թե այստեղ հասարակական պայմանները հնարավորություն կստեղծեն մի քանի ղուրուշ վաստակելով վերադառնալ հայրենիք, տալ պարտքերը, ետ վերցնել գրավ դրված արտը։

Թորոսը ինչքան էլ փող է խնայում ու տալիս է վաշխառուներին, պարտքը գնալով ավելի շատանում է։ 32 տարի առաջվա հինգ ոսկին այժմ դարձել է 25 ոսկի։ Եվ ինչպիսի՜ զոհողություններով է խնայում այդ կոպեկները։

Սնվում է ամենաէժան ճաշով ու հացով, հագնում հնամաշ ցնցոտիներ ու տրեխ, իսկ ննջարանը՝ խանի մի մութ ու խոնավ նկուղ է, որտեղ ապրում են վեց ընկերներով։

Մայրաքաղաքը Թորոս աղբորը ոչ միայն չի փրկել, այլ կրկնակի կործանել է։ Այստեղ կորցրել է նաև իր առողջությունը, դարձել մելամաղձոտ, թախծոտ։ Նրան մի կողմից մաշում է՝ հայրենիքի, ընտանիքի, կնոջ, երեխաների կարոտը, գրավ դրած արտը մի կերպ ետ ստանալու հոգսը, մյուս կողմից՝ իր թշվառ վիճակը Կ. Պոլսում։ Փողից ու ինչքից զուրկ, աղքատ այդ բանվորը կախման մեջ լինելով հարուստից, տարիների ընթացքում դարձել է հարուստի կամակատարը, իր հայրենի երկրից բերած տոկունությունը, համարձակությունը, հակառակորդին դիմադրելու ունակությունները

կորցրել է։ Դրան նպաստել են աշխատանքային ծանր պայմանները, որոնց համաձայն բանվորը անգամ իր վաստակած աննշան գումարը լրիվ ստանալու իրավունք չունի. այդ փողի մի մասը մնում է տիրոջ մոտ, որը դրանով տևական կախման մեջ է պահում բանվորին։

Լավ իմանալով հանդերձ, թե ովքեր են իր և իր նմանների թշնամիները, Թորոսը իրեն չի զգում այնքան ուժեղ, որ դիմադրի։ Նա ընդհանուր առմամբ պասիվ բողոքող է, նրա դժգոհությունը չի վերածվում շեշտված դիմադրության։ Թորոսը փորձում է դիմել էֆենդու խղճին, ցանկանում է նրա վրա ազդել իր թշվառ վիճակի նկարագրությամբ, հազիվ վախվխելով հասկացնում է, թե «աղան իր նմանների փողով է հարստացել»։

Ահա այն հատվածը, որտեղ Թորոս աղբարը ներկայանում է հարուստին.— «Յազմալը ֆեսը վար առավ, կայնեցավ։ Իբր տիրամոր պատկերին առջև, լուռ կեցած էր։

— Ի՛նչ կուզես։

— Աղա, ծռիմ ոտքերդ պագնեմ, ղավկիդ արևուն ըլլա, գլխուդ մատաղ ըլլամ, համարե թե սատաղա կուտաս։

— Պոշ լաֆեր հազ չեմ ըներ. գործի համար ի՛նչ պիտի ըսես նէ, ըսէ՛, շուտ ըրէ, դուրս ելիր։

— Աղա, մեմլեքեթ պիտի երթամ, մեղք եմ։

— Է, երթաս բարով, ես ի՛նչ ընեմ։

— Աղա, սա իմ հիսաբես բան մը տայիր, ղավկիդ արևուն ըլլա, սերեքի ողորմություն է տվածդ»[1]։

---

1 Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 257։

Աղան կատաղում է, բանվորի այդ հանդգնության վրա, զայրանում, որ նա, իրավունք է պահանջում, փող է ուզում «հիսաբ կը փնտռե»: Նա այն կարծիքն ունի, թե Թորոսները միայն երախտապարտ պիտի լինեն տերերին, որոնք աշխատանք են տալիս ու դրանով ապրեցնում նրանց: Գասպար էֆենդու հանդիմանությունից, Թորոսին վռնդելուց հետո է, որ բանվորի մեջ առավել զարթնում է արժանապատվության, ինքնասիրության զգացումը, ցանկանում է բողոքել, բայց նույնիսկ այդ պահին նրա բողոքը թույլ է, մեղմ, նա հազիվ կարողանում է ասել.

«— Աղա, արդար հախս է, արևուն ու հովին դեմ բռնինք եմ թափեր, ամենքս ալ քեզի փարա ենք վաստակցուցեր, մեր սոյսյեն մարդ եղար, հիմա ասա՞նկ կընես»[1]:

Թևից քաշելով՝ դուրս են գցում աշխատանքի արդյունքը պահանջող բանվորին, դռան շեմքին դրված տրեխներն էլ ոտքով գցում են աստիճաններից ցած:

Թորոսի այս ողբալի վիճակը Արփիարյանը նկարագրել է հետևյալ տողերով:

«Բանվորը ինքզինքը սանդուղին տակը գտավ, ինչ եղած ըլլալը առանց գիտենալու: Ցաղմալը ֆեսը դեռ ձեռքն էր, չարըխին մեկ թեքը հոս, մեկալը հոն, ցուպն ալ վարը՝ գետինը»[2]:

Ահա ամբողջ պատկերը:

Թորոսի տրագեդիան ուներ հասարակական խորը բովանդակություն. մի ամբողջ խավի՝ գավառցի Պոլսի

1 Ա. Արփիարյան, Ընտիր երկեր, էջ 257:

2 Նույն տեղում:

ոսլահատակների վրա թափված հազարավոր պանդուխտների դառը վիճակի ճշգրիտ պատկերն է, որ տալիս էր Արփիարյանն իր այս նկարագրության մեջ։

Արփիարյանը պատմվածքի վերջում մոտենում է դասակարգային պայքարի գաղափարին։ Բալուցի պանդուխտները Թորոսի որդուն մխիթարելով նկարագրում են՝ թե՛ գավառում և թե՛ մայրաքաղաքում հայ վաշխառուների ու այլ շահագործողների կատարած դաժանությունները, նրանց կեղեքման զոհ աշխատավոր հայերի ծանր վիճակը, հայ շահագործողներին համեմատում են թյուրք ու քուրդ կեղեքողների հետ և վերջում ցասումնալից ասում են.

«— Ախ, աստված, աս մինչև երբ պիտի քաշենք… մինչև ե՞րբ, մինչև երբ»։

Սակայն հակառակ այդ բոլորին, հակառակ այն բանին, որ Արփիարյանը պատմվածքը 1906 թ. հրատարակելիս «Հարուստին կոչումը» անորոշ վերնագիրը փոխարինել է «Մինչև երբ» նշանակալից վերնագրով. այնուամենայնիվ նա ավելի հեռու չի գնացել. բալուցի այդ պանդուխտները ակտիվ պայքարի դիմելու փոխարեն գնում խնդրում են բանվորներին շահագործող աղային, որպեսզի մեռած Թորոսի փոխարեն աշխատանք տա գավառից եկած նրա որդուն։

Եթե այս պատմվածքում Արփիարյանը չի կարողանում ասել, թե մինչև երբ պիտի շարունակվի այդ կյանքը, որն է ելքը, ապա նա այդ հարցի պատասխանը բավական որոշակի տվել է «Ոսկի ապրանջան»նը պատմվածքում։

---

1 Ընտիր երկեր, էջ 269։

«Ոսկի ապրանջանի» նյութը նույնպես վերցված է բանվորների կյանքից: Գրաշար Ղուկասը իր մոտ վերցնել պահում է եղբոր աղջկան՝ Արմիկին, որը որբացել է ծնողներից: Աղջկա հորից մնացած փողով Ղուկասը գնում է արժեթղթեր, որպեսզի երբ նա մեծանա, որպես օժիտ տա փեսացուին: Տնտեսական մեծ դժվարություններով գրաշարը մեծացնում է աղջկան և նշանում մի անգործ երիտասարդի հետ, որն իր հույսը դրել է այդ արժեթղթերի վրա: Հազիվ նշանդրեքի արարողությունը ավարտած, գրաշարին հեռացնում են աշխատանքից: Նա իրողությունը կնոջից ու Արմիկից թաքցնելով՝ հարկադրված է լինում գաղտնի՝ բաց անել սնդուկը, մեկ-մեկ հանել արժեթղթերը, գրավ դնել դրանք և օրվա հացը ապահովել: Այս բանը իմանում է փեսացուն, նշանը ետ է տալիս ու դրանով դժբախտացնում աղջկան. վերջինս հուսահատությունից կորցնում է իր աշխուժությունը, աստիճանաբար քայքայում առողջությունը և մեռնում թոքախտից:

«Ոսկի ապրանջանի» հիմքում ընկած է նույն ներքին շահագործողների մերկացումը: Այստեղ էլ, մի կողմում կանգնած է տպարանատեր հարուստը, մյուս կողմում նրա զոհը՝ քառասուն տարվա գրաշար Ղուկասը: Տպարանատերն ունի նույնպիսի հատկություններ, ինչ-որ նախորդ պատմվածքի հերոս Գասպար էֆենդին: Նա չունի խղճի տարրական զգացում: Այսպես, գրաշարը ներկայանալով նրան՝ խնդրում է որոշ փոխառություն եղբոր աղջկան ամուսնացնելու համար, հայտնում է թե զատկին տեղի է ունենալու այդ ամուսնությունը. տպարանատերը՝ փոխանակ ընդառաջելու նրան, մի շաբաթից հեռացնում է աշխատանքից: Եվ ի՞նչ պատճառով.

այն բանի, համար որ ամռան երկար օրերին նույն աշխատավարձով՝ մյուս բանվորներին կարող է ավելի աշխատեցնել: Տպարանատերը կրճատում է տասնյակ տարիների փորձ ունեցող, տպարաններում իր կյանքը մաշեցրած Ղուկասին, որովհետև նա, ծերանալով՝ հնարավորություն չուներ առաջվա պես արագ շարելու, բոլոր տեսակի անընթեռնելի ձեռագրերը կարդալու. աչքերը լավ չէին տեսնում:

«Ոսկի ապրանջան» պատմվածքում ուշագրավ դեմք է Արմիկի փեսացուն՝ Արթաքին. Արփիարյանը նրան նկարագրել է վարպետ գրչով:

Արթաքին՝ Կ. Պոլսի այն խավերի ներկայացուցիչներից է, որոնք ոչ որոշակի կրթություն են ստացել, ոչ կանոնավոր արհեստ ունեն և ոչ էլ որևէ հիմնավոր հեռանկար, ապրում են կամ ուրիշների հաշվին, կամ ձգտում են աղջկա օժիտով «գործ բռնել»: Արթաքին բուրժուական հասարակարգի տիպիկ ներկայացուցիչն է, նրա մոտ ամեն ինչ հաշվի, փողի վրա է հիմնված: Սեր, բարեկամություն, հարգանք և այլ այսպիսի հասկացողություններ հրապարակ են հանվում, երբ կա փողի ակնկալություն:

«Սա մեր փողի հաշիվը ինչ եղավ»,— այս է նրա ամբողջ գործունեության առանցքը, դրա համար էլ պատմվածքի սկզբում այնքան մեծ եռանդով, խանդավառությամբ ամուսնական համաձայնություն տվող Արթաքին, որը կանոնավոր ամեն կիրակի այցելում է իր նշանածին, հյուրասիրվում, իր նշանածի ձեռքից ճաշակում տրադիցիոն «անուշեղենը», միանգամից փոխվում է. սեր, ընտանիք ամեն ինչ մոռանում, երբ լսում է, որ «12 շմենդըֆեռները», այսինքն՝ արժեթղթերը ձեռ-

քից գնացել են: Դառնում է կատաղի մի հակառակորդ այդ համեստ ու պատվավոր ընտանիքին, բոլորի ներկայությամբ վիրավորում, անպատվում է խեղճ գրաշար Ղուկասին ու թողնում հեռանում:

Ընդհանուր առմամբ բացասական գծերով օժտված Արթաքին ունի բնավորության այնպիսի գծեր, որոնք Արփիարյանի կողմից առաջ են քաշվում որպես դրական արժանիքներ: Ուշագրավ է, որ Արփիարյանը հրապարակախոսության մեջ բարձրացրած շատ սկզբունքային հարցեր ցանկանալով այս պատմվածքում էլ արծարծել, դրանք ոչ թե տվել է իր դրական հերոսի՝ Ղուկասի միջոցով, այլ Արթաքիի: Մինչդեռ գրաշար Ղուկասը սոցիալական իր այնքան ուժեղ բողոքներն արտահայտելով հանդերձ, մնում է ջերմեռանդ կրոնասեր, եկեղեցական օրենքներն ու սովորությունները հարգող մի անձնավորություն, Արթաքին հանդես է գալիս եկեղեցական օրենքների բավականաչափ սուր քննադատությամբ: Երբ պատմըվածքի սկզբում նա իմանում է, որ ոչ զատկի նախօրյակներին և ոչ էլ զատկի օրերին չի թույլատրվում ամուսնանալ, զարմանում է, բողոքում է ու ասում, թե զատկի նախօրյակին չամուսնանալը հասկանալի է, «Քրիստոսը խաչվեր է, մեռեր է, հայդե սուգ պահենք, չը կարգվինք, ուրախություն չընենք, փեք աղեկ, ըսելիք չունիմ: Է՛, զատկի՞ն ինչու չը կարգվինք, ուրախություն չընենք: Քրիստոս հարություն առեր, գերեզմանեն ելեր է. աղեկ ա. մենք ալ խնդանք, մենք ալ ուրախանանք: Չէ՛, չըլլար եղեր, չէ. աս մեռեր է տեի, մի կարգվիր, ուրախություն մի ըներ, աս հարություն առեր է տեի

մի կարգվիր, ուրախություն մի ըներ, ինչո՞ւ: Չէ՛, ասիկա խելքիս բանը չէ»[1]:

Նրա համարձակությունը այնտեղ է հասնում, որ նույնիսկ հայհոյում է այդպիսի օրենքներ հնարողներին:

Արթաքիի միջոցով Արփիարյանը քննադատում է նաև պահպանողական թյուրքոֆիլներին: Նրանց այն փաստարկման հակառակ, թե հայերն իրենց կերած հացի համար պարտական են Թյուրքիային՝ Արթաքին պատասխանում է «Ու, Մոսկոֆին հայերը անոթի՞ կը մնան»:

«Օր մը օրանց տաճկի մը էյվալլահ ըրած չուներ, բերնեն երբեք փաշամ, պեյիմ, էֆենդիմ *փախցուցած չուներ»:*

Պատմվածքի հիմնական դեմքը՝ գրաշար Ղուկասն է: Նա ամենից առաջ հոգատար, գուրգուրող ընտանիքի հայր է, գորովագութ ամուսին, աշխատասեր է: Քառասուն տարվա իր գրաշարական գործունեության ընթացքում միշտ աչքի է ընկել իր բարեխղճությամբ ու ջանասիրությամբ: Ընկերական միջավայրում, «գավաթ մը օղիի» առջև հաճելի զրուցակից ու ընկեր է: Նրա այս բոլոր հատկանիշները, սակայն, իր ապրած հասարակարգում ոչնչով չեն օգնում նրան և չնայած իր երկարամյա բանվորական գործունեությանը, չնայած «վաթսունը անցուկ էր, բայց երկու մեջիդիե չի կարողացեր կողք կողքի դնել»: Միշտ ապրել էր թշվառ, չարքաշ, միշտ ավուր հացի կարոտ:

Ահա Ղուկասի առօրյան. «Ձմեռ է, առտուն մութն

[1] Ընտիր երկեր, էջ 273:

ու լուսուն ելիր վափոռ վազե, պատառ մը բան ճակե, շնթակե։ Առտուն ընկոտա, ընկոտա։ Ոտքեդ գլուխդ ջուրերը թաթխված տղարան եկուր, մինչև իրիկուն ոտքի վրա դառն ու դառն, բերանդ քիչ մը պանիր հաց նետե, բանե՛ ու բանե՛, մինչև մութը կոխե... Ամա՞ն է, վերեն կրակնե՞ր կը թափին, վազե վափոռին, վազե տե վազե։ Արյուն քրտինք մտած մինչև իրիկուն խավարմիշ եղիր, մութուն հելլաք տուն ընկիր»[1]։

Ահա այս բանվորի միջոցով է, որ Արփիարյանը մատը դրել է բուն վերքի վրա և սուր քննադատության ենթարկել կապիտալիստական հասարակարգը, որտեղ մարդ արարածը կորցրել է իր մարդկային արժանիքները, որտեղ բանականության ու իրավունքի փոխարեն թագավորում է փողի վրա հիմնված սուտն ու խաբեբայությունը, որտեղ բնության բարձրագույն պարգևը հանդիսացող մարդ էակը ավելի է ստորացված, քան որևէ անբան անասուն։ Անասունները հարուստ ընտանիքներում շատ ավելի գուրգուրանքի են արժանանում, քան օրնիբուն նույն հարուստի մոտ աշխատող բանվորները։ Ղուկասը մի առիթով ասում է, որ իրենց թաղի հարուստների կատուները շատ ավելի են միս ուտում, քան իրենք։

Ղուկասի բողոքը սեփականատիրական հասարակարգի դեմ կոնկրետացվում է հետևյալ իրոնիկ մենախոսությամբ.

«Ծո, ինչ կայներ ես, էվել պակաս խոսքեր կընես։ Էֆենդին ի՞նչ հանցանք ունի քի, ըսելիք բան մը ունիս. նե, գնա աստծուն բողոքե, որ քեզի մարդ է ստեղծեր։ Ես

[1] Ընտիր երկեր, էջ 214։

էյեր մեյ մըն ալ աշխարհ գալու ըլլամ նե, աստծու պիտի աղաչեմ, որ եթե հոս նորեն սանկ բանվոր պիտի ըլլամ նե, թող աս անգամ վրաս գթա և գիս էշ ստեղծե, էշը շատ բեռցնելու ըլլաս նե, խաֆան կը տնկե կկենա, տերը բան չունի նե թող վրան փատ կոտրտե... Իր իրավունքը պաշտպանող էշը անոթի չեն սատկեցներ։ Մարդ չէ քի կռնակին թեքմեն տան՝ դուրս նետեն»[1]։

Բնորոշ են վերջին տողերը։ Արփիարյանը այդ խոսքերով դատապարտում է բանվորներին, որ ակտիվ պայքարի չեն անցնում։ Նույնիսկ անբան անասունը գիտի իր իրավունքները պաշտպանել, տիրոջը ստիպել զիջելու։ Ինչո՞ւ այդ ավելի մտածված կերպով չպետք է անի բանվորը։

Ղուկասը վերին աստիճանի խղճով է, նա մեծ տրագեդիա է ապրում, երբ հարկադրված է լինում օրվա հացը ձեռք բերելու համար գրավ դնել արժեթղթերը։ Արփիարյանը վարպետ հոգեբանի գրչով է տվել Ղուկասի այդ քայլը։ Նա ասում է, որ գրաշարը այդ բանը անելուց առաջ շատ է մտածել, տառապել, դիմադրել իր չար գաղափարներին՝ «սատանայի թելադրած այդ փորձությանը»։

Իսկ ճակատագրական քայլը կատարելուց հետո, մինչև վերջը, մնում է ծանր տպավորության տակ։ Յուրաքանչյուր անգամ Արմիկին տեսնելիս հիշում է իր կատարած գաղտնի քայլը, հանցագործությունը։ Աղջկա ամեն մի անմեղ արտահայտությունը, որ ոչ մի առընչություն չունի դեպքի հետ, ցնցում է նրան։ Գրաշարին թվում է, թե ակնարկը արժեթղթերի մասին է, այլայլ-

[1] Ընտիր երկեր, էջ 283։

վում, գողում զարմանք պատճառելով տնեցիներին։ Եթե մինչ այդ գրաշարի համար գերագույն հաճույք էր Արմիկի մոտ լինելը, նրա հետ խոսելը, այժմ նա օրերով չի ցանկանում տեսնել նրան, որովհետև «էմանեթին խյանաթությունը գողության պես բան մըն է»։

Երբ գրաշարը՝ արժեթղթերը գրպանում՝ դուրս է գալիս սենյակից, հենց դռանը հանդիպում է անտեղյակ Արմիկին, որը մոտենում է ու բռնում հորեղբոր ձեռքը, որպեսզի համբուրի։ Ղուկասը ցնցվում է, շվարած հարցնում.

— Ի՞նչ կա քի, աղջիկս։

— Աղա ամուճա, ծոմ պիտի բռնեմ, իրիկունը ճաշակ պիտի առնեմ։

— Էյ, հայդե նայինք, ապրիս աղջիկս շնորհավոր ըլլա։

Ղուկասը զգում է, որ հանցագործը ինքն է. ինքն է, որ մեղայի պիտի գա և դրանով էլ ավելի է հուզվում, ու հազիվ իրեն գցում է դուրս։

Այսպիսի բնավորության գծերով օժտված գրաշար Ղուկասը, հասկանալի է, որ չէր կարող որոշակի պայքարի կոչեր անել։ Չնայած դրան՝ Արփիարյանը հենց այդ բանվորի միջոցով մերկացրել է կապիտալիստական հասարակարգի ներքին, սոցիալական շահագործման վայրենի ձևերը։

Գրաշար Ղուկասի միջոցով նա շատ ավելի շեշտված ու որոշակի, քան նախորդ պատմվածքում, տվել է հայ վաշխառուի քննադատությունը։

«Եկան մինչև Բեռլինները մարդ ղրկեցին Հայաս-

---

[1] *Ընտիր երկեր, էջ 289։*

տանի հայերը քյուրդերուն հարստահարություններեն, վալիներուն կեղեքումներեն ազատելու համար։ Աղեկ ըրին, պարտքերնին կատարեցին... Աս Ստամբոլի մեր չորբաճի էֆենդիները քյուրդերեն ալ ավելի զալըմ չե՞ն, վալիներեն ալ բեթեր կեղեքիչ չե՞ն։ ...Մեր չորպաճիները, էֆենդիները բերաննիս չոր հացի մը պատառ չեն թողուր, ան ալ խաբմիշ կընեն, իրենք կուտեն»[1]։

Արփիարյանի այս դիտողությունը վերին աստիճանի ուշագրավ է և բնորոշ։

Նա վերոհիշյալ տողերով որոշակի կերպով հանդում է ներքին սոցիալական պայքարի գաղափարին, տալով դրան շեշտված դասակարգային բովանդակություն։ Կ. Պոլսի չորբաջիների՝ այսինքն, բանվորներ աշխատեցնող գործատերերի համեմատությունը հայերին թալանող թյուրքերի, օտարազգիների հետ, դասակարգային այդ գիտակցության ապացույցն է։

Արփիարյանը այդ գաղափարը առավել հստակ ձևակերպում է, երբ անդրադառնում է արհեստի և արհեստավորի գնահատմանը։

Ղուկասը իր սեփական փորձով համոզվում է, որ կապիտալիստական հասարակարգում այլևս արհեստը դադարել է աշխատողի համար ապրուստի միջոց լինելուց, նույնիսկ կաշկանդում է, պրկում բանվորներին։

Նա իր այս շատ բնորոշ միտքը արտահայտում է հետևյալ խոսքերով, «զենաաթը ոսկի բիլազի՞կ մի, ոսկի ապարանջա՞ն մի, քելեբչե՜, քելեբչե՜, ձեռքերս կոտրեց»։

---

1 Ընտիր երկեր, էջ 329։

2 Քելեբչե — կալանավորների ձեռքերը իրար հետ ամրացնող երկաթյա օղակ։

Գրաշար Ղուկասը ներկայացնում է կապիտալիստական կարգերի ամենամեծ չարիքներից մեկի՝ գործազրկության ողբերգությունը:

Ղուկասի միջոցով հեղինակը աղոտ կերպով առաջ է քաշել նաև բանվորական սինդիկատների կազմակերպման, բանվորների աշխատանքային իրավունքները այդ ընկերություններին հանձնելու անհրաժեշտությունը: Ղուկասը իր մի քանի ընկերներով հիմնում է «Գրաշարաց միությունը», որի ոչ ծրագիրն է հայտնի, դըժբախտաբար, և ոչ էլ հիմնական նպատակներն ու հնարավորություններն են հայտնի:

Եթե նախորդ պատմվածքի հերոսը ցասումի բռունցքը բարձրացրած աղաղակում էր «մինչև՞ երբ» բառերը, ապա «Ոսկի ապրանջան» պատմվածքի այն վարիանտում, որը տպագրված է «Արորում», Արփիարյանը տալիս է դրա պատասխանը: Ղուկասի աշակերտ Արտաշը արհեստի մասին Ղուկասի տված գնահատականը ուղղում է հետևյալ խոսքերով.

«Ղուկաս աղա, եղածը ալ մեյ մը եղած է. բայց ի՛նչ արհեստի ալ մտնես նե, սա՝ ա՛ս է, պո՛ւ պո՛ւ տըր: Կըսեն քի օխան ամեն տեղ 400 տիրամ է, կուզես չիրքեթին վափուռները մաքինիստ եղիր, կուզե՛ս Թերսհանե մտիր, կուզես տպարան մտիր, բանվոր չե՞ս մի, իշտե, սա՝ ա՛ս է, պո՛ւ պո՛ւ տըր: Պատառ մը հաց, շան տանջանք, օրին մեկն ալ կռնակիդ թեքմե մը, հա՛յդե դուրս: Ա՜խ Ղուկաս աղա, արհեստը ի՛նքը ինչ հանգանք ունի, ամեն արհեստ իրավ ոսկի բիլեզիկ է. ձեռքերնիս կոտրողը կապիտալն է, արհեստավորին

օջախին մուխը մարողը կապիտալիստն է, անոնց ճախեն զալու ենք մի՞, ազատինք»[1]:

Այստեղ Արփիարյանը շատ որոշակի կոչ է անում տապալել կապիտալիստական կարգերը, վերջ տալ կապիտալիստների տիրապետությանը:

Ու երբ գրաշար Ղուկասը չի հասկանում Արտաշի միտքը, նա ավելի որոշակի բացատրում է, թե ովքեր են կապիտալիստները,— «Կապիտալիստը, Ղուկաս աղա, իշտե ան քու էֆենդին է քի, զատկի օրերով քեզի ասանկ դուրս նետեց տե, ան անեղ աղջկան ալ արյունը մտավ»[2]:

Արտաշը Ղուկասին հասկացնում է, թե բանվորի արտադրանքը մտնում է կապիտալիստի գրպանը և պետք է այն խլել նրանից, ու երբ Ղուկասը հարցնում է, արդյոք դա գողություն չէ՞, Արտաշը զայրացած ասում է.

«Ի՞նչ, գողությո՞ւն մի: Գողը կապիտալի՛ստն է: Մենք մեր արդար իրավո՞ւնքը պիտի պահանջենք, ալ բող պիտի չիտանք, որ մեզի բնտոր ուզեն նե տանեն ծախեն, տանջեն, չարչրեն ու մենք ալ մունջ, համր նստինք»[3]:

Ավելի բնորոշ են Արտաշի վերջին խոսքերը— «գերիները ազատվեցան, մենք ալ պիտի ազատվինք»[4]:

Արտաշի կերպարը, թեև ոչ ամբողջացված, բայց նորություն էր հայ գրականության արևմտահայ հատվածի համար: Առաջին անգամ նրա միջոցով է, որ քննադատական ռեալիզմով գրված աշխատություններում

---

[1] *Ընտիր երկեր, էջ 331:*

[2] *Նույն տեղում, էջ 332:*

[3] *Նույն տեղում:*

[4] *Նույն տեղում:*

պատկերված շահագործումը բացատրվում էր դասակարգային հողի վրա, կապիտալիստներին հակադրվում էին բանվորները, բացատրվում, որ կապիտալիստներն իրենց հարստությունը դիզել են բանվորների հաշվին և կոչ էր արվում հաշվեհարդար տեսնել նրանց հետ։

Արփիարյանի «Ոսկի ապրանջան» պատմվածքը ոչ միայն իր գաղափարական բովանդակությամբ, այլև գեղարվեստական արժանիքներով նշանակալից երևույթ է հեղինակի ռեալիստական ստեղծագործության մեջ։ Այստեղ բացակայում է հրապարակախոսական տարրը, որ այնքան շատ է վնասել նրա մյուս երկերի գեղարվեստական արժեքին։ Խոսքի ճշտությամբ, սեղմությամբ, ժողովրդական բառ ու բանի տեղին օգտագործմամբ այն մրցում է «Կարմիր ժամուցի» հետ։ Դիալոգներում պոլսական բարբառի առատ և վարպետ օգտագործումը ավելի գունագեղ ու տպավորիչ է դարձնում նկարագրվող դեմքերն ու դեպքերը։

«Ոսկի ապրանջանի» գաղափարական և գեղարվեստական այս արժանիքները նկատի ունենալով է, որ բոլշևիկյան քննադատությունը բարձր է գնահատել այն, համեմատելով անցյալ սովետական շրջանի գրականության որոշ նմուշների հետ։

Այսպես, Ալ. Մարտունին (Մյասնիկյանը) 1922 թվականին «Մուրճ» ամսագրի առաջին համարի առթիվ գրած գրախոսականում՝ անդրադառնալով Արփիար Արփիարյանի «Ոսկի ապրանջան» պատմվածքին, այն որակում էր «անպայման լավ ու օրինակելի մի երկ»[1]։

[1] «Խորհրդային Հայաստան», 1922, № 267։

* * *

Այն օրերին, երբ Արփիարյանը՝ տարված ռուսական առաջին ռևոլյուցիայի գաղափարներով, հոդվածներ էր գրում այդ ռևոլյուցիայի մասին, նույն այդ օրերին նա շարունակում էր մերկացնել դաշնակ և հնչակ տեռորիստներին, նրանց համարելով հայ ժողովրդի թշնամիներ, մի հանգամանք, որ կատաղի ատելություն է առեղծում նրա դեմ։ Հնչակները որոշում են մի նոր տեռոր կազմակերպել։

1908 թ. փետրվարի 12-ի գիշերը, Կահիրեի Շարա էլ Մանաք թաղամասում, Արփիարյանի ապրած տան մոտերքում, լսվում է ատրճանակի երեք կրակոց և մթության մեջ օրորվելով ընկնում է Արփիարյանը այն պահին, երբ խմբագրատնից դուրս գալով մեկնում էր իր բնակարանը։

Ոճրագործը ատրճանակը թաքցնելով, հազիվ պատրաստվում է ձուլվել խավարի հետ և անհայտանալ, երբ մի պիրկ ձեռք՝ հաղթանդամ արաբ գիշերապահի՝ ղաֆիրի ձեռքը, բռնում է նրան։

Ղաֆիրը ոճրագործին քարշ է տալիս Արփիարյանի դիակի մոտ։ Օգնության են հասնում երկու կառապան ու երեք անցորդ։

Արփիարյանը՝ զուրկ որևէ բարեկամի հոգատար խնամքից, թավալվում է արյան մեջ, մաքառում մահվան դեմ։ Նկատելով իր շուրջը հավաքված մարդկանց, նա փորձում է ինչ-որ բան ասել, բայց բառերը մնում են նրա կոկորդում, հազիվ կարողանում է արտասանել «Հայ եմ»։

Վրա են հասնում ոստիկանները և ոճրագործին ու զոհին տանում ոստիկանատուն։

Մարդասպանը ոստիկանատանը հայտնում է, թե իր անունն է Պետրոս Հովնանյան, տիգրանակերտցի է։ Հետագայում պարզվում է, որ նրա իսկական անունը Պետրոս Հյուսնյան է։

* *
*

Փետրվարի 14-ին, ուրբաթ օրը, Կահիրեում կատարվում է Ա. Արփիարյանի թաղումը։ Հուղարկավորությանը մասնակցում է տարբեր ազգության ու տարբեր պրոֆեսիայի տեր մոտ 2000 մարդ։ Ծաղկեպսակները դագաղի եւեից տանում են տեղի Ազգային վարժարանի աշակերտները։ Հուղարկավորությանը մասնակցում է գերասանուհի Սիրանուշը իր ամբողջ թատերախմբով, որն այդ օրվա համար հայտարարված ներկայացումը հետաձգում է։

Բազմաթիվ ճառախոսներ իրենց դամբանական ճառերով վեր են հանում Արփիարյանի հայ գրականության մատուցած ծառայությունները։

Արփիարյանի մահվան առթիվ տարբեր երկրներից ստացվում են բազմաթիվ ցավակցական հեռագրեր թե՛ անհատ մարդկանց և թե՛ գրական, հասարակական կազմակերպությունների, թերթերի խմբագրությունների կողմից։

«Մշակից» ստացվում է հետևյալ հեռագիրը.

«Մշակի» խմբագրությունը կողբա սպանությունը Արփիարյանի, իր հանճարեղ աշխատակցի, ականավոր հրապարակագիր, գրագետ, որ զոհ է դառնում իր պարտականություններին, նա հանդիսացավ միության գիծ տաճկահայերի և ռուսահայերի միջև։ Անե՛ծք ոճրագործներին»։

Սպանության հաջորդ օրը եգիպտահայ մամուլը, իսկ մի քանի օրից արդեն այլ երկրների մամուլը զբաղվում է Արփիարյանի սպանության հարցով։ Հրատարակվում են բազմաթիվ հոդվածներ՝ հայ, արաբական, ֆրանսիական, անգլիական, ռուսական, իտալական և այլ թերթերում՝ Արփիարյանի կյանքի և գործունեության մասին, նրա դեմ կատարված մահափորձի մասին։

Հուզվում է հատկապես հայ առաջավոր ինտելիգենցիան։ Թիֆլիսի հայ մամուլում լույս են տեսնում բազմաթիվ բաց նամակներ, որոնց հեղինակները վեր հանելով Արփիարյանի մատուցած ծառայությունները հայ գրականությանը, իրենց ցասումն են արտահայտում կատարված տխուր դեպքի առթիվ, անարգանքի սյունին գամում ոճրագործներին։

Թիֆլիսում միտինգներ են գումարվում, որտեղ հայ գրողներն ու հրապարակախոսները իրենց զարշանքն են արտահայտում մարդասպանների նկատմամբ։ Ընդունվում են բանաձևեր, որոնց տակը ստորագրում են աչքի ընկնող մեծ թվով մտավորականներ և հրատարակում են կովկասահայ գրեթե բոլոր թերթերում։

«Տարազի» խմբագրատանը հրավիրված միտինգի բանաձևը, որի տակ ստորագրել են Երվանդ Լալայանը, Նար-Դոսը, Հ. Սոլովյանը, Տ. Նազարյանցը և ուրիշները, տպագրում են գրեթե բոլոր հայ թերթերը այդ թվում և Թիֆլիսում լույս տեսնող ռուսերեն թերթերը։ Ահա այդ բանաձևի վերջին տողերը.

1) արտահայտել բուռն զայրույթի և նողկանքի զգացմունք, թե այդ սպանությունը կատարող ոճրագործների վերաբերմամբ և թե այն բոլոր անձանց ու

հասարակական խմբակցությունների, որոնք գրչի մշակի և ազատ խոսքի դեմ գործ են դնում բանի միջոցներ.

2) ներկա որոշումը տպագրել Կովկասի բոլոր թերթերում, որպես նաև արտասահմանում լույս տեսնող հայ պարբերական հրատարակությունների մեջ։

1911 թ. Եգիպտոսի հայ գաղութը հանգանակություն կատարելով, Ա. Արփիարյանի հողաթմբի վրա կանգնեցնում է մի շքեղ մահարձան։

* *
*

Այսպես ավարտվում է 30-ամյա գրական և հասարակական փոթորկոտ գործունեությունը Ա. Արփիարյանի, որն իր գաղափարական որոշ հակասություններով հանդերձ,— հակասություններ, որոնք նկատելի են նրա կյանքի վերջին տարիների մի քանի հոդվածներում,—իր գիտակցական ամբողջ կյանքը տրամադրել է գրականությունը ժողովրդին մոտեցնելու, նրան ծառայեցնելու գործին, ակտիվ կերպով մասնակցել է հայ ժողովրդի տնտեսական և քաղաքական ազատության համար մղված պայքարին։



Ա. Արփիարյանի կիսանդրին Կահիրեում

Ա. ԱՐՓԻԱՐՅԱՆԻ ԱՌԱՆՁԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԼՈՒՅՍ ՏԵՍԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Կյանքի պատկերներ *(Նորավեպք)*

   Դատապարտյալը

   Երազի մը գինը

   Կատակ մը

   Կ. Պոլիս, 1884

2. Կյանքի պատկերներ

   Ապուշը

   Կ. Պոլիս, 1886

3. Կարմիր ժամուց

   ա. հրատ. «Մանրեր գրականության և արվեստի», Ա. գիրք, Պետերբուրգ, 1903.

   բ. հրատ, Վառնա, 1909

   գ. հրատ Կ. Պոլիս, 1920

4. Պատմվածքներ և վիպակներ

   Փարիզ 1934

5. Դատապարտյալը

   Կահիրե, 1928

6. Կատակ մը, Երազի մը գինը

   Կահիրե, 1928

7. Ընտիր երկեր

   Երևան, 1952

8. Պատմություն ԺԹ. դարու բյուրահայ գրականության

   Կահիրե, 1941

ԳԱՌՆԻԿ ԽԱՉԱՏՈՒՐԻ ՍՏԵՓԱՆՅԱՆ

«ԱՐՓԻԱՐ ԱՐՓԻԱՐՅԱՆ»

Գլխ. խմբագիր Մ. Մ. ՄԿՐՅԱՆ

Հրատ. խմբագիր Հ. Մ. ԷԼՉԻԲԵԿՅԱՆ

Տեխ. խմբագիր Մ. ԿԱՓԼԱՆՅԱՆ

Կոնտրոլ սրբագրիչներ Ն. Կ. ԱՎԱԳՅԱՆ, Ա. Լ. ԳՈՐՈՅԱՆ

ՎՖ 13725 ԽՀԽ 276 Հրատ. 1193 Պատվեր 239 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 22/VI 1955 թ., ստորագրված է տպագրության 11/XI 1955 թ., տպ. 9 մամուլ + 5 ներդիր, հրատ. 6.4 մամ., թուղթ 84×108 1/32, Գինը կազմով 4 ռ.

Հայկական ՍՍՌ ԳԱ Հրատարակչության տպարան, Երևան, Աբովյան 124.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Էջ

Ներածություն 5

Գլուխ առաջին—Ա. Արփիարյանի մանկությունը, պատանեկությունը և հասարակական գործունեության սկիզբը 31

Գլուխ երկրորդ—Ա. Արփիարյանը խմբագիր: Ճանապարհորդություն Կովկաս 74

Գլուխ երրորդ—Ա. Արփիարյանի պայքարը ռեալիստական գրականության համար 119

Գլուխ չորրորդ—Ա. Արփիարյանի ռեալիստական արձակը . 171

Գլուխ հինգերորդ—Ա. Արփիարյանը տարագրության մեջ 215

Գլուխ վեցերորդ—1905 թվականի ռևոլյուցիայի արձագանքները Ա. Արփիարյանի ստեղծագործություններում 255

ՀՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱ

A II/31648